Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1693

171
4-70
1367

2010

800

ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ

6123-Ա

Printed in Turkey

471
Q-70

ԱՌԱՔԻՆՈՒԹԱՆ ՃԱՄԲԱՆ

ԿԱՄ

# ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ

ԵՒ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Տ. Տ. Թ. ՍԱՒԱԼԱՆԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

-1867-

Биб.А Мясникян

377
39

ՄԱՀՏԵՍԻ ԳԱՏԸՆ

# ԱՇԸԳԵԱՆ ԹԱԼԱՍՑԻ

ՆՈՒԻՐԷ

ԶՄԱՏԵԱՆՍ ԲԱՐՈՒՑ

Ի ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԾԱՂԿԱՓԹԻԹ

ՈՐԴՒՈՑ ԻՒՐՈՑ

ՄԱՀՏԵՍԻ ԵՐԱՆՈՒՀԻՈՅ

ԵՒ

ՄԱՀՏԵՍԻ ՊՕՂՈՍԻ

Printed in Turkey

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գեղեցիկ գրքոյս նպատակը և պատուականութիւնը որ-պէս հեղինակը իւր ներածութեանը մէջ լաւ բաւականին բա-ցատրելով, չեմ ուզեր ես ալ երկար յառաջաբանել այս մասին, այլ կը թողում որ կարդացողներն ալ իրենց կողմէն զատողու-թիւն ընելով իմանան որքան գովելի և սիրուն ըլլալը։ Այս միայն կ'ըսեմ, որ եթէ ծնողք մի իւր զաւակներուն հաւատարիմ և անաչառ դաստիարակ մի ըլլալ կ'ուզէ, անշուշտ այս անգին գիր-քը թող անոնց ձեռքը յանձնէ. և թէ որ տղայք ալ իրենց սիր-տը և կամքը ասոր մէջ եղած փորձառութիւններուն յանձ-նեն, աշխարհիս վերայ ամէնէն երջանիկ անձը կ'ըլլան. և իրենց ծնողացը սրտին միակ մխիթարութիւնը։ Վասն զի ասոր մէջ սի-րելի տղայք ծնողասիրութիւն, ընկերսիրութիւն, քաղա-քավարութիւն, ուսումնասիրութիւն և որ ամէնէն մեծն է՝ աստ-ուածպաշտութիւն։

Այս գրքոյ օգտակարութիւնը լաւ զգալով Թաղայի Յակոբ աղայի կողակից բարեպաշտուհի մահտեսի Գատրին տիկինը, յանձ-կայս իւր յառաջ արդեամբք ի լոյս ընծայել տալով զայս, նը-ւիրել իւր գեղաւորայ որդւոյը, որպէս զի միշտ իրենց ձեռքեր-նին ունենալով և կարդալով իրենց հոգին առաքինութեան անու-շահոտ և գոյնզգոյն ծաղիկներով զարդարեն, իրենց ծնողաց փառք՝ և բարեկիրթ դաստիարակութիւննին բոլոր ազգին պարծանք և ընկերութեան օգտակար մարդիկ ըլլան։ Այս բաղձանքն էր անշուշտ որ բոլոր ազգիս տղայոց փոքուցն ու բաղուց օգտակար ըլլալու նպատակաւ յանձն առի թարգմանել զայս, տեղ տեղ յապաւելով այնպիսի կտորներ որ աւելորդ էին մեր ազգի տղա-յոց համար, և տեղ տեղ ևս ազգային մատենագիրներէ մանր պատմութիւններ կամ խրատական խօսքեր յաւելցընելով։ Այս ծառայութիւնս եթէ օգտակար համարուի ծնողաց քով, իմ բաւական հատուցում ըլլալը արդէն կը խոստովանիմ։

# ՄԵՆՏՈՐ
## ՄԱՆԿԱՆՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՈԴԻՍԵՒՍ Իթակայ թագաւորը Տրովադայի պաշարման երթալով, իւր մանկահասակ որդին Տելեմաքը՝ պալատի մի մէջ մնաց առանց օգնականի ու դաստիարակի՛ հազարումէկ վըտանգներու մէջ պաշարուած ։ Բայց Մ՚ներվա՝ գիտութեան չաստուածուհին, անոր դժբաղդ վիճակին վերայ գթացաւ, և Մ՚ենտորի կերպարանք մտնելով, (որ իւր դարուն ամենէն առաքինի և խելացի մարդը կը սեպուէր,) ոչ միայն երիտասարդ իշխանին քով գնաց անոր կրթութեանը հոգ տանելու, այլ ուզեց նաեւ ընկերանալ անոր հետ երկայն ճանապարհորդութիւններու մէջ՝ որոնց ձեռք զարկաւ Տելեմաք իւր հայրը գտնելու համար ։ Վերջապէս մեկնեցաւ անիկայ Մ՚ենտորի անունով. հեռացուց Տելեմաքէն այն ամեն պատահարները, որոնց հանդիպեցաւ իւր ճանապարհորդութեանը մէջ. ազատեց զինքը բոլոր որոգայթներէն, որ իրեն լարեցին. շատ հարկաւոր խրատներ տուաւ անոր. իմացուց իրեն այն խորհուրդները, որոնց-

ձով կրնար առաքինի մարդ մի և բարեկրօն Թագաւոր մի ըլլալ . և իւր հայրը տեսնելու բաղձանքին հասցընելէն ետև , տարաւ զինքը Իթաքայ կղզին , ուր տեղ Տելեմաք իւր սքանչելի առաքինութիւններովը ժողովուրդը զարմացուց , և կառավարեց զանոնք ու սիրելի եղաւ ամենուն ։

Այս դիպուածներուն բոլորն ալ իրօք եղած ճշմարիտ բաներ չեն , այլ բանաստեղծական երեւակայութիւններով ճշմարտութիւնք սեթեւեթած է . բայց ասոնցմով կը սորվինք գոնէ աս հարկաւոր ճշմարտութիւնը , թէ տղայ.ք ինքնին ոչ բաւական միտք և ոչ փորձառութիւն ունենալով իրենք զիրենք կրթելու , պէտք կ'ունենան Ոդիսեւսի տղուն պէս առաջնորդի մի , որ զիրենք կրթէ , ուղղէ և իրենց տկարութեան օգնական մի ըլլայ , և աշխարհիս Թշուառութիւններէն զիրենք պաշտպանէ , որոնց կը պատահին՝ թէ որ իրենց գլխնուն միտքով բոլոր կիրքերնուն անձնատուր ըլլան ։

Այս , սիրելի որդեակ.ք իմ , դուք ալ գիտ. թէ նոյն ծաղկահասակ Տելեմաքին վիճակին մէջ կը գտնուիք , և ձեր կենաց ընթացք.ին ալ՝ ուր պիտի մտնէ.ք , անոր անցած մեծամեծ ծովերէն քիչ վտանգաւոր չէ ։ Բայց թէ որ դուք ալ նոյն վտանգներուն մէջ էք , պիտի ունենաք անոր պէս մէկ Մենտոր մի , որ ձեր ճշմարիտ բարութեանը համար ունեցած բարի նախանձաւորութենէն քաջալերուելով , ձեռքէն եկածը զանց

պիտի չուզէ, որ զձեզ այն վտանգներէն ազատ պահէ. և Ուլիսեսի որդին Մինեւրվայէն ինչ ծառայութիւններ որ ընդունեց, նոյնը ձեզ ալ պիտի տայ։ Ձեր Մենտորը պիտի ըլլայ այս գիրքս։ Անիկայ պիտի ցուցընէ ձեր երթալու ճամբան, և վտանգաւոր տեղուանքը՝ որոնց մէջ դիւրաւ կ՚իյնիք թէ որ ձեր չար կիրքերուն անձնատուր ըլլաք, կամ չար օրինակներուն՝ որոնք միշտ ձեր աչքին առջևն են։ Այս գիրքը պիտի սորվեցընէ ձեր կատարելու պարտքերը, և ձեր աչքին դիմացը պիտի բերէ այն պակասութիւնները՝ որոնցմէ զգուշանալ պարտիք, կամ թէ որ ունիք՝ պէտք է շիտկէք զանոնք։

Այս գիրքը, չերկնցընեմ, այն է՝ որ կը ջանայ ձեր միտքը լուսաւորել և ձեր սիրտը ուղղել. պիտի սորվեցընէ ձեզ այն ամէն բաները, որոնք կրնան իմաստուն, առաքինի և երջանիկ ընել զձեզ։

Մի կարծէք թէ անիկայ խիստ և անաչառ կերպով մը պիտի կրթէ զձեզ. ոչ, իմ սիրուն զաւկըներս, և ոչ վարժապետի նման, այլ բարեկամօրէն պիտի խօսի հետերնիդ։ Իր դասերը ձանձրալի չպիտի ըլլան, այլ պիտանի, զուարճալի և հետաքրքրական պատմութիւններով զարդարուած։ Ձեր Մենտորն ամենեւին առանց օրինակ մը բերելու բան չպիտի սորվեցընէ ձեզ. և իր խօսքերէն աւելի պիտի ջանայ սիրցընել ձեզ առաքինութիւնը, առաքինի մարդոց գործքեր ձեր աչքին առջև բերելով, զու-

րանք պատմութեանց մէջ կը կարդանք ։

Որպէս զի աւելի զուարճալի ըլլան ձեզ այս երկար վարդապետութիւնները, կը սկսիմ մանր պատմութիւններէ, որոնց շատ կը հաճին ձեր հասակի տղայք ․ կը տեսնէք ասոր մէջ քանի մի համառօտ առակներ, որոնց մէջ՝ առեղծաբանութեան զուարճալի քօղով մը պիտի ջանամ օգտակար դաս մի տալ ձեզ ։

Բայց սիրելի զաւկըներս, զձեզ կրթելու համար ունեցած իմ աշխատութիւններս փուճը կ'ելլեն, թէ որ դուք ալ ինքնին հոգ չտանիք օգուտ մի քաղել այս իմ դասերէս ։ Կարդացէք զասոնք մտադրութեամբ, և ամէն բանէն աւելի ջանացէք ի գործ դնել ։ Կրկին անգամ միտքերնիդ կը ձգեմ, թէ երիտասարդ Տելեմաքը իւր խելացի առաջնորդին խրատներուն ականջ դնելով ազատեցաւ ապառնալի վտանգներէն, և հասաւ իւր բարեբախտ ու ցանկալի վիճակին ։ Նոյն կերպով, այսինքն դուք ալ ձեր վարքն այս օգտակար առածներուն շինելով, զորոնք պիտի ցուցընեմ ձեզ հետզհետէ, պիտի կարենաք ինքզինքնիդ պաշտպանել մոլութեան աղետալի հետեւանքներէն, և առաքինութեամբ վարուելով անդին օգուտներ քաղել ։ Երանի թէ այս գրքիս մէջ ձեզ տուած դասերէս ալ նոյն պտուղները քաղէիք ․ վասն զի այն ժամանակ իմ բաղձանքս ալ կը լեցուէր, և իմ երջանկութիւնս խիստ կատարեալ կը սեպուէր, թէ որ զձեզ երջանկացընելու կարող ըլլայի ։

# ԳԼՈՒԽ Ա.

## Թէ որչափ հարկաւոր է որ փոքր պզտիկութենէ սկսին առաքինութեան հետեւիլ։

Ահա, սիրելի զաւակունք իմ, չափահաս հասակի մէջ կը գտնուիք հիմա։ Դուք ձեր օրոցքին բոլորտիքը պատող վտանգներէն ազատուելով՝ նոր ընթացք մի կը մտնէք. հիմա կը սկըսիք աշխարհիս կեանքը վարելու։ Ձեր հիմակուան հասակը շատ զուարճալի, բայց շատ ալ վտանգաւոր և փափուկ է։

Օրինակի համար, սեպենք թէ, մարդ մի երկար և ձախորդութեամբ լեցուն ճամբորդութիւն մի պիտի ընէ, թէ որ նա խելացի և բախտաւոր է, ճամբան սկսած ատեն իւր առջի անգամու քայլը աղէկ ճամբու մէջ կը նետէ, և իւր փափաքելի նպատակին դիւրաւ կը հասնի։ Բայց թէ որ դժբախտութեամբ խաբուելով, ծուռ ու մոլար ճամբաներու մէջ իյնի, իրաւ շատ կը քալէ, բայց ամենեւին առաջ չերթար. ուր որ է՝ հոն կը մնայ, և բնաւ տեղէն չհեռանար։ Մոլորուած կ'երթայ խիտ ու մութ անտառներու մէջ, և զինքը յանկարծ այնպիսի զարհուրելի գահավէժ տեղուանք կը գտնէ, ուսկէ շատ անգամ ետ չկրնար ազատիլ։

Ահա այսպէս է ձեր հիմակուան վտանգաւոր վիճակը։ Դուք հիմայ աշխարհիս դրանը չեմին վերայ կայնած էք։ Երկու այլ և այլ ճամ-

բաներ առջևնիդ բաց ունէք. այսինքն՝ մէկը մոլութեան ու մէկալը առաքինութեան։ Թէ որ ձեր միտքը չարութեան պառկած ըլլայ՝ առջինին մէջ քալել ուզէք, ինքզինքնիդ անխորհելի վտանգի մէջ կը ձգէք, և ամէն մէկ քայլ նետելնուդ՝ մէկ անդունդէն միւս անդունդը կ'իյնէք, ու վերջապէս զարհուրելի դար ու փոս տեղ մը կը գլորիք կ'երթաք, ուր տեղ կը գըտնէք ձեր վերջին թշուառութիւնը։ Բայց ընդհակառակը՝ թէ որ դուք իմաստուն և խելացի ըլլալով, առաքինութեան ճամբուն մէջ քալէք՝ որ ամէն փոսերէն ու վտանգներէն ազատ է, քաղցր և հանգիստ կեանք մը կ'անցընէք. Աստուծոյ խոստացած վարձքերը կը առնէք, որ միայն առաքինի հոգւոց համար պահուած է։ Մտածեցէք հիմա, սիրելի զաւակունք իմ, որչափ կարևոր է որ գիտնաք ընտրութիւն ընել այս երկու ճամբաներուն մէջ, որոնց նպատակները մէկմէկու այսքան հակառակ են։

Ամէն բան այս ընտրութենէն և կենաց առջի տարիներուն մէջ բարեկարգ եղանակով վարուելէն կախեալ է. վասն զի՝ ինչպէս որ աղէկ կաթով սնուած տղայք կատարեալ առողջութիւն կ'ունենան, նոյնպէս՝ անոնք որ մանկութեան մէջ առաքինութեան համն առած են, հաստատ կը պահեն զայն իրենց բոլոր կենացը մէջ, և կրնամ ըսել՝ թէ բնականաբար միշտ առաքինի կ'ըլլան։

Օրէնսդրի մը հանճարեղ սրամտութիւնը։

Լիկուրգոս՝ Լակեդեմոնացւոց օրէնսդիրը, երկու հատ շան լակոտներ առաւ քովը, որոնք մէկ հօրէ և մէկ մօրէ ծնած էին, և զանազան եղանակով կրթեց զանոնք, այնպէս որ՝ երկուքն ալ իրենց սովորութեամբը՝ մէկը իր որկրամոլութիւնը կշտացնելու կը ջանար, ու մէկալը միայն որսորդութեան կը ցանկար։

Լիկուրգոս երբոր կրցաւ իր մտքի դրած փորձը գլուխ հանել, գնաց օր մը Լակեդեմոնացւոց առջեւ, որոնք՝ ինչպէս սովորութիւն էր, հրապարակին մէջ հաւաքուած էին խորհուրդ ընելու համար. և ըսաց անոնց. «Լակեդեմոնացիք, մտիկ ըրէք ինծի։ Շատ հարկաւոր բան է տղայոց սրտին մէջ կանուխէկ առաքինութեան սէրը ձգել։ Կարելի է որ բաւական չիմանաք դուք այս ճշմարտութիւնս. բայց ես հիմայ յայտնի [illegible] ցուցընեմ ձեզ զայն»։ Այս խօսքերը ըսելէն ետքը, յառաջ քշեց երկու շուները, և այն բազմաթիւ ժողովքին մէջ կեցընելով զանոնք, առջեւնին ամանով մը կաթ ապուր և ողջ նապաստակ մը դնել տուաւ։ Շունին մէկը անմիջապէս նապաստակին ետեւէն վազեց, որ կը փախչէր, և մէկալը մեծ ախորժանօք մը նետուեցաւ ամանին վերայ, ու մէջի ապուրը մէկէն լափեց հատցուց։ Այս բանը տեսնելով ամենքն ալ զարմանքի մէջ մնացին. բայց մէկը չէր գիտեր անոր գաղտնի-

քը բացատրելու ։ Լիկուրգոս սկսաւ շարունակել այն ատեն իւր խօսքը՝ ըսելով. «Այս երկու շուները մէկ հօրէ և մէկ մօրէ ծնած են. բայց մէկմէկէ տարբեր եղանակաւ կրթուելնուն, մէկը որկրամոլ և մէկալը որսորդ եղաւ ։ Այս օրինակէս ձեր տղայոց ինչ վախճան ունենալը դուք ալ վճռեցէք. և գիտնաք որ անոնք իրենց մանկութեան ժամանակ ինչ սովորութեամբ որ մեծցան, նոյն կերպով կ'անցրնեն իրենց բոլոր կեանքը» ։

---

# ԱՌԱԿ

Երկու նաւավարները։

Գեղեցիկ և պարզ օր մը Անսելմոս և Փիլերոս երկու նաւավար. իրենց նաւակնուն մէջ ապրանք բեռցած կ'երթային ։ Մէկը ամենևին արհեստէն չհասկընալով և բնաւ վտանգէ ալ չվախնալով, նաւուն ծայրը նստեր կ'երգէր. իսկ մէկալը աչքը ալիքներուն վրայ միշտ տընկած ունենալով, գիտէր թէ անոնց տակը ինչ որոգայթներ ծածկուած կան ։ Այսպէս երկար ատեն գետին երեսը երկուքնին ալ առաջ կ'երթային ալիքներուն հետ կռուելով. հովը իրենց յաջողակ էր և վտանգէ վախ չունէին. մէկ մ'ալ ինչ նայիս, ալիքներուն վրայ կամուրջ մը կ'երեւի կամարներով ։ Անսելմոս կը պոռայ Փիլերոսին. «Վայ մեզ, բաներնիս բուսած է.

կը տեսնես այդ կամուրջը, անկարելի է մեզ որ այն կողմը նաւարկենք. այլ ջանա՛մ վարպետութեամբ նաւուն ղեկը (տիւմէնը) այնպէս դարձընելու »: Պատասխան տուաւ անմիտ երիտասարդը. «Ինչո՞ւ այդքան կը վախնաս. մի թէ Սալամբքցի՞ եմք մենք. կամուրջը մեզմէ հեռու է, և եթէ կ'ուզես՝ մ'անցնիր հինգ անոր կամարներուն տակէն: — Չէ, կրկնեց ծերը բարկանալով, այս րոպէն է, ուսկէ մեր վիճակը կախեալ է՝ թէ բարեյաջող և թէ աղետալի. դարձի՛ր աջ դին, ջանա ու արտորա՝ թիակները աղէկ բանեցընելով »: Փուճ տեղը կը պոռայ կը սպառնայ խելացի նաւավարը. հոսուն կ'երթային իր ղուցածները, և անմիտ տղայն բնաւ մտիկ չէր ըներ, այլ իր նաւուն ծայրը կը շիտկէ դէպ 'ի այն կամրջին կողմը, ուր տեղ ալիքները կատղած էին: Ահա այն երկբայելի ժամը եկաւ հասաւ, և վախնալով որ չխեղդուի, արիւն քրտինք կը մտնէ ու կը յոգնի, և կըկլափ խոտորնակի թի քաշել. «Վա՜յ ինձ դըժբաղդիս, կը պոռայ, հասի՛ր, վա՜յ գլխուս, ահա ծովուն տակ գնացի »: Այսպէս ըսելով նաւակը կամարին կը զարնէ, կը խորտակի, խեղճ տղայն կամրջին տակէն Խարոնին (1) նաւուն մէջ ինքզինք կը գտնէ:

Անփորձ երիտասարդներ, ձեզ կ'ըսեմ, դուք որ այս մահկանացու աշխարհիս ընդունայն և

---

(1) Խարոն էր ըստ [illegible] ի նաւավար, որ մեռելոց ոգիները իր [illegible] էն կ'անցընէր:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ.
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ծաղկալից ճամբան քալելու կը փափաքիք, փախ-
ցիք Փիերոսին աղետալի և անգութ ճակատա-
գրէն: Այն որ իւր ոտքը սխալ ճամբուն մէջ
կը կոխէ, այն որ անմտութեամբ ճամբէն դուրս
կ'ելլէ, սառի վերայ քալողի պէս՝ մեծ աշխա-
տութիւն պիտի ունենայ միշտ որ չսահի ու չինկ-
նի. բայց անօգուտ, վասն զի վերջապէս ոտքը
կոտրելով կ'ինկնի սոսկալի փոսի մը մէջ:

## ԳԼՈՒԽ Բ.

**Հետեւեալ օրինակներս ալ կ'ընծայեն ապացոյց՝ թէ դժ-
ուար բան է մանկութեան ժամանակ ստացած չար սովո-
րութիւններն ուղղել:**

Շատ տղայք կարծեն թէ իրենց ունեցած
պակասութիւնը տարիներ անցնելով կը շտկուին:
Բայց ընդհակառակը փորձով կը տեսնենք ամեն
օր, թէ անոնք որ իրենց մանկութեան ժամա-
նակին չար սովորութիւններ ստացեր են, շատ
տարիներ անցնելով չեն կրցեր բնաւ ուղղել
զանոնք: Ասոր հակառակ, մոլութեան սէրն ա-
տեն անցնելով կ'աճի, և մոլի տղայք միշտ ա-
նառակ ու չար մարդիկ կ'ըլլան:

---

Երիտասարդ իշխանի մը վերայ կանխատեսութիւն իրօք ստուգուեցաւ:

Սուրբ Գրիգոր և սուրբ Բարսեղ Աթէն-
քի մէջ ուսում կը սորվէին Յուլիանոս երիտա-

սարդ իշխանին հետ, որ ետքը ուրացող ատելի մականունը ժառանգելու արժանի եղաւ ։ Իսկ առաջուընէ իմացան այս սուրբերն իրենց դասընկերին մտաց անկարգութիւնը, անոր դէմքին գծագրութենէն (սիմայէն) և բոլոր արտաքին կերպարանքէն գուշակելով ։ Աչքերը կրակի նման փայլուն՝ բայց շիլ էին, նայուածքն յայտնի կը ցուցընէր իւր գազանութիւնը . բարկացոտ ու գոռոզ տեսք մի ունէր . ծաղրական կերպով մի կը կտրտուէր . առանց պատճառի ամէն րոպէ գլուխը կը շարժէր, ամուր ու բարձր ձայնով կը ծիծաղէր . յանդուգն խնդիրներ կ՚առաջարկէր, և իրեն բան մի հարցընողին երկդիմի և բանսարկու պատասխաններ կու տար ։ Չափազանց փափաք ունէր հեթանոսաց փիլիսոփայութեան մէջ վարժուելու ։ Իսկ քիչ սէր ունէր քրիստոնէական ճշմարտութիւնը սորվելու . խելքը միտքը միայն աստղաբաշխութե՟, կախարդութեան և ուրիշ հեթանոսական սնապաշտութիւններու տուած էր ։ Բոլոր այս դիտողութիւններն և ուրիշ շատ պակսութիւններ ալ, որոնք որ Յուլիանոս չէր կրնար ծածկել, թէպէտեւ կ՚աշխատէր կեղծաւորութեան քօղով յայտնի չըլնելու, սակայն ըսել տուին սուրբ Գրիգորին թէ՝ Հռովմայ տէրութիւնը իւր գրկին մէջ մէկ հրէշ մի կը սնուցանէ ։ Չխաբուեցաւ սուրբը, երբ անիկայ իրօք փորձեր տուաւ անոր կարծիքը խիստ ճշմարիտ ըլլալուն ։ Յուլիանոս իւր երիտասարդութեան հասակին մէջ որքան չար

ունակութիւններ ունէր, ամենուն աչքին յայտնի երեւցաւ երբոր մեծցաւ : Քրիստոնէութեան խիստ ոխերիմ թշնամիներէն մէկն եղաւ, և իւր ամբարշտութիւնն այնքան աւելցաւ՝ մինչեւ հրաման հանեց ընդհանուր հրովարտակով մի, որ կռապաշտներուն տաճարները բանան. և ինքն իւր վերան առաւ քահանայապետութեան մեծ պաշտօնը. այս կերպով կը ջանար իւր ընդունած սուրբ մկրտութեան կնիքը ջնջել կռոց նուիրած զոհերուն արիւնովը :

Ուրեմն դուք հիմայ ձեր բռնած ճամբան ձեր ապագայ ընթացքին անխախտ գուշակութիւնը պիտի սեպէք :

Տղայութեան մէջ ստացած չար ունակութիւնները (խուլերը) կը նմանին, կ՚ըսէ նոր հեղինակին մէկը, պզտի ծառի մի կեղեւին վերայ փորագրուած գրերուն, որոնք ծառին հետ մէկտեղ կը մեծնան և իբր թէ անոր մէկ մասը կ՚ըլլան:

Թէ որ հիմակուընէ ջանք ընէք ձեր սիրան առաքինութեան սիրով վառելու, կրնաք ամեն բանի յուսալ, և ամեն բան ձեռք բերել կատարեալ հասակին մէջ: Բայց թէ որ ընդհակառակը մոլութեան ճամբաներուն մէջ կը սկսիք քալել, մէկ դժբախտութենէ միւս դժբախտութեան մէջ կ՚իյնիք, և չէք կրնար շիտակ ճամբան գտնել:

---

### Գէշ կրթութեամբ մեծցող իշխանի մի զղջումը:

“ Շատ գէշ կրթուեցայ, կ՚ըսէր մեծն Պետ-

րոս կայսրը ։ Իմ դաստիարակներս փոխանակ կատաղի բնութիւնս զսպելու , անոր սաստկանալուն ալ կ՚օգնէին ։ Հիմայ նոյն բնութեանս վերայ կ՚ամչնամ. և այս սովորութիւնս այնքան զօրացած է իմ վերաս , զոր չեմ կրնար բարկութեան եկած ժամանակս զսպելու ։ Ես որ իմ հպատակներուս բնութիւնը շտկեցի , չեմ կրընար ինքզինքս շտկել » ։

Ահա այս բանս դուք ալ պիտի փորձէք , թէ որ հիմակուընէ չաշխատիք ձեր կիրքերը սանձելու , որոնք կը նմանին հիմայ կայծերու , որ դիւրաւ կը մարին , կամ առիւծի կորիւններու՝ որոնք դիւրութեամբ կը նուաճին և մինչեւ կրընայ մարդ զանոնք իրեն ընտանեցընել ։ Բայց Աստուած չըցուցընէ որ այն կիրքերը դժբաղդութեամբ ձեր սրտին մէջ մնալով ուժ առնուն և մեծնան . վասն զի դէշ հրդեհ ( եանղըն ) մի կը ձգեն սրտերնուդ մէջ , և քիչ ժամանակէն կատղած առիւծներ կը դառնան և կը պատըռտեն զձեզ ։

Ինչպէս որ հիւանդութիւն մի մեր վերայ մնալով հիննալու ըլլայ , վերջապէս կ՚առնու գերեզման կը տանի զմեզ , այսպէս ալ կիրքերը հիննալու որ ըլլան մեր սրտին մէջ՝ մեր հոգին կը սպաննեն ։ Նաջի բերանը սովորաբար թեթեւ հիւանդութիւն մի են , որ դեղով դիւրութեամբ կը բժշկին . բայց թէ որ հոգ չտանիք շուտով ճար մի գտնելու անոնց , և այն դէշ խմորը վերցընել մեր վերայէն , որ հիւանդութեան պատ-

ճառն է, ետքը կը սկսի խմորիլ (մայթլմամբ) այն, եւ մեր բոլոր արիւնը կ'ապականէ․ այն ժամանակ կ'ինկնինք բժիշկներուն ձեռքը ոտքը, դեղ ու դարման խնդրելով, բայց ամենուն օգուտ մի կ'ըլլա՞յ կ'ըսէք, չէ՛, այլ կ'առնու կը տանի զմեզ այն թեթեւ հիւանդութիւնը, որ կրնար բժշկուիլ առջի բերան դեղ ընելով։

Աշրանի ուրեմն այն աղայոց ու երիտասարդաց, որ իրենց պզտի հասակէն կը սկսին առաքինական առողջութիւններու հետեւիլ․ եւ որքան կը ցաւիմ անոնց, որ գէշ մոլութիւններ կ'ըստանան։ Թող որ ատոնք իրենց գլուխը գալիք դժբախտութիւնը չեն իմանար, յետոյ երբ մեծնալու ըլլան՝ պիտի լան անոր վրայ․ բայց ճար մի պիտի գտնե՞ն արդեօք։

---

## ԱՌԱԿ

կացնին եւ նորաբոյս տունկ։

Տղուն մէկը իւր հօրը հետ տան մէջ եղած պարտէզը կը մտնեն զուարճանալու համար։ Մէկէն աչուընուն կը հանդիպի նորաբոյս տունկ մի, որ սաստիկ փոթորիկին երեսէն ծռուելով գլուխը վայր իջեցուցեր էր։ Հայրը՝ որ միշտ կը ջանար օրինակներով խրատել իւր որդին եւ անոր վարքը շտկել, դարձաւ ըսաւ․ «Կը տեսնե՞ս այս ծառը, որ թէպէտ մեծցած եւ տերեւները ալ թափած է, բայց ի՛նչպէս աղեղի նը-

մնն ծռուեր է ։ Գնա՛, սիրելի որդիս, գնա այն ծառն առջինին պէս շտկէ ։ — Խիստ աղէկ, պատասխան տուաւ խեղճն որսորդ տղայն, և սկըսաւ ձեռքովը վեր ընել զայն ու շտկեցուց ։ — Այդպէս, կրկնեց հայրը, բայց հոն կամնիլի (մէջէ) մի ծառ կը տեսնեմ, որուն բունը չեմ գիտեր քանի ժամանակէն ի վեր այնպէս ծռուեր է ։ Իրաւ քիչ մի ծեր է, բայց ինչ օգուտ որ այն ալ մատաղաշ բոյսին պէս շտկելու հարկաւորութիւն ունի ։ Այդէ, շուտով մօտեցիր անոր ալ, և քաջութեամբ նոյն ծառն ալ շտկէ տեսանեմ»։ Տղայն խնդալով մի բաց իւր հօրը. «Հայր իմ, այնքան կարողութիւն չունիմ ես, և ոչ Սամփսոն եթէ ողջ ըլլար, կրնար շտկելու զայն ։ Ո՛չ թէ միայն ցուցցած կամնիլի ծառդ, այլ եւ թեղօշի ծառն ալ, կնձնին (գարա աղած) և եղեւինն (չամն) ալ մատուըններովն արմատէն կը փրցընէի կը հանէի, թէ որ պզտիկ ըլլային ։ Բայց մէկ անգամ որ գետնին տակ խորունկ արմատներ ձգեր են, այն ծառը խլելու կարողութիւնը կայծակին միայն շնորհուած է ։

— Այո՛, ես ալ այս կ'ուզէի, կրկնեց բարեմիտ հայրն իւր զաւկին, ահա ես ալ այս կ'ուզէի սորվեցընել քեզ քու բերնիդ խօսքերովը ։ Նորահասակ տղու մի սրտին՝ սիրտ, ցանկութեան, և յիմարական կիրքերը, պզտի ծառերուն նման մէկմէկ վէրքեր են, զոր բժշկելու համար բաւական չեն ըլլար այնքան քրտինքն, աշխատութիւնն և տառապանքները, տարիներ վերայէն

անցած են, և հին մոլութիւնները միշտ աւրե-լու կը ջանան զանոնք»:

Այս առակը միտքս գեղեցիկ պատմութիւն մի ձգեց, և ուրախութեամբ պիտի կարդաք դուք ալ, վասն զի լաւ կ'իմացնէ թէ որքան հարկաւոր է որ մարդս իւր տղայութեան ժամանակ ունեցած պակասութիւնները ժամ մի առաջ ջնջէ: Ահա այս տեղս կը դնեմ, ինչպէս որ Հարանց վարքին մէջ կը պատմուի:

---

Ճգնաւորի մի իմաստուն վարմունքն իւր աշակերտներուն հետ:

Ճգնաւորի մի աշակերտները հարցուցին իրեն օր մի՝ թէ ի՞նչ ընեն որ դիւրութեամբ յաղթեն իրենց կիրքերուն: Աս առանձնեալ հովանաւոր անապատի մի մէջ կը բնակէին անոնք, ուր տեղ լեցուն էր մեծ ծառերով և նոճիներով, ուստի փոխանակ պատասխան տալու անոնց բարի Ճգնաւորը, պզտի ծառ մի ցուցուց և հրամայեց մէկուն որ երթայ արմատէն փրցունէ հանէ. աշակերտն ալ շուտ մի կատարեց անոր հրամանը միմիայն մէկ ձեռքով: Յետոյ ուրիշ ծառ մի ցուցուց անկէ մեծկակ, որ թէպէտ այն ալ հանեց աշակերտը, բայց քիչ մի դըժուարութեամբ, և հարկ եղաւ որ երկու ձեռքով աշխատի: Յետոյ աւելի մեծ մի ցուցուց անոր, զոր չկրնալով միմիայն խլել հանելու, իւր ընկերներէն մէկուն օգնութեամբ շատ աշխատելով այն ալ հանեց: Վերջապէս իմաստուն

ծերը մէկ մեծ և հաստըկէկ ծառ մի ցըցուց անոնց որ հանեն ։ Աւստի ամեն աշակերտներ մէկտեղ գալով՝ բոլոր ուժովնին աշխատեցան որ այն ծառն ալ փրցունեն հանեն , բայց չկրցին ։ Այն ժամանակ սուրբ ճգնաւորն սկսաւ խրատել իւր աշակերտներն՝ ըսելով անոնց . «Սիրելի զաւկըներս , ահա մեր կիրքերն ալ ասոնց պէս են . քանի որ արմատացած չեն , դիւրին է խլել զանոնք , թէ որ քիչ մի ջանանք անոնց յաղթելու ։ Բայց երբոր առեն անցնելով մեր սրտին մէջ արմատ ձգելու ըլլան , շատ դժուար կ'ըլլայ անոնց յաղթելը ։ Ապա ուրեմն քանի որ այդ մատաղ հասակին մէջն էք , ջանացէք որ յաղթէք ձեր թշնամիներուն , այսինքն ձեր կիրքերուն . եթէ ոչ՝ հետզհետէ այնպէս ուժ կ'առնուն անոնք , որ ձեր յաւիտենական կորստեանն ալ պատճառ կ'ըլլան » ։

## ԳԼՈՒԽ Գ.

### Աստուածպաշտութեան վրայ ։

Չար սովորութիւններէն զձեզ պահելու համար , որոնք ձեր տղայական հասակը կը խանգարեն , և պատճառ կ'ըլլան ձեր բոլոր կեանքը թըշուառաբար անցընելու , Աստուածպաշտութենէ ուրիշ աւելի օգտակար և ազդու միջոց չկայ ։ Ասոր համար է որ կ'ուզեմ անոր հարկաւորութիւններն և օգուտները ձեզ իմացընել այս տեղ ։

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

Աստուածպաշտութենէ աւելի հարկաւոր բան չկայ։

Աստուած զձեզ ստեղծեց որ իրեն ծառայէք, և սիրտ մի տուաւ ձեզ որ զինքը սիրէք։ Ուրեմն պէտք է ձեզ, սիրուն զաւակունք, որ անհրաժեշտ պարտաւորութիւն սեպէք անոր ծառայելն ու սիրելը։

Անշուշտ բնութենէ դուրս տղու մի տեղ կը դնէիք դուք զձեզ, թէ որ չսիրէիք ձեր ծնողքը, որոնք ձեզ կեանք տուին, և խնամունք կ'ունենային։ Բայց մտածեցէք մէկ մի, որ դուք երկնքին մէջ հայր մի ունիք, որ քան զամէն մարդիկ արժանաւոր է ձեր սիրոյն։

Այս գթած և կատարեալ հայրը՝ Աստուած է։ Անիկայ ամէն մարդիկներուն կը հրամայէ որ զինքը սիրեն, բայց աւելի կ'ախորժի՝ թէ որ երախտապարտ տղու մի սրտէն հնազանդութեան և սիրոյ նշանն ընդունի, ինչու որ պզտի տղուն սիրտն աւելի մաքուր և ողջախոհ է։

Օր մի առաքեալները մէկդի հեռացընել կ'ուզէին պզտի տղաքները, որոնք կ'աշխատէին Յիսուսի քով մօտենալ։ Բայց Յիսուս սաստելով, Թողէք, ըսաւ անոնց, որ այս պզտի տղաքը ինծի մօտենան, ինչու որ անոնց (և անոնց նմանող տղայոց) է երկնից արքայութիւնը։

Մօտեցէք ուրեմն անոր, սիրուն զաւակունք, ջերմեռանդ և ճշմարիտ աստուածպաշտութբ։

Աստուծոյ սիրելի ըլլալու համար՝ ո՛չ հաղուագիւտ տաղանդ և ոչ ազնուականութիւն հարկաւոր է, և ոչ ուրիշ իմաստուն յատկութիւններ, որոնք մարդկանց քով միայն հաճոյ և պատուական բաներ են։ Աստուծոյ քով միայն աստուածպաշտութիւնն արժէք ունի։ Անով միայն կրնանք հաճոյ ըլլալ անոր։

---

### Թագաւոր եղող հովիւը։

Աստուած խոստանալով Թագաւոր մի տալ իր ժողովրդեան, հրամայեց Սամուէլին որ երթայ Յեսսէին և Թագաւոր օծէ անոր որդւոցը մէջէն՝ զայն որ Աստուած ընտրութեան արժանի դատի։ Յեսսէ ցուցուց Սամուէլին Եղիաբ անուն անդրանիկ տղայն, որու մեծ կերպարանքը և հասակին մեծութիւնը տեսնողը կ'ըսէր՝ թէ Թագաւոր ըլլալու մարդ է։ Սուրբ մարգարէին աչքին ալ այնպէս երեւալով՝ օծելու վրայ էր, բայց Աստուած իսկոյն իմացուց անոր իր սխալանքը։ Յեսսէ իր միւս վեց զաւկըներն ալ նոյնպէս հետզհետէ ցուցուց Սամուէլին. բայց Աստուած խօսեցաւ անոր թէ՝ անոնց մէջ և ոչ մէկը ընտրութեան արժանաւոր էր։ Մ՚ընաց միայն պզտի տղայն Դաւիթը, որ ոչխարները կ'արածէր. ուստի կանչել տուին զանիկայ, որ գալուն պէս խօսեցաւ Աստուած նորէն Սամուէլին հետ և ըսաւ. «Ելիր, օծէ Դաւիթը,

ինչու որ զայդ ընտրեցի ես Թագաւոր իմ ժողովրդիս վերայ ։ »

Գիտէ՞ք արդեօք ինչու համար Դաւիթ միւս եբրայիներէն աւելի արժանաւոր սեպուեցաւ , որոնք առաւել յարմարութիւն ունէին Թագաւորելու ։ Աստուած նոյն ինքն անոր պատճառը յայտնեց Սամուէլին , երբ նա Եղիաբն ընտրել կ'ուզէր , և ըսաւ . « Մարդիկ կը տեսնեն միմիայն դրսի կերպարանքը , բայց Աստուած սրտին մէջ եղած գաղտնիքները կը յայտնէ ։ » Իսել կ'ուզէր թէ՝ մարդիկ ուրիշին արժանաւորութիւնը արտաքին երեւոյթէն կը դատեն . Աստուած ոգւոյն բնաւորութեանը և սրտին զգացմունքներուն վերայօք կը դատէ ։ Ուստի պէտք է որ սիրենք զինքը և ծառայենք իրեն , որպէս զի իւր շնորհացը արժանաւոր ըլլանք . և աստուածպաշտութենէն ի զատ ուրիշ բան մի չկայ , որով մարդ կարող ըլլայ հաճոյ գտնուիլ անոր աչքին ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ամէն բանէն աւելի աստուածպաշտութիւնը ընտրեցի ես ։

Թէպէտ ես բնութեամբ խիստ գեղեցիկ և ընտիր ձիրքերով զարդարուած ըլլամ , աշխարհիս բոլոր գիտութիւններուն տեղեակ՝ և չափազանց հարստութիւններ և պատիւ ստացած ըլլամ , թէ որ ձեր սրտին մէջ աստուածպաշտու-

թիւն չկայ, Աստուծոյ աչքին ոչինչ չէք համարիր ։ Բայց թէ որ ընդհակառակն բնութեան և բախտին պարգեւներէն զուրկ մնացած՝ և միայն Աստուծոյ սէրն և երկիւղն ունենանք, անոր առջեւ աւելի մեծ կ՚երեւանք քան զբոլոր երեւելի դիւցազունները, որոնց վերայ աշխարհս կը զարմանայ. բայց երկնաւոր Դատաւորը կը դատապարտէ և կը յանդիմանէ զանոնք, թէ որ աստուածպաշտութիւնն անոնց դիւցազնութեհիմը չըլլայ ։

---

Լուդովիկոս Թագաւորին իւր որդւոյն տուած խրատները։

Լուդովիկոս Թ. (1) Գաղղիոյ Թագաւորը՝ որ իւր գիտութենէն և քաջութենէն աւելի իւր առաքինութիւններովն և սուրբ վարքովը պայծառացուց զԳաղղիան, քրիստոնեայ անունը աւելի մեծ կը սեպէր իրեն՝ քան թէ Թագաւորական տիտղոսը՝ և զաստուածպաշտութիւնն՝ աշխարհիս բոլոր մեծութիւններէն վեր կը դասէր ։ Ուստի երբ մահուան դուռը մօտեցաւ, քովը կանչեց իւր որդին, և յետագայ խրատները տուաւ անոր, որոնք արժանի են բոլոր տղայոց ականջնէն ի վայր միշտ կրկնել ։

---

(1) Գաղղիոյ աթոռը նստող խիստ առաքինի և խիստ մեծ թագաւորներէն մէկն եղաւ Լուդովիկոս Թ.ը ։ Քրիստոնէական կրօնքին վերայօք այնքան նախանձաւորութիւն ունէր, որ երկու անգամ գնաց սուրբ երկրին տիրելու ։ Մեռաւ Թունեսոն (Թունուզ) քաղաքը 1270ին. և իւր մեռնելէն 17 տարի ետքը լատինացւոց սրբոց կարգը դասուեցաւ ։

«Սիրելի զաւակս, առաջին խրատս զոր քեզ պիտի տամ, այս է. սիրէ զԱստուած բոլոր սըրտանդ, վասն զի առանց այս սուրբ սիրոյն՝ փըրկութեան չեմք հասնիր ։

«Օգուշ կեցիր չընել այնպէս բան մի որ Աստուծոյ անհաճոյ ըլլայ, այսինքն մեղք գործելէն ։ Լաւ սեպէ դուն մեծամեծ տանջանքներ կրել՝ քան թէ զԱստուած վշտացընել ։

«Ամէն առտու խոստովանէ մեղքերդ, ու նայէ որ խոստովանահայրդ գիտուն և աստուածավախ ըլլայ, որ կարենայ սորվեցընել քեզ այն բաները, զոր պարտաւոր ես գործելու, կամ անոնցմէ հրաժարելու ։

«Սրբազան պաշտօններու և սուրբ պատարագին ջերմեռանդութեամբ միշտ ներկայ գըտնուէ. և չըլլայ որ մէկու մի հետ խօսիս ու աչուըներդ այսդին այնդին պըտըտցունես. այլ պըռկունքներովդ և սրտովդ ջերմեռանդութի աղօթէ, մանաւանդ սուրբ պատարագը ըլլալէն յետոյ ։

«Օգուշ եղիր որ չընկերանաս այն մարդոց հետ, որոնք ճշմարտապէս առաքինի չեն ։

«Նարկքները ամէն բանէն վեր բռնէ, և ատէ այն չարիքներն որ ուրիշին վերայ կը տեսնես

«Նոյն կերպով քու աստուածպաշտութիւնդ օրինակ ըլլայ ուրիշներուն. մէկը չհամարձակի քու առջեւդ չնչին խօսք մ'ալ զրուցելու, ընկերի սիրոյն դէմ մեղանչէ, կամ մեղք գործելու պատճառ ըլլայ ։

« Ստէպ փառք տուր Աստուծոյ իւր բոլոր երախտեացը համար՝ զոր քեզ շնորհեց, որպէս զի արժանի ըլլաս միշտ աւելի բարիքներ ընդունելու անկէ »:

Ինչ որ այս բարեպաշտ Թագաւորն իւր որդւոյն ստէպ ստէպ կ'ըսէր, ես ալ ձեզ կը կրկնեմ, սիրելի պատանիք իմ. և ահա այս խըրատներն է զոր կ'ուզեմ ձեր սրտին և մտաց մէջ խորունկ տպաւորելու:

Վախցէք Աստուծմէ, կ'ըսէ իմաստունն, և պահեցէք անոր պատուէրներն, որոնցմէ կախեալ է մարդոյս երջանկութիւնը:

Գիտութիւններ, հարստութիւններ, պատիւ, ամենքն ալ բարիք են, բայց առանց անոնց ալ կրնանք ըլլալ. իսկ աստուածպաշտութիւնն անհրաժեշտ հարկաւորութիւն մի է: Ասով ամեն բան օգտակար կ'ըլլայ. առանց ասոր ամեն ինչ թոյնի կը փոխուի, և ամեն ինչ յանցաւոր ու դժբախտ կ'ընեն զմեզ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

Աստուածպաշտութիւնը միայն կրնայ զմեզ երջանիկ ընել:

Պարապ տեղ աշխարհիս բարիքներուն և հաճութիւններուն մէջ կը փնտռէ մարդս իւր երջանկութիւնը, որ միայն աստուածպաշտութեան և Աստուծոյ ծառայութեան մէջ կը գտնուի: Ամբարշտին համար խաղաղութիւն

չկայ, կ՚ըսէ Հոգին սուրբ ։ Խղճմտանքին խայթերը միշտ մոլութեան հետ կ՚ընկերանան, և անառակութիւնը մարդս ողորմելի ու թշուառ կ՚ընէ ։

---

Անառակութեան չար հետևանքները։

Անառակ տղայն՝ զոր սուրբ Աւետարանին մէջ կը կարդանք, ձգեց իր հօր տունն և գնաց հեռացաւ իր հայրենիքէն, յուսալով այն տեղ ուրախ ու զուարթ կեանք մը վարելու․ բայց տես թէ ի՜նչ գէշ հետևանքներ ունեցաւ այս իր ըրած անմիտ առաջադրութիւնը ։ Իր բոլոր ունեցած ստակները, ուրախութիւններու, կոչունքներու և ամէն տեսակ անառակ գործքերու մէջ ուտել վատնելէն ետքը, նայեցաւ որ բռնած ճամբան երթալու ճամբայ չէ․ ջանք ըրաւ ինքզինք բռնել քիչ մը և իր աղքատութեան ճարն գտնել, այն աղքատութեան՝ որու համար կարօտելով յետոյ յանձնառու եղաւ երթալ պարոնի մը քով ծառայութիւն ընելու, սաստիկ տառապանքներ և նախատինքներ կրել անկէ, մինչև ուտելու հաց չգտնելով, այն գարշելի անասուններուն կերած եղջիւրին գոհ կ՚ըլլար, այն ալ թէ որ տային ։

Ահա այս թշուառ վիճակին մէջ կ՚ինկնին բոլոր այն տղայք, որ Աստուծմէ կը հեռանան, մեր ճշմարիտ Հօրէն, իրենց չար կիրքերը կատարելու համար ։ Կը կարծեն անոնք՝ թէ իրենց

սրտին բոլոր հաճութիւնը, զբօսանաց և մարմնապաշտութեան մէջ կը կայանայ. բայց անոնցմէ միայն վիշտ և դառնութիւններ քաղելով, կը սորվուին ետքը խոստովանիլ՝ թէ միայն աստուածպաշտութիւնն է որ զմեզ ճշմարիտ երջանիկ կ'ընէ :

---

Սողոմոն իմաստնոյն նշանաւոր խօսքերը:

Սողոմոն աշխարհիս բոլոր թագաւորներէն հարուստ, զօրաւոր և իմաստունն էր : Աշխարհիս չորս ծայրերէն կու գային անթիւ մարդիկ անոր հրաշալի իմաստութիւնը մտիկ ընելու : Սողոմոն չէ թէ միայն իւր հպատակներէն, այլ եւ բոլոր ազգերէն ու թագաւորներէն յարգ և պատիւ կ'ընդունէր, և կը սիրէին զինքը : Իւր գիտութիւնն ամէն բանի վերայ կը տարածուէր, և մինչեւ բնութեան խիստ խորին գաղտնիքներն ալ միտք կ'առնոյր կը հասկնար : Իւր պալատներն առատ ոսկիով և արծաթով զարդարուած արեւու նման կը փայլէին : Սակայն՝ թէպէտ եւ բոլոր այս բաներս ինք կը վայելէր, որոնց մէջ մարդս կարծէ թէ մարդկային երջանկութիւնն կը կայանայ . բայց միշտ այս խօսքերս կը զրուցէր . « Ամէն բան ընդունայն է և վիշտ սրտի, բաց ի Աստուծոյ երկիւղէն և անոր սրբազան ծառայութենէն :

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

Աստուածպաշտութեան պարտաւորութիւնները դիւրաւ կընան ի գործ դրուիլ:

Աստուածպաշտութեան պահանջած պարտաւորութիւնները թէպէտ եւ ծանր են, բայց ձեր կարողութէ̃ վեր բան մի չհրամայեր ձեզ. և կան ձեր հասակով անհամար պզտի տղայք, որոնք հաւատարմութեամբ մի անոր պատուէրը միշտ կը կատարեն:

---

Աստուածպաշտ եւ ջերմեռանդ տղայք:

Տովբիթ իւր տղայութեան ժամանակէն ի վեր Աստուծոյ ծառայելէն ի զատ ուրիշ բանի մի չէր ախորժեր. երբ իրեն հասակակից եղամները կուռոց առջեւ երկրպագութիւն ընելու կ՚երթային, ինք ճշմարիտ Աստուծոյ տաճարը կը մտնէր աղօթք ընելու:

Սամուէլ իւր ծաղիկ հասակին մէջ Աստուծոյ տաճարին ընծայուելով, այնքան սիրելի եղաւ Աստուծոյ իւր աստուածպաշտութեանն և առաքինութեանց համար, որ երբ տասուերկու տարեկան հասաւ, մարգարէութեան գերագոյն աստիճանի բարձրանալու արժանաւոր եղաւ:

Սուրբ Ներսէս Լամբրոնացին ձեր տարիքով տղայ մի էր, որ քանի կը մեծնար հասակաւ,

Աստուծոյ շնորհքն ալ իւր հետ կը մեծնար, ջերմեռանդութիւնն և աստուածպաշտութիւնն օրէ օր կ՚աւելնային. աշխարհիս զուարճութիւններէն բոլորովին հրաժարելով, միայն աղօթքն և սուրբ գիրքեր կարդալն իրեն հաճութիւն սեպած էր։ Օր մի իւր տղայութեան ժամանակ՝ Կոստանդնուպօլիս Մանուէլ կայսեր քով տարին զինքը. կայսրը գիրկը առնելով՝ ուզեց անոր միտքն ընել որ իւր քով մնայ, և իւր հօրմէն աւելի մեծ պատիւներու հասցընելու ալ խօսք կու տար։ Իսկ սուրբ տղայն պատասխան տուաւ և ըսաւ. “Թէ որ այդ մեծութիւններն անանցանելի ըլլային, մտիկ կ՚ընէի խօսքիդ. բայց ես կը ջանամ անանցանելի մեծութեան հասնելու։

Արդեօք դուք այն տղայմէ՞ն էք, որոնք կ՚ըսեն թէ երիտասարդութիւնը զուարճութիւններու ժամանակն և եղանակն է, և թէ ծերութեան մէջ պէտք է որ մարդ զինքը Աստուծոյ տայ և իւր հոգին հոգայ։ Եթէ դուք ալ այս միտքով էք, կարդացէք հետագայ պատմութիւնս և օգուտ քաղեցէք այն իմաստուն պատասխանէն, զոր սուրբ տղայն տուաւ. և ահա այս է։

Սուրբն Ներսէս իւր տղայական ծաղիկ հասակին մէջ, աշխարհիս խաբեբայ հրապուրանքներուն դժբախտութեամբ անձնատուր եղած էր. և իւր չար ընկերները՝ որոնց հետ միշտ կը տեսնուէր, մոլութեան անդունդին մէջ զինքը

ձգեր էին ։ Բայց կրօնքին վերայօք եղած այն մեծ ճշմարտութիւնները, զոր իւր տղայութեն ժամանակ յաճախ լսեր էր. այնպէս զեղջ մի ձգեցին իւր սրտին մէջ, մինչ զի ծանր հիւանդութեամբ պառկած ըլլալով, որ զինքը մահուան դուռը հասուցեր էր, և դեռ լաւ չըժշկուած՝ ելաւ իւր հօրը տունէն գնաց դէպ ի անապատ, որպէս զի զինքը բոլորովին Աստուծոյ յանձնէ ։ Ճամբան Սարակինոսի(1) մի կը հանդիպի, որ կը հարցունէ իրեն թէ ո՞վ ես դուն, ո՞ւսկէ կուգաս և ո՞ւր կ'երթաս ։ Ներսէս պարզմտութեամբ յայտնեց անոր իւր դիտաւորութիւնը ։ Սարակինոս տեսնելով անոր երիտասարդական հասակը, ըսաւ. «Պէտք է որ սպասէիր և ծերութեան հասած ժամանակդ կրօնական կեանքն ընդունէիր ։ — Ծերութեա՞ն ժամանակ, կ'ըսես, պատասխան տուաւ Ներսէս. թէ որ դուն մեծ իշխանի մի քով ծառայութիւն ընելու միտքըդ դնէիր, կը սպասէի՞ր որ քու տարիքդ և ուժդ հատնելէն յետոյ անոր ծառայութեան մտնես ։ — Ոչ, պատասխանեց Սարակինոս ։ — Ուրեմն ինչո՞ւ կ'ուզես դուն, կրկնեց Ներսէս, որ գերագոյն Թագաւորին ընեմ այն բանը, զոր դու այս աշխարհիս մէջ եղող թագաւորին չես ուզեր ընել» ։ Սարակինոս չկրցաւ ուրիշ պատասխան տալ, և զարմացաւ Ներսէս երիտասարդին իմաստութեան վերայ ։

---

(1) Սարակինոս կը կոչուէին հին Թուրքերն և Իսմայէլացիք ։

Այս օրինակիս հետեւեցէք դուք ալ ձեր վարքը շտկելով, սիրելի զաւակունք իմ, և չըլլայ որ երբէք հաւատաք՝ թէ առաքինութիւնն և աստուածպաշտութիւնը յատուկ չե՛ն ձեր հասակին ։

Չէ՞ք քամահրեր դուք այն տղայն, որ կը համարձակի ըսել թէ՝ քանի որ պզտիկ ենք, պարտաւոր չենք մեր հայրը սիրելու, և թէ՝ այս պարտաւորութիւնը կատարելու ժամանակն ուրիշ է ։ Ուրեմն ի՞նչպէս կրնայիք համարձակիլ դուք այս կարծիքն ունենալ Աստուծոյ համար, որ բոլոր հայրերէն գերազանց է ։

Գիտէ՞ք դուք թէ պիտի հասնիք մինչեւ ծերութեան հասակ, ուր տեղ երիտասարդներուն մեծ մասը հանելնէն յետոյ միտքերնին կը դնեն ա՛լ ինքզինքնուն գալ և շիտակ ճամբուն մէջ մտնել, ուսկէ միշտ ետ ալ կը մնան. և միթէ կրնա՞ք բոլորովին Աստուծոյ նուիրել ինքզինքնիդ ։ Սիրելի որդեակք իմ, անգամ մի մտածեցէք որ մահն ոչ տարիք և ոչ կարգ կը նայի, այլ անգթութեամբ կը վերցընէ կը տանի աշխարհէս թէ երիտասարդները և թէ ծերերը ։ Ո՜հ Աստուած, ի՜նչ խեղճութիւն կ՚ըլլայ ձեզ, երբ մահը կու գայ յափշտակելու զձեզ ձեր կրից նոր բողբոջած ժամանակ, ինչպէս եղաւ Աբիսողոմին և ուրիշ անթիւ մարդկանց ։

Գուցէ Աստուած նոյն անաչառութեամբ չվարուիր այն տղայոց հետ, որոնք իրենց երիտասարդութեան մէջ իրմէ կը հեռանան, ստ-

կայն և ոչ ալ կը թողու զանոնք առանց խղճմ-
տանաց, որ զինքը մոլորողներուն և իրեն դէմ
մեղանչողներուն տանջանքն է ։

## ԳԼՈՒԽ Դ.

### Աստուածպաշտութեան այլեւայլ կրթութիւնները ։

Գիտութեանց մէջ չկրնար մարդ առաջ եր-
թալ, բայց եթէ շատ կարդալով ։ Արհեստնե-
րու մէջ մինչև որ երկար ժամանակ կրթու-
թիւններ չընէ, չկրնար երևելի ըլլալ, և ոչ
ալ նոյնպէս կրնայ մարդ ճշմարիտ և հաստատ
աստուածպաշտութիւն ունենալ առանց իր գործ
դնելու շարունակ անոր այլ և այլ կրթութիւն-
ները ։ Ուրեմն ամէն բանէն աւելի պէտք է որ
այս կրթութիւններն ընէք, եթէ կ'ուզէք
կատարեալ աստուածպաշտ ըլլալ ։ Այս փոխ-
ճանիս համար կ'աշխատիմ ցուցընել ձեզ մէկիկ
մէկիկ անոնց հարկաւորութիւնն և օգուտները ։

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Աղօթք ։

Աստուածպաշտութեան խիստ հարկաւոր
կրթութիւններէն մէկն է աղօթքը ։ Ըսել չէ
թէ միայն Աստուծոյ պէտք եղած պատիւը կու-

տամք, այլեւ իւր խիստ պատուական և գե-րազանց երախտիքներուն արժանաւոր կ'ըլլամք. և ատոր համար է որ Պօղոս առաքելոյն խօսքին նայելով՝ պարտաւոր ենք միշտ աղաչել զԱստ-ուած առանց դադրելու: Բայց թէ որ դուք ժամանակին մեծ մասը չէք կրնար աղօթքով անցընել, գոնէ ամեն առաւօտ եւ երեկոյ զանց մ'ընէք երբէք աղօթք ընել:

Բարեկիրթ տղայոց մէջ չկայ մէկն որ իրեն պարտքը չսեպէ առաւօտ և երեկոյ իւր ծնողքը բարեւելու: Նմանապէս դուք ալ ամեն օր այս պարտքս կը կատարէք, և թէ որ ձեր երկնաւոր Հօրը չընէք այն բանը՝ զոր երկրաւոր հօրերնուդ կ'ընէք, թողութիւն կրնա՞ք գտնել:

Ստեղծողն է միայն արժանի ձեր առաջին և վերջին յարգանացը: Թէ առաւօտ ըլլայ և թէ երեկոյ, մի մոռնաք բնաւ Աստուծոյ առջեւ երկրպագութիւն ընելով աղօթել, շնորհակալ ըլլալ, ձեր սիրտն անոր նուիրել, և իրեն ծառայելու համար հարկաւոր եղած շնորհքն անորմէ խնդրել: Առանց Ստեղծողին կարող չեմք մենք բան մի ընել, իսկ անոր օգնութեամբն ամեն բանի կարող եմք: Ուրեմն հոգ տարէք իւր աստուածային օգնութիւնը խնդրելու, մանաւանդ երբ ձեր հոգին արատաւորելու, և յաւիտենական փրկութիւնը կորսնցունելու վտանգի մօտեցած կ'ըլլայ:

Ինչպէս պզտի տղայ մի, որ դեռ կարողու-

թիւն չունի քայլերու, ոտքի վերայ կայնած ժամանակ վախնալով որ չիյնկնի, սակայն օգնութեան կը կանչէ իւր մայրը, և կ՚աղաչէ որ ձեռքն իրեն երկնցունէ ու ազատէ զինքն իյնկնալու վտանգէն։ Ուրեմն և դուք, սիրելի զաւակունք իմ, աղաչանք ըրէք Աստուծոյ, նա որ բոլոր հայրերէն գերազանց է, և միշտ ձեր քով կը կենայ որ զձեզ պահէ ու պահպանէ։ Աղաչեցէք որ ձեր տկարութեան օգնական ըլլայ, և պահէ զձեզ չարէն. և մի վախնաք բնաւ թէ ձեր աղաչանքն ընդունելի չըլլայ։ Նոյն ինքն Աստուած խոստացաւ մեզ իւր բերանովը, մեր բոլոր աղօթքը լսելու. և անհամար օրինակներով կրնամ ցուցնել ձեզ՝ թէ Աստուած միշտ հաւատարիմ է իւր խոստմանցը մէջ. բայց երկարախօսութենէ փախչելու համար՝ միայն մէկ օրինակ մի յառաջ կը բերեմ, որ հետաքրքրական և խրատական նամակներու մէջ գրուած է։

---

Աստուծոյ հաճոյ եղած աղաչանքը։

Անհաւատին մէկը Պուլղարցի տասն և հինգ տարեկան քրիստոնեայ օրիորդի մի սիրահարելով՝ կ՚ուզէր հարսնացընել իրեն։ Ուստի ձեռքէն ինչ որ եկաւ՝ ի գործ դրաւ որ անոր սիրտն ընէ. բայց աղջիկը հաստատութեամբ մերժեց անոր առաջարկութիւնը, ամենեւին չուզեց հետը կարգուիլ, վախնալով որ չըլլայ թէ իւր հաւատքին վնաս մի բերէ։ Պատանին

տեսնելով որ ամեն ինչ որ կ՚ըներ՝ պարապ կ՚երթար, ալ յուսահատեցաւ, և միտքը դրաւ անիրաւութեան ձեռք զարնել. քանի մի սուտ վկայներ գտաւ, և դատաւորին առջև հանելով զանոնք վկայութիւն ընել տուաւ անոնց, իբր թէ աղջիկը խոստացած էր զինքն առնելու և իւր հաւատքը թող տալու։ Օրիորդն ամեն ինչ կ՚ուրանար և հակառակը կը հաստատէր. ուստի դատաւորը բանտ խրկեց զինքը. մայրն ալ լալով ետևէն գնաց։ Այն տեղ աղջիկն սկսաւ մտածել, թէ Աստուած ամենեւին երբեք չթողուր զանոնք՝ որ յոյսերնին իրեն դնելով օգնութիւն կը խնդրեն. ուստի անդադար այս խօսքերս կը կրկնէր. «Ով ստեղծիչ փրկիչ իմ, դուն գիտես որ ես բոլորովին քեզ յանձներ եմ իմ անձս. ազատէ զիս այս վտանգէս և կանչէ քու քովդ»։ Լսեց Աստուած անոր աղաչանքը, և երկրորդ օրը մեռաւ բանտին մէջ։ Բանտապանները նորանշան լոյս մի տեսնելով անոր եղած խուցին մէջ, ներս մտան և մեռած գտնելով կոյսը, դուրս ելան և բոլոր քաղքին մէջ տարածեցին այս հրաշալի լուրը։ Շատ մարդիկ գնացին և աչքերնին տեսան։ Ոմնք՝ կոյսին հագած զգեստներուն մէկ մասը կտոր կտոր ըրին, և այս դիպուածս պատմողը կ՚ըսէ թէ՝ մասունքի տեղ կը պահէին զանոնք։

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

Սուրբ պատարագ։

Առաւօտեան և երեկոյեան աղօթքներէն ի զատ, զոր պարտաւոր էք բնաւ զանց չառնել որ և իցէ պատճառաւ, օրէնք դրէք ձեզ եթէ կրնաք, ամէն օր սուրբ պատարագի ներկայ գտնուելու։

Յիսուս Քրիստոս այս պատարագին մէջ կը նորոգէ միշտ այն զոհը, զոր ինք նուիրեց իւր աստուածային Հօրը Գողգոթայ լերան վրայ։ Անկից սրբութեան սեղանին վրայ Աստուծոյ ողորմութիւնը կը խնդրէ մարդկանց համար, և հոն կը տարածէ առատօրէն իւր շնորհքը։ Ձեր անոր դէմ ունեցած երախտագիտութիւննիդ, ձեր մասնաւոր շահն, և իւր փառքը, ամէնքն ալ կը պարտաւորեն զձեզ ներկայ գտնուելու երկրպագելի անմահ պատարագին։

Ձեր մասնաւոր շահն լաւ, վասն զի Աստուծոյ հոգևոր շնորհքներէն ի զատ՝ զոր հասարակօրէն կը բաշխէ անոնց որ ջերմեռանդութեամբ հոն կը գտնուին, ուրիշ առաւել զգալի և երևելի բարիքներ ալ կ'ընէ, ինչպէս պիտի տեսնէք հիմայ հետևեալ գործքէն, որ եկեղեցական պատմութեան մէջ կը կարդացուի։

---

### Սուրբ պատարագի միջոցին ստացուած յաջողութիւնք։

Երբ Դանիմարգացի և Նորմանտացի հեթա-

նաւերը կ'աւրէին ու կ'աւրշտկէին Անգղիաց-
ւոց երկիրը, վերայ հասաւ Էթէլրէտ Թագա-
ւորն իր Ալֆրէտ եղբօր հետ զանոնք վռն-
տելու. բայց երեկեան դէմ հազիւ կրնալով
անոնց հանելու, ստիպուեցան հետեւեալ օր-
ուան ձգել պատերազմը։ Երբ արշալոյս ծագե-
ցաւ, Ալֆրէտ պատրաստուէր էր ծեծի, բայց
տեսնելով որ իր եղբայրը Թագաւորը վրանէն
(չատրը) դուրս չելեր, մէկմէկու ետեւ շատ
մարդիկներ խրկեց իմացընելու թէ՝ հեթանոս-
ները պատրաստուեր են իրենց վերայ յարձա-
կել։ Էթէլրէտ պատարագ կը լսէր այն ժամա-
նակ, և իր եղբօրը պատասխան խրկեց թէ՝
մինչեւ որ պատարագը չաւարտի, դուրս չեմ
ելներ։ Ալֆրէտ անոր չսպասեց, գնաց թշնա-
մեաց վերայ, որոնք իրենց կեցած տեղը յար-
մար ըլլալով՝ յաղթեցաւ իրենց ու հալածեցին
զԱնգղիացիները, և յաղթութիւնը ստանալու
կէտին վերայ էին, երբ Էթէլրէտ նոյն ժամուն
մէջ խաչ հանելով, քաջութեամբ յառաջ եկաւ,
և այնպէս քաջալերեց իր զօրքերն, որ կատա-
րեալ յաղթանակն ինք ստացաւ, և պատերազ-
մին մէջ ինկան մեռան թշնամեաց բանակին գըլ-
խաւորները։ Այս յաղթութիւնս իր աստ-
ուածպաշտութեան փառքն եղաւ, մանաւանդ՝
սուրբ պատարագի ջերմեռանդութեամբ և մը-
տադրութեամբ ներկայ գտնուելուն։

Ազնուական արքունի սենեկապետի մի սուրբ պատարագ-
տեսնելուն համար հրաշալի կերպով փորձանքէ ազատիլը։

Եղիսաբէթ Թագուհին Փորթուգալի սենե-
կապետ մի (իչ աղասը) ունէր խիստ առաքինի,
որուն ձեռքով Թագուհին գաղտուկ ողորմու-
թիւններ կ՚ընէր։ Ուրիշ ազնուական սենեկա-
պետ մի եւս, որ բնութեամբ առջինէն խիստ
տարբեր էր, և անոր առաքինութեան համար
ստացած համբաւուն վերայ կը նախանձէր, մի-
տքը դրաւ անոր կեանքը վերցընելու. և այս ա-
ռաջադրութիւնը յաջողելու համար, զրպար-
տութիւն բրաւ անոր վերայ Թագաւորին, հա-
ւատացընելով՝ թէ նա չար միտք ունի Թագու-
հւոյն պատուոյն դէմ։ Թագաւորն ալ բնու-
թեամբ չարամիտ ըլլալով՝ իսկոյն հաւատաց ա-
նոր զրպարտութեան, և միտքը դրաւ մեռցը-
նել տալ չարագործ սեպուած խեղճ տղայն։
Ուստի կանչել տուաւ իրեն բռագործ (քիրէչ-
ճի) մի, և ըսաց անոր թէ՝ իմ ծառաներէս մէ-
կը պիտի ղրկեմ քեզ այս խօսքով. "Թագա-
ւորին հրամանը կատարեցէք"։ Ահա այս պիտի
ըլլայ ղրկելու տղուս նշանը, որ իսկոյն զուցե-
լուն պէս՝ բռնես զինքն և վառած փուռին մէջ
նետես, որ երթայ այրի և մոխիր դառնայ։ Ա-
նիկայ մահուան արժանի եղաւ, կ՚ըսէր, իմ
արդար բարկութեանս հանդիպելով։ Որոշուած
օրն անմեղ ծառայն գնաց բռագործին. բայց
եկեղեցւոյ մի առջեւէն անցնելու ժամանակ

ներս մտաւ բարեմիտ տղայն որ աղօթք ընէ , և ջերմեռանդութեամբ պատարագ ալ տեսաւ ։ Թագաւորն անհամբերութեամբ ուզելով իմա-նալ թէ իր դժոխային հրամանին ինչ վախճան ունեցաւ , բանտարկու տղայն խրկեց փուռը որ իմանայ՝ թէ իր հրամանն ի գործ դրուա՞ծ էր ։ Փռագործը կարծելով թէ Թագաւորին ըսած ծառայն այն էր , բռնեց զինքն ու նետեց վա-ռած փռան մէջ , ուր տեղ Թշուառականը մա-խիր դարձաւ ։ Իսկ Թագուհւոյն սենեկապետը , իր աստուածպաշտութեան պարտքը կատարե-լէն յետոյ՝ շարունակեց իր ճամբան , հասա-փուռը ու հարցուց թէ՝ Թագաւորին հրամանը հաստատութեամբ կատարե՞ր էր . և պատաս-խան առնելով թէ՝ ըսածին պէս ի գործ դրի , նորէն պալատը դարձաւ Թագաւորին իմաց տա-լու , որ երբ զինքն ողջ և առողջ տեսաւ՝ սաս-տիկ զարմանքի մէջ մնաց ։ Բայց երբ մասնաւո-րապէս ամէն ինչ տեղն ի տեղն իմացաւ , օրհ-նեց Աստուծոյ դատաստանը , իրաւունք տուաւ զրպարտութեան կրող անմեղ տղուն . և այս ալ երբ փորձառութեամբ իմացաւ թէ ո՞րքան օ-գուտ է եղեր սուրբ պատարագ տեսնելը , յետ այնորիկ հաստատ միտքը դրաւ մէկ մ'ալ ա-ռանց պատարագ տեսնելու օր չանցընել ։

Բայց Աստուծոյ շնորհքն ստանալու համար բաւական չէ միայն մարմնով ներկայ գտնուիլ սուրբ պատարագին , այլ պէտք է որ միտքեր-նիս և հոգիներնիս ալ աստուածային զոհին վերայ

ըլլայ, և մեր աղօթքն ալ խառնենք Յիսուսի Քրիստոսի աղօթքին հետ, զոր ինք երկնաւոր Հօր ըրաւ մեզ համար։ Չըլլայ որ դուք ալ՝ ինչպէս շատ տղայք կ՚ընեն, անպարկեշտութբ և առանց ակնածութեան, ամենևին միտք չը-դնելով պատարագին, անամօթաբար կենաք ե-կեղեցւոյ մէջ։

Անտարակոյս գիտեմ որ չէք համարձակիր դուք երկրիս վրայ եղող թագաւորներուն մէ-կուն առջև՝ անհոգ կերպարանքով երևալու, մանաւանդ կը նայիք որ կոպիտ վարմունքով չկայնիք անոր դիմաց։ Ուրեմն որքան աւելի մեծ ակնածութիւն (հիւրմէթ) պէտք է որ ու-նենանք Յիսուսի Քրիստոսի առջև, որ երկնից թագաւորն է, որուն դիմաց հրեշտակներն ան-գամ, որոնք մեզ պէս բանական են, իրենց թե-ւերով երեսնին կը ծածկեն՝ ի նշան խորին ակ-նածութեան։ Կռապաշտներուն վարմունքն՝ ո-րով իրենց սուտ կրօնին աւելորդապաշտական արարողութեանց մէջ կը վարուէին, այս տեղս մեզ հարկաւոր դաս մի կրնայ ըլլալ։

---

Սուրբ Գրիգոր կը պատմէ թէ, երբ մեծն Աղէքսանդր զոհ կը նուիրէր կռոց, իր երի-տասարդ ազնուական ծառաներէն մէկուն վե-րարկուին թեւին մէջ կրակ մի կ՚ինկնի, որ այրելով սաստիկ ցաւ մի կը զգայր. և թէ-

պէս անտանելի էր, բայց ակռաները սեղմելով համբերեց, եւ ամենեւին ձայն չհանեց, վախնալով որ չըլլայ թէ զղջին ժամանակ շփոթութիւն մի ձգէ ։ Սորվեցէք ասկէ, կը յայտէ սուրբը, թէ որքան մեծ պարկեշտութեամբ եւ ակնածութեամբ պէտք է որ կայնինք մեր սուրբ սեղանոյն երկրպագելի զոհին ժամանակ ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ստէպ հաղորդութիւն առնել:

Ստէպ հաղորդիլն ալ աղօթք ընելու չափ հարկաւոր է մարդոյս ։ Ինչպէս որ կերակուրը մեր մարմինը կը սնուցանէ, նոյնպէս սուրբ հաղորդութիւնն ալ մեր հոգւոյն սնունդ կու տայ, եւ անով հոգին կ՚ուժովնայ եւ կը սնանի ։

Կրնա՞ք դուք մի քանի օր առանց կերակրոյ մնալ, որ հարկաւոր է ձեր մարմնոյն. ոչ, վասն զի կը վախնաք որ տկարանալով ուժէ չինկնի այն եւ ետքը բոլորովին ոչնչանայ ։ Հա այսպէս պէտք է խնամաք ձեր հոգին ալ, զոր եթէ զրկելու ըլլաք սուրբ հաղորդութենէ, կը թուլնայ եւ թշուառաբար իր զօրութիւնը կը կորսնցընէ ։

Ուրեմն ձեզ պարոք մի սեպեցէք ստէպ խոստովանել քահանային, առ նուազն ամսոն անգամ մի, ու տարին երկու անգամ ալ մնաւորել ։ Բայց չըլլայ որ առանց հարկաւոր պատրաստութիւններ ունենալու մօտենաք այս սըր-

բաղձան խորհրդին, ինչպէս որ օրէնքը կը պատուիրէ, և դպրատունը քրիստոնէական վարդապետութեան դասին մէջ կը սորվիք :

Թէև որ այս խորհուրդներն առաջնորդ կերակուր մի են անոնց որ մաքուր սրտով կ'ընդունին, նոյնպէս կրնամք ըսել թէ՝ թոյնի կը փոխուին այն մարդոց սրտին մէջ, որ պղծութեամբ կ'ընդունին : Խոստովանութիւնն աւելի եւս մեղաւոր կ'ընէ այն ապաշխարող անձը, որ իւր դժբախտութեամբն աղէկ պատրաստութիւն տեսած չէ. ինչպէս յայտնի կը խօսի մեզ Պօղոս առաքեալ թէ՝ «որ ընդունիցի անարժանութեամբ զմարմին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դատաստան անձին իւրում ժողովէ»:

Թէև որ ուզեմք իմանալ թէ Աստուած ինչ կերպով պիտի պատժէ զանոնք՝ որ չարաչար կը գործածեն սուրբ հաղորդութիւնը, բաւական է միայն միտքերնիս բերեմք այն պատուհասները, որոնցմով հին օրինաց մէջ սրբապիղծ մարդիկը պատժեց՝ ուրիշներուն օրինակ տալով:

---

Պատիժ կնոջ սրբապղծին:

Տապանակ ուխտին Երուսաղէմ տարած ժամանակնին, Ոզա՝ որ իւր եղբարցը հետ սայլին (առաջոյ) առջեւէն կ'երթար, որու վերայ էր տապանակը, տեսնելով թէ եզները չկրնալով սայլը քաշել, ետ ետ կ'երթային, և տապանա-

կը գետին պիտի իյնէր, մինչեւ ձեռքն երկըն-ցուց որ բռնէ զայն, բայց բռնելու ժամանակ ինքն ինկաւ յանկարծ գետին ու մեռաւ ։ Կ՚ըսէ սուրբ գիրքը՝ թէ Աստուած բարկութեան ել-նելով անոր յանդգնութեան վրայ, զարկաւ զինքն սպաննեց, որպէս զի երկիւղ մի ձգէ միւսներուն սրտին մէջ, որ չըլլայ թէ Ոզայէն օրինակ առնելով՝ սուրբ տապանակին արժանա-ւոր եղած յարգութիւնը չտան, որու քով մօ-տենալու արժանի միայն քահանայք են ։

Աստուած Բաղտասար Թագաւորին հետ ալ խստութեամբ վարուեցաւ, որու ամբարշտու-թիւնն այնքան աւելցաւ՝ որ մինչեւ սկսաւ տա-ճարին սրբազան անօթները պղծել ։ Երբ հան-դիսաւոր հացկերութի մը մէջ սուրբ անօթնե-րով գինի կը խմէր իր մեծամեծներուն և կա-նանց հետ, և ուտել խմելէն զատ ուրիշ բան չէր մտածեր, մարդու ձեռք մը տեսաւ իր սրբապիղծ ժողովին մէջ, որ պատին վրայ երեք խորհրդաւոր խօսք կը գրէր, և ասոնք՝ զոր ինքն ամենեւին չէր հասկընար, իր դատապարտու-թեան վճռագիրն էին ։ Զայն տեսնելով Թա-գաւորը, մինչեւ երեսին գոյնը նետեց, յանկար-ծակի ելաւ, և յետոյ կանչել տուաւ իսկոյն Բաբելոնի մէջ գտնուած բոլոր քաղդէացիները (մունէճիմները), որ այն խօսքերը մեկնեն և զինքն երկիւղէ ազատեն, որու մէջ ձգեր էին պատին վրայի գրուած գրերը ։ Բայց որովհե-տեւ մոգերը կերպով մի չկրցին զանոնք մեկնե-

լու, ուստի ինկաւ Պաղտասար Դանիէլին առ-քը, որ այն գրերը կարդալուն պէս համարձակութեամբ մի բաց թագաւորին, թէ Աստուած այն երեք բառերով կ՚իմացընէր թէ՝ իր թագաւորութեան վախճանը հասած է իր մեղքերուն պատճառաւ, և թէ՝ անոր թագաւորութիւնը Մարաց և Պարսից բաժնուելու է ։ Այս մեկնութիւնը շուտով կատարուեցաւ. վասն զի Կիւրոս Բաբելոն մտնելով, իր զօրագլուխներէն երկու հոգի Պաղտասարին պալատը մըտան, և սպաննեցին զինք նոյն գիշերը, զոր Դանիէլ մարգարէացեր էր անոր ։

Ահա սիրելիք իմ, այս կերպ վարուեցաւ Աստուած անոնց հետ, որոնք տաճարին սուրբ սպասներուն արժանաւոր եղած յարգութիւն չտուին ։ Ապա ուրեմն ինչպէս սաստիկ վրէժխնդրութեամբ չպիտի պատժէ զանոնք՝ որ կը համարձակին պղծել իր մարմինն և պատուական արիւնը ։

Այսքան սոսկալի օրինակներս չէ թէ միայն պիտի ստիպեն զձեզ սրբազան խորհուրդները յաճախ ընդունելու, այլ միանգամայն պիտի քաջալերեն ալ՝ որ սաստիկ ջերմեռանդութեամբ և խիստ մեծ զգուշութեամբ պատրաստուիլ զանոնք ընդունելու, որքան որ կարելի է ձեզ ։ Երբ մաքուր սրտով մօտենալու ըլլաք անոնց, շնորհաց և օրհնութեան աղբիւր մի կ՚ըլլան ձեզ ։

Աստուածպաշտութեան գրքերուն ընթերցումը։

Սրբազան խորհուրդները ձեզ ոգեշահ ըլլալու համար, և ձեր սրտին մէջ կրօնքին և աստուածպաշտութեան ոգին միշտ եռանդուն պահելու համար, աղէկ գրքեր կարդալէն ի զատ ուրիշ միջոց մի չկայ։ Այս գրքերուն մէջ եղած ոգեշահ վարդապետութիւնները, ձեր աչքին առջեւ կը բերեն ձեր պարտաւորութիւնները, և կը քաջալերեն զձեզ զանոնք կատարելու, ձեր միտքը կը լուսաւորեն, ձեր սիրտը կը վառեն և հոգին կը զօրացընեն մոլութեան հրապոյրներուն և չար օրինաց գայթակղութեան դէմ։

Գովութեամբ կը խօսի Սարգիս Շնորհալի աստուածային գրոց վերայ, և թէ զանոնք չկարդացողները ինչ մոլութիւններու կու տան զիրենք։ “Ձեռքս առ ի (կ՚ըսէ) աստուածային գըրքերը, նաեւ Կաթողիկեայց գրքերը, և մտքով զանոնք կարդալու ժամանակս անչափ ուրախութեամբ լեցուեցայ. և ուրախութենէս քիչ մի ուրիշ կերպ կը փոխուէի, ու սրտիս խնդութենէն վեր վեր կը ցատկէի, երբ այսպէս հոգեւոր փողոցներու կը հանդիպէի . . . ։ Ես աղօթքով կը խնդրեմ Աստուծմէ, որ եկեղեցւոյ բոլոր զաւակները այսպիսի գործքի պարապէին, և այս գրքերը կարդային միշտ, և իրենց վայելչութիւն ու պարծանք սեպէին զանոնք . . . . ։ Այլ ես հակառակը կը տեսնեմ. ոմանք ուրիշ տեղ զատուեր գացեր են, և դատարկութեամբ

իրենց կեանքը կ՚անցընեն․ վասն զի այսպիսի երկնաւոր բարիքներու համը չեն առած ։ Որը վաճառականութիւն կը սիրէ, որն ագահութիւն․ կամ որ կատակերգութիւն, ատախօսութիւն և զուարճաբանութիւն կը սիրեն, ոմանք ալ քուն և զուարճութիւն, որ թշուառութեան մայրն է և ամէն գործքի վնասակար ։ Պարծեալ աստուածային գրոց ընթերցմունքը ճշմարիտ գանձ են, և չխաբուելիք մեծութիւն ։ Եւ անոնք որ ասոր սիրով կապուած են և անոր քաղցր պտուղները ճաշակած, չեն կշտանար իմանալու անոնց խորունկը և անոնց մէջ եղած գեղեցկութիւնը գտնելու ։ "

---

Ծերաւորի մի հոգեւոր գրքեր կարդալով դարձի գալը։

Աստուածպաշտութեան գրքեր կարդալով խիստ մեծ օգուտներ քաղեց Սենացի ազնուական մի Յովհաննէս Քոլոմպինոս անուն, որ բոլորովին անառակ մոլութիւններու անձնատուր ըլլալով, բնաւ հոգւոյն փրկութեան համար հոգ չէր տանիր․ խելքը տուած էր միայն ինքզինք մարդկանց հաճեցընելու և փառք առնալու․ զԱստուած և յաւիտենականութիւն բոլորովին մոռցեր էր ։ Օր մի կէս օրուան ժամանակ յոգնած և քրտնած տուն դառնալով, և տեսնելով որ կերակուրը դեռ պատրաստ չէր, սաստիկ կատղեցաւ և սկսաւ յանդիմանել իւր կինն ափեղցփեղ զրոյցներով ։ Բայց կինը զինքը մէկ

կերպով մի զբաղեցընելու (ցալանտըրմաք) համար, գիրք մի կու տայ ձեռքը, և կ'աղաչէ որ կարդայ՝ մինչև իւր ճաշը պատրաստէ։ Տուած գիրքը Հարանց վարքն էր։ Բոլոմկինոս սաստիկ բարկութենէն գիրքն առնուլն ու արհամարհելով գետին զարնելը մէկ կ'ընէ. բայց քանի մի վայրկենէն ետքն բռածին վերայ ամչնալով, նորէն կ'առնու գիրքը, կը բանայ և աչքին կու գայ սուրբ Մարիամ եգիպտացիին վարքը։ Կը կարդայ զայն, և այնքան սիրտը կը շարժի, որ ա՛լ կերակուրը կը մոռնայ։ Իւր քաղաքաւորութիւնը կը կակղնայ, կու լայ իւր կենացը մէջ բռած անկարգութիւններուն վերայ, սաստիկ կը ցաւի, և նոյն վայրկենէն միտքը կը դնէ որ իւր վարքը բոլորովին փոխէ այնպէս ազդու և անկեղծ առաջադրութեամբ մի, որ առաքինութեանց մէջ օրէ օր զարգանալով գերագոյն սրբութեան հասաւ, և արժանի եղաւ Հռոմէական եկեղեցւոյ սրբոց կարգը գրուելու։

Ուրեմն դուք ալ, սիրելի որդեակք իմ, ձեռքերնիդ բնաւ մի՛ թողուք սուրբ գիրքերը. օր մ'անցընէք առանց բարի գիրք մի կարդալու, գոնէ քառորդ ժամու չափ, և փորձով կ'իմանաք ետքը՝ որ այս հոգեւոր կրթութենէս զատ ուրիշ ոգեշահ բան չկայ։

## ՅՕԴՈՒԱԾ Ե.

Ջերմեռանդութիւն առ ամենասուրբ կոյսն։

*Աստուածպաշտութեան խիստ օգտակար կըրթութիւններէն մէկն ալ, զոր ձեր սրտին մէջ տպաւորել կ'ուզեմ, որուն պէտք է մեծ եռանդով ինքզինքնիդ տաք, սուրբ Աստուածածնի դէմ ջերմեռանդութիւն ունենալն է։ Նա է Աստուծոյ մայրը, բոլոր մարդկանց մայրը և հետևապէս ձեր մայրն ալ։ Իրաւունք չէ՞ ուրեմն որ զինքը պատուէք, և անոր օգնութիւնը միշտ խնդրէք։*

*Միայն մայրական անունը բաւական է որ ձեր սրտին մէջ մեծ յարգ մի ծնցնել տայ անոր դէմ՝ որ ձեզ կեանք տուաւ. և ինչպէս մօրերնուդ ձեր վերայ ունեցած սէրը կը ճանչնաք, այնպէս որ եթէ ինքզինքնիդ վտանգի մի մէջ տեսնելու ըլլաք, մէկէն կ'ինկնիք անոր գիրկը. աղէկ գիտնալով թէ նա իր կողմէն պատրաստ է միշտ ձեզ օգնելու։ Խիստ աղէկ, սիրուն զաւակըներ, ահա այս կերպով պէտք է վարուիք նա և սուրբ Աստուածածնի դէմ, զոր Քրիստոնէական կրօնքը կը սորվեցընէ իբրև ձեր մայրը սեպել, նա որ բոլոր մայրերէն բարի և որդեսէր է։*

*Շատ պատմութիւններ կրնայի բերել այս տեղս ամենասուրբ Կուսին բարեխօսութեամբ Աստուծոյ ըրած հրաշագործութեանց վերայ՝ զոր իր ջերմեռանդ ծառաներուն գործեց, բայց*

երկարութենէ փախչելով զանց կ՚առնեմ ։ Ամենքն անոր միջնորդութեամբ ստացած շնորհքով յայտնի տեսնելով ճանչցան այն կենաց վիճակը, ուր կը հրաւիրէր զիրենք Աստուած . ասոնք ալ անոր օգնութեամբ անարատ պահեցին իրենց անմեղութիւնը դառն փորձութեանց մէջ ։ Մէկ խօսքով՝ ամէնքն ալ իրենց հարկաւորութեանց համեմատ փորձեցին Իր մայրենի պաշտպանութեան առողջարար արդիւնքները . և դուք ալ նոյնպէս պիտի փորձէք , թէ որ սովորութիւն ընէք մեծ յուսով Իր օգնութիւնը խնդրելու . և այն ալ ձեր վրայ մայրական սէր ու գորով կ՚ունենայ , թէ որ դուք ալ իրեն դէմ միշտ որդիական անկեղծ և բարենախանձ զգացմունքներ ունենաք ձեր ջերմեռանդ ծառայութեամբ ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ձ·

Ջերմեռանդութիւն առ պահապան Հրեշտակն ։

Այն հրեշտակն որ Աստուած ձեր վրայ կարգեց ձեզ օգնելու , և ձեր պահպանութեան և փրկութեան համար միշտ ձեզ հսկելու , իրաւունք ունի ձեր յարգանաց . և պէտք է որ պատուէք զինքը ։ Չեմ կրնար ինչպէս որ պէտք է՝ զգացընել ձեզ անորմէն ընդունած երախտիքներդ . և ձեր անոր դէմ ցուցընելու երախտագիտութիւնը , բայց հետեւեալ պատմութիւն կրնայ իմանալ զուզածս ։

Գոհարեան հրեշտակին առաջնորդութեամբ ճանապարհորդութիւն ընող երիտասարդը ։

Տովբիթ նախապէս տեսնելով որ իւր մեռնելու օրերը կը մօտենար, կանչեց քովը իւր որդւոյն և ոգեշահ խրատներ տալէն յետոյ՝ ըսաց անոր, թէ Ռագէս քաղաքը Գաբայէլ անունով մէկուն քով տասն քանք ոսկի առնելիք ունի, և երթայ զայն պահանջէ ։ Տոբիա չէր գիտէր ո՛չ քաղքին ուր ըլլալը և ոչ մարդը ․ ուստի առաջնորդ մը կը փնտռէր որ հոն տանի զինքը ։ Երբ տունէն դուրս ելաւ, վայելչահասակ և գեղեցկադէմ երիտասարդի մը հանդիպեցաւ, որ ճամբորդի կերպարանքով կ'երեւէր թէ դուրս պիտի երթար ։ Տոբիա չգիտնալով թէ Ռափայէլ հրեշտակն էր այն, որ Աստուած խրկեր էր իրեն, հարցուց թէ ո՛վ ես դու և ո՛ւր կ'երթաս ․ և լսելով անկէ թէ Գաբայէլը կը ճանչնար, աղաչեց զինքն որ երթայ իրեն համար հօրը հասկցընէ ․ և հայրն ալ քով կանչելով խօսքը կտրեց, խոստանալով վարձատրել զինքն, և իւր որդին յանձնեց անոր Ռագէս քաղաքը տանելու, որպէս զի Գաբայէլին հետ խօսի և առնելիքը պահանջէ ։ Հրեշտակն՝ որ հասարակ մարդոյ մը կերպարանք առած էր, հաճեցաւ ծերոյն բաղձանքը կատարել ․ և ինկաւ ճամբայ անոր որդւոյն հետ ։ Հանգիստ ճամբանին կը քալէին, և ամենեւին վտանգի մը չհանդիպեցան առաջին օրը ․ բայց երկրորդ օրը,

երբ Տօբիա գետեղերքի մի քով կեցած ոտքերը կը լուար, չափէ դուրս մեծութեամբ ձուկ մի դէպ իրեն վազեց և պիտի կլլէր զինքը։ Տղայն զայն տեսածին պէս, մեծ ձայն մի ձգեց ընկերէն օգնութիւն խնդրելով. բայց հրեշտակն անոր սրտին երկիւղը փարատելով ըսաւ. «Բռնէ թեւերէն դուրս քաշէ որ մեռնի. ետքը բաց փորը, հանէ սիրտը լեարդն ու լեղին որ հետերնիս տանինք»։ Ինչ որ ըսաւ հրեշտակը՝ Տօբիա կատարեց։

Մի քանի օրէն ետքը հասան Ռագիսի մօտ. և քաղաքին մէջ դեռ ոտք չկոխած՝ հրեշտակն ըսաւ Տօբիային, թէ պէտք է որ Ռագուէլ իւր ազգականին տունն երթայ հանգչի, և անոր միհատիկ աղջիկն իրեն հարս առնու։ Այս ետքի խօսքիս վերայ վախցաւ տղայն, ինչու որ լսեր էր թէ ըսած աղջիկն եօթն էրիկ առեր, և եօթն ալ առագաստ մտնելու գիշեր դիւահարելով մեռեր էին։ Բայց երբ հրեշտակն անոր սիրտը հանգչեցուց ըսելով՝ թէ նոյն վտանգէն ինքն ազատ կը մնայ, թէ որ իւր տուած խրատներուն համեմատ վարուի, գնաց Ռագուէլին տունը և վախը մէկդի ձգելով՝ առաւ անոր աղջիկն և իրեն հետ հօր տունը բերաւ Գաբայէլէն առած դրամով։ Ծերունի հօր քով որ դարձաւ, անոր աչուըները տղէկցուց ձկան լեղիով շփելով՝ զոր հետը բերած էր. ետքը մէկիկ մէկիկ պատմեց անոր ինչ որ իւր հաւատարիմ առաջնորդն իրեն ըրեր էր. և այս խօսքե-

քուս վերայ այնպէս երախտագիտութեան խորին զգացում մի պատճառեց անոր սրտին մէջ, որ որդւոյն միաբան հաւանութեամբ շնորհեց անոր իւր ի վարձ՝ իւր բոլոր ունեցած ստացուածոց կէսը ։ Բայց Ռափայէլ հրեշտակ յայտնեց անոնց իրեն այն երանելի ոգիներէն մէկն ըլլալը, որոնք Աստուծոյ յաւիտենական աթոռոյն առջեւ կը կայնին միշտ. և զիրենք մխիթարելէն և քաջալերելէն յետոյ աներեւոյթ եղաւ անոնց աչքէն ։

Ձեր պահապան հրեշտակն ալ, սիրելի զաւակներս, թէպէտ եւ անտեսանելի կերպով, սակայն ձեր ծնած օրէն ի վեր ըրաւ և կ'ընէ միշտ այն ծառայութիւնները, որ Տոբիա իւր երկնային առաջնորդէն ընդունեց ։ Անիկայ ամենեւին ետ չմնաց ձեզ պաշտպանելէն և ձեր վերայ հսկելէն ։ Անհամար անգամ ձեզ ազատեց մեղք գործելու վտանգէն, որ զՏոբիան կլլելու վտանգէն աւելի մեծ ու սոսկալի հրեշ մի է ։ Քանի քանի անգամ իւր հովանաւորութեամբ սատանայի խաբէութիւններէն և որոգայթներէն ազատեց, և իւր անոյշ և զօրաւոր պաշտպանութիւնը պատրաստ է միշտ ամեն վտանգներէն պահպանելու ձեզ ։

Ուրեմն դուք ալ այս Իսրայէլացի տղուն իմաստուն վարմունքին հետեւեցէք, և ձեր պահապան հրեշտակին ցուցուցէք այն զգացմունքները, զոր Տոբիա իւր սուրբ առաջնորդին վերայ ունէր ։ Նա ձեր ընչից կէսը ոչ կը պահանջ-

քէ և ոչ ալ կ՚ընդունի , թէ որ ձեռքերնիդ ըլլար անոր նուիրել . այլ միայն ձեր երախտագիտութեան , սիրոյն և ձեր հաւատարմութեան կը կարօտի ։

Չըլլայ որ ապերախտ գտնուելով՝ ձեր անոր դէմ ունեցած պարտքերնիդ չկատարէք ։ Ամէն օր ջերմեռանդ սրտով օգնութեան կանչեցէք զինքը , մանաւանդ առաւօտ և երեկոյ ։ Մի՛ մոռնաք , մի՛ զանց առնէք ի գործ դնել այն բաները որ ձեր աստուածպաշտութեան ոգին կը սնուցանեն և կ՚աւելցնեն ։ Առանց աստուածպաշտութեան ամէն ինչ անօգուտ է . անով միայն կրնանք երջանիկ ըլլալ թէ՛ այս և թէ հանդերձեալ աշխարհիս մէջ ։

## ԳԼՈՒԽ Ե.

### Անմեղութեան վրայ ։

Աստուածպաշտութենէն ետքը , որու մեծութիւնն և հարկաւորութիւնը ձեզ ցուցուցի , ամէն բանէն աւելի պէտք սիրէք զանմեղութիւն , որ ձեր հասակին գլխաւոր և խիստ գեղեցիկ զարդն է , և զձեզ հրեշտակներուն ալ կը նմանեցնէ ։ Աշխարհիս մէջ որքան շահաւոր ինչ կայ , չկրնար բաղդատուիլ այս անգին գանձուն հետ . և դուք ալ պէտք էք որ ամէն ինչ զոհէք , քան թէ ձեր անմեղութիւնը կորսնցը-

նէք ։ Երբ անվնաս պահելու ըլլաք, բաւական հարուստ կը սեպուիք . բայց մէկ մի որ կորսնցընէք, ալ ամէն բանէն թշուառաբար զրկըւած կը սեպուիք ։

---

**Անմեղութեան կորսնցընելուն աղետալի հետեւանքը։**

Ադամ ու Եւա խիստ երջանիկ վիճակի մէջ էին, քանի որ անմեղութիւնը ձեռուընին էր ։ Ոչ դէշ կիրքեր ունէին, ոչ հիւանդութիւն և ոչ մահ կը ճանչնային . այլ հանդիստ իրենց օրերնին կ'անցընէին զուարճալի և պտղալից պարտիզի մը մէջ, որ առանց աշխատելու և մշակելու ամէն տեսակ պտուղ ինքնին կը բերէր ։ Ոչ արեւուն տաքութիւնն անոնց կը վնասէր և ոչ ձմռան սաստիկ ցուրտը ։ Խաղաղ և մշտադալար գարուն մի կը վայելէին . ամէն տեսակ կենդանիներ անոնց իշխանութեան ներքեւն էին ։ Իրենց բաղձանքը կատարելու համար բան մի չէր պակսեր, և ամէն կողմէն երջանիկ էին ։ Բայց Աստուծոյ անհնազանդ լենալով իրենց առաջին անմեղութիւննին կորսնցընելնուն պէս, այն զուարճալի տեղէն դուրս վռնտուեցան . երկիրն է սկսաւ պտուղ չբերել . տարուան եղանակները չքաշուելիք եղան, կիրքերնին արթնցան զիրենք տանջելու . հիւանդութեանց և մահուան ենթակայ եղան, և իրենց առջի երջանկութեան ետեւէն սկսան գալ բոլոր թշուառութիւնք ։

Ահա ձեզ ճշմարիտ պատկեր մի, զոր նայեցէք և տրմեցէք՝ թէ ձեզ ալ այսպէս կը հանդիպի, թէ որ սակալի դժբախտութեամբ մի մկրտութեան աւազանէն ընդունած ձեր անմեղութեան գանձը կորսնցնելու ըլլաք ։ Ալ անկէ յետոյ ձեր վերայ տիրող կիրքերուն գերի կ՚ըլլաք, անգութ խղճմտանաց տէր և Աստուծոյ սէրէն զրկուելով՝ իր սարսափելի բարկութեան կրակը ձեր գլխէն բնաւ չպակսիր ։ Ո՜հ, Աստուած չըրցունէ որ այսպիսի աղէտալի թշուառութիւն մի կրէք ։

---

Լուդովիկոս Թագաւորին իւր իշխաններուն մէկուն հետ ըրած խօսակցութիւնը։

Լուդովիկոս Գաղղիացւոց թագաւորն օր մի Ժօէնվիլի իշխանին հետ մէկտեղ գտնուելով, որ իւր պալատի առաջին աստիճանի իշխաններէն մէկն էր, հարցուց անոր՝ թէ այս երկու բաներէն որն աւելի նախամեծար կը սեպես. քոսոտ ու բորոտ ըլլալ, թէ մահացու մեղք մի գործել ։ Իշխանը համարձակ դէմքով մի առանց ամչնալու պատասխան տուաւ . “Երսուն անգամ մահացու մեղք գործել կ՚ուզեմ, քան թէ իմ մարմնիս զզուելի բորոտութեամբ ծածկուած տեսնել ։ — Դուն, ըսաւ թագաւորը, խենթի նման կը խօսիս . վասն զի մահացու մեղքէն աւելի զզուելի գէշ բորոտութիւն չկայ . և ով որ այս բորոտութիւնն ունենայ իւր վե-

բայ, սատանայի նման կ'ըլլայ։ Մէկ մ'ալ որ՝ ամէն մարդ գիտէ թէ երբ մարդս կը մեռնի, իւր մարմնոյն բորոտութիւնը կ'անցնի. բայց երբ մահացու մեղք գործող մարդ մի մեռնի, ստոյգ է որ Աստուած անոր թողութիւն չտար. և պիտի գիտնայ նա ու վախնայ, թէ հոգւոյն բորոտութիւնը կը մնայ անոր վերայ, քանի որ Աստուած՝ Աստուած է։ Ասոր համար կ'աղաչեմ զքեզ բոլոր սրտանց, որ աւելի սիրես որ և իցէ ցաւալի և անտանելի հիւանդութեանց մէջ ինկնիլ, քան թէ մէկ անգամ միայն մահացու մեղք գործել»։

Թագաւորին այս խօսքերը՝ զոր իւր սպասականներին ըսուեցաւ, հիմայ ես ալ ձեզ կը զրուցեմ, ով սիրելի զաւակունք։ Այո, որքան որ մեծ է ձեր վերայ ունեցած սէրս, այլ գիտնաք որ աւելի կ'ուզեմ զձեզ մեռած՝ քան թէ ձեր գեղեցիկ անմեղութենէն զրկուած տեսնել։ Եթէ մեր կեանքը կորսնցնելու ըլլանք, մարմնոյս միայն կը վերաբերի այն կորուստը. իսկ անմեղութիւնն որ կորսնցնեմք, մեր հոգւոյն կը վնասէ, և յաւիտենական թշուառութեան մէջ կը ձգէ զայն։ Ուստի ինչպէս կը տեսնեմք, այն մարտիրոսներն որ հաւատոյ ճշմարիտ հոգւով վառուած էին և Աստուծոյ սուրբ երկիւղը սրտերնուն մէջն էր, դառն փորձութեանց մէջ ինկած ժամանակնին աւելի տանջանքներն և մահը կ'ընտրէին, քան թէ մեղք գործել, որոնք մեր սրտին անմեղութիւնը կ'ապականեն։

Յակոբ Նահապետին որդին ողջախոհ Յովսէփ լաւ համարեց որ իրեն համար անիրաւ տեղ զրպարտութիւն ընեն չարչրկեն, խաւար բանտի մէջ դնեն զինքը, քան թէ այն մեղքը գործել, զոր խիստ անուշ և շողոմոքար խօսքերով զինքը կը փորձէին որ յանձն առնու։

Անթիւ երիտասարդներ և կոյս աղջիկներ այս գեղեցիկ և մեծահանձնական օրինակին հետեւեցան. լաւ սեպեցին անհնարին տանջանքներ կրել, քան թէ Աստուծոյ աչքին ատելի ըլլալ։ Ասոնց դիւցազնական քաջասրտութիւնը ձեզ ցցունելու համար կ՚ուզեմ հոս երկու պատմութիւն դնել։

---

Եօթն հրեայ տղայոց իրենց կրօնին մէջ ունեցած զարմանալի հաստատութիւնը։

Ամբարիշտ Անտիոքոս իրեն կանչերով Մակաբայեցի եօթն եղբայրքը մօրերնուն հետ, ըստիպեց զանոնք խոզու միս ուտելու, զոր Աստուծոյ սուրբ օրէնքը կ՚արգիլէր հրէից. իսկ անոնք ամէնքն ալ մէկ բերան համարձակութեամբ պատասխան տուին թէ՝ ամէնքս ալ պատրաստ ենք մեռնելու, քան թէ յանցաւոր երեւալ Աստուծոյ առջեւ՝ որ աշխարհիս գերագոյն Թագաւորն է։ Անտիոքոս ասոնց այսպէս աներկիւղ պատասխանը լսելով բարկացաւ. և հրամայեց որ զամէնքն ալ մերկացնեն և չարաչար ծեծ մի քաշեն իրենց։ Անդրանիկ եղբայրնին

թագաւորին դառնալով ըսաց . « Ի՞նչ կ՚ըսպասէք մեզմէ . մենք ամէնքս ալ պատրաստ ենք մեռնելու , քան թէ մեր հայրենի օրէնքը կոխել անցնիլ » : Թագաւորը սաստիկ բարկութեամբ լեցուելով , հրաման ըրաւ տապակներ կաթսաներ տաքցընել , և մօրն ու եղբարցն առջեւ անդրանիկ տղուն լեզուն կտրել , գլխուն կաշին քերթելով երեսին վերայ անցընել , և ձեռքերուն ու ոտուըներուն ծայրերը կտրտել : Այսպէս ձեռքէ ոտքէ անպիտան ընելէն յետոյ քաջախջախ տղայն , տաքցուցած կաթսայի մը մէջ ողջ ողջ նետել տուաւ :

Առաջինին այս կերպով մեռնելէն ետքը , երկրորդին ձեռք զարկին : Գլխուն կաշին մազերով մէկտեղ քերթեցին հանեցին , և նորէն կը հարցընէին՝ թէ ուտելո՞ւ ես խոզի միս : Իսկ նա պատասխան տուաւ թէ՝ ոչ . ուստի նոյն տանջանքներով չարչրկեցին զայն ալ : Երբ հոգին աւանդելու վերայ էր , այսպէս խօսեցաւ թագաւորին հետ . « Ո՛վ չար և ամբարշտութեան իշխան . դու զմեզ այս աշխարհէս կը վերցընես , բայց նա որ երկնի և երկրի թագաւորն է , որ մի մեզ յարութիւն առնել պիտի տայ յաւիտենական կենաց համար , թէ որ իւր սուրբ օրէնաց վերայ մեռնելու ըլլամք » :

Ասոնմէ յետոյ երրորդը բերին , որ իսկոյն լեզուն դուրս հանեց , և ձեռքերը քաջասրտութեամբ երկնցուց դէպ ի դահճներուն որ կտրեն : « Աստուած , ըսաց , այս անդամները

ինձ տուաւ, և յօժարակամ իրեն կը զոհեմ իւր օրինաց վկայութեան համար»։ Անօրէն թագաւորն և իշխանները անգամ կը զարմանային այս տղուն գերմարդկային քաջասրտութեան, որ այնպիսի սոսկալի ցաւեր բանի տեղ չէր դներ։

Չորրորդը տանջանաց տեղը բերելով՝ նոյն բարբարոսութեամբ կը չարչարէին. որ իւր մեռնելու ժամանակ թագաւորին դառնալով՝ «Աղէկ է մեզ, ըսաւ, որ մարդիկներէն զոհ ըլլանք, վասն զի յոյս ունինք մեռելոց յարութեան ժամանակ նորէն փառաւորապէս ծնանելու. իսկ ձեզ համար չկայ յարութիւն»։ Հինգերորդ տղայն ալ տանջանքներուն մէջ խօսեցաւ Անտիոքոսին և ըսաւ. «Դուն հիմայ ինչ որ կ'ուզես՝ կ'ընես մեզ, ով մարդ՝ մեզ նման մահկանացու. դու քեզ տրուած իշխանութիւնը չարաչար կը բանեցընես. բայց մի կարծեր թէ Աստուած մեր ազգն երեսէ ձգած է։ Կեցիր դու, շատ չերթար անոր սքանչելի զօրութիւնը կը տեսնես, ինչպէս քեզ և քու բոլոր ցեղդ պիտի տանջէ»։ Անկէ յետոյ վեցերորդը բերին, որ իւր վերջին շունչը հանելով՝ այսպէս ըսաւ անգութ իշխանին. «Մի խաբուիր դու, ով թագաւոր. և գիտցիր որ մեր մեղքերն են այս մեր քաշած վիշտերուն պատճառը. բայց մի կարծեր թէ անպատիժ կը մնաս, դու որ Աստուծոյ հետ կը պատերազմիս»։

Վերջապէս մնաց եօթներորդ տղայն, որ ամենէն պզտիկն էր։ Անտիոքոս բռնաւոր շատ

աշխատեցաւ անուշ խօսքերով տղուն խելքը դարձնել, յորդորելով որ իւր կեանքը մահէն ազատէ, ու նաեւ երդմամբ խոստացաւ փառթաւորութեան և մեծ պատուոյ հասցընել, թագաւորին բարեկամը կանչուիլ, միայն թէ իւր նախահարց օրէնքը թողու։ Երբ տեսաւ թագաւորը թէ անիկայ բնաւ իւր խօսքերուն ականջ չդներ, կանչեց նորա մայրը իրեն քով, աղաչեց որ խրատէ իւր զաւակը, որպէս զի անողորմաբար չմեռնի։ Մայրը յանձնառու եղաւ խօսել իւր սիրելի զաւկին հետ իրենց լեզուով և ըսաց. «Ողորմէ քու մօրդ, որդեակ իմ, միտքդ բեր որ ես քեզ ինն ամիս արգանդիս մէջ կրեցի ըզքեզ, երեք տարին չափ իմ կաթովս սնուցի, և մինչեւ այդ հասակին հասուցի բերի։ Խնայ կ'աղաչեմ զքեզ, բաց աչուըներդ, սիրուն զաւակս. նայէ երկինքն ու երկիրը. ասոնք են Աստուծոյ ձեռքի գործքերը, զոր դու կը պաշտես. նոյնպէս բոլոր մարդիկ անորմէ ստեղծուած են։ Զօրացիր, սիրտ առ, և մի վախնար այս անգութ դահճէն, այլ քու եղբարցդ արժանի ըլլալով կեանքէն աւելի մահն ընտրէ քեզ, որպէս զի ամէնքս մէկտեղ գտնուինք Աստուծոյ արքայութեան մէջ, որ մեզ կը սպասէ»։ Երբ մայրն այս մխիթարական խօսքերը կը խօսէր անոր, տղայն մէկէն ի մէկ պոռաց. «Որու կը սպասէք, ինչու կ'ուշացընէք. մտիկ ընելու չեմ ես թագաւորին, այլ միայն Աստուծոյ սրբազան օրինաց հնազանդ եմ». և շարունակելով իւր խօս-

քը՝ մարգարէական ոգւով մի այսպէս խօսեցաւ. «Իսկ դու որ մեզ այսքան տանջանքներ և մահ կրել կու տաս, չպիտի ազատիս Աստուծոյ ձեռքէն։ Մեր մեղքերն էր որ այս պատուհասները մեր գլուխը բերին. և Աստուած զմեզ խրատելու համար իւր բարկութեան հանդիպցուց, որ շուտով պիտի դադրի, և իւր ողորմութեամբ պիտի հաշտուի իւր ծառաներուն հետ։ Այլ դու, անօրէն, չպիտի ազատիս անոր արդար դատաստանէն»։ Անտիոքոսի բարկութեան չափ չգտնուեցաւ. այլ մէկէն հրամայեց միւս եղբայրներէն աւելի անգթութեամբ տանջել զինքը, որ անարատութեամբ աւանդեց հոգին դառն չարչարանաց մէջ։ Տղայոցմէ ետքը մայրերնին նահատակուեցաւ, որոյ արիւնն իւր քաջակիրտ որդւոց արեան հետ խառնուեցաւ. զորոնք իւր ներկայութեամբն և իւր յորդորանօք քաջալերելով մարտիրոսութեան արժանի ըրաւ։

Չեմ երկբայիր ամենևին, սիրելի զաւակունք իմ, որ այս սքանչելի ապայոց դիւցազնական մօրդ հաստատութիւնը ձեր սիրտը շարժած ըլլայ, ու նաև հաստատ առաջադրութիւն մի ըրած ըլլայ ձեզ իրենց պէս ամեն կերպ տանջանք կրելու, քան թէ յանցաւոր երեւնալու Աստուծոյ առջեւ։ Այլ ձեզ միշտ սիրտ տալու համար, որ ձեր անմեղութեան անգին գանձը անվնաս պահէք, աշխատութենէ չեմ փախչիր պատմել ձեզ ու բիչ զարմանալի օրինակ մ'ալ։

Քրիստոնէայ սըրտի մը սուրբ հաւատոյ մէջ ունեցած դիւցազնական հաստատութիւնը:

Կապադովկիոյ Կեսարիայի մէջ երիտասարդ մի կար Կիւրեղ անուն, որու հայրը կռապաշտ էր: Սակայն չկրնալով իր տղայն համոզել որ սուտ չաստուածոց երկրպագութիւն ընէ, վըռընտեց իր տունէն աղէկ ծեծ մի քաշելէն յետոյ: Դատաւորը լսելով զայս, քանի մի զինուորներ խրկեց, իրեն բերել տուաւ տղայն, և անուշութեամբ մի ըսաւ անոր. "Որդեակ իմ, ես քու յանցանացդ կը ներեմ, մատղաշ հասակիդ վերայ խղճալով: Դու հօրդ աչքը մտանելն և անոր ունեցած ապրանքներն վայելել քու ձեռքդ է: Խելքդ գլուխդ բեր ուրեմն, և թող այդ կրօնքն որ բոլորովին սնապաշտութիւն մի է": Սուրբին տղայն անհամբերութեամբ պատասխան տուաւ անոր. "Ես իմ ըրածներուս համար յանդիմանութիւն լսելուս շատ գոհ եմ: Աստուած զիս իր քով կը կանչէ, և անոր քով իմ հօրմէս աւելի հանգիստ կ'ըլլամ: Իմ հօրս տունէն վըռընտուելուս չեմ դըժուարիր, յուսալով որ ուրիշ աւելի ընդարձակ և գեղեցիկ տուն մի մէջ պիտի բնակիմ: Յօժար սրտով կը հրաժարիմ այս աշխարհիս մեծութիւններէն, երկնից արքայութիւնն ստանալու համար: Չեմ վախնար մահէն, որ պատճառ պիտի ըլլայ ինծ լաւագոյն կեանք մի ձեռք բերելու": Այս խօսքերս այնպէս քաջասրտութի

կը զրուցէր, ուսկէ յայտնի կ'երեւար թէ Աստու-
ուած էր որ իրեն խօսել կու տար։ Այն առեն
դատաւորը բարկանալով, խիստ դէմքով մի և
զարհուրելի ձայնով պօռաց սուրբ տղուն երե-
սին, որպէս զի վախցընէ զինքն, ու ըսաց. Հի-
մայ մեռցընել կու տամ զքեզ։ Յետոյ կապել
տուաւ երկու հատ ծառի ճիւղերով, որպէս
թէ տանջելու պիտի տանէին զինքը. հրաման տը-
ւաւ փայտակոյտ մի պատրաստել և ներքեւը կը-
րակ դնել. բայց սքանչելի տղայն վախնալու տեղ՝
աւելի սիրտ պինդցուց և բնաւ հոգը չէր ը-
ներ. տարին զինքը կրակին մօտ և կը սպառնա-
յին մէջ նետել այրել։ Դատաւորը պատուիրած
էր անոնց՝ որ այն պատրաստութիւններով միայն
վախցընեն զինքը. բայց տղայն ամենեւին մըտ-
քէն չխախտեցաւ։ Ուստի դատաւորին առջեւ
տարին, որ սպառնալով մի ըսաց. «Կը տեսնես
այս սուրն և այս կրակն, որ քու կամակորու-
թիւնդ պատժելու համար պատրաստուած են։
Խելքդ գլուխդ չե՞ս ուզեր բերել, և իմ ու հօրդ
կամաց հնազանդելով՝ արժանի ըլլալ անոր սի-
րոյն, որ նորէն զքեզ իւր տունն ընդունի»։
Պատասխան տուաւ Կիւրեղ. «Դուն զիս անօ-
րէն մարդու մի տեղ դրիր՝ քու առջեւդ կանչել
տալով։ Գիտնաս ուրեմն որ ես ոչ կրակէն կը
վախնամ և ոչ սուրէն, և կը փափաքիմ երթալ
այն ցանկալի բնակարանն՝ որ այս աշխարհիս մէջ
չէ, և կը բաղձամ ստանալ այն մեծութիւններն՝
որ իմ հօրս ունեցածներէն խիստ գերազանց են.

Ըսուած է որ պիտի տայ ինծ զանոնք։ Շուտ ըրէք մէկ ժամ առաջ տուէք ինծ մահն, որ իմ յաւիտենական երջանկութեանս սկիզբը պիտի ըլլայ։ Հոն գտնուողներն անոր այսպէս խօսիլը լսելով՝ կուլային. բայց Կիւրեղ դարձաւ ըսաց անոնց. «Դուք պէտք է որ ուրախանաք ինծ հետ, և ձեր արտասուքներովն իմ սիրտս թուլցնելու տեղ՝ աղէկ կ'ընէք որ քաջալերէք զիս համբերութեամբ կրելու այս տանջանքները։ Ահ, դուք չէք գիտեր այն փառքն՝ որ ինծ կը սպասէ, և ոչ իմ ունեցած յոյսս՝ թէ ինչ բանի համար է։ Թողէք զիս որ այս յուսով մեռնիմ»։ Այս կարօտութիւնները քաշելով նահատակեցաւ սուրբ տղայն։

Դուք հիմայ այսպէս չարչարանքներ կրելու վախ չունիք, սիրելի որդեակք իմ, և ոչ այսպէս մեծամեծ ցաւեր ընելու չափ փառքի մէջ կ'ինկնիք ձեր անմեղութիւնը պահելու համար. բայց գիտցած եղէք որ այս անմեղութիւնը շատ զգուշութիւններ կը պահանջէ որ ձեր կողմէն ընէք, ինչպէս որ հետեւեալ գլխոյն մէջ պիտի զրուցեմ։

## ԳԼՈՒԽ Զ.

Անմեղութեան պահանջած խնամքներն և նախազգուշութիւնները. և զանոնք պահպանելու միջոցները։

Անմեղութիւնն նման է աղուոր ծաղկի, որ պայծառ գոյներով գեղեցիկ մը կը ցուցընէ, և

իւր բոլորտիք զարմանալի անոյշ հոտ մի կը բուրէ. բայց մի քիչ ծուխ կրնայ սեւցընել, և մի քիչ հովը կրնայ փրցընել ու գետնին ձգել. չկր-նար մարդ անփոյթ պահել զայն, բայց եթէ հոգ տանելով որ փոթորիկն չփչէ, այսինքն բոլոր վտանգաւոր բաներէն հեռացընելով:

Գէշ զրոյց մի, չար օրինակ մի և մէկ ընկերութիւն մի կրնայ կորսուեցընել տալ ձեր անմեղութեան պատուական զգեստը: Դուք պարտաւոր էք անբիծ և անարատ պահել զայն. վասն զի Աստուած այս դաշինքով ձեզ հաւատացուցած է, և օր մի խիստ բարակ հաշիւներ պիտի պահանջէ ձեզմէ:

---

ԳԵՂԵՑԻԿ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԷՆ

Երբ Յովսեփայ եղբարքը զինքն Իսմայէլացի վաճառականներուն ծախեցին, յանցանքնին իրենց հօր Յակոբէն ծածկելու համար, որ Յովսեփայ վերայ խիստ փափուկ սէր ունէր, առին անոր վերայի հագուստն և նոր մորթուած ոչխարի մի արեան մէջ թաթխելով, խրկեցին մէկուն հետ իրենց ծեր հօր Յակոբին: Այս մարդս անոր դիմացն որ ելաւ, ինչպէս որ սորվեցուցեր էին իրեն անօրէն եղբայրները. «Ահա, ըսաց անոր, ասիկայ գտանք. տես թէ քու որդւոյդ զգեստն է: — Այո՛ իմն, պոռաց խեղճ հայրը, գիտեմ աղէկ որ այդ իմ որդւոյս պատմուճանն է: Բայց ա՛հ Աստուած, ինչ եղեր է

ող ։ Ո՜հ, անշուշտ կ՚իմանամ, տարակոյս չկայ․ իմ որդիս Յովսէփ ողջ չէ․ չար գազան մի կերած է զայն, Աստուած իմ»։ Այսպէս ըսելով կը հառաչէր, կը ծեծկուէր, արիւն արտասուք կը թափէր․ այնքան որ ազգականները չկրցին մխիթարել վշտագին ծնողաց սրտին ցաւը ։

Հրեշտակներն ալ օր մի ձեր անմեղութեան պատմուճանը պիտի ներկայացընեն գերագոյն Դատաւորին ատեանն՝ ըսելով անոր, ինչպէս Յովսէփայ եղբայրներուն խրկած մարդն ըսաց Յակոբին․ «Տես թէ այս է քու որդւոյդ պատմուճանը»։ Ինչ խեղճութիւն կ՚ըլլայ ձեզ, թէ որ ձեր պատմուճանը բոլորովին մեղքով աղտոտած ըլլայ ։ Ձեր թշուառ վիճակը յաւիտենական պիտի ըլլայ, վասն զի երկնից արքայութե մէջ ամենեւին պղծած և աղտոտած բան չմտնէր․ և եթէ կ՚ուզէք որ զձեզ ներս առնուն, պէտք է կամ անմեղութիւննիդ պահէք, կամ թէ որ կորսնցուցած էք՝ ապաշխարութեամբ վերստին ձեռք բերէք ։

Զգոյշ կեցէք ուրեմն որ չըլլայ թէ ըսեն ձեզ համար՝ ինչ որ Յովսէփայ համար զրուցեցին, թէ չար գազան մի կերաւ զայն ։ Պէտքն այն է՝ որ զձեզ ուտող այս սոսկալի գազանը մեղքն է ։ Փախիք ուրեմն անկէ, կ՚ըսէ իմաստունն, ինչպէս որ թունաւոր օձ մի տեսնելնուդ կը փախչիք․ և ի գործ դրէք Յիսուսի Քրիստոսի սորվեցուցած երկու միջոցները, այսինքն՝ աղօթքն և հսկումը ։

Երիտասարդի մի գրած գեղեցիկ աղօթքը։

Ուսպալսինց երիտասարդն, որ տասն և եօթ տարեկան ծաղկափթիթ և սուրբ հասակին մէջ մեռաւ, ինչպէս կը կարդացուի իր վարուց գրքին մէջ, սովորութիւն ունէր թէ առաւօտ և թէ երեկոյ այս գեղեցիկ աղօթքն ընելու Աստուծոյ. «Աստուած իմ, երբ կը տեսնես որ իմ անմեղութիւնս կորսնցունելու վտանգին հասած եմ, վերցուր զիս այս աշխարհէս. վասն զի ես միտքս դրած եմ, և կը փափաքիմ աւելի մեռնիլ՝ քան թէ ապրիլ առանց զքեզ սիրելու»։

Շատ կը ցանկայի որ դուք ես, սիրելի զաւակունք իմ, այս աղօթքն ընէիք միշտ, որով անշուշտ մեծ օգնութիւններ կ՚ընդունէիք Աստուծմէ՝ զձեզ մեղքէն պահելու համար, մանաւանդ թէ որ ստէպ հաղորդութիւն առնելու ըլլաք։

Եկեղեցւոյ բոլոր սրբազան Հայրերը՝ զանմեղութիւնը պահելու համար խիստ ազդու միջոցներէն մէկը սեպած են Հաղորդութիւնը։ Ան է որ մեր կիրքերուն եռանդը կը մարէ, մեր հոգւոյն վերայ նոյն ազդեցութիւնը կուտայ, ինչ որ անգամ մի տղու մի մարմնոյն վերայ ըրաւ՝ հրաշքով կրակներուն մէջէն զինքը ազատելով։

---

Անմեղութը հաղորդութեամբ փրկուած տղայն։

Յունաց եկեղեցւոյն սովորութիւնն է, որ

Յիսուս-Քրիստոսի սրբազան մարմինը խմորուն (մայալը) հացով կը պատրաստեն, մեր ամեն օրուան կերած հացին պէս ։ Այլ հին ժամանակ երբ այս Նուիրական հացէն կտորուանք աւելնային, գլխաւորնէն մի քանի աշակերտ բերել տալով, կուտային անոնց նոյն մասերն որ ուտէին ։ Օր մի եւս այսպէս մէկ քանի աշակերտք եկան այս բանիս համար, որոնց մէջ տապակագործ (ճամճի) հրէի մի տղայ ալ կար ։ Այս տղայն քրիստոնէութեան սրբազան խորհուրդներուն տեղեակ չըլլալով, սպասեց եկեղեցւոյն մէջ միւսներուն հետ, հաղորդեցաւ անբունական երկրպագելի մարմնոյն, և դարձաւ տունը ։ Հարցուց իրեն հայրը թէ ինչո՞ւ համար այսքան ուշ մնացիր, և տղայն բնական պարզմտութեամբ պատմեց անոր ամեն ինչ ։ Անզգամ հրեայն է մէկէն կատղեցաւ, և իւր չափազանց բարկութենէն ինչ ընելիքը չգիտնալով՝ բռնեց իւր զաւակն և կրակոտ փռան մէջ նետեց ։ Մայրը իւր զաւկին ինչ ըլլալն և ուր երթալը չգիտնալով, տարակուսանքը գլուխն առաւ. բոլոր քաղքին մէջ վազեց պտըտեցաւ իւր որդին փնտրելու, գետի պէս արտասունք թափելով և ձէնով պոռալով Աստուծոյ օգնութիւնը կը կանչէր ։ Երկու օր պարապ տեղ փնտրելէն ետև, երրորդ օրը որդւոյն ցաւն և տարակուսանքը սաստիկ աւելնալով, երբ իւր երկանը խանութին դուռը կայնած՝ կորսուած զաւկին անունը միշտ կուտար, տղայն լսելով փուռին մէջէն անոր ձայ-

նը՝ պատասխան կուտայ իւր մօրը ։ Խեղճ մայրը փութին բերանը փակելով, և կրակներուն մէջ տեսնելով իւր սիրելի զաւակը, որ բնաւ վնաս մի կրած չէր, հարցուց թէ ի՞նչպէս այդ տակալի բոցերուն մէջ ողջ մնացեր ես ։ Որուն պատասխան տուաւ որդին. «Մէկ կին մի ծիրանիներ հագած՝ շատ հեղ եկաւ հոս իմ քովս, և այս կրակներուս վերայ ջուր թափելով մարեց, որոնց մէջ մնացեր էի. և երբ անօթեցայ, կերակուր եւս բերաւ ։ Այս հրաշալի լուրը Յուստինիանոս ինքնակալին ականջն հանելով, հրաման ըրաւ որ տղայն մօր հետ մէկտեղ մըկրտեն. և որովհետև կամակոր հայրը չուզեց քրիստոնեայ ըլլալ, դատապարտեց զայն ի խաչ հանելու ի պատիժ իւր բարբարոսական անգըթութեան՝ զոր իւր զաւկին դէմ ցուցուց ։

Դուք տակաւին չէք գիտեր, սիրելի զաւակունք իմ, այն վտանգները, ուր տեղ կ՚ինկնի ձեր դեռեցիկ անմեղութիւնն այս աշխարհիս մէջ ։ Թէ որ ամենքդ ալ կարող ըլլայիք տեսնելու զանոնք, կը հասկընայիք թէ այն հրեայ տըղուն նման՝ հոս մեր բոլորտիքը պատած են կըրակներուն եռանդները. և թէ ինչ մեծ վտանգ կայ առջևնիս, ուր եթէ ինկնելու ըլլանք, կ՚այրինք կը հալինք, թէ որ անկէ ազատուելու համար պաշտպան չունենանք մեր աղօթից օգնութիւնն և առէպ հաղորդութեան սուրբ շընորհքը ։ Ասոնք խիստ ազդու և փրկարար միջոցներ են. բայց գիտնալը որ Աստուած զամենն

ալ չկատարեր, այլ կ'ուզէ որ դուք ևս ձեր կողմէն զգուշանաք ձեր վրայ, մանաւանդ ձեր զգայարանաց վրայ, որպէս զի չտեսնէք և չլըսէք այնպիսի բաներ որ ձեր անմեղութեան կը վնասեն :

---

Աչուըններուն համարձակ նայուածքէն յառաջ եկած վնասները:

Դաւիթ մարգարէն մի միայն նայուածքով յանցաւոր եղաւ : Մինչեւ այս յանցանքը գործելու ժամանակ անմեղութեան և աստուածպաշտութեան օրինակ մի էր . բայց դժբաղդաբար օր մի տանիքին վրայ ժուռ եկած ատեն, նայեցաւ որ կին մի կը լուացուէր . և այս միմիայն համարձակ նայուածքը պատճառ եղաւ իրեն յափշտակելու զայն, և անոր անմեղ էրիկը մեռցընել տալու, որ իրեն կին ընէ :

Արդեմն խիստ մեծ զգուշութիւն պէտք է որ ունենանք աչուընուդ վրայ, և չթողունք որ տեսնեն այնպիսի բաներ, որ ձեր անմեղութեան ցաւալի դժբաղդութիւն մի հանդիպցընեն : Այս զգուշութիւնն առաւել հիմակուան ժամանակիս մէջ պէտք է ունենաք, ուր կ'երեւի թէ անհամեստութիւնն և անպարկեշտութիւնը դրօշակնին անկած են :

Պարկեշտութիւնն և ամօթխածութիւնը անմեղութեան հաւատարիմ պահապաններն են, ինչպէս անառակութիւնն և մոլութիւնը հաստաբակ պտուղներն են համարձակութեան, զոր

տղայք ամենուն բանի տեղ չդնելով, ամեն ինչ՝ թէ աղէկ և թէ գէշ, կ'ուզեն տեսնել. ամեն գիրք կարդալ, և ամեն բան կ'ուզեն մտիկ ընել. չեն գիտեր թէ ի՛նչ չար հետեւանքներ յառաջ կու գան ասոնցմէ։

Քանի՛ քանի երիտասարդներ իրենց մատղաշ հասակին մէջ ասոնց փորձն ըրին թշուառութեամբ։ Քանի՛ հոգի իրենց չար հետաքրքրութիւնը կատարել ուզելով, անզգուշութք չափերնին չգիտցան, և անմտաբար մեծ մեծ անկարգութիւններու մէջ ինկան։

Ես չեմ հաւատար ըսել, սիրելի որդեակք իմ, թէ դուք ալ ասոր պէս ըլլաք։ Բայց և այնպէս թէ որ դժբաղդութեամբ ծանր յանցանքով մը ձեր անմեղութեան պատմուճանն աղտոտած ըլլաք, շուտով առանց ժամանակ անցընելու խոստովանեցէք և ապաշխարեցէք որ թողութիւն գտնէք. վասն զի ինչպէս որ գիտէք, այս սուրբ Խորհուրդը՝ մկրտութենէն ետքը գործուած մեղքերը ջնջելու համար հաստատուած է։

Թէ որ ձեր վրայ ծանր և վտանգաւոր հիւանդութիւն մը գալու ըլլայ, իսկոյն հոգ կը տանիք, բժիշկներուն ոտքը կ'ինկնիք, դեղեր կ'առնուք որ ձեր առջի առողջութիւննիդ ձեռք բերէք։ Ուրեմն որքան աւելի մեծ հոգ պէտք է տանիք ձեր հոգւոյն՝ թէ որ հիւանդանալու ըլլայ։ Հոգւոյն վրայ բացած մեղաց վէրքերն հազար անգամ մարմնոյն հիւանդութիւններէն

մեծ և փառանդաւոր են: Այն ամեն ժամ պատ-րաստ կեցած է ձեր գլխուն տակ. ի՛նչ կ'ըլլայ ձեր վիճակն երբ մահուան մեղք մի գործելնէդ յետոյ՝ մահը ձեր հոգին առնելու ըլլայ. ինչ-պէս հանդիպեցաւ դժբաղդ երիտասարդի մի, որուն ցաւալի մահը կը պատմէ նոր հեղինա-կին մէկը:

---

Անառակ տղու մի մահը:

Քանի մի տարի առաջ որդեւնէր և առաքի-նի կին մի կար, որ անառակ տղայ մի ունէր. և կը յորդորէր զայն որ իւր վարքը փոխէ, և քահանայի մի քով երթալով խոստովանի ու ա-պաշխարէ: «Ցուած խրատդ կը կատարեմ, ըսաց տղայն իւր մօր, վասն զի՛ ես ալ իմ կեանքէս ձանձրացեր եմ: Բայց քեզմէ երեք օր կը խնդ-րեմ՝ որ սա բարեկենդանին մնացած օրերն ալ անցնեմ. և կը խոստանամ քեզ որ այս երեք օրէն յետոյ՝ բոլորովին փոխուած պիտի տեսնէք իմ վարքս»: Անմիտ տղայն, ինչպէս նաև այնքան միաքերնին կոյր քրիստոնէից սովորութիւն է, կարծէր թէ այն ամեն ուրախութիւնները կա-տարելով՝ ապաշխարութեան պատրաստութիւ-նը կը տեսնէ, որ մեծ պահոց առջի օրը պիտի ընէր: Երեք օր կ'անցնին, կիրակի մութ ատեն իւր սովորութեան պէս տուն կը դառնայ. փա-կեալ խորանին օրը լուսնալու ատենները իւր անկողնին մէջ շնիկոց մի կը բռնէ. տան ծա-

ամէներէն մէկը ներս մտնելով, ի՛նչ կը՛նայի, խեղճ այդ գետինը փռուեր և աղբիւրի պէս արիւնը վազելով խղդուեր մեռեր է. և մէկը չէր խմացեր որ իրեն օգնէ ու ճար մի գտնէ։

Կը յուսամ որ ձեր գլուխն այսպէս դժբաղդ դէպքեր չեն պատահիր. վասն զի ստոյգ կը կարծեմ թէ ձեր անմեղութեան պատուական գանձը միշտ ձեռուընիդ ունիք. կամ թէ որ կորսնցուցած եւս ըլլաք մեղք գործելով, ապաշխարութեամբ նորէն ձեռք կը բերէք։ Ուրեմն եւ այդ հիմայ ջանամ պահպանել զձեզ երկու վտանգաւոր ապառաժ քարերէն, որոնցմէ վախ ունիք ձեր առաքինութեանը համար. այս ըսած ապառաժներս մոլի բարեկամներն և գէշ գիրքերն են։ Հետեւեալ երկու գլուխներուն մէջ պիտի սորվեցընեմ ձեզ, թէ ի՛նչ ընել պէտք է ասոնց դէմ։

## ԳԼՈՒԽ Լ.

### Մոլի բարեկամներուն վերայ։

Հոգին սուրբ նոյն ինքը կը հաստատէ մեզ, թէ գիտուն և առաքինի բարեկամք բոլոր գանձերէն պատուականն է. բայց ափսոս որ շատ դժար է զայն ձեռք բերել։ Գիտուն մարդիկ ըսած են թէ, այն մարդոցմէ մեծ մաս, որոնք կը պարծենան ճշմարիտ բարեկամ ըլլալ իրենց

բարեկամներուն , բարեկամութեան միայն արտաքին պարզ երեւոյթներն ունին իրենց վերանին : Այս առածս խիստ ստոյգ և փորձով եւս հաստատուած է : Վասն զի այս սուտ բարեկամները չէ թէ մարդուս հետ սիրով կապուած են , այլ միայն անոնց ստացուածոց հետ , որոնց հանգստութեան և վարկին ( իթիպար ) աչք տնկած են : Անոնց բաղձանքը միայն իրենց օգտին համար է , որ կը ջանան բարեկամաց երեսէն առնալ , դրամանց սէր ցուցնելով անոնց : Աւստի անոնց այս տեսակ բարեկամութիւնն այնքան ժամանակ կը տեւէ , որքան որ իրենց շահաւոր է : Այս բանիս խիստ յարմար կուգայ քանի հեղինակի մի առակն , որ այս տեղս կը դնեմ :

---

# ԱՌԱԿ

Խնձորին ծառն իր պտուղներէն մերկացած :

Խնձորի ծառ մի լեցուն պտուղներով , բայց առաւել գոռոզութեամբ լեցուած , կը դառնայ օր մի քովի ծառերուն , որ այն երկրին պարծանքն էին , և այսպէս կը սկսի խօսիլ : " Տեսէք , ով բարեկամներ , ի՞նչ գովութիւններ կու տան ինձ , ի՞նչ մեծարանք և պատիւ կ'ընծայեն այս օրերս իմ վաստակոցս արժանի : Պարտիզին տէրը կուրծքը տնկած և ուրախ դէմքով կուգայ զիս տեսնելու . երբեմն կը գովէ , երբեմն լուռ կեցած երեսէս վայր կը հիանայ կը մնայ : Մին-

չէ. տիկինն և իւր պզտի աղջ.ը շատ անգամ կուգան իմ շուքիս տակ կը նստին. տան պա-հապանին ինչ կ'ըսես, սիրտը չուզեր որ քովէս հեռանայ: Մէկին իմ պտուղներուս անուշ հո-տով կը զմայլի, ուրիշն աղուոր գոյները տեսնե-լով կը գովէ, և գրեթէ ամենուն բերնին ջուրը կը վազէ. աւաղ . . . ինչ աւաղ, այլ ամենուն ալ խելքը միտքն իմ վերաս է: Ո՞վ ունի այս-պէս գեղեցիկ և պտղաւէտ գանձ մի: Երջա-նիկ և բարեբախտ եմ ես. աշխարհիս մէջ. չէ, չկայ տակէ աւելի փարթամութիւն: — Ազնիւ խնձորենի, պատասխան տուաւ տարին առած տանձենի մի ցած ձայնով. կ'աղաչեմ, ներեցէք թէ որ կը համարձակիմ խօսքիդ դէմ կենալ: Ի-րաւ է որ հիմայ ամեն մարդ կը փափաքի կ'ու-զէ հնազանդ և սիրելի երեւնալ քեզ. բայց մի խաբուիր մարդկանց, որոնք բնութեամբ ագահ ըլլալով՝ սովոր են միշտ առնել և խօսքերնուն վերայ չկենալ: Կեցիր որ այն բարբարոս ձմեռն գայ վրանիդ զաշունն, և այն ատեն կը տեսնես թէ անոնց պարծեցած բարեկամութեան կա-պը հատած է »: Տանձենւոյն տուած խրատը խիստ խելացի էր և խիստ յարմար, մանաւանդ թէ մարգարէի պէս խօսեցաւ, թէ որ հաւա-տալու ըլլամք Եղբօրմին: Վասն զի հազար խըն-ձորին ծառը իւր պտուղները կորսնցնելով մօրէ մերկիկ մնաց, և իւր տիրոջն ու ծառանե-րուն երեսէն ալ ինկաւ: Այս փորձանքն որ գը-լուխն եկաւ, սկսաւ ցաւիլ և զղջանալ: «Ահ,

կ՚ըսէր, ահա հիմայ կ՚իմանամ այն խաբեբայ գո-
ղերուն ըրած մատնութիւնը. բայց ի՞նչ օգուտ,
ատեն անցաւ, վա՜յ իմ գլխուս ։ Ա՛նոնց ինծի ցոյց
տուած սէրն երեւանայ էր, կեղծաւորութիւն
էր ըրածնին, որ երեսնէս ի վայր կը հիմանային կը
մնային. եւ իմ պատիւս աւրել է եղեր այն չա-
րագործներուն միտքը ”։ Կրկնեց այն ատեն
ատանձենին. “Ահա հիմայ ճշմարիտ կը խօսիս եւ
չես խաբուիր. վասն զի ես տարիներ եմ անցու-
ցեր մինչեւ որ սորվեցայ չխաբուիլ անոնց սուտ
գովեստներէն, եւ խոհեմութեամբ յայտնել ա-
նոնց խաբէութիւնն եւ խարդախութիւնները.
եւ իմ փառաւորս իմացայ թէ ինչ որ մեր գլուխը
կը բերեն այդ մարդիկը, նոյն փառքն իրենց մէջ
մէկմէկու ալ կուտան։ Քանի որ մի բարեկամի
երեսէ իրենց գործքը կը յաջողի եւ անկէ օգուտ
մի կը առնեն, անոր պատիւ կուտան եւ կը մեծ-
ցընեն, եւ կեղծաւորութեամբ ձեռուընուն վե-
րայ ժուռ կ՚ածեն, հաստատուն սէր եւ հաւա-
տարմութիւն կը ցուցընեն։ Այսպիսի բարե-
կամներ անմիտ են, որոնք միայն իրենց շահը
կը նային, եւ միայն զուարճութեամբ եւ ոչ թէ մը-
տերիմ բարեկամութեամբ կապուած են ”։
Անկիա խնձորենւոյն վերայ նայիս մէկէն եկաւ
հասաւ աղքատութիւն միշտ եւ ցաւ.....։
Ամենքնին ալ երեսէ ձգեցին, եւ ոչ մէկը քովը
կուգայ. մէկն ալ չկայ որ անոր ցաւն եւ ո-
ղորմելի վիճակին մէջ ցաւակից ըլլայ իրեն։

Այս ճշմարտութիւնը՝ իրաւ չափահաս մարդ-

կանց այնքան ազդեցութիւն չտայր, բայց եւ մասնաւորապէս հարկաւոր կը սեպեմ պզտի տըղայոց իմացընել, որպէս զի երբոր կը սկսի խելքերնին տեղ ընել, սորվին ճանչնալ զմարդիկ, և անոնց սուտ երեւոյթներէն չխաբուին :

Դժուար է առաքինի և հաւատարիմ բարեկամ գտնելը, ատոր հակառակ խիստ դիւրին է նենգամիտ և սուտ բարեկամներ գտնալը. ուստի իմ միտքս այն է որ զգուշացընեմ զձեզ այն վտանգէն, ուր տեղ անզգուշութեամբ կ'ինկնին, անոնք որ բարեկամութեամբ հետերնին կը կապուին :

Կ'ուզէի որ դուք յայտնի թշնամի ունենայիք՝ քան թէ գէշ ու մոլի բարեկամ :

Ձեր թշնամին յայտնի որ ըլլայ, կրնաք չվըստահիլ անոր, և զգուշանալ անոր լարած որոգայթներէն. իսկ ընդհակառակն՝ ընդհանրապէս խօսելով, բնաւ վախ մի չունենար մարդ այն բարեկամէն, որոյ հետ ընտանեբար (թէքլիֆսիզ) կը տեսնուի : Ասոր վրայ կ'ըլլայ ձեզ՝ թէ որ սիրով կապուելու ըլլաք այն բնութիւնը ունեցող բարեկամներուն մէկուն հետ. քիչ քիչ առանց իմանալու անոր գէշ սովորութիւնները կ'ընդունիք, չար օրինակները կը սորվիք, և կամաց կամաց կ'ըլլաք դուք ալ անոր պէս չար և նենգամիտ մարդ մի :

Մոլի բարեկամներուն դաւաճանաւ. գէշ եղաւ
երիտասարդ իշխանը։

Քանի որ Ներոն Հռոմայու կայսրը սկզբան
ականջ կը դնէր Բուռրոսի և Սենեկայի խրատնե-
րուն, որոնք անոր դաստիարակ ընտրուած էին,
անոնքն ալ կը զարմանային իր բարեսրտութեան
և ողորմածութեան վրայ։ Իր պաշտօնատար-
ներէն մէկը օր մը գնաց քովն և ուզեց որ դա-
տապարտութեան թղթի մը մէջ իր ստորա-
գրութիւնը դնէ․ “Երանի թէ, պատասխան
տուաւ Ներոն, գիր գրել չգիտնայի, որ հիմայ
այդպիսի վճռոյ մը ստորագրութիւն դնէի”։
Ուրիշ անգամ եւս քաղաքի մը կառավարչին գիր
գրեց ըսելով՝ իշխաններուն բուրդը միայն խու-
զել պէտք է և ոչ կաշինին մէկտեղ սրդել։ Ն-
ալ ուզեց խնայընել անոր, թէ ժողովուրդը
պէտք չէ աղքատացընել չափազանց տուրք պա-
հանջելով և զինանք տալով անոր։ Բայց ետքն
երբոր Ներոնին չորս դին առին շողոքորթ և գէշ
փառք ունեցող պալատականներ, այն քաղցր և
մարդասէր իշխանը կատղած առիւծ մը դար-
ձաւ, որ միայն մարդկանց արիւնով կը սնանէր։
Ամենամեծները և հասարակ ժողովուրդը, մա-
նաւանդ քրիստոնեաները անոր անգթութեան
զոհ եղած էին։ Ոչ միայն իր Բուռրոս և Սե-
նեկա վարժապետները ի մահ դատապարտեց,
այլ մինչեւ Ագրիպպինա իր մայրն և Հոկտա-
ւիա կինը մեռցընել տուաւ։ Շատ անգամ

կ՚ըսէր, թէ կը ցանկայի որ աշխարհիս բոլոր մարդիկ մէկ գլուխ ունենային, որպէս զի մէկ անգամ սուր զարնելով զամէնքը մէկէն սպաննէի, և զուարճանայի: Իւր անգթութիւնն և բարբարոսութիւնն այնքան չափէն անցաւ, որ մինչեւ հրամայեց կրակի տալ Հռոմ քաղաքը, և ինքը բարձր աշտարակի մի վերայ նստած կը զըւարճանայր կրակին բոցերը տեսնելով, և Տրովադայի հրկիզութեան վերայ շինուած բանաստեղծական քերթուած մի կ՚երգէր, ինչ ատեն Հռոմ բոցերուն մէջ կ՚այրէր կը մրկէր:

---

Երկրորդ օրինակ:

Գէշ բարեկամներուն կենակցութիւնը քիչ մնաց չտուաւ Յովասու Յուդայի թագաւորին ալ: Այս երիտասարդ իշխանն իմաստութեամբ կառավարեց քանի որ Յովիադա քահանային խըրատներուն հետեւեցաւ, որ զինքը Գոթողիայի բարկութենէն ազատելով՝ նորա աթոռը նստեցուցեր էր: Այս առաքինի մարդոյս վերայ Յովասու ունեցած ակնածութիւնն և պատիւը զինքն Աստուածպաշտութեան ճանբով և առաքինութեան սիրով կը վարէին: Բայց Յովիադային վախճանելէն յետոյ, քիչ ատենուան միջոցին մէջ փոխեց նա իւր վարքն, և իւր օրինակովը յայտնի ըրաւ, թէ մարդս որու հետ որ շատ տեսնուի՝ անոր կը նմանի. վասն զի տերութեան իշխաններուն երկրպագութիւն ընելու

գալով անոր առջին, Յովասու միտքը դարձու-ցին. Յովաս ալ անոնց շողոքորթութիւններէն և անոյշ խօսքերնէն խաբուելով մոռիկ ըրաւ ա-նոնց խօսքին, և այն չար մարդկին իրենց ուզած պատուոյն հասուց, իւր հաւատարիմ իշխան-ները պաշտօնէն ձգելով։ Ահա այսպէս անկար-գութիւններու անձնատուր ըլլալով՝ Թողուցին Թէ՛ իրենք և Թէ՛ իւր պալատականներն իրենց նախահայրց ճշմարիտ Աստուածը, և ծառայե-ցին կռոց։ Նաև իւր չարութիւնն այն աստիճան հասուց, որ մինչև մեռցընել տուաւ Յովիա-դա քահանային որդին Ազարիան, ամենևին միտքը չբերելով անոր հօր իւր վրայ ունեցած գութն, որ զինքն աթոռը նստեցուցեր էր։

---

Երրորդ օրինակ՝ որ առջինէն աւելի նշանաւոր է։

Սուրբ Յովհաննէս աւետարանիչն Եփեսո-սէն քիչ հեռու քաղաք մի երթալով, հոն շնորհ-քով տղայ մի կը տեսնէ արթուն և խելքը բաց, որ խիստ սիրուն երեւելով իրեն՝ կ'առնու կը տանի նոյն քաղաքի եպիսկոպոսին և կ'ըսէ անոր. «Կ'ուզեմ որ մասնաւոր հոգ մի ունենաս այս տղուն վրայ, զոր քեզ կը յանձնեմ Եկեղեցւոյ և Յիսուսի Քրիստոսի առջև»։ Եպիսկոպոսն յանձնառու եղաւ, և սուրբ Յովհաննէս նորէն յանձնելով անոր՝ դարձաւ յԵփեսոս։ Եպիս-կոպոսը քաշեց քովն առաւ տղայն, մասնաւոր ջանքով մի կրթեց, և ետքը մկրտեց։ Ժամանակ

անցնելէն յետոյ եպիսկոպոսին առաջուան մէկս մեծ խնամք չէր տանիր անոր վերայ, կարծելով թէ մկրտուելէն ետեւ այլ վախ մի չունի գէշ ըլլալու ։

Տղայն ինքզինքն ազատ գտնելով՝ սկսաւ անառակ տղայոց հետ ընկերութիւն ընել․ որոնք զինքը կերուխումի սովորցնելով և օրէ օր զբօսանքներու և ուտելու խմելու ետևէն աւելցնելով, առին հետերնին մէկտեղ որ գիշեր ժամանակ ճամբորդներ կողոպտեն․ ապա սկսաւ աւելի անօթակ և գազիր գործքերու եւս ձեռք զարնել ։ Նաև երբ այսպէս սովորեցաւ յանցանքներ գործելու, և որովհետեւ բնութեամբ եւս կրակոտ և յանդուգն (կէօզիւ գարա) էր, ամենեւին մէկուն խրատը մտիկ չըրաւ, երեսը ջուր չմնաց և ոչ ալ մէկէն կը խայմէր․ և իւր փրկութենէն յուսահատելով ձգեց զինքը ամեն չարագործութեանց անդունդին մէջ, մինչեւ որ անօրէն ընկերներուն հետ աւազակաց խումբ մի կազմեց, և ինքն անոնց առաջնորդ և գլուխ եղաւ ։

Քանի մի ժամանակէն յետոյ, սուրբ առաքեալը՝ եկեղեցւոյ վերաբերեալ մասնաւոր գործքերու համար Եփեսոս եկաւ․ և իւր գործքերը լմնցնելէն զկնի, հաշիւ փնտռեց եպիսկոպոսէն իրեն յանձնած աւանդին (էմանէթին) վերայօք ։ Եպիսկոպոսը խռովեցաւ այս հարցմունքէն, կարծելով թէ ստակի աւանդ էր անոր ուզածը ։ Գիտէր սակայն որ անկէ ամենե֊

ւէին բան մի ընդունած չէր, այլ չէր համարձա-
կեր հարցնել անոր՝ թէ ի՛նչ աւանդ է խընդ-
րածդ։ «Իմ ըռուցած աւանդս, ըսաւ անոր
սուրբը, այն երկնաւարդն է զոր ես քու պահ-
պանութեանդ և խնամոցդ յանձնեցի, քու եղ-
բօրդ հոգին»։ Այն ատեն ծերունին աչուըներ-
ըը գետին իջեցնելով և սաստիկ լալով պատաս-
խանեց՝ թէ մեռաւ այն։ — Ի՞նչպէս կրկնեց
սուրբ Յովհաննէս, ի՛նչ մահով մեռաւ։ — Ո՛հ
խեղճը, ըսաւ նորէ՛ն առաջնորդը, անիկայ մե-
ռաւ բարոյապէս։ Ան ինքզինքը անառակու-
թեան տալով չար ու անիրաւ տղայ մի եղաւ.
մէկ խօսքով՝ ճամբու վերայ գողութիւն կ՚ընէ
հիմա։ Եկեղեցիէն գաղտուկ փախչելով, լեռ-
ներու մէջ սրահուած է իրեն պէս չարագործ-
ներու խմբով մի»։ Սուրբ առաքեալն է այս
լսելուն պէս՝ վերայի զգեստը պատռեց, ցաւա-
լի աղաղակ մի հանեց, և ձեռքը գլխուն զար-
նելով, «Ո՛հ, ի՛նչ աղէկ հսկողութիւն է այս,
ըսաւ, որու՛ն ես պարզմտութեանը մեր եղբօր
հոգին յանձնեցի։ Ըղէ՛ շուտով սրընթաց ձի մի
բերել տուր ինձ. և մէկ առաջնորդ»։ Ճեծա-
ձին ու ելաւ եկեղեցիէն դուրս ժամանակ չան-
ցուցած՝ վերայի հագուստովը։ Գողերուն ե-
կած տեղը հասածին պէս, անոնցմէ մէկին՝ որ
հոն պահապանութիւն կ՚ընէր, բռնեց զինքը.
բայց սուրբ Առաքեալն առանց ետ քաշուելու,
տար զիս, ըսաւ համարձակութեամբ մի, տար
զիս ձեր գլխաւորին քով. անոր հետ խօսակցե-

րու համար յատկապէս եկած եմ ես»։

Անօրէն խմբին գլխաւորն աներկիւղ և զի-նուորուած կեցած կը սպասէր որ իմանայ՝ թէ ով էր այն որ զինք կը փնտրէր. բայց երբ տե-սաւ և ճանչցաւ որ Աւաքեան էր այն, ամըչ-նալուն փախաւ անկէ։ Սուրբ Յովհաննէս իւր ծերութեան չնայելով, ձիոյն սանձը թողլով՝ այնպէս կը վազէր ետևէն և կը պոռար. «Որդ-եակ իմ, որդեակ, ինչո՞ւ կը փախչիս քու հօրդ-երեսէն, և մէկ ողորմելի ծերունիէ մը որ ա-ռանց զէնքի զքեզ փնտռելու կուգայ։ Ողոր-մէ ինձ, որդեակ իմ, մի՛ փախնար։ Քու փըր-կութեանդ համար յոյս ունիմ. ես քեզ համար հաշիւ կուտամ Յիսուսի Քրիստոսի, և թէ որ հարկն ալ պահանջէ, իմ կեանքս յօժարակամ կուտամ քեզ համար, ինչպէս որ մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս իւր կեանքը մեզ համար զո-հեց։ Կեցիր, և գիտցիր որ նոյն ինքն է որ զիս խրկեց զիս քու հոգւոյդ փրկութեան համար»։

Այս խօսքերուս վերայ տղուն սիրտը դող-ելնելով կակուղ առաւ. աչուըները գետին խո-նարհեցուց. նետեց վերայի զէնքերն, և գլխէն մինչեւ ոտքերն սկսաւ դողալ։ Սուրբ առաքեա-լը նորա քով մօտենալով, տղայն սիրտ առաւ, և աչքերէն աղբիւրի պէս արտասունք թափե-լով փաթթուեցաւ իւր պապաչին։ Սուրբը նո-րէն սիրտ տուաւ անոր, երդում ըրաւ թէ ինքն անոր համար թողութիւն ընդուներ էր Աս-տուծմէ. աղաչեց՝ ծնկան վրայ եկաւ, համբու-

րեց անոր աջ ձեռքն, զոր իւր արտասունքով թըր-ջեր էր, ետքը բերաւ եկեղեցին։ Սուրբ Յով-հաննէս շատ աղաչեց զԱստուած անոր համար. եւ անոր հետ շատ օր ծոմ պահեց. վերջապէս չգնաց քալէն՝ մինչեւ որ նորէն եկեղեցւոյ զա-ւակ ըրաւ զինքը, որ յետոյ ճշմարիտ ապաշ-խարութեան հայելի եւ օրինակ եղաւ ամենուն։

Դուք կը զարմանաք հիմա, սիրելի որդեակք իմ, տեսներով թէ ինչպէս երիտասարդ մը աստ-ուածպաշտութեան եւ առաքինութեան ճամբան քալած ժամանակ այսպիսի գարշելի անօրէնու-թեանց աւազակի անդընդին մէջ ինկեր էր։ Բայց զարմանալու չէ բնաւ. վասն զի չար մարդոց հետ ընկերանալու որ ըլլանք, ի հարկէ անոնց կը նմանինք. ասոր համար կ'ըսէ առակը թէ՝ «Ըսէ ինձ ով է քու ընկերդ, եւ գիտնամ ինչ մարդ ըլլալդ»։

## ԳԼՈՒԽ Ը.

Նոյն նիւթին վերայօք, այսինքն նոյն վտանգին, որու-մէջ կ'ինկնին տղայք չար ընկերներու հետ տեսնուելով։

Ինչպէս որ տարափոխիկ (պուլաշկան) հի-ւանդութիւն ունեցող մարդու մօտենալու ըլ-լանք, անոր հիւանդութիւնը մեր վրայ ալ կը փոխադրուի, այսպէս՝ մոլի բարեկամներու հետ տեսնուելու որ ըլլանք, անոնց մոլութիւնը մեր

վերայ կ՚անցնի։ Բայց ինչպէս ըսի, հիւանդ մարդուն մինչեւ որ չմօտենամք, նորա ախտը չեմք ունենար։ Աւստի թէ որ մէկին ըսելու ըլլայ ձեզ թէ՝ այս ինչ մարդը կամ այս ինչ տղայն տարափոխիկ հիւանդութիւն մի ունի, կամ ժանտաախտէն բռնուած է. դուք որ այս լսէք, չէ՞ք զգուշանար եւ չէ՞ք հեռանար անոնցմէ. այսպէս՝ եւ տակէ աւելի զգուշութեամբ պէտք էք հեռանալ անառակ եւ չար տղայոց բարեկամութենէն ու տեսութենէն։

---

Անկիրթ եւ մոլի բարեկամներու վերայօք երկու սուրբ տղայոց ունեցած միտքը։

Սուրբ Գրիգոր աստուածաբան կ՚ըսէ թէ, «Երբ սուրբ Բարսեղի հետ Աթէնքի մէջ գիտութիւն կ՚ուսանէինք, ամենեւին տեսութիւն չէինք ըներ այն դասընկերաց հետ, որոնք սահակ, կռուարար եւ անկիրթ էին. այլ միայն անոնց հետ կը տեսնուէինք՝ որոնք իրենց պարկեշտութեամբն եւ խոհեմութեամբ կրնային մեզ օգտակար ըլլալ մեր գիտութեան մէջ հաստատ կենալու համար, զոր ըրած էինք այնպիսի կեանք մի վարելու, որ ամենեւին բամբասանաց եւ պարսաւանաց պատճառ չտանք ուրիշին, աղէկ գիտնալով թէ չար օրինակները տարափոխիկ հիւանդութեանց կը նմանին, որ դիւրաւ կը փոխուին մարդոց։

Գէշ բարեկամները կրնան նմանիլ փտտած

պտուղներու, որոնք շուտով կը փտեցընեն ի-
րենց քով եղած միւս պտուղներն ալ։ Բայց այս
զանազանութիւնը կայ փտած պտուղներուն
և գէշ բարեկամներուն մէջ, որ առաջինները
իսկոյն յայտնի կ'ըլլան իրենց փտած ըլլալնին։
Վերայի սեւ ու կապոյտ նշանները տեսներով,
դիւրաւ կ'իմանանք անոնց մէջ եղած փտութիւ-
նը. իսկ ընդհակառակն՝ անառակ տղայք սո-
վորաբար ներսերնին ինչպէս որ է, նոյնը դրսէն
չեն ցուցըներ։ Անոնք իրենց սրտին չարութիւն-
ներն արտաքին պարկեշտութեամբ կը ծածկեն։
Յափշտակիչ գայլեր են ոչխարի մորթով ծած-
կուած, որ դիւրութեամբ վերայ կը յարձակին
և կը պատռեն կ'ուտեն անմեղ գառնուկները։
Ուրեմն մի հաւատայք անոնց արտաքին խաբե-
բայ կերպարանաց. այլ այն մարդոց բարի խր-
րատներուն մտիկ ըրէք, որոնք աղէկ կը ճանչ-
նան նոյն թշուառականները, և ձեզ ալ կը խր-
րատեն որ փախչիք անոնցմէ։ Յովհաննէս Պը-
լուզ վարդապետն գեղեցիկ խրատ կու տայ մեզ
ճշմարիտ բարեկամի մեզ ճանչցընելով. «Իշխա-
նի և պարոնի, կ'ըսէ, պարտ է որ զայն մարդն
սիրէ, որ յիւր երեսն խօսի, և յանդիմանէ՝ յոր-
ժամ անիրաւ բան առնէ, զի այն ի սրտէ բա-
րեկամ է։ Իսկ մարդ որ զինչ պարոնն առնէ, և
նա ասէ՝ թէ լաւ է, առ ժամանակն զպարոնի
դիւրն խօսի, նա յերեսաց բարեկամ է, և հոգ-
ւոյն չարկամ»։

# ԱՌԱԿ

Պզտի մուկն եւ ծեր կատուն։

Պզտի մուկ մի, որ դեռ կաթէն նոր կըտ-րուած էր, իւր խորունկ բոյնէն դուրս կ'ելնէ, և ուրախութեամբ կը սկսի ինքն իւր վերայ նա-յելով պարծիլ և ըսել. ինչ գեղեցիկ և սիրուն եմ։ Խեղճն իւր հայրենի բոյնին մէջ ընչաւու-թենէ ուրիշ բան չէր գիտեր. նախ գլուխը ծակէն դուրս կը հանէ, իւր թաթիկները կը թօթվէ, և նոր աշխարհ եկած կը կարծէ զինքը։ Արեւուն լոյսը բնաւ չէ տեսած, կը խնդայ կ'ու-րախանայ, բայց ինչու համար՝ չգիտեր։ Աղէկն ու գէշը չճանչնար, խաբէութիւն չգիտէր, վնա-սէն և ցաւէն չվախնար, ամենեւին բանէ մի խնայ չունի։ Խեղճուկը մէկ մի կ'երթայ կը պահ-ուըտի, այլ իւր սրտին մէջ ապաստութեան տէր մի ունենալուն՝ նորէն դուրս կ'ելնէ. կը հեռա-նայ անփորձ կենդանին իւր հայրենի բնակարա-նէն, և ուրախութեամբ սիրտը կը լեցուի։ Ո-ղորմելին չունի քովն խնամոտն բարեկամ մի որ իրեն առաջնորդ ըլլայ, կամ բարի խրատ մի տայ։ Աչքերը չորս դին կը պտըտցնէ, և կը տեսնէ որ խաւարուտին գոյնով կատու մի ոտքերը երկըն-ցուցեր արեւուն մէջ հանդարտիկ նստեր է։ Շատ պատերազմներու մէջ գտնուելով այս ա-նօրէն գողը տըրուած էր ծեծի, և մէկ կողմ եր-կընցեր փառուեր էր, և այնպէս կը կեղծէր զինքն՝

որպէս թէ երկինքին երեսը կը նայի, և միամը-տութիւնը երեսէն կը վազէ ։ Մեր անմիտ պըզ-տի մուկը կը նայի անոր և ուրախութենէն կը սկսի ցատքըտել. նենգամիտ կատուն ամենևին տեղէն չշարժիր և հոգը չըներ, այլ ինքզինք խե-լօք ձեւացնելով՝ անոր վերայ մեծ սէր մի կը ցուցընէ ։ Մուկն ուրախութենէն կը գինովնայ և կը սկսի անոր բոլորտիքը ցատքըտել, և ի-րենց լեզուով կ'ըսէ անոր. «Սիրուն կենդանի, շնորհալի է քու դէմքդ, փայլուն են աչուըներդ ։ Ըսէ ինծի ի՞նչ է անունդ, որ տեսնեմ թէ քու արժանաւորութեանդ հաւասա՞ր է ։ Սիրելի, թէ որ իմ վերաս դէշ աչք չունիս, կ'ուզէի որ մեր երկուքնուս մէջ բարեկամութեան կապ մի հաստատենք ։ Քեզմէ ի զատ ուրիշ ո՞վ կրնայի գտնել ինծի աղէկ առաջնորդ մի, կամ հաւա-տարիմ ընկեր» ։ Այսպէս խօսելով անմիտ և տխմար մուկը կը մօտենայ խաբած կատուին, որ իւր ազգին աւերիչն է ։ Կեղծաւորն՝ որ բը-նաւ զուր տեղը չփարձեր պարագաները, ճան-կերը մէկէն վերան կը նետէ, կը բռնէ ակռա-ներով, և խեղճին միսը պատառ պատառ կ'ը-նէ ։ — Այս առակը կը սորվեցընէ, թէ շատ անգամ մարդկանց մէջ ալ կը գտնուին, որ եր-բեմն աչուըներով, լեզուով, և երբեմն իրենց խոնարհ կերպարանքով կը խաբեն զմարդս. և իրենց սրբութեան վերարկուին և պարծենցած պարզմտութեան քողին տակ չար խարդախու-թիւն և կեղծաւորութիւն ծածկած ունին ։

Բարեկամաց ընտրութենէն առաւելապէս կը կախուի ձեր պատուական անմեղութեան պահպանութիւնը կամ կորուստը . վասն զի՝ ինչպէս կ'ըսէ Հոգին սուրբ . « Դուք աղէկներուն հետ աղէկ կ'ըլլաք , և չարերուն հետ՝ չար ու մոլի » ։

Թէեւ մինչեւ այդ հասակն առաքինութիւն եւս հասած ըլլաք , այլ հաւատացէք ինծի , որ մէկ չար ընկեր միայն բաւական է զձեզ գլխէ հանելու և իրեն պէս գէշ ընելու ։ Փորձով կը տեսնենք ամէն օր , թէ երիտասարդ տղայոց մեծ մասը կ'երթան ինքզինքնին այս ցաւալի քարին կը զարնեն ։ Հետեւեալ օրինակը կարծեմ որ մեծ ազդեցութիւն և վախ մը կուտայ այն տղայոց սրտին , որոնք բնաւ չեն զգուշանար այնպիսի ընկերներէն հեռու կենալ ։

---

Ծաղկահասակ տղուն ցաւալի մահը ։

Ազնուական երիտասարդի մը այնքան խելացի և աստուածապաշտ էր , որ ամէնքն ալ կը զարմանային և երանի կուտային իր ծնողաց . բայց դժբաղդութեամբ անառակ և անամօթ տղու մը հետ բարեկամանալով՝ խիստ մեծ անկարգութիւններու տուաւ զինքը ։ Անոր խօսքերն և օրինակները քիչ ատենուան մէջ խանգարեցին անզգոյշ երիտասարդին սիրտն ու միտքը ։

Պարկեշտութիւնն և համեստութիւն մէկդի թողլով , որով այնքան իր անունն եղած էր , խիստ անամօթ լրբութիւններու անձնատուր

եղաւ։ Խնկերն ու միւռքը զբօսանաց (սէֆայի), կերուխումի և խաղի հետ էր։ Իւր ծնողքը, բարեկամներն և փարթամութիւնը ի զուր կը ջանային մոլութեան ճամբէն դուրս հանելու զինքը. և որքան աղաչանքներ որ կը դնէին անոր առջեւ, ամենեւին շահ մի չընելէն զատ, իւր չար կիրքերն աւելի կը գրգռէին, մինչեւ որ կամակորութեամբ անզգուշութեան վիճակին ինկաւ։ Իւր ծաղիկ հասակին մէջ մահաբեր հիւանդութեամբ մի պառկելով, քահանայ մի եկաւ որ ապաշխարութեան յորդորէ զինքն և Աստուծոյ հետ հաշտեցընէ. սակայն անոր խօսքն և ոչ միտիկ ըրաւ. բայց գթասիրտ և մարդասէր քահանայն՝ քանի որ նա իւր սիրտը կը պնդացընէր, այնքան աւելի կը յորդորէր հօր պէս. Նայիս թշուառականն տղուն խղճմտանաց խայթերը սաստիկ սուր ընելով, և ժանգոտ դէմքը մէկ մի քահանային դարձընելով, այս սոսկալի խօսքերը զրուցեց. «Վա՜յ այն թշուառականին որ զիս գլխէ հանեց և մոլորեցուց։ Իմ յանցանքներս խիստ մեծ են, և չեմ յուսար որ Աստուած թողութիւն տայ ինծի»։ Այս խօսքերս ըսաւ և վշտագին ձայնով մի զրուցելուն պէս, երեսը միւս կողմը դարձուց, որպէս զի այլ չտէ բարի քահանային բանձներն. և քանի մի րոպէէն ետեւ մեռաւ յուսահատութեամբ դժբաղդ երիտասարդը։

Ահա տեսէք, սիրելի որդեակք իմ, չար ընկերութիւններուն պտուղը։ Աւասիկ ինչպէս

կը ճշմարտի Հոգւոյն սրբոյ բանը, թէ «Ո՛վ որ ձեռքը ձիւթին (զաւթրանին) մէջ կը խոթէ, մատուըները աղտոտած դուրս կը հանէ (1)։ Ը-սել կուզէ թէ՝ ով որ գէշ և անզգամ բարե-կամներու հետ շատ կը տեսնուի, անոր մոլու-թիւնները ինք կը առնայ, և օրինակներուն կը հետեւի։

Այս յօդուածիս վերայ քիչ մի երկինկել խօ-սելու մի զարմանաք, վասն զի խիստ կարեւոր նիւթ է։

Թէ որ տղայ գիտնամ որ ձեր սրտին մէջ սոսկում և վախ մի կրցի պատճառել կիրք տը-ղայոց ընկերութեան համար, այն ատեն կը-նամ ճշմարտապէս հաւատալ՝ թէ ձեր անմե-ղութիւնը վտանգէ ազատեցի։ Հիմայ կը մնայ մեզ ուրիշ ապառաժ քար մի, ուսկէ հեռանա-լու համար պէտք է որ մեծ հոգ և զգուշու-թիւն ունենաք. և այս բանը ապառաժս գէշ գրքերուն ընթերցմունքն է, որոնց վերայ հե-տագայ գլխուն մէջ պիտի խօսիմ։

## ԳԼՈՒԽ Թ.

### Վնասակար և գէշ գրքերը։

Ինչպէս որ կերակուրը մեր մարմնոյն, նոյն-պէս և գրքերը մեր հոգւոյն սնունդն են։ Կե-

(1) Սիրաք ԺԳ. 1։

րակուրը կը սնուցանէ և ուժ կուտայ . բայց ա-
սոնց մէջ կը գտնուին երբեմն որ մեր առողջու-
թեան օգուտ ընելու տեղ, կը տկարացընեն և
կը վնասեն . այսպէս ալ, ափրելի ուղեակք խմ,
գրքերուն մէջ կը հանդիպին , որոնք մեր միտքը
բռնաւորելու և կատարելութիւն մը տալու
տեղ՝ կը կուրցընեն և կը խանգարեն ։ Այսպէս
են ըստ մեծի մասին մոլորածին պատմութիւն-
ները , ախրոյ՝ վերայ չհիմնուած բանաստեղծութի-
ները , և ընդհանրապէս կրօնի և բարոյակա-
նութեան դէմ եղած գրքերը ։

Իսկ այս ըսած գրքերուս մէջ բարակ թոյն
մը կայ , որ կամաց կամաց նոյն գրքերը կար-
դացողներուն արեան մէջ մտնելով , աստուած-
պաշտութեան դէմ ատելութիւն կը սերմանէ
հոն , Աստուծոյ սուրբ երկիւղը և բոլոր բարի
բնաւորութիւններն անկէ կը հալածէ , և վեր-
ջապէս անոր հոգին թշուառաբար կը մեռցընէ ։

Այս բաներս ճշմարտութեան համար կրնա-
յի հոս շատ օրինակներ բերել , և շատ երիտա-
սարդներ ալ կը ճանչնամ որ այս ճշմարտութի-
նին իրենց վնասով փորձեցին ։ Մէնէն աւելի միտքս
կուգայ երիտասարդի մը պատմութիւնը , որու-
գէշ գրքերը բոլորովին միտքն աւրելով մոլոր-
ցուցին . և ահա այս է պատմելիքս , մտիկ ըրէք ։

---

Տեսւ. մի գէշ գիրքեր կարդալով գէշի եղնելը։

Այս երիտասարդը խիստ ջերմեռանդ և առա

ուսածապաշտ էր, և միանգամայն գիրք կարդա-
լու ալ չափէ դուրս սէր մի ունէր։ Առանց
ընտրողութեան ինչ գիրք որ ձեռքն անցնէր՝ կը
կարդար։ Դժբաղդութեամբ այնպէս գրքերու
ալ հանդիպեցաւ, որ կարծես թէ դժոխքի վըր-
խունք էն, և անզգոյշ երիտասարդաց բնութիւնն
և բարի սովորութիւնները կ՚աւրեն։ Ասկէ բե-
րան սկսաւ զանոնք աչքէ անցնել՝ առանց վը-
տանգն իմանալու, և կամաց կամաց այնպէս կապ-
ուեցաւ այն գրքերուն, որ մէջէն թողնին համ
աղէկ մի առնու։ Այն ժամանակէն յետոյ իւր
աստուածպաշտութեան եռանդը պաղեցաւ.
հրաժարեցաւ եկեղեցւոյ սուրբ խորհուրդնե-
րէն. իւր սովորութիւն ըրած աղօթքները թո-
ղուց, և ասկէ բնաւորութենէն փոխուելով՝ ե-
ղաւ մէկ ուրիշ տղայ մի։ Իւր վարժապետներն
անգամ չէին հասկընար՝ թէ ի՞նչ է արդեօք ա-
սոր այսպէս մէկէն ի մէկ փոխուելուն պատճա-
ռը։ Բայց օր մի տղայն իւր բերնով զինք մատ-
նեց. ժողովքի մի մէջ գտնուելով վնասակար և
գարշելի խօսք մի փախուց բերնէն, զոր գէշ
գրքի մի մէջէն սորվեր էր, և գրքին անունն ալ
տուաւ։ Այս որ լսեց իւր վարժապետն որ հոն
կը գտնուէր, մէկէն ելաւ գնաց նորա գրանոցը
տնտնելու, և մէկիկ մէկիկ աչքէ անցնելով
շատ գէշ և անպարկեշտ գրուածքներ գտաւ
հոն. լաւ մի յանդիմանեց զինք, ցուցնելով
միանգամայն այն տեսակ գրքեր կարդալէն յա-
ռաջ եկած ցաւալի հետեւանքներն։ Իմացաւ

պատմելին նորա խօսքին ճշմարտութիւնը , ու-
զիղ սրտով խոստովանեցաւ՝ թէ իւր այնպէս
փոխուելուն սկզբնական պատճառն այն դայ-
թակղեցուցիչ և մահաբեր գրքերն էին ։ Ինչու ո-
րովհետեւ մարդս աղէկէն աւելի գէշին հակա-
մէտ է , ուստի անոր այն գէշ գրքերէն ծծած
չար գաղափարներն , այնպէս խորունկ տպաւո-
րուեր էին իւր սրտին մէջ , որ մեծ աշխատու-
թիւն կրեց մինչեւ որ զանոնք ջնջեց . և քանի
որ կենդանի էր , մտքէն չելաւ բնաւ անոնց՝
մարդուս մտքին մէջ գործած վտանգաւոր տպա-
ւորութիւնները ։ Ճիշդ ասոր նման անհամար
տղայ.ք կը ճանչնամ Գօլոյ և Իտալիոյ մէջ , որոնք
անհաւատ և սիրահարական գրքեր կարդալով
իրենց բնական անմեղութիւնն և բարեպաշտա-
կան զգացմունքը զրկուեցան . կրօնի և բարոյա-
կանութեան վերայ ունեցած իրենց պարզ գա-
ղափարը չփոթեցաւ , և իրենք մոլորեցան ։

Ազնուազգի երիտասարդ մի Ապպեվիլ քաղ-
քէն՝ Յոհաննէս Փրանչեսկոս անուն , նոր դա-
րուս փիլիսոփաներուն զանազան գրքերը կար-
դալէն իւր միտքը դայթակղելով ուրիշ քանի մի
բարեկամներու հետ , որոնք նոյնպէս նոյն սը-
խալներով միտքերնին աւրեր էին , խիստ մեծ
հակառակութիւններ և յանցանքներ գործեցին
քրիստոնէական հաւատոյ դէմ ։ Փարիզու խոր-
հրդարանը 1766 յունիս 4ին այս երիտասար-
դին գլխատման վճիռը տուաւ . թուղթ մի կա-
խեցին վիզը , որու վերայ այսպէս գրուած էր ։

“Ամբարիշտ, հայհոյիչ, անիծեալ, և դարշելի սրբապիղծ»։ Խորհրդարանը հրաման ըրաւ նաև որ անոր մարմինը նետուած կրակին մէջ Վոլթէռի փիլիսոփայական բառգիրքն ալ նետուին, ուսկէ առեր էր այն սխալները, որոնք իր կորստեան պատճառ եղեր էին։ Ցաւալի թէ որ այս դժբախտ երիտասարդն, ինչպէս կ'ըսէ Լինկէ իր գրքին մէջ, Վոլթէռի գործքերը կարդալու չըլլար, այնպէս դէշ չէր ըլլար, և պարկեշտ վարք մի կ'ունենար։

---

Ուրիշ օրինակ։

Ուրիշ օրինակ մի ևս կ'ուզեմ դնել այս տեղ, ուր կարծեմ թէ աւելի օգտակար բան մի չեմ կրնար ընել ձեզ, բայց եթէ ձեր սրտին մէջ մեծ ատելում մի ձգել դէշ և փտանգաւոր գրքերուն դէմ. որոնք սահալի ապառաժ մի են, որոնց դէմ մանաւանդ մեր օրերն անզգոյշ և անփորձ երիտասարդները կ'երթան ինքզինքնին զարնելով կը փշրուին։

Ուիլեըմ Պէլը, ծնաւ Անգղիոյ հարաւային կողմը. քանի տարի Ամերիկա կեցաւ և տասը տարին չափ Ուէրդէլ Ֆիլդը։ Աէյրֆիլդ քաղաքի մէջ կարգուած էր սիրուն և համեստուհի աղջկան մի հետ, ուսկէ չորս զաւակ ունեցաւ, զորոնք ինք մեծ ջանքով և խնամով կրթեց։ Ուիլեըմ Պէլը աղէկ մարդ էր և աղնիւ հայր. բայց իր առևտրական գործքերն ուզա-

ծին պէս յաջող չերթալով, որուն ներողութենէն ինքզինք կարդալու տուաւ. բայց դժբաղդաբար կարդացած գրքերը բոլորն ալ կրօնքի դէմ էին. ուստի անոնց մէջի իմաստից հետեւելով, մոլութիւնն և ամպարշտութիւնը բանի տեղ չըդրաւ, և բոլոր մարդիկ ինքնաշարժ մեքենայ մի կը սեպէր: Այսպէս այլանդակ սխալներով միտքը պաշարուած, կարծեց թէ իւր կենաց ու նաեւ կնկան և զաւկներուն կենաց տէրն և իշխողն ինքն է: Օր մի արեւուն ծագելու ժամանակ իւր ծառային հետ նամակ մի խրկեց իրեն դրացի բարեկամին մէկուն, և կ'աղաչէր որ ուրիշ երկու մարդոց հետ իւր տունը գան, և տեսնեն իւր գերդաստանին փոխուած վիճակը: Բարեկամը նամակը ձեռքն առնելուն պէս, կէս մի կարդացած՝ փութաց դէպ ի նորա տուն. բայց ինչ օգուտ որ առեն անցեր և ամեն բան լմնցեր էր: Թշուառական մարդը դաշունով (խանչէրով) մի իւր կինն և զաւկները մեռցուցեր և ատրճանակով ալ ինքզինքն սպաններ էր: Դատաւորը պէտք եղած քննութիւններն ընելով և սոսկալի գործքն ստուգելով, վատահամբաւութեան դատապարտեց անոր յիշատակը, և հասարակութեան աչքէ նշաւակելով՝ իւր մարմինն աղբանոցի մէջ նետել տուաւ. իսկ կնկանն և զաւակացը պատուով թաղեցին: Այս դժբաղդ գերդաստանին վիճակին վերայ բոլոր քաղաքացիք լացին. և այն դաղանական գործքն ամենուն ալ խրատ եղաւ՝ որ աւելի զգուշու-

մահաբեր գրքերէն, որոնք բարբարոս դարձու-ցին այնպիսի մարդն, որ քրիստոնէական կրօնի լուծը վերայէն թօթափելէն զատ բոլոր իւր քաղաքակիցներուն առջեւ մեծ յարգ և վարկ ստացեր էր.

Այս օրինակներս կարդալով՝ որքան մեծ զգուշութիւն պէտք է ունենաք դուք ալ, սիրելի որդեակք իմ, այսպիսի վնասակար գրքեր կարդալու, զորոնք ձեռքերնիդ անգամ պէտք չէ առնուք, համարելով զանոնք իբրու մէկմէկ թունաւոր կարիճ, որ մարդս մարմինը վնասելէն ի զատ, հոգւոյն ալ կը վնասեն և կը մեռցընեն: Այսպիսի գիրքեր բարեբաղդութեամբ քիչ կը գտնուին մեր ազգին մէջ. այսու ամենայնիւ՝ ընդհանրապէս այս պատուէրը կուտամ ձեզ, որ կարդացած գրքերնիդ թէ որ հաւատոյ կամ եկեղեցւոյ վերաբերեալ են, պէտք է նայիք որ Հայաստանեայց հարազատ և ուղղափառ դաւանութիւնն անարատ պահած ըլլան, և հերետիկոսութեան նշան մի չգտնուի մէջերնին: Աս որոշելու չէք կրնար դուք ընտրութիւն ընել ատոնց մէջ, ուստի միայն պէտք է նայիք որ մեր բուն ազգին տպարաններուն մէջ տպուած ըլլան, և Սրբազան Կաթողիկոսի և Երուսաղէմի ու Պօլսոյ Պատրիարքաց անուններն իրենց ճակատը կրեն, և կամ՝ որ աւելի աղէկ է, ձեր վարժապետին ցուցընէք զանոնք ու այնպէս կարդաք: Իսկ ուրիշ զանազան տպարաններէ ելած գրքերուն մէջէն կրնաք ընտրել մի-

այն մեր հին հեղինակաց գրուածքները, ու նա֊
եւ օտար լեզուներէ թարգմանուածները, ո֊
րոնք որ հաւատոյ վերայ չեն խօսիր։ Բարոյա֊
կանութեան դէմ գրուածքներ ալ կրնան գըտ֊
նուիլ մեր ազգին մէջ տաճկերէն եւ գաւառա֊
կան լեզուով, անձոռնի գրքեր, որոնք առա֊
պելներու (մասալներու) կարգը կը դասուին,
որոնց համար կը պատուիրեմ բնաւ ձեռք չառ֊
նուլ, այլ գտածնուդ պէս կրակը նետել այրել։

Կը գտնուին երբեմն մեր ազգին մէջ անզ֊
գոյշ եւ թանձրամիտ երիտասարդներ ալ, մանա֊
ւանդ ներկայ ժամանակիս մէջ, եւ լաւ մեծի մա֊
սին քիչ շատ գաղղիերէն ու անգղիերէն հասկը֊
ցող տղայք, որոնք այս տեսակ գրքերը՝ մանա֊
ւանդ անկրօն մարդոց հեղինակած եւ տպած
գրքերը, յօժարութեամբ կ՚առնուն կը կար֊
դան, եւ անոնց մէջ եղած դժոխային փարդա֊
պետութիւններուն հետեւելու ալ խիղճ չեն
ըներ, իբր թէ իրենց պատիւ եւ պարծանք մի
կը սեպեն ազգայնոց քով, եւ ճշմարտութիւնը
գտած կը կարծեն, որոնք դժբաղդաբար ճշմար֊
տութեան մեկնութիւնն ալ չեն գիտեր տալ,
եւ իրենց ձեռքի ճշմարտութիւնն ալ կը կորսն֊
ցընեն. ուստի կ՚երթան կ՚իյնեն անզգուշու֊
թեամբ հերձուածողութեան եւ անաստուածու֊
թեան անդունդին մէջ, եւ յաւիտենական կո֊
րուստը կը ժառանգեն։

Այսքան տղայոց կորստեան պատճառ եղո֊
ղը՝ կրնայ ձերիններէն ալ ըլլալը. եւ թէ որ անոնց

յանդգնութեան նմանելու ըլլաք, նոյն դըժբախտութեան կը հանդիպիք։

Վնասակար և գէշ գրքերը մարդոյն իմացականութիւնը կը խանգարեն, միտքը կը գայթակղեցընեն, և սիրտը կ'ապականեն. անհնար է որ զանոնք մարդ կարդալով՝ սխալմանց և անառակութեանց մէջ չինկնի։ Բաւական կը կարծեմ այսքան բաներս արգիլելու համար զձեզ, որ յաւիտեան ձեռուընիդ չառնուք այս տեսակ գրքեր։

Թէ որ մէկը ձեզ թասով թունաւորուած խմելիք մի տալու ըլլայ, արդեօք սիրտ կ'ունենա՞ք շըթունքնիդ անոր դպցընելու, և մէկէն սոսկալով մէկդի չէ՞ք քաշուիր անկէ, անշուշտ. ուրեմն նոյնպէս ըրէք գրքերու մասին ալ, որոնց վերայօք կը խօսիմ։ Եթէ մէկը ձեզ այսպիսի գիրք մի տալու ըլլայ, վարը դրած օրինակիս հետեւեցէք։

---

Գէշ գրքերու դէմ երիտասարդի մի ցըցուցած սոսկումը։

Լուդովիկոս Գոնզակա դիպուածով մի առասպելաբանութեան գիրք մի գտնելով, զոր չէր ճանչնար, և աղէկ գիրք մի կարծելով՝ բացաւ որ կարդայ. բայց գրքին անունը տեսածին պէս, թէպէտ և պզտիկ տղայ էր, սոսկացաւ, մէկէն կրակին մէջ նետեց և վազեց գընաց ձեռուըները լուալու, անոր վերայի ծածկոցին միայն մատուըներով դպչելուն համար։ Ահա այսքան համոզէր էր ինքզինք թէ այս տե-

տակ գրքերէն աւելի մարդուս հոգւոյն վնասա-կար և ցաւալի բան չկայ :

Գուցէ մէկը ձեզ հրապուրելու համար որ զանոնք կարդաք, ըսելու ըլլայ՝ թէ զուարճալի գրքեր են, գեղեցիկ և զբօսեցուցիչ ոճով գը-րուած, բայց արդեօք աղուոր համեմներով շի-նուած թոյն մը, գուցէ իր անոյշ համերուն համար թունաւոր և մահաբեր զօրութիւնը կը կորսնցընէ՞, ոչ երբէք. այլ ընդհակառակն աւելի վտանգաւոր կ'ըլլայ : Երբեմն այսպիսի գրքերն որքան աւելի ձեր հետաքրքրութիւնը շարժեն կարդալու, գուք պէտք է որ այնքան զզուիք անոնցմէ :

Աղէկ է որ աշխատութեան մէջ մնաք, քան թէ ձեր անմեղութիւնը կորսնցնելով գի-տութիւն առնէք : Գէշ գրքերուն մէջ ամե-նեւին սորվելու բան չկայ, և եթէ ըլլայ ան-գամ, զայն չգիտնալն աւելի աղէկ է :

---

Գէշ գրքերուն պատճառած գործքերուն գեղեցիկ օրինակ մը:

Դժոխային օձը յոյս տուած էր մեր նախա-ծնողաց, թէ Աստուծոյ պատուիրած պտուղէն ուտելով կը լուսաւորին և Աստուծոյն նման կ'ըլ-լան. «Կ'ըստանաք, ըսաց անոնց, բարւոյ և չա-րի գիտութիւնը» : Ադամ ու Եւա այս սուտ խոստմունքէս խաբուելով, ձեռուընին կ'երկըն-ցընեն այն թշուառ պտղոյն. բայց անոր համն դեռ չառած, իրենց անմեղութենէն մերկացած

և կուրութեան ու թշուառութեան մէջ ընկղ-մած կը տեսնեն զիրենք ։

Դուք եւս ահա ձեր հետաքրքրութեամբն այս դժբաղդութեան կը հանդիպիք , թէ որ Աստուծոյ պատուէրն բանի տեղ չդնելով՝ յանդգնութեամբ կարդալու ըլլաք այն նախատական գրքերը ։ Զգոյշ կեցէք ուրեմն որ չմոլորիք բանսարկուին սուտ խոստմունքներէն ։ Դուք նախահարց պէս հազարաւոր պտուղ ունիք անուշ և համեղ, այսինքն անհատնում ընտիր և գեղեցիկ գրքեր , որոնցմով կրնաք սնուցանել ձեր հոգին ․ և զանոնք կարդալը չէ թէ միայն ներելի է ձեզ, հապա նաև ես ալ մեծապէս կը պատուիրեմ որ կարդաք և հետևիք այս գըրքերուն ։ Իսկ միւսները նման են դրախտին մէջի արգիլուած պտուղներուն, որոնց վերայ խօսելով՝ կրնամ ես ալ ձեզ ըսել ինչ որ Աստուած Ադամին ըսաւ արգիլելով պտղոյն համար , թէ « Քանի անգամ որ ուտելու ըլլաք , համը անելու ժամանակնիդ՝ կը մեռնիք » ․ այսինքն անմեղութիւննիդ կը կորսնցնէք , որ հոգւոյն կեանքն է ։

Բայց որովհետև այս գէշ և նենգութեամբ լեցուած գրքերը չեն կրնար ճանչցուիլ , և շատ որում իրենց թոյնը հասարակօրէն ճշմարտութեան կերպարանք ունեցող անուան մը տակ ծածկուած կ'ըլլայ , անոր համար թէ որ կ'ուզէք խոհեմութեամբ վարուիլ և չխաբուիլ անոնցմէ , ամենէն աղէկն այն է որ , ինչպէս ը-

ամէնք, բնաւ գիրք մի չէք կարդար, մինչեւ որ առաքինի և լուսաւորեալ մարդու մի չհարցունէք, որ գիտնանք թէ ձեզ օգուտ մի կրնայ ընել այն գիրքը, թէ կը վնասէ. և անոնք ինչ խրատ որ կուտան ձեզ՝ սիրով բռնեցէք: Թէ որ այս զգուշութիւնն ընելու չըլլաք, կը խաբուիք այն գրքերուն սուտ պայծառութենէն, որոնք կ՚երեւայ թէ վնասակար բան մի չկայ մէջերնին գրուած, և այն անմիտ ու յանդուգն տղուն հանդիպած փորձանքին կը պատահիք, զոր այս տեղս ձեզ կը պատմեմ:

---

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾ

### Երկրագործն ու տղայն:

Աշխոյժ և բարակամիտ տղուն մէկը, օր մի իւր վարժապետին հետ մէկտեղ գեղ կ՚երթան, և ինք մինակ դուրս պտըտելու կ՚ելնէ: Դաշտերը վեր ու վար կուտայ և թռչուններուն անուշ ձայնով կը զմայլի. մէկ մ՚ալ անդին կողմի մարգագետին (չիմէնլիք) մի կը տեսնէ աղուոր ծաղիկներով լեցուն, խնդալով դէպ ի այն կողմն կ՚արտորայ կ՚երթայ որ անոնցմէ ժողվէ. և ապա մարգագետնին մէջ կոխելով, այն գեղեցիկ ծաղիկները տեսնելուն և անուշ հոտերին առնելուն այնպէս կ՚ուրախանայ՝ որ երեսին վերայ զուարթութիւն և խնդում կը փայլէ: Եւ անոնցմէ մի քանի փունջ (տէմէտ) քաղելու հա-

մար, երկու ձեռքը մէկէն կ՚երկնցընէ. և մէկ փունջ բլալու չափ կը փրցընէ չփրցըներ, այն դիէն ծեր երկրագործին մէկը դուրս կ՚ելնէ. "Օհ, ինչ կ՚ընես, տղայս, խե՞նթ ես դուն, կը պոռայ անոր: Այդ ծաղկըներուն մէջ թունաւոր օձեր պահուըտած կան, որոնք մըչափ տղայք խածեր են ատոնց մէջ խաղացած ժամանակնին: Ես քու բարւույդ համար կը խօսիմ՝ որդեակ, հաւատա ինծ, և ասկէ դուրս ելնելը նայէ»: Տղայն վախնալով մէկէն դուրս կը ցատքէ. և ձեռքի ժողված ծաղիկները կը նետէ: Բայց ծերը նորէն իր գործքին դառնալով, անմիտ տղայն սկսաւ նախատել զայն ըսելով. "Անբան և վախկոտ եմ ես, թէ որ այն խուփած մարդուն մտիկ ընեմ, որ երեսանց սուտ սէր ցուցընելով՝ զիս ծաղր ընել կ՚ուզէ»: Բայց՝ և նորէն եա դարձաւ հոն, ուր տեղ չար օձ մի կը սպասէր զինք խածնելու: Այն ծաղիկներուն և խոտերուն մէջ դարձեալ ձեռքը կը խօթէ, և երբ մանուշակներ կը քաղէր, անհագին օձ մի անոր աջ ձեռքը կը պլլուի և այնպէս կը խածնէ, որ տղայն կիսամեռ գետին կ՚ինկնի ու կը փըռուի: Այս ծաղիկներն և խոտերը, ով երիտասարդներ, այն գեղեցիկ տեսք ունեցող գըքերն են, որ մարդս գլխէ կը հանեն և կը գէշցընեն, վասն զի իրենց թոյնը քաղցր և զուարձալի ոճով մի ծածկած են:

Ինչ որ գըքերու ընտրութեան մասին ըսի ձեզ, նոյնը պէտք է իմանալ նաև լրագիրներու և

պարբերական թերթերու և հանդէսներու մասին․ և մեծ զգուշութիւն պէտք է ընենք կարդալու ժամանակ, որոնց շատին մէջ ազգասիրութեան և ազատասիրութեան ոգին կարծես թէ կը փայլէ, բայց գիտցէք որ անոնց մէջ նաեւ այնպիսի բարակ ու անզգալի թոյն մի կայ, որ ձեր բարեպաշտական ու կրօնական հոգին կը սպաննէ, և անհաւատութեան անդունդին մէջ կը գահավիժէ։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Տղայոց պարտաւորութիւններն իրենց ծնողաց դէմ։

Մեզ կեանք տուողներուն դէմ ունեցած պարտաւորութիւննիս այնպէս յայտնի են մեր սրտին զգացողութեանց, որ գրեթէ աւելորդ կը թուի զանոնք ձեզ յիշեցնել։ Այսու ամենայնիւ՝ բաւ որում շատ տղայք կը տեսնեմք որ իրենց այս պարտքը չկատարելով բնութենէ դուրս կը սեպուին, ուստի ես ալ, սիրելի որդեակք իմ, պարտաւորութիւն կը համարիմ ինձ զգուշացնել զձեզ անոնց օրինակներուն դէմ, որպէս զի այդ ապերախտութեան հրէշներուն չհետեւելէն ի զատ, բարեկիրթ և առաքինի տղու մի պէս վարուիք։

Լաւ կը ճանաչէք դուք Աստուծոյ պատուէրը, որով յայտնապէս կը հրամայէ պատուել մեր

հայրն ու մայրը ։ Բայց այս պատիւն ինչ բանի մէջ կը կայանայ արդեօք ։ Մտիկ ըրէք ինչ որ պիտի ցուցնեմ ձեզ հիմայ , և ջանացէք օգուտ քաղել անկէ ։

---

Առաջին պարտաւորութիւն։

Առաջին պարտքը՝ զոր ձեր վրայ կը դնէ [illegible] անունը , ձեր ծնողաց հնազանդիլն է ։ Թէ որ Աստուած յանկարծ երևնալու ըլլար ձեր աչքին , և իր բերնովը իմացընէր ձեզ իր կամքը , անշուշտ դուք չէիք կրնար չհաւատալ և չհնազանդիլ ։ Արդեն անոնք որ ձեզ կեանք տուեր են , այս աշխարհիս մէջ այն Գերագոյն Արարչին փոխանորդներն են , որ մեր առաջին հայրն է ։ Աստի այնպէս պատրաստ պիտի ըլլաք անոնց ամեն մէկ հրամանը սիրով կատարելու , որպէս թէ նոյն ինքն Աստուած հրամայած ըլլար ։

Կրօնին պարտաւորութեանց մէջ հաւատարիմ եւ իւր հօրը հրամաններուն անմնացանք եղող տղայն ։

Անցած դարուն վերջերը ծաղկահասակ տղայ մը Ավինիան քաղքէն , որ սրբազան խորհուրդն (1) ընդունելէն առաջ այնքան ջերմե-

---

(1) Հռովմէադաւան ազգերը սովորութիւն ունին իրենց զաւկըները մինչեւ տասնուերկու տարեկան չըլլան , չեն հաղորդեր սուրբ խորհուրդին ։

տանդ չէր քրիստոնէութեան մէջ, այնպէս փո-
քուց իւր բնաւորութիւնն աչքի անգամ հա-
ղորդուելուն, որ բոլոր սրտանց միտքը դրաւ ա-
մէն բանէն հրաժարել, և Աստուծոյ համար ա-
մէն ինչ համբերութեամբ կրել. քան թէ անոր
կամաց դէմ բան մի գործել. և այս իւր դի-
տաւորութիւնը գործով ևս կատարեց, չուզե-
լով նմանիլ այլոց մեծագոյն մասին, որոնք
գրեթէ իրենց գործովը միշտ սուտ կը հանեն
խոստմունքնին: Անոր հայրն՝ որ քրիստոնէական
պարտաւորութիւնները կատարելու այնքան զ-
գուշաւոր չէր, ամենևին պաս չէր բռներ՝ և
ոչ մեծ պահոց մէջ. և իւր տղուն ևս այնպէս
սորվեցուցեր էր պզտիկութենէն: Իսկ այս ան-
գամ, երբ նորէն պահոց կերակուրներ բերին
սեղան, տղայն անուշ կերպարանքով մի չնոր-
հակալ եղաւ իւր հօրմէն, և միանգամայն հա-
մարձակ զրուցեց՝ թէ “Ալ ասկէ ետեւ այդ
կերակուրները չեմ ուտեր պաս օրերը, վասն
զի եկեղեցին հրաման չտար: — Խիստ աղէկ,
պատասխան տուաւ հայրն սրդողելով և զարմա-
նալով, որովհետեւ չես ուզեր իմ տուածս ու-
տել, հացէն ի զատ ուրիշ բան չպիտի ուտես:
— Գլխոյս վերայ, կրկնեց տղայն, կրօնքն ինձ կը
սորվեցընէ հնազանդիլ ձեզ՝ իբրեւ Աստուծոյ,
երբ սուրբ օրինաց դէմ հրամայելու չըլլաք ինձ,
Աստուծոյ պատուէրներուն նման կ'ընդունիմ
և կը հնազանդիմ ձեր հրամաններուն »: Այս-
պիսի խելացի պատասխանը պէտք էր որ հօրը

բարկութիւն իջեցրնէր. բայց բնութեամբ խիստ և կրակոտ ըլլալով, բնաւ սիրտը չկակղցուց իւր որդւոյն դէմ: Այսպէս չէր մայրն ալ, այլ բուխ-սիրտ ըլլալով և իւր երկանէն աւելի խոհեմ և իրաւունք հասկցող, սիրտը խիստ ցաւեցաւ անոր ըրածին. և զաւկին վերայ հօրն անիրաւութեամբ դրած պատիժը թեթևցընելու համար, գաղտուկ պատուան կերակուր բերաւ անոր, ապահովելով թէ՝ իւր հայրը չկրնար հասկընալ: Բայց առաքինի տղայն շնորհակալ դէմքով մերժեց զայն. և որովհետև մայրը խիստ կ՚աղաչէր զինքն որ ուտէ, պատասխան տուաւ անոր. « Ո՛չ, մայր իմ, ըլլալու բան չէ որ ես ասկէ ուտեմ, զոր դուք զիս սիրելնուդ համար բերած էք: Իմ հայրս հրամայեց, ինչպէս դուք ալ լսեցիք, որ հացէն զատ բան չուտեմ: Ես միայն հացով կրնամ ապրիլ. բայց թէև անօթի ալ մեռնելու ըլլամ, լաւ կը սեպեմ մահը քան թէ անհնազանդութիւնը »: Բարեսիրտ մայրն այս խօսքերուն՝ լացէն ի զատ պատասխան մի չկրցաւ տալ. և շուտ մի իր երկանը քով երթալով, պատմեց անոր տղուն խօսեցածները. որու վերայ այնքան սիրտը շարժեցաւ, որ իւր ըրած անիրաւութեան և գայթակղութեան ճար մի գտնելու և տղուն սիրան առնելու համար, ալ անկէ ետքը պաս օրերն ուտխուան կերակուր բերել չտուաւ սեղան, և հաստատ պահեց եկեղեցւոյ պատուէրները:

Այս բարեպաշտութեան և հնազանդութե-

գեղեցիկ օրինակս կը սորվեցընէ, թէ պէտք չէ ծնողաց կամքին հնազանդիլ երբ Աստուծոյ կամացն հակառակ է այն, ապա թէ ոչ՝ պարտաւոր է որդիական հնազանդութիւն ցուցընել անոնց, թէպէտ եւ տուած հրամաննին սաստիկ և դժուար ըլլայ։

---

Որդիական հնազանդութեան կատարելաց օրինակներ։

Յիսուս Քրիստոս նոյն ինքն հնազանդութեան օրինակ տուաւ մեզ, զոր ամէն տղայ իւր հօրն ու մօր պարտաւոր է։ Ինքն երկնի և երկրի թագաւորն էր, և ամէն ինչ իւր իշխանութեան տակն էր. այսու ամենայնիւ Աւետարանը կը վկայէ՝ թէ Յովսէփու և Մարիամայ հնազանդ էր, և թէ մինչեւ երեսուն տարեկան ըլլալն անոնց հպատակութենէն չելաւ։

Իսահակ հին օրինաց մէջ լուսաւոր օրինակ մի տուաւ որդիական հնազանդութեան։ Աբրահամ իւր հայրը լեռան մի գլուխ տանելով զինքն Աստուծոյ զոհ ընելու համար, ինչպէս որ երկնից հրաման ընդունէր էր, Իսահակ երկու մէկ չըսած հնազանդեցաւ իւր հօր կամաց. թողուց զինքն որ կապէ խարուկին վերայ, և պատրաստեցաւ ընդունել մահուան հարուածն իւր հօր ձեռքէն։ Բայց Աստուած չուզեց որ այսպէս վեհանձնական հնազանդութեան մահն ըլլայ փոխարէն։ Անոր սրտին բրած զոհին Աստուած հաճելով, ձայն տուաւ Աբրահամին նոյն

ժամուն՝ որ ձեռքը վեր վերուցեր էր անմեղ զոհին զարնելու. չթողուց որ զոհէ. այլ անոր հաւատարմութիւնը վարձատրելու համար, խոստացաւ իր օրհնութիւններն Իսահակայ վերայ տարածել, երկնից աստղերուն պէս անոր զաւկըները շատցընել, և բոլոր ազգերն անոր զաւակովն օրհնել:

Բայց թէ որ Աստուած՝ ծնողաց հրամանէն դուրս չելող տղայոց հնազանդութիւնը կը վարձատրէ, անհնազանդ և լիրբ տղաքն ալ կը պատժէ և կ'անիծէ, որոնք չեն ուզեր կատարել այսպիսի պարտաւորութիւնը:

Ապստամբ որդու մը սոսկալի պատիժը:

Աբիսողոմ իր հօր Դաւիթ թագաւորին դէմ գլուխ վերցընելով և անոր վերայ պատերազմի ելնելով, Դաւիթ իր զօրքերը խրկեց որդւոյն դէմ, ապսպրելով բանակի զօրավարին որ չմեռցընէն իր ապերախտ որդին Աբիսողոմը, թէ որ զօրքերն յաղթելու ըլլան: Երկու բանակները մէկմէկու զարնուելով, թէպէտ Աբիսողոմայ զօրքերը խիստ անհամար և զօրաւոր էին, այլ բոլորովին խորտակեցան, այնպէս որ Աբիսողոմ պարտաւորեցաւ փախչիլ. բայց իր տակի ջորին խիստ արտորնօք վազելով, երբ մէ տերեւախիտ կաղնիի տակէն կ'անցնէր, գլխի երկայն մազերը ծառին ճիւղերուն պլլուելով կախուած մնաց. մինչեւ եկաւ Յովաբ երեք նետ զարկաւ նորա սրտին՝ թէպէտեւ Դաւիթ

ապսպրած էր որ չմեռցընեն. բայց Աստուած ներեց Յովաբին անհնազանդութեան, Աբիսողոմայ ապստամբութիւնն եւ ապերախտութիւնը պատժելու համար։

Այս օրինակէս աղէկ կը տեսնէք դուք, սիրելի զաւակունք իմ, թէ որքան յանցաւոր կը սեպուի տղայ մի, որ իւր ծնողաց դէմ կը դառնայ, եւ որքան սոսկալ պէտք էք այսպիսի վարմունքէն։ Ուս առաւել զգուշանալու էք որ դուք ալ ձեր ծնողաց պարտաւոր եղած յարգութեան եւ հնազանդութեան դէմ բան մի չգործէք։

---

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ։

Այն պատճառն որ կը պարտաւորէ զձեզ ձեր ծնողաց հրամանները կատարելու, նոյնպէս կը պարտաւորէ զձեզ որ զիրենք յարգէք եւ պատուէք. եւ որովհետեւ ձեր ծնողքն՝ ինչպէս վերն ըսինք, Աստուծոյ փոխանորդներն են, չէք կրնար անոնց հարկաւոր եղած պատիւը չտալու. վասն զի այն ատեն Աստուծոյ պարտաւոր եղած պատուէն պակսած կը սեպուիք։

ԻՒՐ ՀՕՐՄԷՆ ԱՆԻԾՈՒԱԾ ՏՂԱՅՆ։

Քամ, որ Նոյի տղայոց մէկն էր, համարձակեցաւ լրբութեամբ ծաղր ընել իւր հայրը, որ խորունկ կը քնանար՝ եւ իւր եղբայրներուն օրինակին չհետեւեցաւ, որոնք յարգութեամբ եւ պատուով վարուեցան հօրերնուն հետ։ Բայց

Բայց ըրած յանցանքն անպատիժ չմնաց․ վասն
զի Նոյ քունէն արթննալուն իմանալով անոր ը-
րածը, անիծեց զինքն ըսելով՝ Թէ քու եղբայր-
ներուդ ծառան ըլլաս․ և ընդհակառակն օրհ-
նեց զՍեմ ու զՅաբէթ երջանկութիւն աւետե-
լով անոնց։ Աստուած՝ Նոյի տուած անէծքը և
օրհնենքը իրօք կատարեց․ Քամ իւր կեանքը
թշուառութեամբ անցուց․ և իրեն տառա-
պանքներն իւր զաւկըներուն և սերնդին ալ ան-
ցան․ իսկ միւս եղբարքն երջանիկ կեանք մի ու-
նեցան, և բարեբաղդ վիճակնին իրենց ցեղի
զաւկըներուն ալ անցուցին։

Կ՚երեւի թէ Աստուած ալ նոյն կերպով կը
վարուի անոնց հետ, որոնք այս յանցանքս կը
գործեն։ Խիստ քիչ անգամ կը պատահի որ կը-
ուսանէր և գէշ տղայք յառաջ գան և գործեր-
նին յաջողի։ Ասանք չէ թէ միայն ատելի և քա-
մահրելի են բարեկիրթ մարդկանց աչքէն, այլ
նաեւ շատ անգամ կը տեսնեմք որ մեծամեծ
դժբաղդութիւններու կը հանդիպին, որու մի-
միայն պատճառն իրենց ծնողաց պատիւ չցուցը-
նելն է, և իրենց պարտաւորութենէն պակսել-
նուն արդար պատիժը։

Տասը մանկանց սոսկալի պատիժը, որոնք իրենց մօրերնուն
հարկաւոր եղած պատիւը չցցուցին։

Կապադովկիոյ Կեսարիայի մէջ ազնուական այ-
րի կին մի կար, որ տասը զաւակ ունէր, եօթը
մանչ և երեքն աղջիկ։ Անդրանիկն օր մի բար-

կուլթեան ելնելով, շատ մի նախատինքներ և անվայել խօսքեր ըրուցեց իւր մօրը, մինչեւ համարձակեցաւ ձեռք ալ վերցնել անոր: Միւս եղբարքն և քոյրերը իրենց մօրն այնպիսի վիճակի մէջ տեսնելով՝ ամէնեւին հոգերնին չըրին, որոնց կը վայելէր որ զօրէին իրենց անօրէն եղբօր բարկութիւնը: Մայրերնին ասոր գազանական վարմունքէն զզուելով, միանգամայն միւս տղայոց քարասրտութեանը վերայ սիրտը խոցուելով, առաւօտուն կանուխ ելաւ մկրտութեան սուրբ աւազանը գնաց: Հոն երեսն ի վայր գետինը ծունր իջնելով, աղաչանք ըրաւ Աստուծոյ որ իւր տղայոց պատիժը տայ, և բոլոր աշխարհիս սաստիկ երկիւղի օրինակ ըլլան, թափառական ժուռ գան և մէկ մ'ալ հայրենեաց երեսը չտեսնեն: Այս աղաչանքս մէկէն լըսեց Աստուած, և ամէն զաւկըներն ալ պատիժնին գտան, վասն զի ամէնքնին մէկէն անդամալոյծ եղան, որոնց բոլոր անդամները կը դողային: Այս վիճակիս մէջ իրենց քաղաքակիցներուն աչքին երեւալու ամչնալով, ամէնքնին ալ մէկ մէկ երկիր ցիրուցան գնացին:

Սորվեցէք ուրեմն այս օրինակէս, սիրելի որդեակք, ձեր ծնողաց արժանաւոր եղած պատիւն և մեծարանքն ընելու. վասն զի Աստուածաշնչին մէջ կը կարդամք՝ թէ հօր օրհնութիւնը զաւկըներուն տունը կ'ամրցընէ, և մօրն անէծքը հիմնայատակ կը կործանէ: Աստուած չըրցունէ որ դուք ձեր ծնողաց դէմ ունեցած

պարտաւորութեան մէջ պիտի գտնուիք , ո-րոնք ձեզ կեանք տուին , և թէ որ դժբաղդաբար այս յանցանքը գործելու ըլլաք , հետագայ օրինակէս սորվեցէք զանիկայ քաւելուն կերպը ։

Տղու մի իւր հայրը նախատելուն համար գտած պատիժը ։

Չարագործ մարդու՛ն մէկը , որու նմանը խիստ քիչ կը գտնուի աշխարհիս վերայ , իւրեն պէս ժանտագործ և ապիրատ ( փէսաքեար ) տղայ մի ունէր ։ Ասոնք երկուքին ալ ամէն տեսակ յանցանքներ գործելով , ամենուն մէջ ալ դժբաղդութիւններու պատահեցան , որ անոնց ախորժակին հետեւանքներն են ։ Կամակոր , անկիրթ և անհնազանդ տղայն այնպէս բարկացոտ ալ էր , որ մինչեւ մէկը թէ որ փոքր բանի մի համար իրեն խօսքին դէմ կենալու ըլլար , մէկէն կրակ կը դառնար ։ Օր մի հայրն ուզելով յանդիմանել և կշտամբել զինքն իւր վարմունքին համար , թշուառական տղայն խիստ բարկութեան ելնելով , կը վազէ ծեր հօրը վերայ , կը զարնէ գետին կը փռէ , և մազերէն բռնելով սրահէն դուրս կը քաշէ կը տանի , որ աննէն դուրս ձգէ ։ Սանդուղին կէսն որ հասաւ , հայրը բերանը բանալով . “ թշուառակա՛ն , պօռաց բաւական է , ալ ասկէ վար մի՛ նետեր զիս . ես ալ մինչեւ հոս քաշկրտելով բերի իմ հայրս , երբ քու հասակիդ չափ էի ” ։ Նորէն հայրն այս վայրկեանիս մէջ ճանչցաւ Աստուծոյ արդարութիւնն և վրէժխնդրութիւնը , որ զինք պատժե-

լու համար թողուցեր էր որ իւր որդին ալ նոյն կերպով վարուի անոր հետ, ինչպէս որ ինքն իւր հօր հետ վարուեր էր ։

Այս բանս խիստ շատ անգամ կը հանդիպի. ուստի ամէն տղայք պէտք է որ խրատուին ատով, և իրենց ծնողաց հետ այնպէս վարուին, ինչպէս կ'ուզեն որ իրենք ալ զաւկի տէր ըլլանուն, որ մի իրենց հետ վարուին անոնք ալ. վասն զի տղայ մի իւր հօրն ինչ որ ընէ, նոյնն իւր զաւկըներէն կը գտնէ, թէ՛ բարի և թէ չար ։

### Իւր յանցանքն բաւող տղայն։

Քրիստոնեայ տղու մէկը օր մի բարկանալով նախատական խօսքեր խօսեցաւ իւր մօր դէմ, և բոլոր դրացիներուն գայթակղութիւն տուաւ ։ Նորէն ինքնիրեն գալով և իւր բերնէն ելած խօսքերը յիշելով, կանչեց բոլոր դրացիները իրենց տունը, և ծնկան վերայ գալով անոնց առջին, թողութիւն խնդրեց իւր մօրմէն ըրած պակասութեան համար ։ Ետքը իւր յանցանքը քաւելու համար, խելացի տղայն ծանր ապաշխարանք մի դրաւ իրեն, և քովն եղողներուն դառնալով՝ այսպէս ըսաւ. “Քրիստոնեայ մի աստուածպաշտութեան դէմ կրնայ մեղանչել և իւր ընկերը գայթակղեցունել. բայց իւր կրօնքը կը սորվեցունէ անոր գործած յանցանքը իսկոյն քաւել. ասոր համար է որ աղաչեցի ըղձեղ, որպէս զի իմ ըրած սրտանց ապաշխարութեանս դուք ևս վկայ ըլլաք”։

Երրորդ դասաւորութիւն։

Բաւական չէ, սիրելի աշակերտք իմ, միայն պատիւ տալ ձեր ծնողաց, այլ կը վայելէ նաեւ որ սիրէք, և պատրաստ ըլլաք միշտ օգնել անոնց՝ երբ հարկը պահանջէ։ Անոնց փափուկ սէրը՝ զոր ձեր վերայ ունեցան, անոնցմէ ընդունած կերպ կերպ օգնութիւնները, զձեզ կրթելու համար անոնց քաշած վիշտերն և նեղութիւնները. ամէնքն ալ կը պարտաւորեն ըզձեզ զիրենք սիրելու։ Երախտագիտութիւնը կը պատուիրէ զայս, կրօնքը յայտնապէս կը հրամայէ. և ձեր ծնողքն՝ որ այնքան սիրեցին զձեզ, եթէ փոխարէն դուք եւս զիրենք սիրելու չըլլաք, պէտք է որ անսիրտ եղած ըլլաք, կամ երկաթէ սիրտ մի ըլլայ ձեր սիրտը։

Հեթանոսներն և կռապաշտներն անգամ այս որդիական սիրոյն վերայ անհամար գովելի օրինակներ տուած են։

Գեղեցիկ օրինակ որդիական սիրոյ։

Կռապաշտ աղքատ կնկան մէկն այրի մնացեր էր երեք զաւակով, և բան բանելով իւր ապրուստը կը ճարէր։ Բայց տղայքը՝ կամ շահաւոր գործ մի չըլլալուն, կամ իրենց արհեստն աղէկ չգիտնալնուն՝ չէին կրնար ըստ բաւականին վաստըկիլ. ասոր համար ամէնքնին մէկ ըլլալով արտառոց առաջադրութիւն մի ըրին։ Այն օրերը գողութիւն մի պատահելով, մունե-

տիկ (Թէլալ) կանչուած էր՝ Թէ ով որ գողը բռնէ ու դատաւորին բերէ, անոր փոխարէն մեծ գումար մի դրամ կ'ընդունի։ Այս երեք եղբարքը, որ իրենց չքաւորութենէն աւելի մօրերնուն պիտոյքը կը հոգային, խորհուրդ ըրին որ իրենց մէջէն մէկը գող սեպուի, և մէկալ երկուքն ալ բռնեն դատաւորին տանին զինքը։ Ուստի մէջերնին վիճակ ձգեցին որ տեսնեն թէ ով պիտի ըլլայ որդիական սիրոյ զոհ. վիճակը պզտի եղբօրնուն վերայ ինկաւ, որ մէկէն թուլուց որ զինք կապեն և դատաւորին դիմացը տանին։ Երբ սկսան քննութիւն ընել, տղայն ինքն իր բերնով խոստովանեցաւ յանցանքին տէրըն ըլլալը. ուստի դրին ի բանտ, և միւս երկու եղբարքն առին դատաւորէն խոստացած գումարը։ Անոնք տուն դառնալէն առաջ կերպը գտնելով դիւրութեամբ բանտը մտան, ուր տեղ կարծելով թէ ամենեւին մէկը զիրենք չէր տեսներ, փաթթուեցան իրենց անմեղ եղբօր վիզն և դառն արտասուքներով հազիւ մէկմէկէ զատուեցան։ Դատաւորն ալ դիպուածով այնպիսի տեղ մի նստած էր, որ կրնար զանոնք տեսնել. ուստի խիստ զարմացաւ երբ տեսաւ թէ գողը զինքը մատնողներուն այնպէս սրտանց բարեկամութիւն կը ցուցընէր։ Իսկոյն ծառաներէն մէկն իրեն կանչեց, և պատուիրեց որ այն երկու ամբաստանող մարդկանց ետեւէն երթայ, և աչքին առջեւէն չկորսնցընէ զանոնք, մինչեւ որ աղէկ մի չհասկընայ անոնց ով ըլլալը։

Ռօտայն հնազանդեցաւ. գնաց եւեւնէն որ լսանէ. և յետոյ ներս պատմեց պատաւորին՝ թէ աղքատիկ տան մը մէջ մտնելով այն երկու եղբարքը, ինքն ալ գացեր կրցածին չափ տան .քով մօտեցեր և լսեր էր որ մօրերնուն կը պատմէին իրենց ըսածը, իրաւունք բերելով թէ զինքն աղքատութենէ ազատելու համար գործած են, թէ՝ մայրերնին երբոր լսեց զայս, սկսաւ ողբալի ձայնով պօռալ և ըսել իւր որդւոցը, որ շուտով տանին դրամն ետ տան ուսկէ որ առին, ինչու որ լաւ կը սեպէր ինքն անօթի մեռնիլ .քան թէ որդւոյն մահուանէն իւր կեանքը պահպանել: Այս որ լսեց դատաւորը, կանչեց մէկէն բանտին մէջ եղողն և նորէն հարցուց գողութեան վերայ, կրկին կրկին հարցումներ ըրաւ որ տեսնէ թէ արդեօք անոր խօսքերուն մէջ սխալ մը կամ հակառակ զրոյց կը գտնէ՞: Վերջապէս տեսնելով թէ իւր ամէն հարցմունքները մէկմէկու համաձայն էին, և չկրնար անոր բերնէն այս գաղտնիքն առնելու, յայտնեց անոր ինչ որ ինքն իմացեր էր. և հետեւաբար պարտաւորեց զինքն որ ամէն ինչ խոստովանի իրեն: Ետքը գնաց դատաւորը կայսեր իմացուց այս լուրը. կայսրն ալ զարմանալով այսպիսի դիւցազնական գործի մը վերայ, ուզեց որ աչքով տեսնէ երեք եղբարքն ալ. որոնք երբ իւր քով գացին, շատ մարդասիրութիւն ցըցուց, մեծ եղբօրնուն 150 թալէր տարեկան եկամուտ կապեց, և հինգ հարիւրական ալ միւս երկուքին:

Ուրիշ օրինակ որդիական սիրոյ:

Չինացի երիտասարդի մի հայրը, իւր ատե-նակալութեան պաշտօնին մէջ խիստ մեծ յան-ցանքներ գործած ըլլալով, դատապարտուեր էր գլուխը կտրուելու: Իւր որդին գնաց կառա-վարչին ոտքն ինկաւ և բռնադատեց երդմամբ որ ընդունի իւր ըներու աղաչանքը, այսինքն հօ-րը տեղ իւր գլուխը կտրել տայ: Մանտարինը հարցուց երիտասարդին՝ թէ այս առաջարկու-թիւնն ինքն իր անձամբը կ'ընէ, թէ ուրիշէ մի խրատուած է: Նորքն իմանալով նորա որդիա-կան սիրոյն զգացողութիւնն և պարզմտութիւ-նը, գիր մի գրեց կայսեր, որ մեկէն անոր թո-ղութիւն շնորհեց, և տղուն եւս պատուոյ նշան մի տուաւ: Բայց տղայն ամենեւին չուզեց յանձն առնուլ այն պատիւը. «Թէ որ այս պատ-ուոյ նշանն ընդունելու ըլլամ, կ'ըսէր, իմ հօրս յանցանքներուն յիշատակութիւնն երբէք չպի-տի մոռցուի հասարակութեան մտքին մէջէն»: Զարմանալով կայսրն այսպիսի ազնուական խոր-հրդածութեան մի վերայ, ուզեց իւր պալա-տին մէջ առնուլ տղայն, և մանաւոր հոգ տա-րաւ անոր. յետոյ շատ չքշեց, նորա արժանա-ւորութիւններն տեսնելով, տէրութեան պաշ-տօնատարի աստիճան բարձրացուց:

Այս օրինակներէս պէտք է մակաբերեմք, թէ ուր որ ըլլայ, գովելի են և կը վարձատրուին միշտ այն երիտասարդներն, որոնք իրենց որդի-

ական սիրոյն երեւելի կ՚ըլլան . բայց հետագայ երկու պատմութիւններն որ պիտի ցուցեմ, աւելի մեծ ապացոյց մի կրնան ըլլալ։

Երրորդ օրինակ որդիական սիրոյ։

Փրետերիկոս Բ Պրուսիոյ Թագաւորը օր մի իւր պզտի զանգակը զարկաւ, և մարդ մի չերեւցաւ։ Դուրս ելաւ որ նայի ինչու մէկը չը գար, և տեսաւ որ իւր սենեկապետը նստարանի մի վերայ պառկեր խորունկ կը քնանար. մօտեցաւ նորա քով որ արթնցընէ, և տեսաւ որ անոր գրպանին մէջէն թղթի մի ծայր կ՚երեւար։ Հետաքրքրութիւնը չկրցաւ բռնել, ուզեց գիտնալ ինչ թուղթ ըլլալը. ուստի բացաւ կարդաց և իմացաւ որ տղուն մայրը գրած էր զայն, որու մէջ շնորհակալ կ՚ըլլար իւր զաւկէն, անոր համար որ տղայն իւր ստացած ռոճիկէն (իւլէֆէ) մէկ մասն մօրը կը խրկէր, անոր կարօտութեան օգնելու համար։ Նամակը կը վերջացընէր մայրը շատ օրհնութիւններ տալով իւր զաւկին, որ իրեն վերայ մեծ խնամք և սէր կը ցուցընէր։ Թագաւորը կարդալէն ետեւ, մըտաւ նորէն լռութեամբ իւր սենեակն, և պըզտի գումար մի ոսկի՝ թղթէ ծրարի մէջ փաթթելով դրաւ նոյն նամակին մէջ, և զգուշութեամբ կրկին խոթեց անոր գրպանն, ուսկէ որ առեր էր։ Դարձաւ յետոյ իւր տեղն և այնպէս սաստիկ զարկաւ զանգակը, որ տղայն քունին մէջէն ցատկելով վազեց անոր քով։ “Կ՚երեւայ

թէ խիստ անուշ կը քնանայիր, բայց անոր փրե-
տերիկս »: Խեղճ տղայն մերթ յարգութիւն
ցըցունելով, մերթ վախնալով, կ'ուզէր ներումն
խնդրել. և շփոթելով մի ձեռքը դէպ ի գրպան
տարաւ. բայց տեսնելով թէ նամակը ծանր էր
մէջի եղած ոսկւոյն պատճառաւ, միտքը հա-
զար ու մէկ կասկածներու գնաց: Գրպանէն
դուրս կը հանէ ծրարած ոսկին, Թագաւորին կը
նայի և գետի նման արտասունք կը թափէ, ա-
ռանց կարենալու բերնէն խօսք մի հանել: « Ի՞նչ
ունիս, հարցուց Թագաւորը: — Ո՛հ տէր իմ,
պատասխան տուաւ բարեկիրթ տղայն. մատ-
նութիւն ըրած են ինձ: Իմ ետեւս ինկող թըշ-
նամի մի ունեցած պիտի ըլլամ ես: Չեմ գի-
տեր ուսկէ է այս գրպանիս մէջ եղած ոսկին:
— Սիրտդ հանդարտ բռնէ, տղայս, կրկնեց Թա-
գաւորը. Աստուած իւր բարութիւնները նա-
եւ մեր քնացած ժամանակին ալ կը շնորհէ մեզ:
Այդ ստակը մօրդ խրկեա, իմ կողմէս ալ բա-
րեւ գրեա և ըսեա՝ որ ես նորա ալ քեզ ալ հոգ
պիտի տանիմ »: Երիտասարդ տղուն ցաւն և
տրտմութիւնն սար վերայ ուրախութեան փո-
խուեցան, և փորձով գիտցաւ՝ թէ մէկ տղայ մի
երջանիկ ըլլալու համար ամենէն աւելի պատուա-
ւոր միջոց, իւր ծնողաց կարօտութեան օգնելու մօք՝
ամեն ներողութեանց յանձնառու ըլլալով աշխատիլն է:

Մօտ ժամանակներս տեսնուեցաւ որդիա-
կան սիրոյ օրինակ մի, որ պատմելու արժանի է,
և ահա այս տեղ կը դնեմ:

Չորրորդ օրինակ որդիական սիրոյ։

Ընտանեկան դերդաստանէ երիտասարդ մի, որ գինւորական արքունի վարժատան մէջ կը կրթուէր, միայն ապուր մի և քիչ մ'ալ հաց ջրին մէջ թաթխելով կ'ուտէր և անով կը բաւականանայր։ Դպրատան գլխաւոր կառավարիչն այս բանս գիտելով, յանդիմանեց զինք, կարծելով թէ չափազանց ջերմեռանդութենէն կ'ընէր։ Տղայն մտիկ չըրաւ, այլ իւր ժուժկալութիւնը կը շարունակէր առանց մեկուն յայտնելու իւր գաղտնիքը։ Փարի Տիւվէրնէյ, տըղուն ըրած զարմանալի համբերութիւնն իմանալով, կանչեց իւր քով, և շատ բան ըսելէն յետոյ՝ թէ պէտք է դպրատան սովորութիւններուն հետեւի, և ինքնիրեն նոր նոր բաներ չհնարէ, սպառնացաւ ևս ըսելով անոր որ՝ եթէ խօսք մտիկ չընես և քու գիտցածէդ ետ չկենաս, հօրդ տունը կը խրկեմ զքեզ։ — Այո, տէր իմ, ըսաւ այն ատեն տղայն. որովհետեւ դուք իմանալ կ'ուզէք թէ ի՞նչ պատճառաւ բռնադատուած եմ ես այս բանս ընելու, և ոչ կ'ուզեմ ձեզմէ գաղտնիք մի պահել։ Գիտցած եղէք ուրեմն որ ես հօրս տունը կոտր մի սեւ հացէն ի զատ ուրիշ բան չէի ուտեր։ Մենք շատ անգամ ծարաւութիւննիս մարելու համար ջրէն զատ բան չէինք ունենար. հիմայ հոս պատուական ապուր կը ճաշեմ, հացն ալ աղուոր և պէտք եղածէն աւելի։ Վերջապէս՝ մինչեւ կշտանալս

տունը մէկ կողմ, կերած հացս ալ պատուական. բայց ի՛նչպէս կրնամ ասկէ աւելի ուտել, երբ կը մտածեմ (որ բնաւ մտքէս ելած չունի այս ցաւալի յիշատակը,) թէ ի՛նչ վիճակի հասած են արդեօք իմ հայրս ու մայրս»: Փարի Տիւվէրնէյ և կառավարիչը հազիւ թէ կրնային իրենց արտասուքը բռնել, տեսնելով առջևնին տղուն սրտին այնչափ զգայողութիւնն և հաստատութիւնը: «Ի՛նչ որ քու հայրդ, բայց Փարի, թագաւորին զօրաց մէջ ծառայութիւն ըրած է, ի՛նչպէս կարելի է որ իւր թոշակը չընդունի:
— Չէ, պատասխան տուաւ տղայն, անիկայ թոշակ չունի: Ի՛նչպէս այս բանիս համար աղերսագրեր տուաւ, և մէկ տարիի չափ շատ աշխատեցաւ որ առնու, բայց փուճ ելաւ: Ըսաղքատութիւնն ալ չթողուց որ իւր իրաւունքներն յայտնէ՝ եղքի ձիգը թափելով: Վերսայլ քաղքին մէջ ալ պարտքի տակ չինկնելու համար՝ վերջին կարօտութեան հասաւ: — Խիստ աղէկ, կրկնեց Փարի, թէ որ ճշմարիտ է ըսածըդ, որու վերայ բնաւ չեմ երկբայիր, որովհետեւ քու բերնէդ կը լսեմ, կը խոստանամ քեզ միջնորդ ըլլալ թագաւորին որ հինգ հարիւր Ֆըրանք տարեկան թոշակ մի կապէ անոր: Բայց որում քու ծնողքներդ այսքան խեղճութեան մէջ են, հաւանական է որ դքեզ հօս խրկելու ժամանակնին և ոչ քիչ մի սաակ կրցած պիտի ըլլան քեզ ձարելու: Ա՛ռ ուրեմն հիմայ իմ ձեռքէս այս երեք ոսկի դահեկանը, զոր թագաւո-

րին կողմէն կուտամ քեզ. և քու հօրդ ալ տուջի վեց ամսականը կանխիկ պիտի խրկեմ իւր տարեկան Թոշակէն, զոր կը յուսամ ընդունիլ Թագաւորէն նորա համար։ — Ի՞նչպէս պիտի կրնամ տէր իմ, կրկնեց տղայն, հօրս ձեռքը համբուրել այդ գումարը։ — Այդ իմ գիտնալու բանս է, պատասխանեց Փարի Տիւմէրնէյ, ատոր հնարքը գտնել մեզ համար բան մի ըսել չէ։ — Ո՛հ, տէր իմ, կրկնեց նորէն աշակերտն, որովհետեւ այս դիւրութիւնն ունիք, շնորհք ըրէք այս երեք ոսկին եւս խրկել, զոր դուք մարդասիրութեամբ ինձ պարգեւեցիք։ Ես այս տեղ ամեն բարիք առատապէս կը վայելեմ, ուստի ինչպէս կը տեսնէք՝ անօգուտ են ինձ ասոնք. ուր ընդհակառակն խիստ մեծ օգուտ կրնան ընել իմ հօրս և իւր խեղճ ընտանեացն, որոնք մեծ նեղութեան մէջ են"։

Ո՛հ, ինչ մխիթարութիւն է, սիրուն որդեակք իմ, այսպիսի ազնուական զգացողութիւններ ունենալն. ինչպէս որ մեծ ամօթ է խստասիրտ մարդուն՝ որ չկրնար իւր ծնողաց սիրոյն փոխարէն ինքն ալ զանոնք սիրել, այլ միայն անտարբեր և ատելի սէր կը ցուցնէ։ Աստուած չընէ որ դուք եւս ասոնց պէս ըլլաք. շատ աղէկ է որ տղայ մի իւր մօրն արգանդին մէջ մեռնի, քան թէ անոնց նման օրերը դառնացնէ այնպիսի վարմունքով՝ որ ազնուական տղու մի չը վայելէր։ Այլ որ պատիւ, հնազանդութիւն և սէր չցուցնէր իւր ծնողաց, ոչ քրիստոնեայ և

ոչ ալ մարդ կանչուելու արժանի է. այլ գարշելի և հրեշաւոր գազանի տեղ պէտք է դնել այնպիսին։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

### Տղայոց իրենց դաստիարակաց և վարժապետաց դէմ ունեցած պարտաւորութիւնները։

Աշակերտաց պարտաւորութիւններն՝ որ իրենց դաստիարակաց և վարժապետաց դէմ ունին, գրեթէ հաւասար է տղայոց իրենց ծնողաց դէմ ունեցած պարտաւորութեանց հետ. վասն զի վարժապետ ըսելն՝ երկրորդ հայր ըսել է։

Այս ճշմարտութիւնս խիստ աղէկ իմացեր էր մեծն Աղէքսանդր, որ սովոր էր միշտ ըսել թէ՝ «Փիլիպպոս իմ հօրս որքան որ պարտաւոր եմ, նոյնքան եւս Արիստոտէլ վարժապետիս պարտաւոր եմ». և ասկէ սա իրաւունքը մէջ կը բերէր, թէ մին կեանք էր տուեր, և միւսն աղէկ կեանք վարել սորվեցուցեր էր։

Ուրեմն դուք եւս ձեր վարժապետաց համար նոյն պատիւն և երախտագիտութիւնը պէտք է ունենաք, զոր ձեր ծնողաց պարտաւոր էք. և ծնողք առաջին պիտի ըլլան այս աղուական զգացմունքները ձեր սրտին մէջ ծնցընել տալու, թէ որ աշակերտաց իրենց վարժապետներուն դէմ ունեցած երախտագիտութիւնն և

հնազանդութիւնն իբրեւ սկիզբն կը սեպեն բա-րի վարուց եւ կրթութեան, որու վերայօք պի-տի զրուցեմ հիմայ։

Ինքնակալի մը իմաստուն վարմունքը։

Երբոր Թէոդոս կայսրն իւր Արկադէոս որդ-ւոյն կրթութիւնն Արսենիոս արժանապատիւ մարդուն յանձնեց, սա նշանաւոր խօսքն խօսե-ցաւ անոր. «Դուք ասկէ յետոյ իրեն հայր պէ-տի ըլլաք ինձմէ աւելի»։ Բայց այսքան խօսք բաւական չսեպելով, ուզեց որ որդին եւս իւր կողմէն վարժապետին պատիւն ճանչնալով ար-ժանաւոր յարգութիւն տայ անոր։ Ուստի օր մի մտաւ այն սենեկին մէջ, ուր տեղ Արսենիոս դաս կուտար Արկադէոսին, տեսաւ որ վարժա-պետն ոտքի վերայ կանգնած է եւ աշակերտը նստած. չկրցաւ կայսրն իւր բարկութիւնը զսպ-ել, յանդիմանեց զվարժապետն՝ որպէս թէ իւր իշխանութեան օրէնքները չէր պահեր։ Ար-սենիոս թողութիւն խնդրեց ըսելով՝ թէ ան-վայելուչ բան կ'երեւի ինձ որ մէկ թագաւո-րազուն իշխան մի ծիրանիներ (ալ վարդ) հա-գած՝ իմ դիմացս ոտքի վերայ կանգնի։ Թէոդոս՝ որ կը ջանար մեծ յարգ ցուցընել տալ որդւոյն իւր վարժապետին դէմ, շուտ մի հանել տուաւ նորա վերայէն թագաւորական նշանները, եւ հը-րամայեց որ Արսենիոսի առջեւ միշտ ոտից վե-րայ եւ գլխիբաց կենայ։

Իմաստուն և առաքինի Ֆենելոնը, որ Քամպրէի արքեպիսկոպոս էր, վարժապետութեան պարտք մի սեպեց հասարակ տղայոց պէս կըրթելու Պուրկոնեայ դուքսն ալ, որ իւր աշակերտն էր. բայց ուրիշ կերպ մի բանեցուց։ Օր մի առիթ գտնելով, երբ խստութեամբ կը խօսէր երիտասարդ իշխանին հետ, գոռոզութեամբ մի այսպէս պատասխան առաւ անկէ. — Ոչ, պարոն, ես հրամայող չեմ ուզեր։ Գիտեմ ով եմ ես՝ և ով ես դուն "։ Խոհեմ վարժապետն այն միջոցին բերան չբացաւ անոր, այլ աւելի աղէկ սեպեց լուռ կենալ և տխուր կերպարանք մի ցուցընել, և յետոյ տալ անոր իւր օգտակար խրատները։ « Չեմ գիտեր, պարոն, բայց անոր հետեւեալ օրը. միտքդ է արդեօք երեկուան զրուցածդ. — գիտեմ ով եմ ես՝ և ով ես դուն —։ Հիմայ իմ պարտքս է իմացընել ձեզ, թէ այս երկու խօսքն ալ չէք գիտեր ինչ կը նշանակէն։ Ուրեմն դուք միտքերնիդ այնպէս դրած էք թէ ինձմէ վեր էք։ Գիտեմ անտարակոյս որ պալատի որ և իցէ ծառաներէն մէկն ալ կրնայ ըսել ձեզ իմ զրուցելիքս. և ես ալ վախ մի չունիմ ըսելու ձեզ, որովհետև դուք կը բռնադատէք զիս. ուստի կը համարձակիմ զրուցել՝ թէ ես ալ ձեզմէ վեր եմ։ Կ՚ըսէք կը հասկընաք թէ այս տեղ ցեղի (սենեկէի) վերայ չէ մեր խօսքը։ Եթէ մարդ մի սնդելու ըլլայ՝

թէ ինքն Աստուծմէ մասնաւոր շնորհք գտնե-
լուն համար, անձրեւը միայն իւր արտերուն
մէջ վազելով պտղաբեր ըրած է, իսկ դրացւոյն
արտերն և ոչ թրջած։ Արդ՝ այս մարդը դուք
ալ անտարակոյս անբանի մի տեղ կը գնէիք. ա-
պա ուրեմն դուք ալ ասիկէ խելացի չէք կրնար
սեպուիլ, թէ որ ձեր ցեղին վերայ սնապարծե-
լու ըլլաք, որ ամենեւին օգուտ մի չընէր անձ-
նական արժանաւորութեանց։ Չէք կրնար ժխ-
տել ձեզմէ վեր ըլլալը, թէ՛ հանճարով և թէ
գիտութեամբ։ Դուք ինձմէ սորվածնէդ աւե-
լի բան չէք գիտեր, և ձեզ սորվեցուցածս ոչինչ
բան մի է, թէ որ բաղդատելու ըլլամք դեռ
սորվելիքներուդ հետ»։ Երիտասարդ իշխանը
խիստ աղէկ միտք առաւ այս գեղեցիկ դասը.
և իւր սիրելի վարժապետն ալ ուրախացաւ՝ ի-
մանալով որ նորա սրտին մէջ հնազանդութեան
հունտը ծլեր է գոռոզութեան տեղ։ Այս դուք-
սը յետոյ աշխարհիս խիստ գիտուն թագաւոր-
ներէն մին եղաւ։

Բայց վարժապետները պատուելու ժամա-
նակ կը վայելէ նաեւ որ երախտագէտ և դիւ-
րազգաց սիրտ ցուցընէք անոնցմէ ընդունած
ծառայութեանց համար. վասն զի՝ թող որ ի-
րենց ապերախտ ըլլալը կը յայտնեն եթէ չցու-
ցընեն, այլ նաեւ ինքզինքնին յանցաւոր կ՚ը-
նեն՝ եթէ պարտաւոր եղած երախտագիտու-
թիւնը ցոյց չտան անոնց, որոնք մեր բարեկր-
թութեան պատճառ եղած են, և իրաւունք

տուած ունին մեր վերայ :

Մարդս բնութեան ձեռքէն ելած ժամանակ կը նմանի կոշտ ու պլոշտ մարմարիոնի. ուստի մարդկութեան հարկաւոր եղած կատարելութիւնն ստանալու համար, պէտք է որ կրթուի, լուսաւորուի, ինչպէս որ այն մարմարիոնն ալ գեղեցիկ արձան շինելու համար, հարկ է մուրճով տաշել և յղկելով (փէրտահով) մաքրել: Մեր վարժապետներուն պարտաւոր եմք այն գեղեցիկ առաքինութիւններն և գիտութիւնները, որոնք մեր միտքն և սիրտը կ'ուղղեն :

Աշակերտի մի խումբ վարժապետաց դէմ ունեցած չափացանց երախտագիտութիւնը:

Մարկոս Աւրելիոս կայսրն այս ըսածներս այնպէս սրտանց զգացեր էր, որ մինչև չափէ դուրս անարժան երախտագիտութեամբ մի խ-ր վարժապետաց արձանները կուռքերուն մէջտեղ կանգնել տուաւ, և անոնց գերեզմանացն ամէն տարի զոհեր կը նուիրէր: Նաև կենդանեաց մէջ ևս տեսնուած են սիրոյ և երախտագիտութեան օրինակներ, զորոնք պարտաւոր է մարդս ցուցընել անոնց՝ ուսկէ որ բարիք մի կը տեսնէ:

Երախտագէտ առիւծը:

Երիտասարդին մէկը Անտրոկլէս անուն, գերի ինկած էր հռովմայեցիի մի քով, որ Աֆրիկէի մէջ փոխհիւպատոսի պաշտօն կը վարէր:

Անդրոկլէսին իր տիրոջմէն ամեն օրուան քա-
շած նեղութիւններն այնքան սիրտը թափեցին,
որ միտքը դրաւ փախչիլ անոր ձեռքէն, թէ-
պէտ եւ շատ վտանգաւոր էր: Ու որովհետեւ
շատ կը վախնար որ նորէն իր անգութ տիրոջ
ձեռքը կ'ինկնի և վրէժխնդիր կ'ըլլայ իրեն, ու-
տի գնաց պահուըտեցաւ Նումիդիոյ մէջ այն-
պիսի անապատ մի, ուր տեղ հնար չէր որ բը-
նաւ մէկը մօտենայ. մինչեւ աչքն ալ առաւ
այն տեղ մտնելու, թէ որ ուտելու բան չգըտ-
նէ: Արեւուն ճառագայթներն այնպէս սաս-
տիկ տաք էին, որ չէր կրնար ճամբան քալել.
շուք տեղ մի փնտռեց որ գլուխը խոթէ քաշ-
ուի, բայց յարմար տեղ չգտաւ. այն դիւ կողմն
այր (մաղարա) մի տեսնելով մութ և խոր, մը-
տաւ ներս այս մտքով՝ որ քիչ մի ատեն անցնե-
լէն յետոյ ուրիշ աւելի ապահով տեղ գտնէ:
Ոտքը ներս խոթեց չխոթեց, նայիս դիմացն ա-
ռիւծ մի ելաւ, որ իր մէկ թաթը ցաւէն չէր
կրնար գետին դպցընել, ուսկէ արիւնը գետի
պէս կը վազէր, և սոսկալի ձայնով մի մռնչելով
քարայրը կը սարսեցընէր: Անդրոկլէս այս որ
տեսաւ, սաստիկ վախուն ինքզինք մեռած սե-
պեց. բայց առիւծը զինք տեսնելուն պէս՝ մօ-
տեցաւ քով հեզ և ընտանի անասնոյ նման, եր-
կընցուց անոր իր թաթը, ցուցուց վէրքն, և
կ'երեւար թէ իրմէն օգնութիւն կը խնդրէր:
Գերին՝ որուն քաշած թշուառութիւնները սոր-
վեցուցեր էին իրեն՝ խեղճերուն ողորմելու, ի-

մնաց նորա միտքը, քննեց նայեցաւ ոտքն և մէջէն հաստ փուշ մի քաշեց հանեց. յետոյ խոցը սրբեց, մէջի թարախը վազցուց և մինչեւ նորա չորնալն աղէկ հոգ տարաւ։ Առիւծն ոտքին ցաւը դադրելուն պէս՝ փռուեցաւ իւր բարերարին ոտքին տակ, և իւր թաթն անոր ձեռքերուն մէջ դնելով հանգիստ քնացաւ։ Այն օրէն յետոյ երեք տարի չափ լման մէկտեղ ապրեցան նոյն քարայրին մէջ։ Առիւծն իւր բռնած որսերն Անդրոկղէսին կը բերէր, և աս ալ կերակուր կը պատրաստէր տաք արեւուն մէջ եփելով։ Բայց այսպէս միմնակուկ կեանք վարելէն ձանձրութիւն գալով իրեն, օր մի երբ առիւծն որսի ելեր էր անապատին մէջ, առիթ գտնելով ինկաւ ճամբայ, թէպէտ ուր երթալը չէր գիտեր. և երեք օրէն յետոյ խեղճ գերին դժբաղդութեամբ զինուորներու ձեռք ինկաւ, որոնք բռնեցին զինք Հռոմ բերին, ուր տեղ իւր տէրը տեսնելով ճանչցաւ և դատապարտեց գազաններուն դիմաց նետել զինք տեսարանի մի մէջ, որ պատառ պատառ ընեն։

Օրն եկաւ հասաւ, բերին Անդրոկղէս տեսարանին մէջ կանգնեցուցին, ուր տեղ կային կատաղի և անօթի գազաններ, որ կարծես թէ պիտի պատառոտէին զինքն. անոնց մէջ սոսկալի առիւծ մի եւս կար, որու աչուըներէն կրակ կը ցատքէր, և ճակտի բաշերը մէկմէկու խառնելով՝ և մռնչելու ահագին ձայներով բոլոր հանդիսատեսները մեծ ահուդողի մէջ կը ձգէր։ Կե-

ըեւար թէ ահռելի գազանը դիմացն եղողը պի-
տի պատառէ ուտէ. բայց զԱնդրոկլէս տեսա-
ծին պէս մէկէն կանգ կ'առնու. կամաց կա-
մաց քով կուգայ, և բնական գազանութիւնն
մէկդի ձգելով՝ կարծես թէ ծանօթ էր իրեն
խեղճ գերին. քծնելով մի քով կը մօտենայ և ու-
րախութեամբ պոչը օրելով կուգայ կը քսուի ա-
նոր և ձեռքերն ոտքերը կը լիզէ: Առիւծին այս-
պէս քծնիլը տեսնելով Անդրոկլէս՝ խելքը գլ-
ուխը կուգայ, աչուըները կը բանայ և կը տես-
նէ որ առիւծն ալ իրեն կը նայէր, և որպէս
թէ երկու բարեկամ մէկզմէկ ճանչնալով, ա-
ռիւծն ու մարդն իրենց ուրախութիւնն և քաղ-
ցըր սէրերնին մէկմէկու կը յայտնեն: Հանդի-
սատեսք այս բանիս վերայ զարմանալով ապշու-
թեան ձայներ հանեցին. կայսրն ալ իրեն քով
կանչելով գերին, մանրամանաբար պատմել
տուաւ ինչ որ ես ձեզ հաւատարմութեամբ
պատմեցի: Ժողովուրդն որ իմացաւ զայս, պօ-
ռաց մեծ ձայնով. Թողութիւն շնորհուի գե-
րիին, և առիւծն ալ իրեն պարգեւ տրուի.
կայսրը բարեհաճելով երկու խնդիրքն ալ կա-
տարեց: Անդրոկլէս իւր ետեւ ձգեց իրեն ա-
ղատիչը՝ վիզէն փոկ (քայըշ) կապած, և անոր
հետ մէկտեղ Հռոմայու փողոցներուն մէջ կը
պտըտէր. Ժողովուրդը նորա վերան ծաղիկներ
և պարգեւներ կը տեղայինէր՝ այսպէս պօռա-
լով. "Ահա առիւծն հիւրընկալու մարդուն,
և մարդն բժիշկ առիւծուն.

Կ՚ուզեմ որ պիտի զարմանաք հիմա այս ե-րախտագէտ գազանին վարմունքին . բայց առիւ-ծին Անդրոկլէսէն ընդունած երախտիքն ինչ պզտի բան է , թէ որ բաղդատելու ըլլանք ձեր դաստիարակներէն և վարժապետներէն ամեն օր ընդունած ծառայութեանց հետ ։ Ո՞րքան դէշ ծիլեր և ո՞րքան փշեր ձեր սրտին մէջէն կը փրը-ցընեն կը հանեն անոնք՝ պակսութիւննիդ չխնա-յելով ։ Ո՞րքան խնամքով կը սնուցանեն անոնք ձեր միտքն և հոգին գեղեցիկ դասերով և օգտա-կար խրատներով ։ Ուրեմն դուք սնուցողներէն աւելի անզգայ չէ՞ք ըլլար , թէ որ աներախ-տութեամբ մինչեւ մոռնալու կամ գուցէ ար-համարհելու եւս ըլլայք այն վարժապետներն՝ որոնք ձեր աղէկութեան համար բարի նախան-ձութեամբ այնքան հոգ կը տանին , և արժանի չէ՞ք ըլլար նոյն յանդիմանութեան՝ զոր ատեն մի Յոյն երիտասարդի մի ըրին ։

Ապերախտ երիտասարդի մի եղած յանդիմանութիւնը։

Այս երիտասարդը շատ տարիէն ի վեր փի-լիսոփայի մը քով սորվեր և կրթուեր էր , որ զինք գիտուն և առաքինի ընելու համար աշխատու-թենէ բնաւ չէր փախչեր . բայց երիտասարդն իւր բարեխնամ վարժապետին պարտաւոր ե-ղած երախտագիտութեան նշանները չցուցընելէն ի զատ , ինքնիրեն կը պարծենար և կը քամահ-րէր զայն . և օր մի եւս լրբութեամբ բայց ա-

նոր, թէ անարգ անասունի կը նմանի, և անանոյն անունն ալ տուաւ: «Չեմ գիտեր, պարոն, պատասխան տուաւ փիլիսոփայն, թէ կը նմանիմ ես այդ կենդանւոյն, որուն դուն զիս կը նմանցնես. այլ գիտեմ աղէկ որ դու կը նըմանիս մի ապերախտի, որ բոլոր կենդանեաց մէջ ամենէն ատելին և գարշելին է»:

Ահա, սիրելի որդեակք իմ, այս բանս կարելի է որ ըսեն օր մի ձեզ համար ալ, թէ որ դժբաղդաբար պակսելու ըլլաք ձեր վարժապետներուն ցուցնելու երախտագիտութե պարտքերնիդ, կամ թէ որ վերը պատմած երիտասարդին պէս, անոնցմէ ընդունած աղէկութեց փոխարէն՝ պաղ վարմունք մի կամ յայտնի ատելութիւն ցուցնէք:

Սողոմոն իմաստուն ծոյլ մարդիկը մրջիւններուն դպրատունը կը խրկէր, որ անոնցմէ սորվին աշխատասէր ըլլալ և իրենց ծուլութեան վրայ ամչնան: Այս օրինակիս վրայօք կ'ուզեմ ես ալ հետեւեալ առակը պատմել ձեզ, որու մէջի կենդանիէն կրնաք բան սորվիլ:

---

## ԱՌԱԿ

Իւր տէրը խածնող շունը:

Հաւատարիմ և անկեղծ բարեկամին անգին գանձ մի է, որու քով ազնիւ և փայլուն ադամանդներն և ոսկին ոչինչ սեպուած են: Բարե-

կամութեան ճշմարիտ պատկեր՝ անբան կենդանեաց մէջ շատ ըլլայն ամենուն յայտնի է. և ամէն մարդ գիտէ թէ ինչպէս այս կենդանիս իւր տիրոջ հրամանները կատարելու արթուն և պատրաստ է միշտ, և անոր դէմ ունեցած հաւատարմութիւնն իւր հետ մէկտեղ ծնած է:

Հարուստ երիտասարդին մէկն այսպէս աղուոր շուն մի ունէր, որ ծաղրական և սիրուն շարժուածքներուն համար անունը Միմոս (մուֆալլիտ) դրած էր: Գիշերները արթուն կը կենար. մի փոքր ձայն լսելուն կը հաչէր, և ամենեւին օտար մարդ տընէն ներս չէր մտցըներ: Բարեկենդանի օրերն եկան և Միմոս տընէն չէր հեռանար. իւր տիրոջ հետ ոչ ի թատրոն կ'երթար և ոչ ի պարահանդէս և ոչ ի հացկերոյթ: Գիշերն իւր սովորականին պէս՝ ականջներն դէպ ի դուռը անկած կը սպասէր: Անձրեւոտ իրիկուն մի էր, ուշ ատեն և մութն այնպէս կոխեր էր՝ որ աչք աչքի չէր տեսնուեր, Նայիս տէրը կախարդ կնկան կերպարանք մտած և երեսը դիմակ (սուրէթ) անցուցած տուն դարձաւ մինակ, և յոգնած ըլլալով՝ վերայի լաթերը պիտի փոխէր ու պառկէր քնանար: Շունն այս այլանդակ մարդը տեսնելուն պէս՝ ակռաները կը կրճտէ, և գող կարծելով կը վազէ անոր դէմ և սաստիկ կը խածնէ: Խեղճ տէրը ցաւէն մեծ ձայնով կը պոռայ. շունն իւր տիրոջ ձայնը ճանչնալուն պէս կանգ կ'առնու, և անոր դէմ գործած չարութեան վերայ անմխիթար,

տրտմութեամբ կը լեցուի ։ Կը փախչի կ'երթայ կը պահուըտի, և ապերախտ զաւակներուն համար գլուխը գետնէ գետին կը զարնէ ։ Թէպէտ տէրն անուշութեամբ անոր անունը տալով կը կանչէ և մօտ կ'երթայ կը շոյէ, բայց ինչ օգուտ. վասն զի շունը արդէն կսկիծէն ինքզինք կ'ուտէր, տիրոջ ցուցըցած սէրը մտիկ չէր ըներ, և ինչ որ տային՝ բերանը չէր դներ ։ Վերջապէս այս խեղճ անմեղ սխալմունքը պատժելու համար, անօթի ծարաւ և ցաւով մեռաւ խեղճ կենդանին ։

Այս առակս ինքնահնար չկարծէք, այլ ճըշմարիտ պատմութիւն է, ինչպէս որ արժանահաւատ հեղինակին մէկը կը վկայէ ։ Ուստի թէ որ կենդանի մը մարդուս վերայ այսքան սէր կը ցուցընէ, որքան պէտք է որ ապերախտք ամչնան իրենց վերայ ։

Գիտեմ թէ շունը նշան՝ մանաւանդ թէ օրինակ է հաւատարմութեան և սիրոյ, զոր մենք մեր վարժապետաց դէմ պարտաւոր ենք ունենալ. և այս բանիս ապացոյց՝ չկայ աղուոր օրինակ մը պատմածէս աւելի ։ Աստուած տայ որ, սիրելի որդեակք իմ, դուք ևս այս ապերախտներուն դասին մէջ չըլլայք ։ Եթէ գիտնամ որ դուք այսպէս մեծ չարութիւն մը գործելու չէք ամաչեր, մէկէն կը ձգէի զձեզ ձեր դժոխային անարգ կամաց, մէկ մ'ալ երեսնիդ չէի նայեր, բնութենէ դուրս տղայք սեպելով զձեզ. վասն զի չկայ աւելի բնութեան հակառակ բան մը,

քան ապերախտ գտնուիլ անոնց դէմ, որոնց պարտաւոր եմք այնպէս անգին երախտիք մի, ինչպէս է մեզ տուած բարեկրթութիւննին։

Բայց թէ որ այս ապերախտութիւնն ինչ և իցէ աստիճանի մարդ որ ունենալու ըլլայ, ատելի և անարգ կ՚ըլլայ մարդկանց, ուրեմն զովելի են աշակերտի մարդոց քով անոնք որ երախտագէտ են իրենց վարժապետաց, որոնք անոնց տղայութեան հասակը կրթութեամբ և ուսմամբ զարդարեցին։ Երեւելի Շամիլլի կոմսին գեղեցիկ գործոց մէջէն այն կարգը, որ իրեն մեծ պատիւ բերաւ և իբրեւ օրինակ բարի՝ միշտ յիշատակութեան արժանի պիտի ըլլայ, կ՚ուզեմ այս տեղ ձեզ պատմել։

Գեղեցիկ օրինակ երախտագիտութեան։

Շամիլլի կոմսը Կուամէ քաղաքը պաշտօնանքէն ետեւ, այնպիսի քաջութեամբ որ իւր թշնամիներն անգամ զարմացուց, Վերայլ գնաց Լուդովիկոս ԺԴ. Թագաւորին ներկայանալու։ Թագաւորն անոր ըրած պաշտպանութիւնը լաւ ըլլալով, շատ գովեց զինքն, և քաջալերեց որ իւր սրտին ուզած շնորհքն իրմէ խընդրէ։ "Տէր իմ, պատասխան տուաւ Շամիլլի, այս շնորհքը միայն ձեզմէ կը խնդրեմ. որ թողութիւն ընէք իմ հազարապետիս, որ Պաստիլի մէջ բանտարգեալ կը կենայ։ — Ո՞վ է քու հազարապետդ, կրկնեց թագաւորը զարմանալով։ — Պարոն տը Պրիքմօն է, ըսաւ Շամիլլի։

Ես ժամանակաւ անոր գնդին մէջն էի, որուն իմ երախտապարտութեանս մէջ զիս կրթելու համար ունեցած հոգերը թէ որ չճանչնամ, ապերախտ պիտի սեպուիմ»։ Զարմացաւ մնաց թագաւորը Շախլըլի ոգւոյն վեհանձնութեան վրայ, որ իւր անձնական շահը մէկդի ձգելով, բարերարին օգուտն միայն կը մտածէր. և իսկոյն շնորհեց նորա իւր ուզած խնդիրը։

Ձեր սրտին մէջ աւելի զգացընելու համար երախտագիտութիւնը, որ գեղեցիկ հոգւոց առաքինութիւնն է, կ'ուզեմ այս տեղ ձեր առջեւ դնել այնպիսի օրինակ մի, որ այնքան աւելի մեծ ազդեցութիւն ունի, որքան որ գործողը բարբարոս սեպուած է։

Ուրիշ օրինակ երախտագիտութեան։

Լուդովիկոս ԺԴ. Գաղղիացւոց թագաւորը, Թունեսան (Թունուզ) քաղաքը ռմբակոծելէն յետոյ, մէջի բնակիչները նայեցան որ չպիտի կրնան անոր նաւատորմիղն իրենց ծովեզերքներէն հեռացընել, յոյսերնին կտրելով մէջերնին որոշեցին որ Գաղղիացի գերիները թնդանօթներուն բերանը կապեն և նետելու ժամանակ զանոնք ջարդուբուրդ ընեն, որոնց ջախջախուած անդամները կ'երթային Գաղղիացւոց նաւերուն մէջ կ'իյնային։ Այն ժամանակները Թունուզի նաւապետ մի ասպատակութիւն ըրած ժամանակ Գաղղիացւոց ձեռքը գերի ինկած ըլլալով, անոնցմէ շատ մարդասիրութիւն

տեսեր էր բոլոր իւր գերութեան մէջ․ երբ տեսաւ թէ թնդանօթներու բերանը կապուողներուն մէջ պատուաւոր զինուոր մի կայ, ճանչցաւ ո՛վ ըլլալը․ վասն զի ինքն անոր քով եղած ժամանակ շատ բարեկամութիւն տեսեր էր անկէ ։ Այս ողորմելի միջոցին մէջ իւր բարերարը մահէն ազատելու համար ձեռքէն եկածէն աւելի ջանք ըրաւ, աղաչեց և խրատունքներ բանեցուց, բայց ամեն ինչ փուճն ելաւ ։ Արդէն պատրաստուեր էին թնդանօթին կրակ տալու, որուն դիմաց կապուած էր Գաղղիացի զինուորը, մէկ մ'ալ Թունուզցի գերին աչուըները սեւցած կը նետուի անոր վերայ․ « Աղէ, հիմայ կրակ տուր թնդանօթին, որովհետեւ չեմ կրնար բարեկամիս կեանքն ազատել, գոնէ անոր հետ մեռնելով մխիթարուիմ, և սրտիս ցաւ չըլլայ » ։ Հոն գտնուող Պէյին սիրտն այնքան շարժեցաւ այս տեսարանիս վերայ, որ զինուորին թողութիւն շնորհելէն յետոյ, երկուքին ալ ազատութիւն տուաւ ։

## ԳԼՈՒԽ ԺԲ․

### Վարժապետաց անպատուութիւնը պէտք չէ որ աշակերտաց սէրը պաղեցընէ անոնցմէ ։

Աշակերտներուն իրենց վարժապետաց դէմ ունեցած երախտագիտութիւնն և սէրը սովորաբար պաղեցընողն անոնց անաչառ վարմունքն

է, ուր երբեմն կը ստիպուէին իրենց աշակերտաց հետ փարուիլ։ Թէեւ յանդիմանութիւն մի եւս լսելու ըլլան, մէկէն կը մոռնան անոնց բոլոր հոգերն՝ աշխատութիւններն և ծառայութիւնները, մինչեւ զանոնք իրենց թշնամին կը սեպեն քան թէ բարերար։ Բայց թէ որ անոնց այնպէս անաչառութեամբ փարուելնուն պատճառը գիտնային, անշուշտ իրենց սխալ կարծիք ունենալնին կը հասկնային։

---

## ԱՌԱԿ

### Որթն եւ այգեգործը։

Օր մի կռիւ բրաւ, կ'ըսէ Եզովբոս, որթն (սաման) այգեգործին հետ, անոր համար որ իւր ճիւղերուն և տերեւներուն շատը կը կըտրէր։ "Խղճմտանք չունիս դու երբէք, ըսաց գիւղացւոյն, որ ինծի հետ այսպէս խստութեամբ կը փարուիս. կ'երեւի թէ խիստ քար սիրտ մի ունիս դու որ ամենեւին իմ ցաւերս չես զգար, անգութ մարդ. ըսէ նայիմ ինչու համար այսքան կը վիրաւորես զիս։ Իրաւ է որ ինծի համար այսքան խնամք և հոգ կը տանիս, և ես ասոր համար ապերախտ չեմ ըլլար քեզ, կամ ազատութեամբ իմ խաղողներս քեզմէ չեմ խնայեր, որոնք քու տակառներդ գինիով կը լեցնեն։ Քանի քանի անգամ ըսիր դու ինծի թէ իմ քաղցր նեղութիւններս և թափած քրտինքս և բա-

ըոր իմ սէրս . չա՛ր այգեգործ , քեզ համար է , և մինչեւ քու անգթութեանդ տուած վէրքերդ ալ ինծ համար են եղեր : Կուլամ խեղճուկս և գիշեր ու ցերեկ իմ արտասուքներովս գետինը կը թրջեմ . բայց ի՞նչ օգուտ , վա՜յ ինծ , եթէ դու այդպէս միշտ քարսիրտ ես ինծ դէմ : Ես քեզ կը սիրեմ ալ կ՚ըսես . աւա՜ղ անգութ սիրտս , որ ամեն կերպ առերութենէ գէշ է : — Սանձէ քու լեզդ , դադրեցու քու բարկութիւնդ , պատասխան տուաւ խոհեմ երկրագործը , վասն զի չես գիտեր դու իմ նախատես դիտաւորութիւններս և միտքս . գիտցիր ուրեմն որ քու աղէկութեանդ համար՝ պէտք է որ ես քեզ հետ այս կերպով վարուիմ : Մ՝իշտ քու օգտիդ համար հոգ ունեցեր եմ , և ինչպէս որ դու կը կարծես՝ քեզ դէշութիւն գործելու մտօք ձեռքս վերադ դարձուցած չեմ . այլ այն իմ սրտիս մէջ եղածն , զոր դու անգթութիւն կը կարծես , ճշմարիտ սէր է : Թէ որ ես քու խաշուրցած մեծցած ճիւղերդ չփրցընէի , թէ որ թող տայի զանոնք իրենց գլխունն մեծնային տարածուէին , անշուշտ օր մի եւս զքեզ բոլորովին չորցած ծառի կոճերուն մէջ կը տեսնէինք . բայց ես քու լայերդ մինչեւ չընելով անպիտան տերեւներդ և ճիւղերդ կտրեցի , անոր համար որ աւելի պըտուղ տաս , և իմ կարծիքս ըրածէս աւելի՝ Բագոս(1) ու Աշկինք նպաստամատոյց և յաջող

(1) Բագոս ըստ դիւցաբանից՝ է գինւոյ չաստուած :

պիտի ըլլան քեզ» ։ Տղայք, դուք որ եթէ ձեր
վարժապետը պատժելու ըլլայ զձեզ, իբրեւ բռ-
նաւոր կը գանգատիք անորմէ, սորվեցէք այս ա-
ռակէս և գիտցիք որ անոնք զձեզ սիրելնուն հա-
մար կ'ընեն ։ Դուք էք որթը, վարժապետն է
գիտուն այգեպանը․ վա՜յ այն խեղճ տղուն՝ զոր
իւր վարժապետը չհամարձակիր յանդիմանել և
պատժել, երբ չարութիւն և լրբութիւն ընե-
լու ըլլայ ։

Այո՛, որդեակք իմ, ձեր վարժապետներուն
անաչառութիւնն, անոնց ձեր աղէկութեան
համար ունեցած բարենախանձութեան նշանն
է ։ Անոնց ըրած պատերազմը ոչ թէ ձեր, այլ
միայն ձեր պակասութեանց դէմ է ։ Անոնք կը ջա-
նան անկարգութեանց առջեւն առնուլ, որոնք
կրնան ժամանակէ մի յետոյ այն ծլած ընձիւղ-
ներէն (ֆիլիզ) ծագիլ՝ թէ որ արմատ ձգելու
ըլլան ձեր հոգւոյն մէջ ։ Օր պիտի գայ որ դուք
ևս պիտի ճանչնաք և ըսէք՝ թէ իրաւունք ու-
նին եղեր այսպէս ընելու․ և չէ թէ անոնց շը-
նորհակալ պիտի չըլլաք, այլ ձեր անկեղծ երախ-
տագիտութիւնն ալ պիտի յայտնէք ։

Այս իմ ըսուածս՝ փորձով ամէն օր տեսած-
նիս է ։ Որքան տղայք կան՝ որ մեծնալնուն դէշ
կ'ըլլան, և ասոր պատճառն ուրիշ բանէ յա-
ռաջ չգար, այլ միայն զիրենք կրթող վարժա-
պետներուն չափազանց ներողամտութենէն, ո-
րով անոնց մատղաշ հասակնուն մէջ հետերնին
կը վարուին ։ Հետեւեալ պզտի պատմութիւնք

Թող ապացոյց ըլլայ ըսուածիս, որ Հռոմայեան աղքատաց ըրուած գրքին ու նաեւ ուրիշ գըր-քերու մէջ կը կարդացուի։

Իւր մօրը ներողամտութեան քով գնացող տղայն։

Երիտասարդին մէկը գողութեան պատճառաւ իւր ծաղիկ հասակին մէջ դատապարտուեր էր կախուելու։ Երբոր կախաղանին մօտեցաւ, իւր մայրը մէկ անգամ ցուցուցին իրեն, և տղայն ուզեց որ նորա ականջին խօսք մի զրուցէ. ուս-տի երբ հրաման եղաւ, մօտեցաւ իւր մօրն և բան խօսելու տեղ՝ ակռաներով ականջին մէկը պինդ մի խածաւ փրցուց։ "Զար տղայ, բայց դատաւորն, ինչպէս համարձակեցար այդ ան-գթութիւնն գործել անոր դէմ, որ քեզ կեանք տուաւ։ — Տէր իմ, պատասխանեց ողորմելին, ահա այս է որ իմ վիզս անցընել տուաւ այս չու-անը։ Թէ որ անիկայ պատժելու ըլլար զիս իմ ըրած մանր մունր գողութիւններուս համար, զոր դպրատան ընկերներէս կ'ընէի, ի ժամանա-կին ես իմ վարքս և պակասութիւնս շիտկած կ'ըլ-լայի. բայց նա ընդհակառակն կ'ուրախանայր և սիրտ կուտայր ինձ այս կերպով մոլութեան տալորելու։ Ասոր համար ինքն է պատճառ որ ես հիմայ դահճին ձեռքով պիտի կախուիմ և կորսուիմ"։

Հին պատմութեան մէջ ուրիշ օրինակ մի կը կարդացուի, որով աղէկ կրնաք իմանալ՝ թէ մէկ երիտասարդի մի գէշ ըլլալուն բուն պատ-

ձառ մինչ իր գլխուն ձգելն և անոր վարքը չխոկելու համար ամենևին յանդիմանութիւն չըներն է ։

Ինքն իր անձին թողուած երիտասարդը։

Պիմէնիոս բռնաւորն՝ երբ իւր իշխանութեան տակ ունեցաւ Պիմնի իւր անհաշտ թըշնամւոյն որդին, միտք ըրաւ անոր հօրմէն վրէժ առնուլ մասնաւոր՝ մանաւանդ թէ անգութ կերպով մի, թէպէտ եւ երեսանց քաղցր կ'երեւէր ։ Ուստի փոխանակ մեռցընել տալու զտղայն, կամ մութ բանտի մի մէջ գոցել տալու, ուզեց նորա միտքն աւրել և ուրոյն բոլոր գեղեցիկ ձիրքերը փճացընել ։ Այս մտօք միայն գլխուն թողուց որ իւր գազանային ցանկութիւնները կատարէ, և հրամայեց նաեւ որ մէկն անոր կամաց դէմ չկենայ ։ Անփորձ երիտասարդը զուարճութեանց սիրով յափշտակուելով, տուաւ ինքզինք խիստ մեծ անառակութիւններու ։ Ոչ ոտքեանց իւր վերայ հոգ տանող մի չունէր, ուստի և ոչ իւր կիրքերուն սաստիկ յորդութիւնը կարելի էր բռնել և սանձի տակ առնուլ ։ Իւր բոլոր բաղձանքները կը կատարէր, և ըրած չարութիւնները գովութեամբ կը զըրուցուէր․ վերջապէս ինկաւ մոլութեանց խիստ խորունկ անդունդին մէջ ։ Երբ բռնաւորը տեսաւ թէ միտքը դրածին պէս եղեր էր տղայն, ալ անկէ ետեւ ազատ իւր հօր քով խրկեց ։ Պիմն՝ տղայն դարձուն պէս գիտուն վարժապետ-

ներսը ձեռք յանձնեց, որպէս զի անդադար հոգտանէին անոր և վարքն ու բարքը չխակէին և կըրթէին. բայց ամէն ինչ անօգուտ եղաւ, վասն զի խելքը գլուխը գալուն տեղ, այնպէս կատաղեցաւ և մոլորեցաւ, որ օրին մէկը բարձր տեղէ մի վար նետուելով և քիթերը (չէնէ պաշը) ջախջախելով յուսահատած մեռաւ:

Դիտեմ՝ Թէպէտ շատ վարժապետներ և ծնողքներ տղայոց հետ չափազանց ներողամըտութեամբ վարուելով, այսինքն անոնց գործած պակասութիւններուն աչք խփելով և ներելով՝ տղայք միշտ այսպէս գէշ չեն ըլլար, բայց յետոյ միշտ անոնց դժբախտութիւն մի կը պատահի, Թէ որ զիրենք յանդիմանող և խրատող մի չըլլայ. վասն զի՝ կամ՝ աներես կ'ըլլան, կամ՝ մէկ յանցանք մի կը գործեն:

Թագաւորի մի գեղեցիկ խօսքերը:

“Իմ բոլոր տէրութեանս մէջ գաւառներ չէին արդեօք գտնուէր . . . — կը պօռար օր մի Թագաւորին մէկը՝ երբ իր հպարտութիւնն և մտախառութիւնը Թողլով, խելքն ի վերան եկաւ, որոնք քանի միտքն ինկնէին՝ կ'ամչնար և կը կարմրէր: — Ինչո՞ւ համար այդքան անհոգութեամբ հետս վարուեր են իմ՝ վարժապետներս մատղաշ հասակիս մէջ, երբ խելքս քանի մի չէր հասներ. Ի՜նչ աղէկ պիտի ըլլար ինձ, Թէ որ խստութեամբ վարուելով յանդիմանէին և պատժէին զիս”:

Ըհա անոնք որ պզտիկութեան ժամանակնին խիստ փափուկ կը մեծնան և կը կրթուին, և իրենց վարժապետը խիստ մեծ ներողամտութ՟բ կը վարուի հետերնին, յետոյ երբ չափահաս որ ըլլան՝ այսպէս կը խօսին և կը գանգատին իրենց վարժապետներէն: Ըստ հակառակի կը տեսնեմք որ խիստ մեծ անաչառութեամբ կըրթուող անձինք աւելի երախտագիտութիւն կը ցուցընեն իրենց վաղեմի վարժապետաց, ինչու որ կը ճանչնան թէ իրենց պակասութեանց համար կրած պատիժնին և քիչ անգամ աչք խըփերնին՝ զիրենք օգտերնուն համար է եղեր, որպէս զի ուղղին և խրատուին:

Երախտապարտ իշխանի մի իմաստուն դաստիարակը:

Հարցուցին օր մը Պորկոնեից երախտապարտ դքսին, թէ իւր երեք դասընկերներէն ո՞ն աւելի կը սիրէր: Յովհաննէս անուն ընկերս կը սիրեմ, պատասխան տուաւ. վասն զի նա իմ մատղաշ հասակիս մէջ ամենեւին ինձ չէր խնայեր, և ինչ չարութիւն որ ընէի, կ'երթայր վարժապետիս կը զրուցէր որ զիս պատժէ:

Սորվեցէք դուք ևս այս երախտապարտ իշխանէն՝ սիրել զանոնք որոնք զձեզ յանդիմանելնուն և պատժելնուն համար ձեր աչքին դուցէ գէշ կ'երևին: Խրատներն և պատիժները սերէն և շողոքորթութիւններէն աւելի օգտակար են աշակերտի մը:

Սոքերնուդ մէջ գէշ մի խորհիք ուրեմն, սի-

բերել որդեակք իմ, թէ որ ձեր վարժապետներն երբեմն անաչառութեամբ հետեւինիդ վարուքն. այլ մանաւանդ իբրեւ ձեր որդեսէր հայրը սիրեցէք զանոնք, որոնք ձեր աղէկութեան համար կը ջանան եւ հոգ կը տանին ձեզ։ Մի քանի վարժապետաց իրենց աշակերտներուն դէմ թուլութեամբ վարուիլն եւ անոնց գործած ամեն պակասութիւններուն աչք խփելը՝ դէշ եւ վնասակար է միշտ, երբ սահմանեալ խոհեմութե̃ չափէն խիստ դուրս ելնեն. եւ գիտցէք որ եթէ ձեզ մեծ ազատութիւն շնորհեն, ձեր թշուառութեան պատճառ կ'ըլլան. եւ ընդհակառակն եթէ ձեր վրայ միշտ արթուն կենալով հոգ տանին, ու նաեւ հարկը պահանջած ժամանակ յանդիմանեն եւ պատժեն զձեզ, ձեր ճշմարիտ երջանկութեան պատճառ ճամբայ մը կը բանան։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Հնազանդութեան վրայ։

Բաւական չէ ձեզ, սիրուն զաւակունք իմ, միայն պատիւ, սէր եւ երախտագիտութիւն ցուցնէք ձեր դաստիարակաց եւ վարժապետաց, այլ եւ պէտք է որ հնազանդ ըլլաք նոցա տուած խրատներուն եւ կրթութեանց։

Թէ որոնք են պատճառներն որ կը պարտաւորեն զտղայք իրենց վարժապետաց հնազանդ ըլլալ։

Վարժապետները կամ դաստիարակները ձեր առաջնորդներն են. ուստի պէտք է ձեզ որ անոնց ետեւէն երթայք։ Անոնք ձեզմէ աւելի բան գիտեն և ձեզմէ աւելի միտքերնին լուսաւորեալ է. անոր համար պէտք է անոնց խորհուրդները ձերիններէն աւելի լաւ սեպէք։ Ձեր ծնողքը զձեզ անոնց կառավարութեան յանձնելով, կ'ուզեն ևս որ անոնց հնազանդ ըլլաք դուք ամէն բանի մէջ։ Անոր համար անհնազանդութիւն մի գործած կ'ըլլաք ծնողաց դէմ, թէ որ հակառակիք անոնց կամացն՝ որ ձեր ծնողաց փոխանորդներն են։

Այս խրատունքներուս վերայ պէտք է որ ձեր միտքն աղէկ մի պառկի, թէ խիստ արդար և իրաւացի է որ դուք հնազանդ ըլլաք անոնց հրամաններուն, որոնք ձեր կրթութեան հոգն իրենց վերանին առած են։

---

Երախտապարտ իշխանի մի խելացի կրթութիւնը։

Պերկոնիոյ երախտապարտ դուքսը օր մի բարկութեամբ դէմ խօսեցած էր իւր պապուն (տէտէին), և իրենց վիճաբանութեան մէջ գլուխը տաքցած ըլլալով, բերնէն սա խօսքը փախուց թէ՝ “Տեսնենք մեզմէ ով խրատունք ունի”։ Բայց մի քանի րոպէ անցաւ չանցաւ, մտածեց

նայեցաւ որ իւր բռածը չէր փայլեր, այլ պէտք էր հաւանութիւն և հնազանդութիւն ցուցընել իւր պապուն. ուստի կրկնեց նորէն և ըսաց. «Իրաւունքը ձերն է, տարակոյս չունիմ, ինչու որ դուք ինձմէ աւելի խելացի էք»։

---

Հնազանդութեան օրինակ։

Պիւթագորի աշակերտներն իրենց վարժապետին խօսքերն իբրեւ Աստուծոյ պատգամ կը սեպէին. մինչ զի մէկը չէր համարձակեր երկբայիլ նորա բառերուն. վասն զի իւր լուսաւորեալ միտքն և համարումը բաւական փորձ էր իւր խօսքերուն. անոր համար աւանդ եղած էր աշակերտաց մէջ, թէ որ մէկմէկու բան մի հաստատել ուզէին՝ կ՚ըսէին. «Այսպէս ըսաց վարժապետը», և ամէն բան կը լմննար։ Փիլիսոփայն ուզեց որ իւր աշակերտաց մէջ լռութի մի հաստատէ, որ քիչէն քիչ երկու տարի կը տեւէր. և այն աշակերտներն որ խօսակցիլը կը սիրէին, անոնց համար մինչեւ հինգ տարի լռեկենալու պատիժ կը դնէր, որուն սիրով կը համբերէին։

Երանի թէ մեր օրն ալ տղայք այսպէս պատիւ և հնազանդութիւն ցուցընէին իրենց վարժապետաց։ Ճշմարիտն զրուցեմ, տղայք սորտանց կը հնազանդին վարժապետաց հրամաններուն, միայն թէ ուզած բաներնին դիւրին և աշակերտաց սրտին սիրածն ըլլայ. հաճութեամբ

մանկ կ՚ըլլեն անոնց, միայն թէ անոյշ խօսքեր խօսին, կամ այնպիսի ճշմարտութիւններ՝ որ իրենց անձնասիրութեան չդպչին. բայց երբ իրենց կամացն հակառակ կենան, կամ իրենց պակսութիւնները յանդիմանեն և շինել ուզեն, մէկ մ՚ալ նայիս ողջ.ք կը սկսին մռմռալ. և կը նմանին այն անմիտ մարդոց, որոնք կ՚ուզեն որ ուրիշներն իրենց մոլի գործքերը գովեն. և այսպէս խաբուելով կը մնան իրենց կուրութեան մէջ, և անկարելի կ՚ըլլայ յետոյ անոնց գիտութիւն և առաքինութիւն ստանալ:

Ի՞նչ շահ կը կարծէք դուք որ ըլլէ մէկ ճամբորդ մի, որ առաջնորդ բռնած ըլլայ իրեն ճամբան ցուցնելու համար, և ինք չուզելով նորա ետևէն երթալ, իւր ուզած ճամբաներէն քալէ՝ զոր չճանչնար: Դուք զանիկայ խենդի տեղ չէի՞ք դներ, անտարակոյս. վասն զի իւր միտքը դրած տեղն ուր որ է, հոն երթալու տեղ՝ գէշ ճամբաներու մէջ կը կորսուի: Արդ՝ այս ճամբորդն անհնազանդ տղուն օրինակ է, որ իւր վարժապետաց խելացի խրատներուն ականջները գոցելով, ինքն իր անձը կառավարել կ՚ուզէ, և իւր կամքէն ի զատ ուրիշ առաջնորդի չուզեր հետևիլ:

Կրթութիւն և վարժութիւն չընդունող տղայն կը նմանի սովորական կրակոտ ձիու, զոր մարդ կ՚ուզէ վարժեցունել: Տուէք զայն մի վարպետ ձիավարժի (ճամբազ) որ կրթէ. թէ որ կենդանին ամենևին չուզէ, գլուխը ալինա

(սէրը) ըլլայ, եւ սանձ մտիկ չընէ, բարկանայ, չուզէ քալել կամ վազել՝ ինչպէս որ տէրն ուզելու ըլլայ զինք կրթելու համար, պարապ կ'ելնեն ձիավարժին քաշած նեղութիւնները, ձին միշտ անվարժ կը մնայ, եւ մէկ բանի ալ չծառայեր: Ահա այսպէս կ'ըլլայ այն տղուն վիճակին որ մտիկ չըներ իւր վարժապետին իմաստուն խրատներուն, որ զինք կրթելու յանձնառու եղած է:

Կ'ուզէ՞ք մէկ ուրիշ նմանութիւն մի եւս բերեմ ձեզ, որ աղէկ մի հասկնաք՝ թէ որքան հարկաւոր է տղայոց հնազանդութիւնը: Ցանեցէք արտի մի մէջ, որուն հողը բնութեամբ պարարտ ըլլայ, խիստ ընտիր հունտ. թէ որ հողն իւր ներսը չընդունի զայն, թէ որ հող չառնեք ծածկել անոր վերայ՝ որ ընձիւղի, դէպ ի հովուն ցանած կ'ըլլաք, եւ չէք կրնար պտուղ մի յառաջ բերել: Այնպէս կրնամ ըսել անհնազանդ եւ կամակոր տղու մի համար: Պարապ տեղ կը ցանէ վարժապետն անոր մտաց մէջ գիտութեան եւ առաքինութեան հունտը. փուճ կ'երթան անոր տրուած խիստ օգտակար կրթութիւնները, վասն զի իրենց վարժապետաց ջանքերուն հնազանդութեամբ չհետեւելով, եւ իւր կողմէն ինքն ալ ջանք չըներով, անօգուտ տեղ կորսնցուցած կ'ըլլայ իւր ժամանակն եւ աշխատութիւնը, եւ անոնց տուած դասերն անպտուղ կը մնան:

Ջանք ըրէք, սիրելի որդեակք իմ, չահ մի

կթերու այս դասէս. և զգուշ եղիր չհետեւիլ բնաւ այն անհնազանդ տղայոց անզգամելի վարմունքին, որոնք չէին ուզեր ուրիշին գլուխ ծռել, այլ կը համարձակէին իրենք ուրիշին օրէնք տալ, Նարեկացւոյն զրուցածին պէս՝ «Աշակերտք հեղգ ի յուսանել՝ և փոյթք ի վարդապետել»։ Այս բանծ տղայոցս մէջ կան նաև այնպիսիներ, որոնց անհնազանդութիւնն և կամակորութիւնը խիստ չափազանց ըլլալով, գրեթէ անբան անասնոց կը նմանին։ Ահա ձեզ փորձի համար ասոր վերոյօք օրինակ մի տամ։

Պաղլիացի ազնուական պարոնին մէկը մէկ հատիկ տղայ ունէր, և բնութիւնը շնորհեր էր ասոր բոլոր այն ձիրքերն՝ որոնցմով տղայ մի կրնայ սիրելի ըլլալ ամենուն, բայց միանգամայն անհնազանդ և կամակոր բարք մ՚ալ ունէր, որուն չէին կրնար համբերել իւր վերակացուներն և վարժապետները. Չկրնալով ամենեւին մէկուն գլուխ ծռել, կ՚ուզէր որ ուրիշներն իւր կամաց հաւանութիւն տային. և թէ որ մէկն իրեն դէմ կենալու ըլլար, այնպէս կամակորութիւնը կը բռնէր՝ որ կարծես թէ խենդեցեր է։ Օր մի իւր հայրը դուրս ելած ըլլալով՝ խելքին այնպէս փչեց և ուզեց որ ինքն ալ դուրս ելնէ, և գոռոզութեամբ մի կը հրամայէր որ դուռը իւրեն բանան։ Բայց երբ մանկավարժ կինը (լալան) անօգուտ աւղն անոր իրաւունք հասկցընելէն ետեւ, յայտնապէս բաց իրեն թէ՝ ուզած չպիտի ըլլայ, տղայն է սկսաւ լալ և կանչ-

ուրուածէն . և չկրնալով յաղթել մանկավարժ կըն-
կան որ ուզածը չէր կատարեր, և դուռն ալ
բացուելէն յոյսը կտրելով, վասն զի բանլիքով
կղպեր էին որ չփախչի . ինկաւ գետինն և չա-
րութենէն ինքզինք գետնէ գետին կը զարնէր՝
անմտագլուխը բանած խենդի պէս ։ Այս միջո-
ցին մէջ նայիս հայրը տուն դարձաւ, և տղայն
չտեսնելով՝ հարցուց մանկավարժ կնկան թէ՝
ո՞ւր է, և թէ ի՞նչպէս կեցաւ, խելօ՞ք էր թէ
չար . և նա ալ պատմեց անոր ինչ որ ըրեր էր ։
Մարդուն սիրտը նեղանալով սրահը կը մանէ,
ուր անեղ տղայն երեսն ի վայր փռուեր պառկեր
էր . զոր չտեսնելու գալով՝ ոտքով գետնին կը
զարնէ, ձեռքերը դէպ ի երկինք կը վերցնէ, և
սրտէն խորունկ հառաչանք մի հանելով կը պո-
ռայ . « Ո՜հ, Աստուած, ի՞նչ կը լսեմ, իմ որդիս
խենդեցե՞ր է, հա՞ . և այնքան խենդեցեր է որ
կատղելու մօտի չափ ինքզինք գետնէ գետին
կը զարնէ ։ Ո՛ւ, ախտս ինձ . ուրեմն ես ասկէ
ետեւ այն քաղցր մխիթարութիւնը չպիտի ու-
նենա՞մ իմ քովս տեսնելու զաւակս, թեւերուս
մէջ զինք գրկելու, սիրելու և իմ սիրոյս օրէ օր
նոր նշաններն անոր ցուցնելու ։ Ուրեմն պիտի
տխրութիմ վռնտե՞լ զինքն իմ տընէս, բանտի մի
մէջ կապել տալ . և այն զաւակն որ իմ ուրա-
խութիւնս էր, իմ սրտիս ցաւն և երեսիս ամօ-
թը պիտի ըլլայ ։ Ո՜հ Աստուած իմ, թէ որ զիս
պատժել է միտքդ, առ ինձմէ կ՚աղաչեմ իմ հո-
գիս, այլ սիրական զաւկիս խելքը գլուխը բեր ։

Առաւել կ'ուզեմ մեռնիլ, քան թէ խենդեցած տեսնել իմ որդիս, և իմ կեանքս ցաւով մաշեցընել»:

Երբ հայրն այսպէս կը խօսէր, ցուցընելով միշտ թէ ի՛նչ յուսահատութեան մէջ է իր տղուն համար, տղայն՝ որ սեղանի մը տակ պահուըտած էր սրահին մէկ ծայրը, իր հօրն ամէն մէկ շարժուածքներուն կը դիտէր, բնութեամբ մըտիկ կ'ընէր ամէն զրուցածները. ձեզ կը թողում ալ որ մտածէք թէ ի՛նչ վիճակի մէջ էր այն ժամանակ: Կը դողար, կը կարմրէր, և չէր կրնար ինքզինք դուրս հանել: Այսու ամենայնիւ իր սրտին ցաւն այնքան սաստիկ էր, որ մէկդի թողուց ամչնալը. և ինչ ատեն իր հայրն՝ որ միշտ ոտքի վերայ վեր ու վար կ'ելնէր կ'իջնէր, աչքերը գետնին զարնելով, ետ կը դառնայր կ'երթայր տղուն պահուըտած տեղին դիմացի կողմէն, տղայն սկսաւ դողդըղալով անոր ետեւէն երթալ, մինչեւ որ իր հայրն ետեւ դառնալու ատեն, որ անդադար կը պօռար, «Ով Աստուած, իմ զաւակս, իմ սիրական զաւակս խենդեցաւ», ինկաւ տղայն անոր ոտքերն և ըսաց սաստիկ լալով. «Չէ, չէ, հայր իմ, քու զաւակդ խենդեցած չէ. մանաւանդ խօսք կու տամ քեզ որ ասկէ ետեւ խիստ խելօք պիտի կենամ»: Այս խօսքերը լսելով բարի հայրը՝ նորա վիզը կը փաթթուի, գրկին մէջ կը սեղմէ, արտասուքներով կը թրջէ և սիրալիր փայփայանքներով կը յայտնէ անոր իր հաճութիւնն և սէր-

ային ուրախութիւնը ։ Բայց առաւել մխիթարուեցաւ հայրն, երբոր աղջին խօսքին վերայ հաւատարիմ մնաց, և յետոյ խիստ զգուշ եղաւ իւր ամէն մէկ պարտաւորութիւնները հաստատ կատարելու ։

Վալմոնի կոմսին նամակներուն մէջ ևս ուրիշ այս տեսակ պատմութիւն մի կը կարդացուի, որուն չէի հաւատար՝ թէ որ շատ արժանահաւատ մարդիկներէ հաստատուած չըլլար ։

կամակորութեան զարմանալի օրինակ մի։

Տիկին մի զաւակ մի ունէր միածին, զոր այնքան կը սիրէր և կը գգուէր վերան, որ ամէն ինչ որ ուզէր՝ մէկէն կը կատարէին, և ամենեւին չէին լացըներ որ չհիւանդանայ, այնչափ որ աղջին տան մէջ պզտի բռնաւոր մի եղած էր, և իւր խօսքն յառաջ կը տանէր. իսկ թէ որ դէմ կենալու ըլլային, իսկոյն կը կատղէր կը պոռայր և կը կանչուըռտէր ։ Տիկնոջ երիկն, ազգականներն և բարեկամները պարապ տեղ խրատներ կ'ուզէին իրեն՝ թէ այս չափազանց սիրով՝ իւր աղջին գէշ պիտի ընէր ։ Օրին մէկը մայրն իւր խցին մէջ նստած ժամանակ աղջուն ձայնն ականջին կու գայ, որ բակին մէջ սաստիկ կուլայր և կատղութենէն երեսները կը ճանկռտէր, ծառայն իւր ուզած բանը չտալուն համար ։ "Չար ծառայ, պոռաց տիկինը, քրուցրնէ դու լրբ մ'ես եղեր, որ իմ զաւկիս հոգին կը հանես և ուզածը չես տար . աղէ, շուտով հնազանդէ ա-

անոր, ինչ որ կ՚ըսէ՝ ըրէ։ — Ճշմարիտ կ՚ըսեմ տիկին, պատասխանեց ծառայն, երեք օր այսպէս կանչէ պօռայ, չկրնար իւր ուզածն առնուլ»։ Այս պատասխանիս վերայ չափէ դուրս կը բարկանայ տիկինը, այնպէս որ մազ մնացեր էր ջղային ցնցում (սպազմ) պիտի գար վերան. կ՚ելնէ տեղէն, մէկ խորշէն մէկալը կը վազէ, իւր երիկը կը առնէ հոն բարեկամաց հետ մէկտեղ նստած, և կ՚աղաչէ որ իւր տունէն դուրս գայ և այն անհնազանդ ծառային շուտով ճամբայ տայ։ Երիկն ալ, որ կնկան խելքով մարդ մի էր, և իւր կնոջ վերայ չէր կրնար իշխել, ինչպէս և ոչ կինն իւր այրուն վերայ, ուսերը անկելով կ՚երթայ նորա տունէն. և իւր բարեկամները պատուհանը կու գան կը հաւաքուին՝ որ տեսնեն թէ բանին վերջը ուր պիտի կայանայ։ «Եղբ., ըսաւ տէրը ծառային, ինչպէս համարձակեցար դու դէմ կենալ կնոջս, մեր տղուն ուզածը չտալով։ — Տէր իմ, պատասխան տուաւ ծառայն իւր ծիծաղը բռնելով, ձեր տղուն ուզած բանն ինչ որ է, թող իւր սիրական մայրը տայ, վասն զի ես չեմ կրնար։ Բաւարդ ժամ չկայ, ջրի դոյլին (ղօվային) մէջ լուսինը տեսաւ, և կ՚ուզէ որ առնեմ իրեն տամ զայն»։ Այս որ լսեցին երիկն և բարեկամները սկսան խնդալէն ճաթիլ. և տղուն մայրն ալ, թէպէտ բարկութեան մէջ էր, իրեն ալ ծիծաղը բռնեց, և անցաւ իւր ըրածին. բայց շատ աղէկ եղաւ իրեն այս բանս, վասն զի ա-

տր վերայ ինքն ալ իմացաւ՝ թէ որքան գէշ կ'ընէր իւր զաւկին՝ չափէ դուրս սիրելով զայն . ուստի անկէ ետեւ սկսաւ այնքան երես չտալ անոր, խստութիւն ցուցընել և երբեմն եւս պատժել, որով եղաւ սիրելի և խելօք տղայ մի ։ Ճշմարիտ կ'ըսեմ, տղայ մի որ կամակոր և գէշ ող է, անկէց աւելի անարգ և ատելի տղայ չըլլար ։ Այս բնութիւնն ունեցող տղայոց վերայ՝ ոչ ոք չէ հոգ և խնամք ունենալ, և շատ անգամ երեսէ ինկնելով՝ իրենց արտաքոց կամայն և գլխիման թողուած են ։ Բայց ասոր հակառակ հնազանդ և խոնարհ տղայք միշտ սիրելի կ'ըլլան, զիրենք կրթելու և ուսում սորվեցընելու ալ սիրտ կ'ունենայ մարդս . ինչու որ առյդ գիտէ որ իւր տուած խրատներն և դասերը օգուտ պիտի ընեն անոր, և անոնց պտուղը օր մի պիտի տեսնէ ինք ։

Աշակերտի մի զարմանալի հնազանդութիւնը։

Փիլիսոփային մէկն իմանալով թէ իւր աշակերտներէն մէկը յանցանք մի գործեր էր, քովը կանչեց զայն և բաց անոր . "Ես քու գործած յանցանքիդ թողութիւն չեմ տար, թէ որ երեք տարի համբերութեամբ ամենէն ալ անարգանք և նախատինք չկրես " ։ Տղայն ընդունեցաւ իւր վարժապետին դրած ապաշխարանքը . և երեք տարին լմննալուն, փիլիսոփային քով գնաց որ թողութիւն առնու, ինչպէս որ կը յուսար ։ "Կեցիր, ըսաց վարժապետը, դու-

եկար որ Թողութիւնդ առնուս, բայց ես և ոչ հիմայ պիտի տամ, մինչեւ որ երեք տարի եւս քու սորկոյդ նախատինք և անարգանքներ չկըրես»: Աշակերտը նորէն հնազանդեցաւ այս երկրորդ անգամու փորձին, և հրամանը կատարելէն ետեւ՝ «Հիմայ Թողութիւն կը շնորհեմ, բայց վարժապետը, և կ'ըսէ ասկէ ետեւ Աթէնք երթալ և իմաստութիւն սորվիլ»: Գնաց հոն երիտասարդն և մտաւ փիլիսոփայի մի քով: Այս փիլիսոփային սովորութիւն ունէր իւր նոր աշակերտաց համբերութիւնը փորձելու համար նախատական խօսքեր կը զրուցէր անոնց. ուստի այս նոր աշակերտին անոր դպրատունը դեռ առջի անգամ ոտք կոխելուն և անոր իրեն դէմ ըրած նախատինքները լսելով, սկսաւ ծիծաղիլ և ձայն չհանել: Զարմացաւ վարժապետն և ըսաց. «Ես գէշ այսքան ծաղր կ'ընեմ կը նախատեմ և դու կը խնդաս»: Պատասխան տուաւ աշակերտը. «Ես երեք տարի սակ եմ տուեր անոր սոր որ զիս նախատեն. հիմայ այնպէս մարդ մի գտեր եմ որ առանց սակ մի ինձմէ պահանջելու՝ աւելի պակաս կը խօսի և կը նախատէ զիս. և չէ՞ս ուզեր որ խնդամ: — Մտիր իմ դպրատունս, կ'ըսէ փիլիսոփայն. դու կատարեալ ես և կրնաս սորվիլ մեր դաս տուած գիտութիւնները»:

Ջանացէք սիրելի որդեակք իմ, այս գեղեցիկ օրինակիս հետեւելու: Պարտք սեպեցէք ձեր վարժապետներուդ խրատները մտիկ ընելն,

որոնք ձեր ուսման և ձեր բարի վարուց համար կուտան . իրաւ քիչ մի նեղութիւն է ձեզ, բայց գիտնաք՝ որ եթէ բանելու ըլլաք, շատ յառաջ կ'երթաք գիտութեան և առաքինութեան մէջ և առատօրէն կը վարձատրիք ։

Այս ալ գիտնաք, որ այն նեղութիւններն երկար չեն տևեր . և ժամանակ պիտի գայ որ դուք ձեր գլուխն ազատ պիտի ըլլաք և հրամայող մի չպիտի ունենաք հիմակուան պէս, և վտանգի մէջ ինկնելու ևս վախ չէք ունենար ։ Իսկ հիմայ թէ որ ազատ ըլլաք, շատ գէշ կ'ըլլայ ձեզ, ինչպէս որ փորձն ալ կը հաստատէ . վասն զի եթէ տղայ մի ինքն իւր գլուխն ձգուելու ըլլայ, միշտ դէպ ի իւր կորուստը կը քալէ կ'երթայ նա ։

Վերջապէս որ և իցէ ազատութիւն՝ զոր այս աշխարհիս մէջ մարդս կը վայելէ, հետը միշտ ընդդիմութիւն մի կ'ունենայ . և թէ որ մէկն իւր ընկերաց հետ սիրով ապրիլ կ'ուզէ, պէտք է որ շատ անգամ ուրիշին կամաց խոնարհի, պէտք է անոյշ և հեզ բնութի ունենայ, պէտք է որ բան մի տեսնելու կամ լսելու ըլլայ, չտեսնելու կամ խլութեան զարնէ . և յանձնառու ըլլայ այն ամէն բաներուն՝ որ իւր անձնական պարտաւորութեանց և խղճմտանաց չդպչիր ։

Այն մարդն որ ուրիշին կամացն ամենևին հաճութիւն չտայր, այլ հպարտութեամբ կ'ուզէ որ ուրիշներն ամէն պարագայի մէջ իրեն միաբանին, նա իւր անձն ատելի կ'ընէ, և հե-

տեւապէս՝ կամ շուտ եղեր է կամ ուշ իր հը-պարտութեան և կամակորութեան պատիժը կը գտնէ ։

# ԳԼՈՒԽ ԺԴ.

## Տղայք իրենց ընկերացը հետ ի՛նչպէս պէտք է վարուին ։

Ձեր ծնողքներէն և վարժապետներէն ետ-քը կը մնան ձեր հաւասար ընկերները, որոնց հետ կը վարուիք, և որոնց հետ աւելի կապակ-ցութիւն մը ունիք. այս ընկերական կապակ-ցութիւնը պէտք է որ սրտանց ըլլայ, որպէս զի մէկմէկու վերայ ունեցած ձեր յարգն և սէրը հաստատուն ըլլայ, ուսկէ կը կախուի շատ մե-ծի մասին ձեր կենաց հանգստութիւնն և եր-ջանկութիւնը։ Այս տեղ պիտի ցուցընեմ ձեզ, սիրելի զաւակունք իմ, այն գլխաւոր պակսու-թիւնները, որոնցմէ հեռանալ պէտք էք դուք ձեր ընկերներուն հետ վարուած ժամանակ ։

---

### Առաջին պակսութիւն։

Այս ըսած պակսութիւններուս առաջինն է գոռոզութիւնը ( մաղրուրլուգ ), որով մենք ըզ-մեզ ուրիշներէն վեր կը սեպեմք, կամ անոր հա-մար որ ինքզինքնիս խիստ խելացի տեղ կը դը-նեմք, և կամ երևելի և աղնուական ցեղէ ըլ-

կայնուս համար ։ Այս պակասութիւնը՝ թող որ քրիստոնէութեան եւս գլխաւոր հակառակ է, որ կը հրամայէ ամենքնիս ալ իբրեւ եղբայր համարինք զիրար, այլ եւ մեծապէս ատելի կը ցուցընէ զմեզ մեր ընկերաց աչքին, և պատճառ կ՚ըլլանք անոնց արհամարհութիւնն ընդունելու, մինչեւ որ մենք զիրենք արհամարհելու խիղճ չենք ըներ ։

Գոռոզութեան դարման գտնող երիտասարդը։

Արեւելի վարժատան մը մէջ կրթուող երիտասարդ տղայոց հետ ազնուական տղայ մը եւս կար, որ իր ազնուութեան վրայ խիստ կը հպարտանայր, և մինչ իր անձին վրայ միշտ պարծենալով՝ կարծես թէ յերկինքէ իջած էր ։ Բայց սոր այսպէս մեծ մեծ խօսքերուն չկրնալով համբերել ընկերները, սկսան ատելութիւ նայիլ անոր երեսը ։ Այսու ամենայնիւ շատերն ալ ուսանելով թէ նորա ինքնապարծութիւնը և հպարտութիւնը թեթեւամտութեան նշանն էին, կը խղճային իրեան ։ Բայց օր մը եւս հպարտութեամբ այնքան խոշոր խոշոր բրդեց, որ ամենքն ալ սկսան սրդողիլ իրեն դէմ ։ Իր դասընկերներէն մէկն ալ, որ հասարակ մարդու մը որդի էր, և գոռոզ տղային հետը միշտ կը զուարճանայր, իր հաւասար ընկերը կարծելով, կամ սեպելով թէ դպրատան մը բոլոր աշակերտները հարուստ և աղքատ՝ ամենքն ալ հաւասար են, սկսաւ ան-

Խորապէս (Թէքլիֆսիզ) վարուիլ հետը, ինչպէս որ միւսներուն հետ կ'ընէր. բայց մեր հպարտ ազնուականը կարծելով՝ թէ այնպէս վարուելովն իր պատուէն զրկուած կը սեպուի, սրդողեցաւ և գոռոզութեամբ ու իշխանութեամբ մի պոռաց. «Այդ ինչպէս վարուիլ է, լիրբ. չե՞ս գիտեր որ ես աղայի մի զաւակ եմ»։ Այս մէկ ջուխտ խօսքով բոլոր աշակերտաց առջին խաղք եղաւ. մէկ մ'ալ նայիս ամէնքն ալ չորս կողմը հաւաքուեցան, որոնք կեղծաւորութեամբ գետնէն բարեւ տալով անոր, իւր պատուանէր անունն երկու մէկ չէին ըներ կը կանչէին ակամբն ի վայր։ Այսքանս բաւական չեղաւ, այլ քանի որ դասընկերներէն մին իրեն հանդիպէր, նոյն կեղծաւոր քաղաքավարութի կը պատուէր զինքը Պէյ կանչելով։ Վերջապէս բանն այն աստիճան հասաւ որ գոռոզամիտ տըղայն այլ չկրնալով համբերել անոնց ըրած ծաղրաբանութիւններուն, ստիպուեցաւ թողուլ վարժատունը. և գլխուն եկածովը սորվեցաւ թէ՝ մտապարծութիւնն և հպարտութիւնն ուրիշ բանի մի օգուտ չունին, այլ միայն ամենուն աչքին առջև կը ցուցնեն զանոնք՝ որ կը ցանկան ուրիշներէն վեր սեպուիլ։

Հեռու ըլլան ուրեմն ձեզմէ ամբարտաւան վարմունքներն և արհամարհոտ դէմքով մարդու երես նայիլը, որով կ'երեւի թէ ուրիշները նախատելու համար կ'ընեն. Անոյշ, քաղաքավար և քաղցրաբարոյ եղէք ձեր դասընկերներուն

դէմ. և գիտցած եղէք որ դուք անոնց հետ ինչ
կերպով որ վարուիք, անոնք ալ նոյն կերպով կը
վարուին ձեզ հետ ։ Թէ որ զիրենք պատուելու
ըլլաք, անոնք ալ զձեզ կը պատուեն. իսկ թէ
որ ատէք՝ անոնք ալ զձեզ կ՚ատեն, վրէժխնդիր
կ՚ըլլան, այնքան՝ մինչեւ ձեր քիթը կտրելնին ։

### Գոռոզ տղու մի խոնարհիլը ։

Փարիզու օրագիրը Համբուրգի մի բերնէ լը-
սելով՝ հետեւեալ պատմութիւնը հրատարա-
կած էր, ուսկէ մենք ալ քաղելով հոս կը դը-
նեմք ։ “Գոլօղայէն եա դառնալուս, կ՚ըսէ Համ-
բուրգը, Գարգասոնայէն անցայ, ուր տեղ միայն
չորս ժամ մնացի ։ Հոս պանդոկի մի մէջ նստած
կը սպասէի որ սեղան պատրաստեն. ուր տեղ
ուրիշ շատ Համբուրգներ եւս կային ։ Իմ հաս-
նելէս քիչ մի յետոյ, Փարիզու կառքով երիտա-
սարդ մի եկաւ նոյն պանդոկը. սրահէն ներս
մտաւ, փայելուչ և շնորհքով հագուած սրգ-
ուած, և առանց մէկուն բարեւ տալու՝ անցաւ
հայլիի մի դիմաց, և իւր շինծու գեղեցկութե
վերայ փքանալով և օփէրայի եղանակ մի երգե-
լով, սկսաւ բոլոր հոն եղողներուն արհամար-
հութեամբ մի դիտել ու նայիլ յոտից մինչեւ ի
գլուխն ։ Ուրիշ երիտասարդ մի եւս պարզ հա-
գուստով. սրահին մէկ կողմը նստած գիրք մի
ձեռքը կը կարդայր բոլորովին խելքն անոր տա-
լով, և ամենեւին աչքը վեր չէր վերցըներ երի-
տասարդին նայելու. որուն դժարը գալով անոր

այնպէս հող չըլնելն և իրեն չնայելը, կը մտե-
նայ քովը, կէս բերան բարեւ մի կուտայ ու
կ'ըսէ. «Հրամանքնիդ կը կարդա՞ք հոգ: — Հը-
րամերէք, ինչպէս որ կը տեսնէք, պատասխան
կուտայ անոր: — Ի՞նչ գիրք է կարդացածնիդ,
թէ որ հարցընելս ամօթ չէ: — Աստուածաբանու-
թեան գիրք է: — Ի՞նչ է անունն, ի՞նչ նիւթի
վերայ է, որուն այսքան խելքերնիդ տուած էք,
և ամենեւին ընկերութեան չէք խառնուիր: —
Հետաքրքիր գուզն է, պատասխանեց կարդա-
ցողը՝ քթին տակէն խնդալով»: Հարցընողը
խիստ աղէկ իմացաւ նորա միտքը, կասկարմիր
կտրեցաւ երեսն, և թոթովելով մի ըսաց անոր.
«Կրնայի՞ գիտնալ արդեօք ձեր անունն, որ այս-
պէս արհամարհութեամբ պատասխան կուտաք
ինձ: — . . . ին ասպետն եմ, որ . . . այս ինչ
գունդը (թագուհը) կ'երթամ: Դուք իմ ա-
նունս պէտք է որ ճանչնաք: Դուլինէլմա ձեր հայ-
րը շատ անգամ կուգայր իմ տունս զանազան
կերպասներ ծախելու»: Ասոր վերայ սրահին
մէջ որքան մարդ որ կայր՝ ամենքն ալ քրքըրոց մի
ձգեցին: Պարոնին երեսին գոյնը նետեց, և ա-
ռանց բերան բանալու աներեւոյթ եղաւ անկէ ։։

Համեստ թագաւորը:

Ակադոկլէս Սիկիլիայի թագաւորը բրուտի
(չէօմլէկճիի) մի տղայ էր, բայց իւր անձնա-
կան արժանաւորութեանց համար թագաւորա-
կան իշխանութեան հասեր էր: Այս առաքինի-

ծագմանն իւր ստորին աստիճանէ ըլլալը չմոռնալու համար, կ'ուզէր որ ամեն օր իւր սեղանին վերայ դրուին ոսկիէ և արծըթէ ամաններուն հետ մէկտեղ հողէ ամաններ եւս, որոնք իւր սեղանակից երիտասարդներուն ցուցընելով. « Ահա, կ'ըսէր անոնց, այս ամաններին ես իմ ձեռքովս կը շինէի ժամանակաւ: Թէ որ հիմակուան գործածածներս ատոնցմէ աւելի սուղ և պատուական են, և թէ որ կաւին տեղը հիմակ ոսկի և արծաթ կը բանեցընեմ, այն իմ անձանց աշխատութիւններուս և իմ քաջութեանս արդիւնքն է »:

Օրինակ ազնիւ համեստութեան:

Փոլ սապէան, որ խեղճ լուացող կնկան մը տղայ էր. աղքատ նաւակի մը մէջ ծնաւ երբ սակալի փոթորիկ մը կ'ըլլէր: Երբոր մեծցաւ նա, առաջ նաւու մանչ (միջօ) եղաւ, և յետոյ մինչեւ ծովակալութեան աստիճան հասաւ: Օր մը Ափրիկայի նաւահանգիստը ժուռ գալով նաւարանի մը քանի պաշտօնատարաց հետ, նաւաստի մը տեսաւ, որ իւր հին բարեկամն էր, և կը ցանկայր այլոց պէս զինք տեսնելու, այլ չէր համարձակէր քով մօտենալու: Փոլ սապէան իմացաւ նորա միտքը, մօտեցաւ քովը բարեկամաբար և ըսաւ. « Ինչու հեռու հեռու կը փախչիս ինձմէ. գուցէ կը կարծես դու՝ թէ բաղդը մոռցընե՞լ տուաւ ինծի իմ բարեսիրտ բարեկամներս »: Ետքն իւր հետն եղող մարդկանց դառ-

նալով. «Պարոններ, ըսաւ անոնց, ահա իմ հին ընկերներուս մէկը։ Թէ որ բաղդն ինծի յաջող և անոր հակառակ գնաց, ես այս բանիս համար սորա վերայ ունեցած յարգս չեմ պակսեցըներ և առջի աչքովս կը նայիմ։ Համբերեցէք մի-քիչ որ անոր հետ առանձին բերան առ բերան խօսակցիմ»։ Ամենքնին մէկէն զարմացան անոր այնպէս ազնուական և խոնարհ վարմունքին վերայ։

Ամենուն քավ առնելի են այն մարդիկն որ կը ջանան ծածուկ պահել իրենց առջի անարգ աստիճանին, և իրենց անմիտ փառասիրութեամբ ծաղր և ծանակ կ'ըլլան ամենուն։

---

Երկրորդ պակսութիւն։

Երկրորդ պակսութիւնն, ուսկէ պէտք էք հեռանալ, այն գէշ սովորութիւնն է, որ առաւել տղայոց վերայ կը տեսնուի, այսինքն ուրիշին յանցանքն իւր ընկերներուն յայտնել։

Անմիաբանութիւնը դժոխային կատաղի կերպարանօք կը նկարագրեն, ձեռքը վառած փայտ մի, և գլխուն վերայ մէկմէկու խառնուած անհամար օձեր, որոնք ամեն կողմ իրենց ատելութեան թոյնը կը թափեն։ Այս գործքն է միայն ամենուն սրտին մէջ անմիաբանութիւն և թշնամութիւն ցանել, ուստի ամեն մարդ բանսարկուի տեղ դնելով զինք, կ'ատեն և քովէն կը փախչին։

Բայց թէ որ մէկը, որ ձեր վերայ իշխանու-

թիւն մի ունի, այսինքն կամ վարժապետնիդ և կամ՝ հայրերնիդ՝ գաղտուկ հարցընելու ըլլայ ձեզ այս ինչ տղուն կամ մարդուն վերայօք լըսած յանցանքները, զոր դուք գիտցած ըլլաք կամ կարող ըլլաք իմանալու, պէտք չէ այն ատեն ծածուկ պահել անորմէ և լուռ կենալ։ Վասն զի այսպիսի պարագայի մէջ պարտաւոր էք գիտցածնիդ խօսել, որպէս զի մոլութեան առջեւն առնուի. թէպէտ եւ այսպիսի առիթներու մէջ զգուշութիւն և խոհեմութիւն պէտք է բանեցընէք որ միայն ձեր գիտցածը խօսիք, և ամենեւին երկբայութիւն ունեցած չըլլաք անոր վերայ։

Ասկէ ի զուր պէտք չէ ուրիշին պակասութիւններուն խառնուիլ և քննիչ ըլլալ, այլ միայն նայեցէք որ ձեր ունեցած պակասութիւնները ճանչնաք և շտկէք զանոնք. վասն զի մարդս իւր պակասութիւններուն վերայ կոյր կ՚ըլլայ, և սովորաբար ուրիշին ունեցածները կը տեսնէ։

Նաեւ չէ թէ ուրիշին պակասութիւնները միայն պէտք է որ ծածուկ պահեմք, այլ նաեւ մեզ տրուած գաղտնիքները։ Վասն զի թէ որ զանոնք յայտնելու ըլլամք, մատնութիւն ըրած կ՚ըլլամք անոնց. և ասկէ աւելի կշտամբութեան արժանի և ատելի բան չըլլար. բայց դուք նայեցէք որ տղայոց մէջ ասկէ հասարակ բան չկայ։ Առանց մտածելու՝ ինչ որ տեսնեն և լսեն, այլոց կը պատմեն, և իրենց պատուիրելու եւս ըլլան՝ թէ ամենեւին մէկուն բերան չբանան,

անոնց պատուէրն ալ չեն բռներ, թէպէտ եւ խօսք կուտան մէկուն չյայտնելու։ Ինչ մարդիկ գտնուեր են որ իրենց տրուած գաղտնիքը չյայտնեն, թէպէտ եւ խիստ վերանին ինկած ըլլան։ Հռովմայեցւոց պատմութեան մէջ այսպիսի օրինակ մի կը կարդացուի, որ շատ գեղեցիկ ըլլալուն կ'ուզեմ այս տեղ դնել։

### Հռովմայեցի երիտասարդի մի սքանչելի խելացիութիւնը։

Ատենօք սովորութիւն կար Հռովմայեցւոց մէջ, որ ծերակուտի անդամներն խորհրդարան գացած ժամանակ՝ հետերնին կը տանէին իրենց որդւոց մէջէն նախծինները, թէպէտ եւ տասն և չորս տարին դեռ լմնցուցած չըլլային։ Օր մի խիստ հարկաւոր գործի վերայ խորհուրդ կ'ընէին. բայց նոյն օրը չկրնալով որոշել, պէտք եղեր էր հետեւեալ օրուան ձգել. ուստի մէջերնին խօսք դրին որ ամենեւին մէկուն չխօսին, մինչեւ որ գործը վճռաբար չորոշուի։ Փաբիրիոս անուն պատանին նոյն օրն իւր հօր հետ ժողովին մէջ կը գտնուէր, և տուն դառնալուն՝ հարցուց մայրը, թէ ժողովին մէջ այսօր ինչ բանի վերայօք խորհուրդ եղաւ։ Պատասխան տուաւ տղայն, թէ արգիլեալ է իրենց որ ամենեւին որ և իցէ մէկու չխօսին։ Այս մէկ խօսքս մօրն այնքան հետաքրքրութիւնը շարժեց, որ տղայն որքան հաստատ կը կենայր և չէր ուզեր խօսել, մայրն այնքան վերան ինկաւ որ զրուցել տայ։ Վերջապէս պատանին տեսնելով որ ճար

չկայ , միտքը դրսու որ խոհեմութեամբ ուրիշ մէկ սուտ մի չխօսէ . և ըսաց իւր մօրը . "Այս օրուան ժողովին մէջ խորհուրդ եղաւ , թէ՝ արդեօք հասարակապետութեան ո՞րն աւելի օգտակար կրնայ ըլլալ , էրիկ մարդոց թողուլ որ երկու կնիկ առնուն , թէ կանանց՝ երկու էրիկ առնուն ։ Մայրն այս լուրը լսելուն պէս տարակուսանքը զինքն առաւ , և անմիջապէս տունէն դուրս ելնելով , թռաւ գնաց բոլոր իւր դրացիներուն , բարեկամուհիներուն իմաց տալու ։ Հետևեալ օրն ի՛նչ կը նայիս , բազմաթիւ Հըռոմայեցի կանայք եկան խորհրդարանին չորս դին պատեցին , որոնք արտասուքն աչուընին սաստիկ կ'աղաչէին ժողովի անդամներին , որ ամենեւին բան մը չորոշեն առանց անդամ մի իրենց մտիկ ընելու ։ Խիստ զարմացաւ ծերակոյտն , և հարցուց թէ այս կնիկ մարդիկ խելքերնին թըռուցե՞ր են , և թէ իրենց ուզածն և միտքերնին ինչ է ։ Փաբիրիոս պատանին եկաւ խորհրդարանին մէջտեղ կանգնեցաւ , և պատմեց իւր մօրն ըրած թախանձանքներն , և ժողովին գաղտնիքը չյայտնելու համար բանեցուցած վարպետութիւնն , և անանկով իւր մօր հետաքրքրութիւնն անցընելը ։ Ծերակոյտը գովեց նորա հաւատարմութիւնն և խելքը , ու վճռեց որ անկէ յետոյ ծերակուտի անդամներէն և ոչ մին իւր հետ բերէ այն պատկառելի ժողովին մէջ իւր որդին Փաբիրիոսէն ի զատ , որ իւր փառաւոր գործքովը գովելի եղաւ բոլոր Հռովմայեցւոց քով ։

Երրորդ պակսութիւնն, ուսկէ զգուշանալ պէտք է ձեզ, խստութիւնն և բարկութիւնն է:

Տղայոց մէջ շատ կը գտնուին խօսք չվերցունողներ, որոնց՝ ոչինչ խօսք մի ըսուցելու ըլլայ մարդ՝ մէկէն կը բարկանան, կուլան և կռիւ կը հանեն. կը նմանին այն քարերուն, զորոնք մէկ մէկու զարնելով, կայծեր կը հանեն. քիչ մի դէմ՝ կենալու ըլլաս իրեն, և կռիւ ծագելու պզտի պատճառ մի գտնելնուն՝ կը սկսին բորբոքիլ, կրակ դառնալ և բերաննէն եղած գէշ խօսքերն և հայհոյութիւններն ականջնին չգար: Բայց ձեռքերնին ի՛նչ կ'անցնի արդեօք, ոչինչ. այլ ընդհակառակն իրենք կը վնասին, ինչու որ ուրիշները կը գրգռեն և պատճառ կուտան անոնց զիրենք ծաղր ընելու. վասն զի կը տեսնեմք ափորձաբար որ կատակներն ո՛վ որ իր վերան առնու՝ անոր կը վնասէ. և մէկ անգամ որ մէկը դպչելու խօսք մի եղած ժամանակ ինքն իր վերան առնու բարկանայ. բաւական է. այլ ուրիշները կըսկսին անոր ետեւն ինկնիլ, և երկու մէկ չէն ըսեր կը կրկնեն նոյն խօսքը. և իրենց զուարճութիւն մի կ'ընեն:

Ուստի թէ որ մէկը սիրտ ծակող կծու խօսք մի ըսուցելու ըլլայ ձեզ, այնպէս խնդում երեսով մի ընդունեցէք, որ նա ալ գիտնայ թէ կատակ և ծաղրաբանութիւն վերցընող և հոգ չընող էք: Այս բանս շատ հարկաւոր դաս մի է՛

ծառաներէն մին գալով և վերայի հագուստէն խաբուելով իւր ընկերը կը կարծէ, որու հետ խիստ բարեկամ էր. կամաց կամաց քով կ'երթայ ետեւէն, և կռնակին ամուր հարուած մի կ'իջեցընէ, ու խնդալով մէկդի կը քաշուի։ Մարաջախտն է յանկարծակիի կուգայ, ետեւը կը դառնայ որ նայի թէ ով է, և տեսնելով բերանը չբանար։ Ծառայն երբ կը ճանչնայ իւր տէրն, խելքը գլխէն կ'երթայ, և դողալով տիրոջ ոտքը կ'ինկնի ու կ'ըսէ. "Թողութիւն ըրէք, տէր իմ, իմ ընկերս Գէորգը կարծեցի զձեզ"։ Պատասխան տուաւ մարաջախտը զարկած տեղը շփփելով. "Յանցանքը ձեռքինդ է՝ և ոչ աչքերուդ, վասն զի քու ընկերոջդ ալ ծանր պիտի գար այդ կերպով բարեւ տալը. և ան ալ ըլլար՝ պէտք չէր այսպէս ամուր զարնէիր"։

Այս մարդուս տուած խրատը ձեռքի կատակի վերայ էր, իմ խօսքս ձեզ լեզուով եղած կատակներու վերայ է։ Չըլլայ որ չափէն աւելի սիրտ ծակող ըլլան անոնք, այլ իբրեւ առակ մտքերնիդ պահեցէք այս բանս թէ՝ Եւ ոչ կատակ ընելու ժամանակ պէտք է մէկուն ձանձրութիւն տալ։

Այս կանոնս պահեցէք և ամենուն սիրելի կ'ըլլաք։ Եւ թէ որ, Աստուած չուցընէ, ձեր հաճոյից (քէֆէրնուդ) հետեւելով, երգիծական խօսք մի ըսելու ըլլաք մէկուն, գիտնաք որ նախ դուք անոր պատիժը կը կրէք։

Պատիժ կրող ծաղրաբանը։

Պատմութեանց մէջ կը կարդանք թէ Դէօկրիտոս անուն փիլիսոփային մէկը, Անտիգոնոս թագաւորին կը դժարցնէ, որուն մէկ աչքը կոյր էր. և թագաւորը կը խոստանայ թողութիւն տալ անոր, միայն թէ իւր առջեւն ելնէ անգամ մի։ Փիլիսոփայն խիստ վախնալով թագաւորին բարկութենէն, չուզեց անոր դիմաց ելնել երկար ատեն։ Այսու ամենայնիւ իւր բարեկամներն այնքան ըրին՝ որ մերձաւորես երթալու եղաւ։ Բայց պալատին մօտենալու ժամանակ, իւր հետ եղողներուն մէկը՝ տեսնելով թէ նորա սրտին մէջ վախը կը մնայ, «Յառաջ գնա, բայց, մի վախնար՝ մինչեւ որ թագաւորին աչուըներուն երեւաս, վասն զի անիկայ քեզ թողութիւն պիտի տայ։ — Վա՜յ ինձ, պատասխան տուաւ այն ժամանակ Դէօկրիտոս, թէ որ մինչեւ թագաւորին աչուըներուն չերեւամ, թողութիւն չպիտի գտնեմ, ափսոս, իմ բանս լմնցած է»։ Այս պատասխանովը՝ ծաղր ընելու համար յաջնակին կը բանեցընէ աչուըներուն ըսելով. և որովհետեւ մէկ աչք ունէր թագաւորը, անոր համար անկարելի էր որ անոր երկու աչուըներուն մէկէն երեւայ, ուստի թողութիւն գտնելն ալ անկարելի սեպելով կ'ափսոսայր։ Բայց այսպէս անտեղի երգիծաբանութիւնն իրեն շատ սուղ նստաւ, վասն զի թագաւորին ականջն հասնելով, այնքան բարկա-

ցաւ՝ որ հրաման հանեց անգթութեամբ զինք մեռցնելու ։

Թէ որ կատակաբանութիւնն այսպէս մեծ պատիւ չըներ միշտ մարդուս գլխուն, այլ ա֊նով աւելի կ'ըլլայ մարդս ուրիշներուն աչքին ։ Օտարական երկրին այնպիսի բնաւորութեան տէր կ'ըլլայ, որու վերայ ամէն մարդ կը կա֊կածի և ամէնքն ալ կը վախնան. ընկերութեան եւս պատիւն սեպուած է. և բաւական է գիտ֊նալ՝ որ այնպիսին ամէնուն մէկուն պատիւը չսեպեր. ուստի և ամէն մարդ առիթ մի պա֊տահելուն կ'ուզէ որ մէկէն փոխարէնն անոր հատուցանէ ։

կատակաբանութիւն ընելէն յառաջ եկած գէշ հետեւանքներ։

Գուլիէլմոս Անգղիոյ թագաւորը խիստ գիր֊նալէն փառաւորչ (հաստամիջնց) ըլլալով, շատ ժամանակէն ի վեր էր որ անկողինէն չէր ելներ. և միշտ դեղեր կ'առնոյր որ նիհարնայ ։ Փիլիպ֊պոս Ա. Գաղղիոյ թագաւորը կատակ ընել ու֊զելով, իւր պալատականներուն խնդալով մի հարցուց՝ թէ երբ պիտի ծնի այս թագաւորը ։ Այս կատակը պէտք էր որ լսողներուն ծիծաղը միայն շարժէր, բայց անոր տեղ սաստիկ պատե֊րազմի պատճառ եղաւ ։ Գուլիէլմոս բնութք բարկացող ըլլալով, այսպէս պատասխան ըրաւ Փիլիպպոս թագաւորին. "Երբոր ես զաւակ բե֊րեր ըլլամ, ծննդական օրերս պիտի գամ Փա֊րիզու Սանդա Ճէնէվիէֆֆա քաղաքն անցընեմ

տասը հազար ոսկիաւորներով. ըսաց՝ և խօսքին վերայ կեցաւ. եկաւ անձամբ Նանդէս քաղաքը պաշարելու, նեղը խոթեց զայն, և յետոյ մախիր դարձուց. և դուցէ իւր զօրքերով մինչև փարիզ կուգայր կրակի և արեան մէջ ձգելու քաղաքը, թէ որ մահն իւր առջևը վրէժխնդրութեան արգելք չըլլար:

Ծաղրաբան մարդու մի դէմ ցուցուած զուարճալի կատակը:

Ատենօք Մալթայի ասպետները մէկտեղ ժողովուած խորհուրդ կ'ընէին՝ թէ ինչ կերպով Օսմանցւոց վերայ պատերազմի ելնեն, որոնք անթիւ զօրքերով իրենց դէմ կուգային: Ասպետներէն մին Սամփսոն կը կոչուէր և խիստ կարճահասակ մէկն էր: Հոն գտնուողներէն մէկը ծաղր ընելով զայն՝ ըսաց. «Պարոններ, ինչ տարակուսեր մնացեր էք. չէ՞ որ Սամփսոն մեր մէջն է: Անիկայ կրնայ բոլոր Օսմանցւոց դէմ ելնել և յաղթել անոնց»: Այս խօսքիս վերայ բոլոր ժողովն սկսաւ ծիծաղիլ. բայց կարճահասակ ասպետն իսկոյն պատասխան տուաւ զինք ծաղր ընողին. «Շիտակ է ըսածդ, պարոն, բայց այդ բանը գլուխ տանելու համար, պէտք է որ քու ծնօտիդ (1) մէկն ինծ տաս, այն ժամանակ կը տեսնես թէ ինչ հրաշքներ կը գործեմ»:

---

(1) Յայտնի է ամենուն որ Սամփսոն փղշտացիներէն անհամար հոգի մեռցուց իշու մի ծնօտով (չենէով):

### Չորրորդ պակասութիւն։

Չորրորդ պակասութիւնն, ուսկէ դուք խիստ զգուշանալ պէտք էք, չարասրտութիւնն է։ Կը գտնուին երբեմն այնպիսի տղայք, որոնք կարծես թէ ուրիշներուն պատիժ ծնած են։ Կը նմանին անոնք օձի և չար ճճիներու, որոնց քով մարդ մօտենալու որ ըլլայ, մէկէն կը խայթեն. և ասոր համար է որ այսպիսի տղայոց՝ օձ ու կարիճ կը կանչեն։ Կարծես թէ ամենևին ուրիշ հոգ մի չունին, այլ խելքերնին միտքերնին այն է թէ ինչ կերպով նեղութիւն և միշտ հասցունեն իրենց ընկերներուն. և երբ միտքերնին դըրած չարութիւնն ուզածնուն պէս յաջողելու ըլլայ, այն ժամանակ սրտերնին կը հանգչի և կ'ուրախանան։

Այսպիսի չարասիրտ մարդիկ խիստ քիչ գըտնուելուն համար չեմ յուսար որ դուք ևս այնպէս ըլլաք։ Բայց թէ որ դժբախտութեամբ կը տեսնէք որ սրտերնիդ կ'ուզէ այնպէս չարութիւններ ընելու, ձեռքերնիդ եկածէն աւելի ջանք ըրէք զձեզ զսպելու։ Իսկ թէ որ ինքզինքնիդ թող տալով այս պակասութիւնը գործելու ըլլաք, անշուշտ գլխունուդ փորձանքը կը գըտնէք, և ուրիշին դէմ ըրած չարութիւննիդ՝ կամ շուտ և կամ ուշ ձեր գլուխը կու գայ։

### Իւր չարութեան պատիժը գտնող տղայն։

Տաս տասուերկու տարեկան տղայ մի, խիստ

գլխէ ելած և չար, որ մի հօր հետ գեղ կ'երթայ. բայց սիրտը նեղանալուն չգիտէ թէ ինչպէս անցունէ այն օրը. ուստի մտածեց գեղի խեղճ տղայոց հետ խաղ մի հնարել. կանչեց՝ զա-նոնք իւր գլուխն հաւաքեց, և ամէնուն սիրան ընելէն ետև, անոնց նման ըսեց զանոնք իւր պզտի կառքին առջև, զոր հետը բերած էր, և ինք մէջը նստելով ուզած տեղը կը քշեցու-նէր: Գեղացի տղայք բնականապէս փախկոտ ըլլալով չկրցին դէմ կենալ անոր, վասն զի չէ թէ միայն անոր Պարոն անունէն կը քաշուէին, հա-պա իրենց հետ խրոխտալով ( հէօքիւմով ) ալ կը խօսէր: Ուստի թողուցին զիրենք որ կառքին լը-ծէ, և ետևնէն կը քշէր իւր Սէտրօ անուն մեծ և ուժով շունը, որ այս ծառայութեան մէջ խիստ սովրած էր. և որովհետև խեղճ գեղացիները (որոնց համար պարոնը՝ իմ՛ երկու-ոտքով ձիերս են, կ'ըսէր,) մեծ շան պէս աչքա-բաց և յաջողակ չէին, անոր համար անգթութը կը չեխէր զիրենք սաստիկ. և երբ կը տեսնէր թէ խօսքով գլուխ չելնէր, խարազանով ալ կը զարնէր: Փուճ տեղը կը սօսային կուլային ու-զարմէլինները, ինչու որ տղայն աւելի իւր ան-գթութիւնը կ'աւելցնէր, և անոնց արտասուք-ներուն վերայ մեղքընալու տեղ՝ կը խնդար բարձր ձայնով:

Սոր այսպէս սոսկալի չարութեան վերայ բոլոր տղայք մէկէն կատղեցան, դժարնին եկաւ, և գեղի միւս երիտասարդ տղաքներուն խնց

տալով, մէկտեղ հաւաքուեցան ամէնքնին ալ՝ որ աղէկ վրէժ մը առնուն անկէ։ Ելան նոյն ատեն՝ ուր տեղ բռնաւոր (զօրպա) տղայն իր կառքը տարեր էր նորէն սկսելու անգութ խաղը, և զանոնք տեսնելուն պէս հրամայեց որ զան լուծին տակ մտնեն և կառքը քաշեն. բայց նոքա փոխանակ հնազանդելու՝ վաղեցին ամէնքնին մէկէն վրան թափեցան, բռնեցին զինքն և իշու նման սայլին առջեւ լծեցին։ Յետոյ մէջերնէն զօրաւորը սանձը ձեռքն առաւ, սկսաւ խանչել տօսալ որ քալէ. բայց տեսնելով թէ մի, ափի չըներ, «Քալէ տեսնեմ», ըսաւ, շուտով փազէ», բաց ու եսեւէն խարազանի հարուած մ՛ալ ուսերուն իջեցուց։ Միւս տղաքն ալ ասոր հետեւեցան, և իրենց երկու ոտքով ձիու վրայ կարկուտ պէս բռունցքները (եումրուխները) մէկը կ'ընէր՝ մէկը կ'իջնէր։ Կուլար կ'աղաղակր ողորմ պարոնը. բայց ի՞նչ օգուտ. վասն զի ամէնքն ալ զինք ծառը կ'ընէին, ինչպէս որ ինքն ալ զանոնք ըրած էր. և մէկուն հողը չեղաւ անոր լացերն ու պօռալները, այլ կը խընդային վրան։ Վերջապէս իրենք ալ յոգնեցան, քակեցին կառքէն և թողուցին որ երթայ։ Կառղուլթենէն կը դողար և ինքզինք կ'ուտէր տղայն, բայց տեսնելով թէ իր կարողութիւնը չկրնար օգտէ անոնցմէ վրէժ առնելու, մտածեց երթալ իր հօր գանգատիլ։ Հայրը գիտուն և խելացի ըլլալով, ուզեց աղէկ մը իմանալ իր տղուն կերած ծեծերուն ստոյգ պատճառը.

ուստի մէկը խորհեց իրեն կանչել տուաւ գեղին տղայքը, և պարտաւորեց զանոնք որ անկեղծութեամբ չխօսելը զրուցեն իրեն՝ թէ ինչու համար իւր տղուն հետ այնպէս բարբարոսութեամբ վարուեցան ։ «Տէր իմ, ըսաց մէջերնէն աւելի սրտոտը, քու տղադ ալ, այն պարոնիկը, մեր ըրածին երեք պատիկն ըրաւ մեզ․ և մենք՝ չխօսելը զրուցեմ, դեռ չկրցանք ինչպէս որ պէտք է փոխարէնն անոր ընել․ վասն զի անորմէ մեր կերած ծեծը խիստ շատ և սաստիկ էր, և մենք մէկ անգամ միայն տուինք իրեն իբրեւ արդար պատիժ ։ — Թէ որ այդպէս է, պատասխան տուաւ հայրն, ինչպէս որ չեմ երկբայիր ես ալ, միայն մէկ բանի համար կը յանդիմանեմ զձեզ, որ դուք ձեր գլխուն ուզեցիք վրէժխնդիր ըլլալ անոր, որպէս թէ ես բաւական կարողութիւն չունէի և չէի կրնար պատժել իմ տղայս ։ Բայց որովհետև ալ բան մի է եղեր է, գացէք ուրեմն, խելքերնիդ գլուխնիդ պահեցէք, և նայեցէք որ իմ զաւկէս աւելի խելօք կենաք, որ իւր անխելքութեան պատիժն գըտաւ ձեզմէ ։» Ետքը խոժոռ դէմքով մի իւր որդւոյն դառնալով, «Որդեակ, ըսաց անոր, և խրատ ըլլայ քեզ անոնց ըրածը. և որովհետև իմացար հիմայ թէ չար տղայք կամ շատ կամ ուշ իրենց չարութեան պատիժը կը կրեն, աստի միտքդ բեր միշտ որ երջանիկ ըլլալու միմիայն միջոց բարի և մարդասէր ըլլալն է ։»

Այս խելացի հայրն իրաւունք ունէր այս-

այս զուցելու․ վասն զի բարի վարմունքով և անոյշ լեզուով միայն կրնանք շահիլ անոնց սիրտն՝ որոնց հետ կը կենցաղավարինք․ և թէ որ մարդ կ՚ուզէ ինքզինք ուրիշներուն սիրցընել, պէտք է որ նախ ինք սիրէ զանոնք․ և իւր սիրելը յայտնի ընելու համար՝ բաւական չէ որ իւր սիրոյն վկայութիւնները երեսանց ցուցընէ, այլ պէտք է մանաւանդ անոնց սիրտը հաճեցնել արժանաւայել և պարկեշտ գործքերով․ և երբեմն ալ, թէ որ հարկաւոր է, անոնց կամքը հաճեցնելու համար իւր անձնական շահը մէկդի թողուլ։

Պզտի պարգեւները բարեկամութիւն կը ծընանին, կ՚ըսէ առակը։ Ընդհակառակն՝ ընկերին պզտի պակասանքը չներելը, և այն ալ բաւը բարեկամութիւնը կը տկարացընէ և կը քակէ․ վասն զի իւր ընկերէն ամէն ինչ խնդրելով, և իւր սիրած մարդուն ամէն խօսքին չէ ըսելով, յայտնի կը ցուցընէ՝ թէ անկեղծ և ճշմարիտ սիրով չսիրէ զանիկայ։

Ինչ որ բարեկամներու վերայօք զուցեցինք, աւելի կը յարմարի եղբարց․ վասն զի եղբայրութեան կապը՝ բարեկամութեան կապէն աւելի զօրաւոր է։ Ձեր եղբայրքն և քուերքը չէ թէ միայն ձեր ընկերներն են, այլ մանաւանդ՝ ինչպէս կ՚ըսէ սուրբ Գիրքը, ձեր մարմինն և ձեր արիւնն են, և ձեզ նման ուրիշ մի են։ Ուրեմն դուք ձեր աղէկութեան համար որքան հոգ որ կը տանիք, այնքան ալ անոնց համար տանիլ

պէտք էք ։ Զգուշութեամբ դիտելու էք նաեւ որ անոնց ամենուն վնաս մի չհասցընէք և դը-ժարին գալու բան մի չընէք, այլ պիտի նայէք որ անոնց հաճելի և շահաւոր բան ընէք ։ Կարճ խօսքով՝ այնպիսի բաներ պիտի ընէք անոնց, ինչ որ կ'ուզէք որ անոնք ալ ձեզ ընեն ։

Անանկով ինքզինքնիդ կը սիրցընէք անոնց, և կատարեալ միաբանութեամբ կ'ապրիք հետերնին ։ Չըլլայ ձեր մէջ խռովութիւն, այլ առաջին քրիստոնէից պէս զիրար եղբայր սեպելով՝ միայն մէկ սիրտ և մէկ հոգի ունեցիք, և տամ մէկզմէկ երջանիկ կ'ընէք ։ Բայց փոխանակ պարտաւոր եղած բարեկամութիւնը հաւատութիւնն և պատիւն անոնց ցուցընելու, իբրեւ բնութենէ դուրս մարդիկ՝ չըլլայ որ ներհակութեան և մինչեւ ատելութեան նշան ցուցընէք, վասն զի այսպէս ընելնիդ, գիտնաք որ անոնք ալ նոյն աչքով ձեզ կը նային. անկէ յետոյ անմիաբանութիւնը մէջերնիդ կը մտնէ. և անոր հետ ո՞րքան և ո՞րպիսի չարիքներ կուգան, այն յայտնի է ։

Աստուածաշնչին մէջ կարդացիք տեսաք որ Կայեն իւր եղբօրն Աբելին դէմ նախանձելով, իւր ձեռքովն սպաննեց զայն ։ Տեսաք նաեւ որ այս նախանձով Յակոբայ որդիքն անգթութի իւրենց Յովսէփ եղբայրը գերիի պէս ծախեցին ։ Ահա, ո՛վ սիրուն որդեակք, մինչեւ ո՞ր աստիճան կընայ տանիլ զձեզ ատելութիւնն և նախանձը, թէ որ այն գազանաբարոյ եղբարց պէս՝

դժբախտութեամբ ձեր չար կիրքերուն հետեւելու ըլլաք ։ Զգուշ կեցէք ուրեմն, որ չըլլայ թէ անոնց ատելի փորձանքը ձեզ օրինակ առնուք ։ Ս. Յակոբին նմանելու ջանացէք, որ իւր եղբարց ատելութեան փոխարէն սէր ցըցուց, անոնց չար փորձանքին տեղ բարիք ըրաւ. և թէպէտ ձեր եղբարքն և քուերքը ձեզ դէմ հակառակութիւն մի ցուցնեն, դուք նայեցէք որ միշտ բարիք ընէք անոնց ։ Թէպէտ ձեր բարութիւնն անոնց ատելութեան չյաղթէ, այլ գիտնաք որ դուք միշտ քաղցր հաճութիւն մի կը զգաք ձեր պարտաւորութիւնը կատարելով, և մարդկանց աչքին յարգելի և Աստուծոյ առջև հաճոյ կ՚ըլլաք ։

# ԳԼՈՒԽ ԺԸ.

Թէ ի՛նչպէս պէտք է վարուիլ աղքատ աշխատաւորաց հետ, և ի՛նչպէս ողորմութիւն ընելու է անոնց ։

« Որդեակ իմ, ողորմութիւն տուր քու ապրանքէդ. չըլլայ որ մէկ աղքատէ մի երես դարձընես, եթէ կ՚ուզես որ Տէր Աստուած ալ իւր երեսը քեզմէ չդարձընէ ։ Որչափ կրնաս՝ մարդասէր եղիր ։ Թէ որ հարստութիւնդ շատ ըլլայ՝ շատ տուր, թէ որ քիչ՝ քիչ տուր առանց տժգոհելու, յիշելով թէ Աստուած ալ ամենեւին անվարձ չթողուր ողորմած մարդը » ։

Ահա այսպէս կ'աղաչէր միշտ Տօբիթ իւր տղուն. և ես կրցածիս չափ ձեզ կ'աղաչեմ, սիրտուն որդեակք իմ, ողորմեցէք աղքատին, օգնեցէք դժբաղդներուն, թէ որ կրնաք. ապա թէ չէ՝ սիրով զանոնք յարգեցէք: Յիսուս Քրիստոս կ'ըսէ որ՝ եթէ այս պզտիկներէն մէկուն ընելու ըլլաք, ինծի բրած կ'ըլլաք: Ուրեմն պէտք էք ընել դուք ևս աղքատներուն, այն բանն որ յօժարութեամբ յանձնառու կ'ըլլայիք ընելու Աստուծոյ Փրկչին, թէ որ անձամբ ձեզ ներկայանայր ողորմութիւն խնդրելու:

Սուրբ Աւետարանը կ'ըսէ թէ, երբոր երկնաւոր Դատաւորը դատաստան ընելու գայ մեզ, ամբարիշտները պիտի դատապարտէ աղքատաց չողորմելնուն համար, և բարեպաշտները պիտի վարձատրէ իրենց ողորմածութեան համար: Ասկէ յայտնի է որ, եթէ աղքատներուն դէմ քարսիրտ ըլլանք, և անոնց մեզմէ խնդրած ողորմութիւնը ձեռքերնէս եկածին չափ չտանք, Աստուծոյ նզովքը կ'ընդունինք, և անոր վարձքերէն զուրկ կը մնանք:

Ողորմածութեան օրինակներ առաւելապէս սրբոց մէջ:

Աղքատասիրութիւնն ամէն ժամանակ բոլոր սուրբերուն սիրած առաքինութիւնն եղած է:

Ինչպէս սուրբ Լուդովիկոս Գաղղիոյ թագաւորն, և սուրբ Էդուարդ Անգղիոյ թագաւորն, և ուրիշներն այնքան խոնարհեցան՝ որ իրենք անձամբ սկսան ծառայութիւն ընել անոնց

հիւանդութեան մէջ ։ Ոմանք ևս ինչպէս սուրբն Պաւղինոս և սուրբն Պետրոս Նօղասգոս, այն աստիճան առատաձեռն եղան՝ որ մինչև ուրիշներուն տեղ բանտ մտան և գերութեան դատապարտուեցան, որպէս զի խեղճութեամբ դատապարտուողները գերութենէ ազատին ։

Աշոտ Գ. Հայոց Թագաւորը, որ իր սուրբ և աղքատասէր բարուց համար Ողորմած կոչուեցաւ, զարմանալի օրինակ մը է ողորմածասիրութեան, և գրեթէ իր բովանդակ երջանկութիւնն այս առաքինութեան մէջ դրած էր ։ Իր ժամանակի խեղճ և աղքատ մարդիկ, վկայ են անոր մարդասէր խնամքին և գործակից ողորմածութեանը, որով իր հոգին փառաւորել այն աստիճան հասեր էր աղքատաց վերայ ունեցած անոր սրտին գութը, որ իր շինել տը-ւած աղքատանոցներուն և հիւանդանոցներուն ինք անձամբ շատ անգամ այցելելով, սքանչելի խոնարհութեամբ կը ծառայէր անոնց իբրև Քրիստոսի . և իր սեղանը նստեցնելով կը պատուէր, կը պաշտէր և կը մխիթարէր զանոնք ։ Մինչև որ խոնարհութեամբն և ողորմածութեամբ բոլոր թագաւորներէն գերազանցեց, ինչպէս կ՚ըսէ Ստեփաննոս Ասողիկ . վասն զի գանձերը (քէլէրը) կաղերը և կոյրերը կը հաւաքէր իր քով կը նստեցնէր ուրախութեան հացկերութի հանդէսներու ժամանակ . մէկուն իշխան կը կանչէր, մէկալին իշխանապետ և ուրիշին կիւրապաղատ (պէյ) և անանկով կը զբօսնոյր ։

Նորոմներուն կարմիր քաւերն և անոնց խոցերն իւր աչքին դիմաց զարդի և գոհարներու տեղ կը սեպէր . Նաև իւր Թագաւորական գաւաթոյն անոնց ջուր կամ գինի կուտայր և աւելցուկը ինք կը խմէր ։ Իւր այնքան առատաձեռնութեամբ ողորմութիւն կը բաշխէր կարօտներուն , մինչև որ մեռնելու ժամանակ գանձատան մէջ մէկ ստակ չգտնուեցաւ . Նաև սենեակներուն կարասիները , պատերուն վրայի զարդերը աղքատաց կը պարգևէր ։

Ասոր այս գեղեցիկ առաքինութենէն վար չէր մնայր Նաև իւր երանելի ամուսինը Խոսրովանոյշ Թագուհին . շատ սիրոյ և խոնարհութե գործքեր ըրած ունի աղքատաց և հիւանդաց դէմ , շատ հոյակապ եկեղեցիներ և վանքեր շինել տուած է , ինչպէս է Սանահնի և Հաղբատայ ուխտ ըսուածները ։ Մէկ խօսքով՝ Հայոց ազգին գԹասիրտ մայրն էր , և արժանաւոր Թագուհին Արարատեան Թագաւորութեան ։ Իւր այս երկու բարեպաշտ և ողորմած անձինքներուն հպատակներն երջանիկ և հանգիստ կեանք կը վարէին ։

Լուկսեմպուրկի տունը Պետրոսին վարուց մէջ կը կարդացուի Թէ՝ իւր պղտիկութենէն այնքան սէր ունէր աղքատաց վրայ , որ ամեն օր ինչ անուշ կերակուր որ իրեն տային , գաղտուկ մի սեղանէն ետքը կ'առնուր կը տանէր այն աղքատներուն կուտայր , որոնց սովորութիւն ըրած էր և միայն իւր ձեռքը կը նայէին ։

Իւր վարքը գրող հեղինակը կ՚ըսէ նաեւ թէ՝ օր
մի երբ այս սուրբ տղայն իւր վերարկուին ծայ-
րը մէկդի ըրաւ որ բերած կերակուրները հանէ
անոնց տայ, նայեցաւ որ բոլորն ալ անուշահոտ
վարդի փոխուեր էին. որով Աստուած յայտնա-
պէս ցուցուց՝ թէ որքան ընդունելի էր իրեն ա-
նոր մարդասիրութիւնը ։

Այս հրաշքիս վերայ ինչ կ՚ուզէք ըսեցէք ,
ես ուրիշ մի եւս պիտի պատմեմ Անգղիոյ Ալֆ-
րետոս թագաւորին վերայ, որ եկեղեցական պատ-
մութեան մէջ կը կարդացուի ։ Վեց ամիսէն ա-
ւելի անցեր էին , այս բարեպաշտ թագաւորն
իւր թշնամիներուն ձեռքէն ուզելով ազատիլ ,
որ անդադար զինք կը հալածէին , անտառի մը
մէջ մտեր ապաւիներ էր , որու չորս կողմը ճա-
խիճներով պատած եւ անկէ անցնիլը խիստ դժ-
ուար էր . հոն լռութեամբ կը սպասէր որ աստ-
ուածային Նախախնամութիւնը վախճան մի դը-
նէ իւր աքսորանաց եւ թշուառութեան ։ Օր
մի եւս երբ որ իւր թագուհւոյն հետ մինակ
նստեր էր , եւ իւր ծառաները բոլորն ալ ձի-
նապատ ելեր էին եւ տարած գետերը խրկած էր՝
որ ձուկ կամ վայրի կենդանի մի որսան կերա-
կուր պատրաստելու համար , մէկ մ՚ալ նայիս
ձայն մի լսեց , որ աղքատին մէկն եկեր խիստ
աղաչանքով ողորմութիւն կը խնդրէր ։ Ալֆրե-
տոս թագուհւոյն դարձաւ եւ հարցուց՝ թէ ու-
տելու բան մի կա՞յ արդեօք աղքատին տալու .
թագուհին պատասխան տուաւ թէ՝ միայն մէկ

հոս հաց մնացեր է ։ «Օրհնեալ ըլլայ Աստուած, ըսաւ Թագաւորը. բեր ուրեմն անոր կէսը այս խեղճ աղքատին տանք. վասն զի այն Աստուածն որ հինգ նկանակով հինգ հազար մարդիկը կշտացուց, կրնայ միւս կէս հացով ալ զմեզ կշտացընել ։ Իսկ Թագաւորին այս կերպով ողորմելին մխիթարելէն յետոյ՝ գիրք մի առաւ ձեռքն որ կարդայ, և քիչ մի ժամանակ անցաւ վերան՝ քունը տարաւ ։ Երազին մէջ Կուլպերդոս Լինտիսֆարնէի եպիսկոպոսն երեւցաւ իրեն, որ սուրբ կը կոչուէր, և այսպէս ըսաւ. «Աստուած խրկեց զիս քեզ որ իմացընեմ թէ՝ քու քիչ մի առաջ ըրած ողորմութիւդ այնպէս ընդունելի եղաւ իրեն, որ ողորմելով Անգղիացւոց այսքան ժամանակէ ի վեր քաշած տառապանքներուն և նեղութիւններուն, կը խոստանայ նորէն քու աթոռիդ վերայ հաստատել զքեզ. և այս բանիս ճշմարտութեանն ապացոյց՝ որսի գացած մարդիկդ, թէպէտ ջրերը բոլորովին սառած են, այսու ամենայնիւ՝ այնքան որս պիտի բերեն, որ դուք եւս պիտի զարմանաք»։ Ալֆրետոս քունէն արթննալով՝ կանչեց Թագուհին, և իր տեսած երազն անոր պատմեց. նա ալ ըսաւ թէ՝ ինքն եւս նոյն ժամանակ քնացած ըլլալով՝ նոյն երազը տեսած էր ։ Այս միջոցիս մէջ որսի գացողներն ետ դարձան, որոնք այնքան ձուկ բերած էին հետերնին, որ մէկ բանակի զօրաց բաւական կրնար ըլլալ ։ Ալֆրետոս մի քիչ ժամանակէն յետոյ իմացաւ

թէ Տանխմարգացւոց զօրավարն Ուսպա անուն, որու հետ կը ծեծկուէր, սպաննուեր է։ Ասոր վերայ Թագաւորը ժողվեց մէկտեղ իւր զօրքերն՝ որ հոն հոս ցրուեր էին, վազեց յանկարծ Թըշնամեաց վերայ և ցիրուցան ըրաւ զանոնք. և այս երեւելի փորձովս իմացաւ թէ՝ ինչպէս անվարձ չթողու Աստուած ողորմութիւնը։

Թշնամիներուն աղքատաց համար ցրուցած
գեղեցիկ խօսքերը։

Աղօտ մարդկանց հետ կարեկից ըլլալն այնքան բնական առաքինութիւն է և մարդկութեան վայելուչ, որ նոյն հեթանոսներն անգամ իրենց անհրաժեշտ պարտք սեպած են։

Հեթանոսին մէկը սովոր էր ըսել թէ՝ "Ես այն բանն ինձ ստացուածք կը սեպեմ, զոր աղքատներուն պարգեւած եմ"։

Տիտոս կայսրն այն ատեն աւելի գործածած կը սեպէր իւր ժամանակն, երբոր ողորմելի մարդոց օգնութիւն կ՚ընէր. և մէկ իրիկուն մի եւս միտքը բերելով թէ այն օրս առանց մէկուն բարիք ընելու անցուցեր էր, սօսաց հառաչելով. Կորսնցուցի իմ օրս։

Ալիմն Աթենացւոց զօրավարն, այնպիսի բաներու մէջ կը գործածէր իւր հարստութիւններն, ուսկէ իւր քաղաքակիցներուն օգուտ մի կ՚ըլլար. և ինչ ատեն առիթ գտնելու ըլլար, ուրախութիւն մի կը զգայր՝ ոմանց լաթ հագցընելով և ոմանց խեղճութեանն օգնելով։

Հին պատմութիւններէն անհամար օրինակ-ներ կրնայի բերել այս տեղ. բայց ես առաւե-լապէս կ'ուզեմ զանոնք պատմել, որ մեր օրերը հանդիպած են։ Վասն զի շատ աղէկ կ'երեւի թէ այս մեր դարուս մէջ, որ անկարգութիւն-ները կը տիրեն և աշխարհս աւրուած է, որքան մարդիկ դեռ կան, որ իրենց երջանկութիւն ու-րիշներուն երջանիկ ընելէ կախեալ կը սեպեն. և ես կը յուսամ որ ատոնց օրինակները մեծ ազ-դեցութիւն կրնան տալ ձեր սրտին՝ քան թէ իմ խօսքերս։

## ԴԼՈՒԽ Ժ.Օ.

### Բարերարութեան օրինակ։

Առաջին օրինակ։

Դեղփինոս՝ Լուդովիկոս վեշտասաներորդին հօր վարուց մէջ կը կարդացուի, թէ իւր տղա-յութեան հասակէն խիստ ողորմած էր, և ո-ղորմելի մարդոց քաշած տառապանքներուն և նեղութեանց վերայ շատ կը ցաւէր, և անոնց օգնելու միշտ պատրաստ էր։ Օր մի ձմերան զինուոր մի կը տեսնէ ազնուական դէմքով, բայց խեղճ կերպարանքով, և կ'ուզէ գիտնալ ո՛վ ըլլալն և ուր երթալը։ Եւ լսելով թէ քաջ զինուոր մի էր և իւր տունը կ'երթայր, որու մէջ շատ տարիէ ի վեր մեծ պատուով կը ծա-

ւայէր, կանչեց իւր քով և տուաւ անոր պար-գեւ առանց համրելու՝ ինչ որ ունէր քսակին մէջ, անկէ ի զատ քանի մի կտոր Թանկագին ա-դամանդներ եւս շնորհեց, որոնք իրեն աչքին լոյսն էին։ Այս ծաղկահասակ իշխանիս դաստի-արակը տեսնելով՝ Թէ դիմացն եղող բոլոր մար-դոց բարիք կ'ընէր և այն ալ չափազանց կեր-պով, մինչեւ բոլոր իւր քով եղածը կը հանէր կուտայր, չափ դրաւ որ մէկ Թալէրէն աւելի ողորմուԹիւն չտայ մուրացկան աղքատաց։ Ան-կէ յետոյ երբ կը տեսնէր մէկն որ իրեն աւելի աղքատ և կարօտ կ'երեւայր, վարպետուԹեամբ մի Թալէրի տեղ լիրա մի կը դնէր անոր ձեռ-քին մէջ։ Օր մի եւս աղքատ կին մի տեսնելով այնքան գուԹը շարժեցաւ անոր խեղճուԹեան վերայ, և իւր դաստիարակին քով չկրնալով ու-զածին պէս առատ ողորմուԹիւն տալ, կամաց մի ըսաց կնկան՝ որ այս ինչ ժամուն իւր պալա-տի պատուհանին տակը գայ։ Ըսած ատենն որ եկաւ, Դեղփինոս պատուհանը գնաց, տեսաւ կինն և ափով լեցուն ոսկի նետեց անոր։

Երկրորդ օրինակ։

Ստանիսլաւ Բոլոնիայի Թագաւորն, որ իւր ազնիւ բարուց համար փառաւոր տիտղոսն ու-նեցաւ Բարերար կանչուելու, իւր մատղաշ տա-րիքէն յայտնի ցուցուց ողորմածական բնաւորու-Թիւնը։ ՈւԹ տարեկան էր, տեսաւ որ ծա-ռայ մի բանտը կը դնէին գողուԹիւն ընելուն

համար, վազեց իւր հօր քով արտասուքներն աչքը, որ թողութիւն խնդրէ ծառային համար։ Բայց թագաւորն, որու հրամանաւ պատժուելու էր գողը, չուզեց որդւոյն կամքը կատարել. որու վերայ տղուն սիրտը խիստ վիրաւորեցաւ։ Հետեւեալ օրն երիտասարդ իշխանը գաղտուկ դէպ ի բանտ երթալով, հարցուց բանտապանին՝ թէ ի՞նչ կ'ընէ գողը։ Նա ալ պատասխան տուաւ. «Ինչ որ կ'ընեն բանտի մէջ եղողներն, որոնց կերածն է լոկ հաց և խմածնին լոկ ջուր»։ Սգանիլաւ լսելով այս խօսքիս վերայ, աղաչանքներ ընելով և շատ բան խոստանալով բանտապանին՝ ջանք ըրաւ միտքը շինել նորա՝ որ թողու ուրիշ կերակուր տալ բանտարկելոյն. բայց չկրցաւ այն անգութ մարդուն սիրտն ընել. այլ այս միայն թողուց որ բանտն եղող տղայն իւր պատուհանի վանդակաւորներին (պարմագլըգ) քովը գայ այս ինչ ժամուն։ Իշխանազուն տըղայն տուն դառնալով խօսք մէկ կ'ընէ իւր մէկ հաւատարիմ ծառային հետ հնարք մի բանեցընելու, ինչպէս որ իւր բարի սիրտը մտածել տուեր էր։ Քիչ մի կերակուր կը պատրաստեն և երկայն ձող (սըրըք) մի առնելով, կ'երթան երկուքնին մէկտեղ բանտին պատուհաններուն տակ, որ կերակուրը ներս մտցընեն ձողին ծայրն անցընելով։ Բայց դժբաղդաբար կարճ գալով ձողը, և ծառայն յոյսը կտրելով՝ որ չպիտի կըրնայ իրենց մտքին դրածը կատարել, ետ դառնալու վերայ էր, երբ անդիէն՝ պօռաց աքքա-

յաղուն երիտասարդը. «Կեցէր, միտքս բան մի խնկա՛, որ կարծեմ թէ պիտի յաջողի մեզ։ Թեւերուդ վերան առ գլխ, և այն ատեն գուցէ կրնամ ձողը պատուհանին մօտեցընել»։ Օ՛ււայն հաւնեցաւ նորա մտաց. վերցուց տղայն իւր թեւերուն վերայ՝ այնպէս որ անոր ուսերուն կռթընելով բռնեց ձողը, և այնքան երկընցուց՝ որ բանտին մէջ եղող տղայն կրնար հանել և բռնել զայն։ Երբոր ծայրի եղած կերակուրներն առաւ, Ադանխաւ վար իջաւ՝ ուրախանալով իւր միտքը դրածը յաջողելուն վերայ, և ըսաց. «Բաղդաւոր եմ ես որ կրցայ դժբախտի մի պէտք եղած բաները հոգալու»։

Երրորդ օրինակ։

Կարոլոս Բ Սպանիոյ թագաւորն իւր տղայութեան ժամանակ օր մի եկեղեցին գացած ատեն ճամբան աղքատ տղու մի հանդիպելով, կուրծքը կախուած ադամանդեայ խաչը փըրցուց նետեց անոր՝ առանց մէկը տեսնելու իւր չափազանց առատաձեռնութիւնը։ Եկեղեցին որ հասաւ, պալատականները տեսնելով թէ անոր ակնակուռ (ձէվահիրլի) խաչը կուրծքը կախուած չկայ, ըսին թէ անտարակոյս գողին մէկն առած պիտի ըլլայ. այն միջոցին աղքատն անոնց ետեւը կանգնած ըլլալով՝ մէկէն ըսաց. «Ա՛հա թագաւորին խաչը իմ քովս է։ Նորին Վեհափառութիւնն իւր ձեռօքն ինձ շնորհեց»։

Նրխատարդ. Թագաւորն ալ հաստատեց անոր խօսքը․ բայց մեծամեծները արժան չսեպեցին աղքատին քով ձգել այնպիսի գոհար մը, որ արքունական Թագին անգին քարերուն մէկ կտորն էր․ և խորհուրդ ընելով որոշեցին Թէ՝ ինչ եղանակաւ որ Թագաւորն իր ստացուածքը բաշխելու ըլլայ, սուրբ կը սեպուի ։ Ուստի այն խաչին արժէքն ալ տասուերկու հազար Թալէր ըլլալով, այնքան սակ համրեցին բարեբախտ աղքատին տուին և խաչն ետ առին ։

Չորրորդ օրինակ։

Օր մը Վիեննայի մէջ Յովսէփ Բ կայսեր կառքին առջևէ ինն տարեկան տղայ մը եկաւ կանգնեցաւ՝ և ըսաւ․ « Տէր իմ, ես տակաւին մէկէն ողորմութիւն խնդրած չունիմ, բայց հիւանդ մայրս ծանր հիւանդութեամբ պառկած ըլլալով, բռնադատեցայ ակամայ ձեր Վեհափառութեան ներկայանալ ։ Բժիշկ մը կանչելու համար մէկ ֆիորին պէտք է, իսկ մենք այնքան աղքատ ենք որ այս խիստ հարկաւոր օգնութիւնն անգամ ընելու անկարող ենք ։ Ահ, Թէ որ ձեր Վեհափառութիւնը բարեհաճի մէկ ֆիորին շնորհել մեզ, երջանիկ կ'ըլլայինք մենք » ։ Կայսրն անոր անունն և հիւանդին տունն ուր ըլլալը հարցընելէն ետև, տղուն (որ Թագաւորին ըրած հարցուփորձին պատասխանելով լակաւ անոր աչքերն ու ըսաւ Թէ, ինչպէս որ

ռաջի անդամն է որ ողորմութիւն կը խնդրեմ, նոյնպէս ալ վերջինը պիտի ըլլայ,) տուաւ Փիօրին մի։ Տղայն այլ չկեցաւ, խոյն վազեց գընաց շնորհակալ ըլլալով կայսրէն։ Յովսէփ առանց ժամանակ անցընելու, իր հեռու եղող մարդոց մէկուն վերարկուն հագնելով, կ՚երթայ հիւանդին տունը, որ բժիշկ կարծելով զինք՝ կը սկսի երկար բարակ իր հիւանդութիւնը պատմել. և կը ցուցնէ անոր դեղոց (տօմար) մի, ուր տեղ էին իր որդւոյն թղթերը գրիչը, և կ՚աղաչէ որ իր հիւանդութեան վերաբերեալ նուսխայն գրէ։ Կայսրը թուղթ մի կ՚առնու կը գրէ, կը մխիթարէ տառապեալ կինը, և կը ձգէ կ՚երթայ։ Տղայն այս միջոցիս ես կը դառնայ Փիօրինը ձեռքն և հետը մէկ բժիշկ։ Մ՚այրը զարմանալով կ՚ըսէ թէ՝ հիմայ բժիշկ մի եկաւ զինք տեսնելու, և նուսխայն ալ կը ցուցնէ անոր։ Բժիշկը կ՚առնու կը կարդայ, և կայսեր ստորագրութիւնը ճանչնալով կը պատմէ անոնց առջի եկող բժշկին ով ըլլալը։ Նուսխային մէջ 500 տուգադ գրուած էր, զոր թագաւորն իր յատուկ գանձէն կը շնորհէր խեղճ աղքատ կնկան, անոր թշուառութեան օգնութիւն ընելու համար։

Գուցէ կ՚ըսէք, թէ ամէն մարդ կարողութի չունի այսպիսի մեծ գործեր ընելու. և թագաւորաց պէս բարերարութիւններ ընելու համար, անոնց պէս ճոխ և կարող ըլլալ պէտք է։ Բայց ահա ձեզ մի քանի օրինակներ զրու-

ցեմ, որ հասկընաք թէ կրնայ մարդ բարերար ըլլալ որ և իցէ մարդու նման, և թէ՝ երբ որ սիրտը բարի և գթոտ է, նեղութեան մէջ գըտնուող ողորմելեաց օգնելու համար՝ կրնայ կերպը գտնել։

Հինգերորդ օրինակ։

Գերմանիայի մէջ գեղացի մարդ մի գլուխը խիստ շատ թշուառութիւններ գալէն աղքատնալով, և շատ զաւակաց եւս տէր՝ որոնք անօթութենէ կը մարէին, միտքը դրաւ մօտ քաղաք մի երթալ, և հոն որ և է կերպիւ քանի մի բատակ ճարելով՝ իւր տղայոց հաց հոգալ։ Գնաց հոն վերան գլուխը պատուած լաթերով, և իւր ողբալի վիճակը խօսքերէն աւելի արտասուքներովն կը յայտնէ անոնց՝ զորոնք աչքը կը կտրէր թէ կրնան իրեն օգնութիւն մի ընել։ Բայց խեղճ մարդն մի քանի քարասիրտ և անողորմ մարդոց հանդիպելով, որոնք ականջ չէին դըներ ամենեւին իւր լացերուն, և անոնց անգըթութեան վերայ սիրտը խիստ դէշ ըլլալով, կը մտնէ անտառի մի մէջ և միտքը կը դնէ որ առջեւն ելած մարդուն վերան երթայ և ունեցածը կողոպտէ։ Բանն ալ այն ժամուն մէջ յաջողեցաւ։ Բեռնակրի մի կը հանդիպի, որ առանց դէմ կենալու կը հանէ քսակ մի կուտայ անոր ձեռքը, մէջը քառասուն ֆիօրինով։ Բայց գեղացին քսակը ձեռք չառած, ըրած գործը խըղճմտանաց դպչելով, կ'ինկնի բեռնակրին ոտքն,

և իւր գողութեան պատճառը լալով կը պատմէ անոր, և կ'աղաչէ որ մինչև իւր տունը գայ հետն և աչքով տեսնէ իւր Թշուառ վիճակը։ Բարեսիրտ բեռնակիրն սիրտը շարժելով, կ'ելնէ իսկոյն հետը կ'երթայ, կը մտնէ խեղճին խրճիթը, քանի մի տղայք կը տեսնէ հոն մերկ և անօթութենէ երեսնին դեղնած իրենց մօրերնուն հետ, որ նա ևս անօթի մնալէն քաշուեր և մաշուեր էր։ Այս կինն՝ իւր Թշուառութեն աւելի էրկանը գործած յանցանաց վերայ՝ զոր իրեն պատմեց, զարհուրելով կ'ինկնի բեռնակրին ոտքն և սրտաշարժ խօսքերով կը խնդրէ որ ողորմի իւր էրկանն և անմեղ զաւակաց. և իւր աղաչանքը պարապ չելներ։ Բարեգութ մարդուն սիրտը չդիմացաւ այս ցաւալի տեսարանիս, և իւր արտասունքներն ևս անոնց արտասուաց հետ խառնելով՝ ըսաց. «Ես ձեր բարեկամն եմ. առէք այս քառասուն ֆիօրինը՝ զոր յօժարութեամբ կ'ընծայեմ ձեզ։ Ափսոս որ այնքան ունեւոր չեմ որ կարող ըլլայի աւելի առատաձեռնութեամբ օգնել ձեզ։ — Ինչ կ'ըսես դու, ըսաց դեղացին, փոխանակ զիս քու Թշնամիդ սեպելու՝ բարերա՞ր ալ կ'ուզես ըլլալ։ Չէ՛ չէ՛, լաւ է որ ես անօթի մեռնիմ, քան թէ քու քսակիդ ձեռք դպցնեմ»։ Այսպէս ըսելով հանեց տուաւ նորա քսակը. բայց բեռնակիրն առատասիրտ ցուցընելով զինք՝ չուզեց առնուլ, և ստիպեց որ նա առնու. և իւր պիտոյքն հոգայ։ Ասոր վերայ ամենքն ալ ելան իրենց բա-

ընթացին ձեռքը համբուրեցին արտասունք թափելով։ Բարեսիրտ բեռնակիրը յետոյ այս դիպուածը պատմելով կ'ըսէր, թէ ամենեւին կենացս մէջ այսպէս քաղցր հաճութիւն մի ունեցած չէի։

Ուրիշ երկու օրինակ ես կ'ուզեմ պատմել ձեզ, որոնց մէջ եղած ողորմածասէր անձինքը ձեր հասակակիցքն ըլլալով, աւելի մեծ ազդեցութիւն կրնան տալ ձեր սրտին։

Վեցերորդ օրինակ։

Երեւելի դպրատան մի մէջ պզտի տղայ մի կայր, որ իւր ազնուական բնաւորութեանն և բարի վարուց համար իւր բոլոր ընկերներէն աւելի սիրելի եղած էր ամենուն։ Օր մի աշակերտակիցներուն հետ զբօսանքի ելնելով, աղքատ մի տեսաւ, որուն գլխի փեղոյրը (շափղայն) քիչ մի առաջ սաստիկ հով մի փչելով՝ թռուցեր և գետոյն մէջ նետեր էր։ Խեղճ աղայն փեղոյրը կորսնցունելուն վերայ տրտմելով, և աւելի օդէն վախնալով՝ որ չըլլայ թէ սաստիկ ցրտէն մնելով նորէն հիւանդանայ, որ սակաւ քին նոր էր աղէկցեր, և խիստ աղաչելով՝ հօն եղողներէն գտակ մի կը խնդրէր որ գլուխը ծածկէ։ Երիտասարդ տղայն անոր աղաչանքներէն սիրտը շարժելով և երեսին գեղնութիւն եւս տեսնելով՝ որ հիւանդութենէ ելնելուն նշանն էր, ձգեց որ ընկերներն առաջ քալեն երթան,

ինք մինակ մնալով խեղճ տղուն ըսաւ. «Ես իմ գտակս գլուխդ ծածկէ, վասն զի քուկս տակն չունիմ որ քեզ տամ. կը ցանկամ որ հիմակ ասով անցընենք ձեր հարկաւորութիւնը». Եւ գլտակովը անոր գլուխը ծածկելէն յետոյ, վազեց գնաց իւր ընկերաց քով հասաւ: Անոնց մէջ եղող գլխաւորն առատասիրտ տղուն ըրած գործքին ականատես ըլլալով, մինչեւ որ տուն չհասան՝ չէր դիտած թէ անոր գլուխը գտակ չկայր: Տղքը երբոր հարցուց, տղայն կարմրեցաւ եւ ձայն չհանեց: Մէկզի քաշեց տարաւ, սաստիկ բանադատեց որ ճշմարիտն խոստովանի: «Երդ, պատասխան տուաւ բարեսիրտ տղայն, որովհետեւ զիս կը բանադատես որ ստոյգը խօսիմ, աղքատ տղու մի տուի ես իմ գտակս: Զգիտեցաւ սիրտս. տեսայ որ հիւանդ էր, չունէր բան մի որ գլուխը ծածկէ, եւ ծախու առնելու ալ ձեռքը չէր հասներ, մտածեցի թէ տուն դառնալու որ ըլլամ ես, կրնամ մէկ ուրիշ մի առնելու հօրս տուած փողերովս»: Իւր բարի հայրն ալ տղուն ըրած բարերարութեան գովելի գործքն իմանալով, այնչափ գոհ եղաւ իւր տուած փողերը այսպիսի բարեգործութիւններու ծախս ընելուն, որ իւր սրտին ուրախութիւնը յայտնելու համար կրկնապատիկ աւելցուց անոր ամէն ամիս տուած փողը, զոր ազատութիւն ըրած էր տալ սրտին ուզած բաներուն ծախս ընելու համար:

Եօթներորդ օրինակ։

Շատ ժամանակ չկայ, Լիոն քաղաքը Սաօն գետին կամրջին վերայ զինուոր մի կանգնած տեսան, որ անսովոր շարժմունքներու նշաններ տալէն յետոյ. անշարժ կեցաւ մի քանի բոպէ, գըլուխը կամրջի պատկին ( փօրփուլուգ ) վերայ կռթընած. մէկ մ'ալ յանկարծ յուսահատածի պէս ձգեց զինք գետին մէջ։ Տասն և չորս տարեկան տղուն մէկը Վիկտոր անուն, հաւսափի ( ղուշչպաղի ) որդի, իւր եղբօրը դառնալով պօռաց մէկէն. «Նաւակէս եկու եղբայր, մենք կ'ազատենք այն մարդը»։ Երկուքնին եւս կ'երթան կը նետուին գետին մէջ, և շատ փնտռելէն յետոյ կը գտնեն խեղճը, որ շունչը դեռ մերան էր, և կը բերեն գետնեզերք կը հանեն։ Հան եկող հաւաքուող բոլոր մարդիկ մէկ բերան կը սկսին գովել զերենք։ Մեծ եղբայրը պինտ մի բռներ էր պզտի եղբօրը ձեռքէն և կ'ըսէր անոր ուրախութեամբ. «Զըսի՞ մի ես քեզ թէ մենք կ'ազատենք խեղճը»։ Այն տեղ գտնուողները՝ որ զանոնք գովելէն չդադարէին, հանեցին ամեն մէկերնին իրենց կարողութեան չափ ստակ տուին անոնց պարգև, և տղայք ընդունեցին՝ բայց առանց արժանի ցուցընելու զերենք այն վարձատրութեան. և աւելի մեծ զարմանքի մէջ մնացին հանդիսականները՝ երբ տեսան որ այն երկու եղբարքը կռուելու պէս կ'ընէին իրարու հետ՝ իրենց դիւցազնական քաջութեան

տրուած վարձքերը զինուորին հետ բաժնելու ։ Այս առատասրտութեան վերայ ամենքն ալ սաստիկ զարմացան․ և իրենց տուած իրաւացի գովեստներուն իմացընել տուին այն քաջասիրտ տղայոցը՝ թէ չկայ աշխարհիս մէջ այնպէս փառաւոր և անոյշ բան մը, ինչպէս թէ որ մէկն իւր անձնական շահն ընկերին օգտին զոհ ընելու ըլլայ ։

Ութերորդ օրինակ։

Փարիզու օրագրին հին թիւերուն մէկուն մէջ 16 մարտի 1786, կը կարդացուի հետևեալ վեհանձնական գործոյն յօդուածը, որ նամակի մէջ գրուած՝ և նոյն օրագրին հեղինակին խրկուած է ։

«Անցած դեկտեմբերի 27ին, քանի մը տղայք երբ Սէնայի պարտէզներուն մէջ կը խաղային, մէջերնէն երեք հոգի յառաջ երթալով գետին վերայ՝ որ բոլորովին սառած էր, յանկարծ սառը խորտակեցաւ տղըներուն տակ և ինկան ջրին մէջ։ Կօշկարար (փապուճճի) տղայ մը Յովսէփ անուն տասն և եօթ տարեկան, տղայոց մէկուն պօռալու ձայնը լսելով, որ քիչ մը լողալ գիտնալուն գլուխը ջրէն դուրս հանած էր, վազեց շուտ մը գետեզերքն, և տեսնելով զանոնք սիրտը կ՚եփէր որ խեղճերուն օգնութեան հասնի․ բայց ձեռքովը մէկ մը սառը զննելով խելքը կտրեց որ իւր ըրած ջանքը պարապ ընելով զինքն ալ վտանգի մէջ պիտի ձգէ

և զանոնք ալ չկրնար կարենայ ազատել : Այսու-ամենայնիւ իւր սրտին ցաւուն և տղայոց պօռալու ձայներուն չդիմանալով, որոնք յօգնութիւն կը կանչէին, ծնկան վերայ կուգայ գետնին երեսը, և խաչ հանելով կը նետուի քաջութեամբ սառած ջրին մէջ. և շատ դժուարութիւն քաշելէն ետեւ, վերջապէս մէկիկ մէկիկ դուրս կը հանէ խեղճերը մէկ ձեռքովը առջեւի սառերը կոտրելով և ճամբայ բանալով, և միւսով տղայն բռնած :

« Պրուդէցըի պարոնն, որ տէրութեան ատենապետն էր, իրեն պարտք մի սեպեց Թագաւորին իմացնելու այս գործը բոլոր պարագաներովը, որ բարեհաճեցաւ իսկոյն ոսկի մետալ մի շինել տալ հազար ֆրանքի արժողութեամբ, և քաջասիրտ Յովսէփին ընծայել, իշխանութիւն տալով միանգամայն կուրծքը կախելու զայն, որպէս զի այլոց խրախոյս և իւր ըրած վեհանձնական գործոյն յիշատակ ըլլայ, որոյ համար արժանի եղաւ անոր, և միանգամայն յիշեցընէ իրեն միշտ՝ չգործել բնաւ այնպիսի բան մի, որ իւր քաջասրտութեան և մարդասիրութեան գեղեցիկ և պատուաւոր փայլն սեւ հանէ :

« Փորել տուած մետալին մէկ կողմը Լուդովիկոս Ժ.Ը.ին պատկերը կը ներկայացընէ, և միւս կողմը հետեւեալ խօսքերը գրուած է :

# ԹԱԳԱՒՈՐՆ
# ՊԱՏՈՒԵՑ ԱՅՍ ՄԻՏԱԼՈՎ
# ՋՅՈՎՍԷՓ ՔՐԻՍՏԻԱՆԻՆ
# ՎԵՐՍԱԼՅՑԻ
# ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆ
# ՈՐ ՔԱՋՈՒԹԵԱՄԲ ՆԵՏՈՒԵՑԱՒ
# ՍԱՌԻՆ ՏԱԿ
# ԵՒ ԴՈՒՐՍ ՀԱՆԵՑ ԵՐԵՔ ՏՂԱՅՔԸ
# ՈՐՈՆՔ ՄԵՌՆԵԼՈՒ ՎԵՐԱՅ ԷԻՆ
# 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1786։

*«Այս միտալը, կ՚ըսէ Նամակին տէրը, թէ որ չեմ խաբուիր, քաջասիրտ առաքինութեան ևս նոյնպէս պատիւ կըբերէ, և տէրութեան խոհեմութեանն՝ որ գիտէ այսու կերպիւ վարձատրել զառաքինութիւնը»։*

*Այս օրինակներէս գեղեցիկ բան մի կրնաք մակաբերել, սիրուն որդեակք իմ. երբ զի բարիք ընելն ամեն հասակի և ամեն վիճակի մարդոց յատուկ է։ Թէ որ կարողութիւն տրուած չէ ձեզ ըստ ամենայն մասին օգնութիւն ընելու դժբախտից, գոնէ ձեռքերնիդ եկածին չափ զանց մի առնուք բարիք գործել։*

*Թէ որ ձեր ծնողքն ատեն ատեն տալ պարգեւ տալու ըլլան ձեր տղայական ծախուց համար, դուք ձեզ օրէնք մի դրէք անոր մէկ մասն աղքատաց տալու։ Այս է ամենէն աղէկ և գո-*

վերի միջոցն աղէկ բանի գործածելու ձեր փողը ։ Վերջապէս գթասիրտ մարդու կամ մանաւանդ` քրիստոնէի մի արժանաւոր եղած զուարճութիւնն և ուրախութիւնն այս է ։

Գեղեցիկ օրինակ բարերարութեան։

Բարերարութեան և ողորմութեան գեղեցիկ դասերը կարծես թէ մօրը կաթին հետ մէկ տեղ ծծած էր Մարսիլիացի վաճառականի մի որդին, որ իւր խիստ մատղաշ տարիքէն յայտնի ցուցուց իւր աղքատաց վերայ ունեցած մեծ խնամքն և օգնութիւնը ։ Շատ անգամ քանի որ աղքատ տեսնելու ըլլար, մէկէն քով կ'երթայր կը մօտենայր, և անոր ողորմութիւն կուտայր քովն որքան ստակ գտնուէր, զոր ծնողքը կուտային իւր տղայական պզտի ծախքերուն համար ։ Հինգվեց տարեկան էր՝ հիւանդութեամբ մի պառկեցաւ, և բժիշկներն եկան նայեցան և ըսին թէ՝ մինչեւ որ իւր հիւանդութեան հարկաւոր եղած դեղը չառնու՝ չաղէկնար ։ Դժուարութիւնը հիմայ զայն խմցընելն էր. վասն զի տղին անգամն երբ դեղը տուին իրեն որ խմէ, սաստիկ լաց մի ձգեց. և թէպէտ կ'ըսէին իրեն որ դժուարութեան յաղթէ և աչուըները սեղմէ, պատասխան կուտայր թէ՝ չեմ ուզեր և չեմ խմեր այդ դեղը ։ Ինչ յորդորանքներ որ կ'ընէին և տղայոց ախորժակին յարմար բաներ կը խոստանային, բոլորը փուճ կ'ըլլէր, և չկըրցին սիրան ընել. և որքան որ վերան կ'ինկնէին

կ՚աղաչէին, նա այնքան կը խստանայր իւր կամակորութեան վերայ: Մայր ծարերնին հասնելով, մայրը այսպիսի հնարք մի բանեցուց. որովհետեւ կը ճանչնայր իւր տղուն բնաւորութիւնն որ խիստ աղքատասէր էր, դարձաւ ըսաց. «Արո՛ւն զաւակս, թէ որ չես ուզեր դժուարութեան յաղթել քու մօրդ և հօրդ սիրոյն՝ որ այսքան կ՚աղաչեմք զքեզ, աղէ՛, խմէ սա դեղը գոնէ ի սէր աղքատաց, որոնք այնքան սիրելի են քեզ: [illegible] ես մէկ աղքատ տղայ մի տեսայ, որ կէս մէջքէն հին շալի կտոր մի հագած էր, և ցրտէն փայտ կտրեր էր մարմինը: Արդ՝ թէ որ այս դեղը խմելու քաջութիւն ունիս, որ հիւանդութեանդ խիստ օգտակար է, խօսք կու տամ՝ քեզ որ գիշեր չեղած այն աղքատուկ տղուն նոր լաթեր հագցունեմ: — Եթէ այնպէս է, պատասխան տուաւ որդին, տուր ինձ գաւաթը»: Ձեռքն առաւ զայն և աչուները սեղմելով սկսաւ խմել. բայց կէսը միայն խմեց չխմեց, գաւաթը մօրը երկնցընելով. «Ա՜հ, մայրիկ ըսաւ, այս ո՜րքան լեղի է. բաւ է, ալ չեմ կրնար խմել»: Կրկնեց այն ատեն մայրը. «Ուրեմն կ՚ուզես որ ես ալ այն աղքատ տղուն մինչեւ կէս մէջքը լաթ հագցունեմ, վասն զի ես քեզ խօսք տուի՝ այս, նոր լաթեր շինելու անոր, բայց թէ որ դեղին ամէնը խմելու ըլլաս և ոչ կէսը»: Սոր վերայ տղայն նորէն ձեռքն առաւ գաւաթը, բերանը տարաւ և մինչեւ տակը ծծելով խմեց:

Այս պզտի տղուն աղքատասիրութիւնն այնքան արտաքոյ կարգի և դիւցազնական է, որ եթէ իւր ծնողք պատճառ չըլլային, չհաւատայի ես, և ոչ ձեզ պատմելու կը համարձակէի ։

Պզտի տղու մի գեղեցիկ պատասխանը։

Տղայ մի կը ճանչնամ՝ ես, որ եօթ տարեկան էր, և խիստ աղքատուկ կնկան մի երեսուն դըրամ կուտայր անոր ամիս ։ Մ՝այրն իմանալով տղուն այս գործը, հարցուց թէ՝ ինչու համար իրեն բան մի չէր զրուցած ։ « Ո՛հ մայր իմ, պատասխանեց որդին, դու ալ գիտես որ ձախ ձեռքը պէտք չէ իմանայ ինչ որ կը գործէ աջ ձեռքը » ։

Այս գեղեցիկ օրինակէս դուք ևս հետեւեցէք. նախանձաւոր եղէք նոյնպէս և դուք չյայտնել ուրիշին ձեր ըրած ողորմութիւնները, զոր կը փափագիք կարօտ մարդոց շնորհելու ։

Թէ որ Աստուած այնպէս տնօրինէր որ դուք աղքատ և տառապեալ վիճակի մի մէջ ծնած ըլլայիք, անտարակոյս խիստ կը ցանկայիք և կ՚ուզէիք որ ուրիշները ձեզ օգնութիւն ընէին, ուրու պէտք կ՚ունենայիք ։ Արդ ուրեմն, ամենասիրելի զաւակունք իմ, դուք ևս ըրէք նոյնպէս այլոց, ինչ որ կ՚ուզէիք որ այլք ձեզ ընէին ։ Բայց ողորմութիւն ընելու ժամանակնիդ աչուընիդ միշտ դէպ ի Աստուած դարձուցէք, և սեպեցէք թէ Աստուծոյ կուտաք. վասն զի աղքատն Աստուծոյ պատկեր է, և ինչպէս կ՚ըսէ

Սողոմոն. «Փոխ կուտայ Աստուծոյ, ով որ աղքատին կ'ողորմի»: Աս կերպով չէ թէ միայն ընդունելի կ'ըլլան ձեր ողորմութիւններն, այլ և կը շատնան ալ. վասն զի ով որ ճշմարիտ ոգի ունի ջերմեռանդ հաւատոյ, անհնար է որ ողորմութիւն չընէ խղճալի մարդոց, որոնց վերայ կը տեսնուի Յիսուսի Քրիստոսի պատկերը:

## ԳԼՈՒԽ ԺԼ.

### Ճշմարիտ արժանաւորութեան վերայ:

Չկայ մէկն որ չցանկայ արժանաւորութիւն ունենալու. բայց քիչ մարդիկ կան ճշմարիտ արժանաւորութիւնն աղէկ ճանչցող:

Առաւելապէս տղայք սխալ կարծիք մի ունեցեր են ասոր վերայ: Կարծեն ասոնք թէ մարդոց քով յարգ և պատիւ գտնելու համար, բաւական է որ ազնուական ցեղէ ըլլայ, անհատնում գանձ ունենայ, իշխանութեանց և պաշտօններու տէր ըլլայ: Գուցէ դուք ևս այսպէս կը կարծէք, սիրուն որդեակք. ուստի կ'ուզեմ իմացընել ձեզ ձեր խաբուիլը, և սորվեցընել ձեզ՝ որ յարգութեան արժանի սեպէք միայն այն բանն որ ճշմարտապէս յարգելի է:

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ճշմարիտ արժանաւորութիւնք ցեղին ազնուութեան վերայ չէ։

Չէ՛ արդարեւ, ազնուական ծննդեան կամ ազնուատոհմութեան վերայ չէ ճշմարիտ արժանաւորութիւնն։ Ի՞նչ օգուտ է երեւելի տոհմէ ըլլալ, թէ որ իւր մոլութիւններով կը մթընցընէ անոր պայծառութիւնը։ Մե՛ր նախահարց ունեցած արժանապատուութիւնք չկրնար զմեզ ալ պատուոյ արժանի ընել, և անոնց գեղեցիկ գործերն՝ որով երեւելի եղած են, եթէ անոնց չհետեւինք, ուրիշ օգուտ մի չեն ըներ, բայց եթէ իրենց ապազգայ սերնդոց անարգութիւնը նուաստութիւնն աւելի յայտնի կը ցուցընեն։

Որքան աւելի աղէկ էր անարգ և նուաստ վիճակի մէջ ծնանիլ և անձնական առաքինութիւններով երեւելի ըլլալ, քան թէ մնոտի տիտղոս կրել վրան Պէյի կամ Էմիրայի։

Հռովմայեցւոյ մի գեղեցիկ խօսքը։

Երեւելի Հռովմայեցւոյ մի երբ երեսը կը զարնէին անարգ տոհմէ ըլլալը, պատասխան կու տայր ազդու կերպով մի. «Յիրաւի ես չեմ կրնար իմ ազնուատոհմութիւնս յառաջ բերել ձեզ. բայց կրնամ ցուցընել իմ վէրքերուս նշանները, զոր իմ հայրենեացս պաշտպանութիւն ըրած ժամանակս կրեցի։ Ահա ասոնք են իմ ազնուականութեանս տիտղոսներն»։ Այս մար-

դուս տուած պատասխանը խիստ խելացի էր, և կրնար նաև զրուցել Իփիկրատէս անուն մէկու մի բարձր հպարտ ազնուականին, որ նոյն յանդիմանութիւնը կուտայր Իփիկրատէսին, և իր վարմունքովն իւր պատիւը կորսնցուց. «Իմ ցեղս, ըսաց անոր Իփիկրատէս, ինձմէ կը սկսի. քու ցեղդ քու վրադ կը վերջանայ»։

Ու չկրաւի որքան ազնուատոհմ մարդիկ մոռացութեան մէջ ինկած են, և որքան ցած ազգէ մարդիկ մեծ անուն ունեցեր են, և իրենց անձնական գեղեցիկ յատկութիւններով և փառաւոր գործերով արժանի եղած են իրենց ժամանակի մարդոց և ապագայից յարգանաց։

Առանց ազնուութեան ծննդոց արժանաւորութիւնն ուեշի մեծ պատիւներու կը բարձրացընէ։

Օրինակ միակ։

Սեստոս Ե այգեգործի մի տղայ էր, և կոչուեցաւ Հրճանիկ Փերեդդի։ Իւր հայրը չկրնալով տղուն ապրուստը ճարել, գեղացւոյ մի քով դրաւ, և այն ալ իւր ոչխարներուն պահապան ըրաւ, և յետոյ խոզերու փարախի (մանտրայի) գլուխ կարգեց։ Սեստոս իւր գործին հոգ կը տանէր, երբ օրին մէկը տեսաւ որ Փրանչիսկեան կրօնաւոր մի կ'անցնէր, և կ'աղաչէր զինքն որ Ասկոլի քաղքին ճամբան իրեն ցուցընէ։ Տըղայն ընկերացաւ անոր, և այն կրօնաւորաց վանքին մէջ մտնելով ինքն ալ, այնպիսի մեծ փափաք մի ցըցուց ուսման, որ յետոյ աղէկ կըր-

թութիւն ստանալով երեւելի եղաւ գիտութեանց մէջ ։ Եւ որովհետեւ սրամիտ էր , իւր վարժապետաց ջանքն եւ անձնակալութիւնն անօգուտ չէին եղներ , եւ իւր հաճութեամբն ընդունեցաւ եւ հագաւ սուրբ Ֆրանչիսկոսի պատմուճանը ։ Երջանիկ Փերեդդին քիչ ժամանակի մէջ եղաւ քերթող եւ քաջ փիլիսոփայ ։ Սրբազան կարգն ընդունելով վարդապետ ձեռնադրեցաւ եւ աստուածաբանութեան դասատու կարգեցաւ Սիէնայի մէջ ։ Անկէ յետոյ որ աւուր իւր արժանաւորութիւններն յայտնի եղան , եւ մէկ պաշտօնէ ուրիշն անցնելով , վերջապէս 1585 ին հայրապետական աթոռը նստեցաւ , եւ բոլոր աշխարհի ցոյց տուաւ զինք նոյն պաշտօնին արժանաւոր ըլլալն . եւ իւր օրինակով սորվեցուց թէ՝ արժանաւորութիւնը կրնայ ծննդեան պակասութիւնը լեցընել , եւ թէ աղքատիկ խրճիթին մէջէն կրնայ երբեմն յառաջ գալ այնպիսի մէկն , որ արժանաւոր ըլլայ մեծ պաշտօնի հասնելու ։

Այս խորհուրդս ունէր նաեւ երեւելի մարաջախտ Պայրն , որ զինուորական արհեստին մէջ նշանաւոր եղաւ ։ Ենրիկոս Դ. ին դիմացն ելնելով զինքն իւր կարգին ասպետ ընդունելու համար , "Տէր իմ , ըսաւ իւր ազնուականութեան համար ունեցած վկայականներն անոր ցուցնելով , ահա իմ գերդաստանիս ազնուականութիւնը հաստատող տիտղոսները" ։ Ետքը ուզելով իմացնել թագաւորին՝ թէ Ն. Սէ-

հանգստութեան համար փառաւոր գործեր ընելն աւելի մեծ կը սեպէ, քան թէ յառաջ բերած իւր հին տիտղոսները. վերայ բերաւ իւր թուրին կոթէն բռնելով. «Առաւել այս տեղս, ով թագաւոր, տեսէք անոնց առուգութիւնը»։

Այս օրինակներուս վերայ կրնամք որոշել ճշմարիտ արժանաւորութիւնը։ Մտքերնիդ բերէք անգամ մի որ ազնուատոհմութեան տրուած փառքը՝ մտացածին փառք մի է, թէ որ առաքինութեան հիման վերայ հաստատուած չէ. և թէ որ պատիւը մարդոյս ցեղին հնութեան վերայ ըլլար, մենք ամենքնիս ալ ազնուական և պատուոյ արժանի կ'ըլլայինք, որովհետեւ ամենքս ալ Ադամայ զաւակներն եմք։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

Մարդուս արժանաւորութիւնը փարթամութեան վերայ չէ։

Ներքին յարգանաց արժանի ըլլալու համար, ինչպէս որ ազնուականութիւնը՝ նոյնպէս և ոչ փարթամութիւնը կրնան օգուտ մի ընել մարդոյ. և թէ որ փարթամութեամբ է որ պատիւ կ'ընդունի, զանոնք գովելի և աղէկ բաներու գործածելով միայն կ'ըլլայ։ Ասկէ ի զատ՝ աշխարհիս բոլոր գանձերն իմաստուն մարդուն աչքին արտաքին և ընդունայն զարդ մի են. և ես ադամանդներով զարդարուած պատկերն և կամ ոսկիէ ու արծաթէ արձանը կը նմանցընեմ այն

մարդուն, որ իւր գոյքերէն ի զատ ուրիշ արժանաւորութիւն մի չունի ։

Նաեւ ամենայնիւ դուք ամեն տեղ կը լսէք որ փարթամութիւնները կը գովեն և կը պատուեն, և կը տեսնէք եւս որ մարդոց մէջ շատերն ունեւորութիւնն իրենց պատուաւորութեան տառապելի և անխոնջ աշխատութեանց առարկայ մի ըրած են ։ Բայց սիրելի որդեակք իմ, ուրիշին օրինակով մի մոլորիք, այլ գիտցէք որ նոյն իսկ մարդիկ, որոնք կարծես թէ ուրիշ ամեն բանէն աւելի կը յարգեն այս ընդունայն մեծութիւնները, անոնք դարձեալ կը խոստովանին անոնց որքան արհամարհելի ըլլալը, և թէ ինչպէս անշահախնդրութիւնը վեհանձն մարդոց առաքինութիւնն սեպուած է միշտ ։

Անշահախնդրութեան օրինակ։

Այս առաքինութիւնն, զոր աւելի իրաւամբ առատաձեռնութիւն կրնամք կոչել, նոյնն է որ Փոկիոն հռչակաւոր յոյն առեւտրականին և փիլիսոփային անուանն անմահացուց ։ Օր մի Աղեքսանդր մակեդոնացին մեծ ընծայ մի խրկելով անոր, նոյն ընծայն բերողներէն ուզեց իմանալ թէ ինչու համար Աղեքսանդր այնքան բազմաթիւ աթենացւոց մէջէն զինք միայն ընտրած էր իւր բարերարութիւնը փայելող ։ Պատասխան տուին թէ՝ «Աղեքսանդր այնքան մարդոց մէջ զքեզ միայն առաքինի և բարեկիրթ դատեց »։ Կրկնեց Փոկիոն. «Աղաչեմ թէ, Աղեքսանդր, իրօք

այնպէս ըլլայ » ։ Թագաւորը նորէն փորձել ուզեց զինքն, և Ասիոյ մէջ չորս քաղաք առաջարկեց անոր՝ որ անոնց մէջէն մէկն իւր սրտին հաւնածն ընտրէ, և վայելէ բոլոր եկամուտներովը ։ Բայց Փոկիոն չուզեց ևս որ անոր առատաձեռնութեան շնորհքները չընդունելովն արհամարհութեան կասկած մի տայ իրեն․ ուստի չափաւորելով իւր խնդիրքն՝ աղաչեց կայսեր որ բարեհաճի ազատութիւն շնորհել չորս հոգւոյ, որոնք Սարդի քաղաքի բերդին մէջ բանտարկեալ էին, և իսկոյն ընկալաւ խնդիրքը ։ Այս առաքինի դիւցազունը, այս անշահասէր քաղաքացին նոյնպէս հրաժարեցաւ ընդունիլ ժամանակէ մի յետոյ Աղեքսանդրի յաջորդին Անտիպատրոսին ըրած պարգևները ։ Երբ իւր բարեկամները կը յորդորէին զինքն որ ընդունի զանոնք գոնէ իւր զաւկըներուն համար, պատասխան տուաւ․ « Թէ որ իմ զաւկըներս իրենց հօր պիտի նմանին․ գոհ կ'ըլլան իմ ձգած փոքրիկ ժառանգութենէս․ իսկ թէ որ դժբաղդութի անառակութեան տալու ըլլան զիրենք, չեմ կըրնար ես անոնց զեղխութիւնը կատարելու համար մեծագանձ ժառանգութիւն մի ձգել » ։

Անշահասէր դիւցազուններ։

Պայարտօ ասպետը, որ էր Կարոլոս Ը ի թագաւորութեան ժամանակ, քիչ երևելի չեղաւ իւր գեղեցիկ գործովը՝ զոր հիմայ պիտի պատմեմ ձեզ ։ Երբ Վենետիկցւոց Պրեշիա քաղա-

քին վերայ Թշնամիներն յարձակուելով նուաճեցին, Պայրոտ մէկ տուն մի պահպանեց աւարառութենէն, որուն մէջ ինքն ապաւիներ էր, և տան տէրն՝ որ տիկին մի էր, երկու աղջիկներովը ազատեց: Տընէն ելնելու ժամանակ տիկինն ուզելով իւր երախտագիտութիւնն անոր յայտնել, տուփ մի ընծայեց, որու մէջ մուրհակ (Թէմէսուկ) մի կայր երկու հազար հինգ հարիւր տուգաթի արժողութեամբ, զոր Պայրոտ առաջեան ամենեւին չուզեց ընդունիլ: Բայց յետոյ տեսնելով Թէ զայն չընդունելովն, իւր առատաձեռն վճատարին սիրտը պիտի վըշտացընէ, որ միանգամայն անոր երթալուն վերայ ևս կը ցաւէր, հաճեցաւ ընդունիլ այս մեծ պարգեւները, և անոր երկու աղջիկները կանչել տալով՝ որպէս Թէ իւր հրաժարական ողջոյնը տալու համար, շնորհեց անոնց ամէն մէկուն հազարական տուգաթ, որ իրենց ամուսնութեան դիւրութի մի ըլլայ, և մնացած հինգ հարիւրն ալ բաշխեց աղքատ ընտանիքներու, որոնք պատերազմին երեսէն կարօտութեան մէջ մնացեր էին:

Հռչակաւոր Դիւրէն զօրավարին երեւելի գործերը պատմող հեղինակն, անոր փառաւոր և յիշատակութեան արժանի գործերէն մէկը կը սեպէ հետեւեալ դիպուածը, որուն վերայօք չեմ ուզեր լռութեամբ անցնիլ: Երբ Գերմանիոյ մէջ կը հրամայէր, չեզոք քաղաքի մի բնակիչները կարծելով Թէ Գաղղիացւոց բանակը

նոյն քաղաքին մէջէն պիտի անցնի, հարիւր հազար Թալէր. շնորհեցին զօրավարին, որ իրենց քաղաքն ոտք չկոխելով, ուրիշ ճամբէ մի անցնի երԹայ։ Բայց Դիւրէն անարգութիւն սեպելով ընդունիլ այն գումարն, զոր իրենց սնոտի երկիւղէն և սխալմամբ կ՚ընծայէին, պատասխանեց նոյն դեսպաններուն. «Չեմ կրնար ընդունիլ ես առանց խղճմտանաց այդ գումարն՝ զոր դուք ինձ կը նուիրէք, վասն զի ամենևին մտքէս ալ չանցուցի ձեր քաղաքին մէջէն անցնիլ»։

Այս գործերս յիրաւի զարմանալի են, որոնք երևելի կը հանդիսացրնեն մեծ մարդիկն. և ո՜ր անձը կարդալով չգովէ անոնց արժանաւորութիւնն, ու ընդհակառակն ատելի են ընդհանրապէս ագահ և հպարտ մարդիկ, որոնք իրենց ցանկութիւնք լեցընելու համար հազարումէկ կերպ անօրէնութիւններ կը գործեն, անգԹութեամբ կը տառապեցրնեն և կը զրկեն աղքատները, որ անոնց գոյքերուն իրենք ճոխանան։

Շադկլեան ծովապետն եկեղեցին երԹալով պատարագ լսելու համար, աղքատ մի մօտեցաւ իրեն ողորմութիւն խնդրելու՝ երբ ինքն ջերմեռանդութեամբ աղօԹքի կեցած էր։ Ձեռքը գրպանին մէջ խոԹելով քանի մի ոսկի դուրս հանեց և առանց համրելու տուաւ անոր։ Աղքատն այս մեծ գումարը տեսնելով՝ զարմանքի մէջ մնաց. և որովհետև բարի մարդ մի էր, մտածեց Թէ գուցէ ծովապետը սխալած ըլլայ. ուստի առանց ձեռք դպցրնելու պահեց քովը։

Յետոյ գնաց սպասեց եկեղեցւոյն դուռը, և տեսնելով այն ողորմածասէր մարդուն դուրս ելնելը, մօտեցաւ քովն և ըսաց․ «Տէր իմ, անտարակոյս սխալած էք դուք։ Առէք այս ստակը, կ՚աղաչեմ․ այս ողորմութիւնը ինծի համար պէտի չըլլայ»․ այսպէս ըսելով տուաւ անոր ոսկիները, որ քիչ մի յառաջ անկէ ընդուներ էր։ Զարմացաւ ծովապետն անոր ուղղոյն վեհանձնութեան վերայ․ մարդասիրութեամբ մի աղքատին երեսը կը նայի ու կ՚ըսէ․ «Իրաւ է բարեկամ, ես ալ չգիտնալով այդքան սուղ ողորմութիւն տուած եմ քեզ․ բայց որովհետև դուն առատասրտութեամբ նորէն ետ տալ կ՚ուզես, զոր սխալմամբ տուի քեզ, սա հիմայ երջանկութեամբ վայելէ այս դրամը, և շնորհակալ եղիր Աստուծոյ նախախնամութենէն»։

Այս աղքատին օրինակն, որ իւր պարկեշտութեամբն առատօրէն և արդարութբ վարձատրուեցաւ, աղէկ փորձ մի է, որ մեր անձնական շահուն վնաս մի չտալէն ի զատ, շատ անգամ ևս խիստ օգտակար կ՚ըլլայ մեզ առաքինութիւնն․ այսպէս չէ ընչից ցանկութիւնն և գանձ դիզելու սէրը, որ ունեցող մարդն ազատ չէ երբէք թշուառութիւններէ։ Այս կիրքս շատ անգամ անիրաւութիւն ընելու ևս պատճառ կ՚ըլլայ․ և կը տեսնեմք որ ստակի վերայ եղած չափազանց սէրը, մոլութի մի կուտայ մարդոյս օրէ օր իւր գոյքն աւելցնելու, որ սովորաբար իւր պատուոյն և բարե-

պաշտութեան մխաւեալին կրնայ ձեռք բերուիլ։ Փարթամութեան մէջն ոչ միայն արդարութիւն և պատիւ կը մոռցընէ, այլ և մինչև բնութեան զգայմունքները խափանել կուտայ անոնց սրտին մէջ, ուր տեղ պէտք էր որ խորունկ արմատացած ըլլային։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պատուոյ եւ իշխանութեանց վերայ։

Դուցէ դուք կը կարծէք՝ թէ մեծ իշխանութիւնները համբաւներն աւելի պատուաւոր են անոր համար որ աստիճանաւ հասարակ մարդոցմէ վեր են։ Այլ այնպէս չէ, սիրելի որդեակք իմ, թէ որ այս դրութեանց մեծ երեւցող անձինքն իրենց իշխանութենէն և պատուէն ի զատ՝ ուրիշ արժանաւորութիւն մի չունին, մարթ է ըսել՝ որ անոնք ճշմարտապէս արժանաւորութիւն չունին։ Կը նմանին այն արձաններուն, որոնք պատուանդան (պատուանդ) ունենալնուն համար՝ տեսնողներուն աչքին հսկայաձեւ կ'երեւին։

Չէ, սիրուն որդեակք իմ, իշխանութիւնները մարդոյս արժանաւորութեան ուրիշ բան մի չեն կրնար ընել, այլ այն միայն՝ զոր պատուանդանները գաճաճներուն (ճիւճէներուն) արձանին կ'ընեն։ Որոնք թէպէտ եւ հեռուանց տեսնողներուն աչքին խիստ մեծ կը ցուցընեն,

բայց մտքէն նայողներուն խիստ պզտի կ՚երեւին ։ Ամենեւին մէկն իր իշխանութեանց համար պատիւ չէ գտած , այլ միայն իր բարի վարմունքով՝ արժանի եղած է պատուոյ ։

Թագաւորի մի իմաստուն վարմունքն իւր որդւոյն հետ։

Ասիոյ Թագաւորներէն մին իմանալով թէ իր որդին անկարգութեան տուեր է զինք , կանչեց քովը , եւ իր գերիներուն մէջէն ամենէն անարգն եւս բերել տալով , երկուքին ալ վերանուն լաթերը հանուեցուց , եւ դարձաւ դէպ ի որդւոյն ըսաց . "Նայէ եւ տես մտադրութեամբ ասոր մարմինն , ետքը քու վերադ դարձու աչքդ եւ նայէ՝ թէ ի՞նչ խտրութիւն կայ իշխանի մի եւ գերիին մէջ ։ Ամենեւին զանազանութիւն մի չես կրնար գտնել , այլ մարմնոյ կողմանէ կը տեսնես որ ասոր հետ հաւասար ես . բայց թէ որ այս գերիին ոգւոյն մէջ կարող ըլլայիր թափանցել , կը տեսնէիր որ ասոր հոգին քուկինէդ աւելի գերազանց է . վասն զի նա ինքզինքն անկարգութեան եւ մոլութեան չտայ , որոնք զքեզ պատուէդ կը ձգեն եւ անարգ կը ցուցընեն ամենուն աչքին ։ Մի խաբուիր ուրեմն իշխանութեան սին շքեղութենէն՝ որու մէջ ինքզինքդ կը տեսնես . այլ միտքդ բեր թէ՝ որքան որ իշխանապանծ վիճակի մէջ ես , այսու ամենայնիւ ամենէն անարգ գերիէ մի եւս թշուառ ես , թէ որ նա քեզմէ առաքինի ըլլայ" ։

Երիտասարդ իշխանազունը բնութեամբ բա-

ընտրուն ըլլալով, շատ օգուտ ըրաւ իրեն այս խըրատս, և առանց դժուարութեան իմացաւ՝ թէ անձնական արժանաւորութիւն է միայն որ ճշմարտապէս մէկ մարդ մի ուրիշ մարդէ կը զանազանէ։

Սրտանց կը ցանկամ ես, սիրուն որդեակք իմ, որ դուք ևս այս իշխանազուն տղուն պէս համոզուիք ըսած ճշմարտութեանս։ Նոյն ատեն այլ, ձեր իմաստուն վարմունքով կը ջանաք երեւելի ըլլալու. և չէք ցանկար նմանիլ անարգ մարդոց, որոնք մեծ երեւալու համար անարգութիւն և խորամանկութիւն կը բանեցընեն։ Եւ որովհետեւ ասոնք այս միջոցներով չկարեն իրենց դիտաւորութեան հասնելու, ուստի ուրիշին պաշտպանութեամբ կ'աշխատին մեծ պատիւներու բարձրանալ. բայց պաշտպան եղող անձինքն ոչ երբէք կրնան տալ անոնց ճշմարիտ արժանաւորութիւն։ Իսկ դուք սովորութիւն ըրէք հիմակուց ձեր վրայ փնտրելու երեւելի ըլլալու համար հարկաւոր եղած միջոցները, կ'ուզեմ ըսել ձեր խոհեմութիւնն և խելքն աղէկ բաներու գործածելու, և կանոնաւոր ու խելացի վարմունքին մէջ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

Քաջութեան եւ պատերազմական գործոց վերայ։

Երիտասարդ տղայոց աչուըները դիւրաւ կըրնան խաբուիլ. և ինչպէս որ պզտի տղայոց մեծ

մասը փայլուն և շողշողուն երևելը կը սիրեն, դուք ես կը զարմանաք այն կարգէ դուրս դիւցազուններուն վրայ, որոնց յաղթութիւններն և աշխարհակալութիւնները գովութեամբ կը յիշատակուին պատմութեանց մէջ։ Ալ գիտցէք որ ամենէն մեծ աշխարհակալն արհամարհութե արժանի է, երբ բովանդակ ժողովրդեան կամ ազգի տիրելէն յետոյ, ինքն իւր կիրքերէն կը յաղթուի, և արդարութիւնն ու մարդկութիւն ոտքի տակ առնելով այն յաղթութիւնը կը ստանայ։

Աղքատակի մի խեչացի պատասխանը։

Մեծն Աղէքսանդր շատ ընդարձակ երկիրները տիրելէն յետոյ, ուր տեղ իւր պատուսիրութիւնը կ՚առաջնորդէր իրեն, հարցուց ստատակի (գուրսանոի) մի, զոր ինք գերի բռնած էր, թէ ի՞նչ իրաւունքով ծովերուն վրայ ստղատակութիւն կ՚ընէ։ Որուն պատասխան տուաւ. "Նոյն իրաւունքով՝ որով դու բոլոր աշխարհս աւարառութբ կը կողոպտես. բայց ես պզտի նաւու մի վրայ միայն կը յարձակիմ՝ և աւազակ կը սեպուիմ, դու որ անթիւ և զօրաւոր նաւատորմիղով կը յարձակիս կը թալես՝ աշխարհակալ կը կոչուիս"։ Խելացի է տուած պատասխանն, որով պէտք է համոզուիլ՝ թէ մեծամեծ գործերը թէ որ արդարութեան վրայ հիմնած չեն, մեծ յանցանքներ են։

## Պէյար ասպետին գեղեցիկ խօսքերը։

Պէյար ասպետին մեռնելէն առաջ ըրած խօսակցութիւնէն յայտնի կ'երեւի թէ այսպէս կը մտածէր նա ։ Իւր թագաւորին համար պատերազմելու ժամանակ սաստիկ վիրաւորուելով, ծառի մի տակ փռուեր պառկեր էր ։ Պուրպօնի դուքսը, որ Գաղղիացւոց բանակը կը հալածէր, անոր քովէն անցնելով ճանչցաւ զինքն եւ քովը մօտենալով ըսաւ թէ՝ “ Շատ կը ցաւիմ այդպիսի վիճակի մէջ տեսնելով զքեզ ” ։ Պէյար զօրավար պատասխան տուաւ. “ Պարոն, իմ վերաս պէտք չէ որ ցաւիս, վասն զի ես իբրեւ պատուաւոր եւ հաւատարիմ զինուոր կը մեռնիմ. այլ քու վրայ ցաւիլ պէտք ես, որ թագաւորիդ եւ հայրենեացդ դէմ կը պատերազմիս ”. եւ այսպէս ըսելով հոգին աւանդեց ։

Այս քաջասիրտ զօրավարն իրաւունք ունէր իւր վիճակը նախամեծար սեպելու քան զյաղթողին. վասն զի մահն յաղթանակ մի է, երբ մարդս իւր պարտքը կատարելով կը մեռնի ։

Հիմակուց սովորութիւն ըրէք, սիրելի որդեակք իմ, այս իմաստուն առածներուս վրայ կանոնաւորել ձեր գաղափարներն եւ ընթացքը ։ Լաւ սեպեցէք միշտ պարտաւորութիւնն քան զփառքը, եւ մանաւանդ ասոյդ գիտցէք որ ճըշմարիտ փառքն իւր պարտաւորութիւնները կատարելուն մէջ կը կայանայ, եւ ամենեւին մի խաբուիք պատուասիրութեան սուտ հրապոյր-

նուրբն ։ Վասն զի պատուասիրութեան կիրքը շատ բաներու յոյս կուտայ, բայց ընաւ օգուտ մի չունի, և մեք ամէն օր կը տեսնեմք որ խիստ մեր բարձրանալ ուզող մարդիկ մէկէն վար իյնալով՝ ինքզինքնին կը կորսնցնեն մէջը ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ե․

Տաղանդաց եւ հանճարոյ վերայ։

Տաղանդն և հանճար տուրք են իրենց պայծառութեամբ մարդոյս աչուըներն առնուլ․ և չէ թէ զանոնք ունեցողներն յարգ և պատիւ կը գտնեն, այլ ընդհակառակն ատելի կ'ըլլան․ թէ որ չարաչար բանեցընեն ։

Խօսք մի կայ կ'ըսեն, թէ՝ գէշ մարդու մի ունեցած հանճարը, յիմար մարդու ձեռք եղած թրի կը նմանի ։ Չկայ հեղինակներուն մէջ անկէ գէշն և վնասակարն, որ իւր խելքին հաւնելով ուրիշին տկարութիւններն և կրօնքը կ'արհամարհէ ։ Այս ոգին ունեցող հեղինակները կը նմանին հասարակութեան թոյն խմցընողներու, վասն զի իրենց գիտութիւնն կարդացողներուն միտքն և սիրտն ապականել և խանգարել է ։ Կը տեսնեմք նաև որ անոնցմէ մին երբ ուշը վերան բերելով մտածելու ըլլայ անգամ մի՝ թէ ինչ մեծ չարութիւն յառաջ կուգայ իւր գրուածներէն, պարտաւորութիւն մի իրեն կը համարի այն գրածները մերժելու և հրապարակաւ զանոնք արհամարհելու ։

Ծաղկամասնակ հեղինակին ըրած գեղեցիկ ցոյցը։

Ուսումնական տղուն մէկը Տոկէ անուն, դիպուածով ատապել պատմութիւն մի կարդալով, ուզեց որ ինքն ալ ուրիշ պատմութիւն մի շարադրէ անոր նման. և սկսելու պէս միտք ունէր, յաջողեցաւ իրեն գլուխ հանել մտքին դրածը։ Լրացնելէն յետոյ իւր մօրը ցուցուց զայն. բայց մայրը ճշմարիտ քրիստոնեայ ըլլալով՝ քանի մի երես կարդալով, դարձաւ ըսաւ անոր. «Ո՛հ, որդեակ իմ, դժբախտ մարդ մի կ՚ըլլայիր դու, թէ որ Աստուծոյ քեզ տուած տաղանդն այսպէս չարաչար բանեցընելու ըլլաս»։ Տղայն հնազանդութեամբ մտիկ ըրաւ մօրը զրուցածին. և ճշմարիտ առաքինութենէ դրդեալ՝ զսպեց իւր անձնասիրութիւնն, և իւր շինած պզտի գրքուկը կրակը նետեց։

Զգուշամիտ նկող հեղինակը։

Լաֆոնդէն, որու շինած սիրուն առակները շատերուն յայտնի է, դժբախտութեամբ քանի մի անվայելուչ պզտի պատմութիւններ գրեր և տպել տուեր էր։ Յետոյ ծանր հիւանդութիւն պատկելով, բոլոր իւր գործած մեղքերը խոստովանեցաւ. և երբ վերջին թօշակին ընդունելու պատրաստուեցաւ, թողութիւն խնդրեց Աստուծմէ ի ներկայութեան քանի մի երեւելի անձանց Գաղղիոյ ճեմարանէն, խոստովանելով անկեղծութեամբ ըրած զղջումը նոյն պատմու-

թիւնները գրելուն համար, զորոնք սոտանց կ'ա-
նէր . և խոստացաւ որ եթէ առողջանալու ըլ-
լայ, իւր հանձարը բոլորովին բարոյական և աս-
տուածպաշտութեան գրքեր շարադրելու նուիրէ ։

Եւ որպէս զի մարդս իւր ունեցած տաղանդ-
ներուն համար ուրիշին յարգանացն արժանա-
ւոր ըլլայ, հերիք չէ միայն գէշ բաներու չյա-
նեցընել զայն, այլ պէտք է նաեւ զգուշանալ
զայն փճացընելէն ։ Մարդս իմաստութեան ա-
մենէն մեծ զարդը պարկեշտութիւնն է, որու
վերայ հետեւեալ առակը շինած է մէկը ։

---

# ԱՌԱԿ

Արամազդ. Պարկեշտութիւն եւ միւս առաքինութիւնք։

Արամազդ մեծ աստուածը, իւր աստուա-
ծային պայծառ մտաց հայլին մէջ տեսաւ զա-
ռաքինութիւնն, ինչպէս որ միշտ իւր քովէն ալ
չէր զատուէր, որուն բոլոր աշխարհս երանու-
թիւն կուտայ, և ամեն մարդ աշխարհիս մէջ
ունենալ կը փափաքի ։ Յետոյ երբոր մահ-
կանացուաց ազգն սկսաւ սերիլ երկրիս վերայ,
առաքինութիւնք թեւաւորուելով անոր բնա
կարանը գնացին ուրախ դէմքով, և ամենքն ալ
կ'ըսէին անոր թէ՝ ես զքեզ երջանիկ պիտի ը-
նեմ ։ Պարկեշտութիւնն՝ որ սովոր է միշտ ամե-
նէն ետեւ մնալ, ինքն ալ ուզեց անոնց գա-
ցած տեղն երթալ տեղ մի գտնել. բայց ամե-

նուլին պարապ տեղ չէր մնացեր ։ Ամօթխած օրիորդը սիրտը կոտրած և ամչնալով այս դիս և այն դին աչուըները կը պտըտցընէ , և տեղ մի չգտնելով՝ ետ պիտի դառնայր իւր երկնային բնակարանը , երբ բարեգութ հայրն չաստուածոց , մարդասիրութեամբ անոր նայելով . “Աղջիկս , ըսաց , մտիկ ըրէ , իմ սէրս քեզ ցուցընելու համար ինչ դաշինք պիտի ընեմ քու հետդ ։ Թող որ քեզ համար , սիրուն աղջիկս , քու քոյրերուդ պէս բոյն մի կամ օթարան մի չթողուցի քեզ որ ունենաս այն բնակարանին մէջ , ուր տեղ փայլենամիտ և ապստամբ մարդն իւր օրէնքը դրած է , բայց գիտցիր որ անոնցմէ աւելի մեծ պատիւ պիտի ունենաս դու ։ Քու ընկերներդ ամեն մէկերնին առանձին իշխանութիւն ունին . իսկ զքեզ Ողիմպոսի Թագաւորն իւր մասնաւոր սիրոյն համար այսօր ամենուն վերայ Թագուհի կը կարգէ ” ։ Այսպէս ըսաց Արամազդ վեհափառ կերպարանօք , և Պարկեշտութեան ձեռքէն բռնելով նստեցոյց յաթոռն ։ Այն ժամանակ բոլոր Առաքինութիւններն երկրպագութիւն ըրին նորա դիմաց . և նոր Թագուհւոյն յաւիտենական հաւատարմութիւն երդուըննալով , մէջերնէն և ոչ մին կարող է անոր աթոռը նստել . և ոչ առաքինութիւն յարգ մի կ՚ունենայ , թէ որ Պարկեշտութիւնն անոր հետ չըլլայ ։

Յիրաւի առանց պարկեշտութեան՝ առաքինութիւնները զմարդ մնաչարծ , յանձնացա-

տան, և կատակոր կ՚ըլլեն. և տանք այնպիսի պակասութիւններ են, զոր եթէ մէկն ունենայ, ամենուն առջև կ՚ըլլայ ։

Պատիժ գաղտնի սնապարծից:

Մենեկրատէս անուն բժիշկ մի մնապարծութեամբ անուն դրած էր իրեն Արամազդ փրկիչ, մի քանի հոգի բժշկելուն համար, զոր իւր յաջողակութեան կուտայր ։ Փիլիպպոս Մեծին Աղեքսանդրի հայրն իմանալով զայս, ուզեց հասկցնել անոր իւր ծիծաղելի զառանցութիւնը, ատոր օր մի ճաշի հրաւիրեց զանիկայ. և զատ սեղան դնել տալով նորա համար՝ հրամայեց որ միայն խնկաման մի դնեն անոր վերայ ծխել ։ Բժիշկն առջի բերան կարծեց թէ իրեն պատիւ էր այն. բայց յետոյ տեսնելով թէ ուրիշ կերակուր բերելու երկար ատեն կը սպասէր անօթի, իմացաւ իսկոյն այն ծխած խնկին նշանակութիւնը. և բոլոր հրաւիրելոց քով խաղալիք և ծաղր ըլլալէն յետոյ, կորսնցուց սեղանին քով իւր դեղերցին տուփերին հետ մէկտեղ բոլոր իւր համբաւը, և մնաց իրեն միայն անօթ, որուն արդարապէս արժանի եղաւ իւր սնապարծութեամբ ։

Թէ որ ըմբռնութիւնն հազուադիւտ ապրանքներ տուած է ձեզ. զգուշ կեցէք, կ՚աղաչեմ, չըլլայ որ անով մնապարծութիւն առնէք ։ Ձեր հարստութիւնը բոլոր ձեր ունեցած փառքն ու պատիւը կը փճացնէ, արժանաւորութենէ կը

զինէ. գրգռէ կեցիք նաեւ խիստ բարձրամտու-
թեան: Ըստակը կ'ըսէ թէ՝ Աստուածութիւն
ամեն ինչ կը խանգարէ: Նա յիշուի այնպէս է:
Ընդունայն երեւոյթով մը մեծութեան համբաւ-
քը յոյս կուտայ մեզ, բայց ուրիշ կը նուաստա-
ցնէ, եւ երեւնիս անձով կը ծածկէ: Արբէշ-
պատութիւն մի եւս կայ, որու մէջ շատ ան-
գամ կ'ինկնի մարդ. այսինքն խնամակալութիւ-
նը քան զհաստատուն եւ ճշմարտապէս օգտա-
կար եղող յատկութիւններն լաւ համարել:
Օրինակի համար. շատ մարդիկ խելացի մար-
դուն պատիւ կուտան, եւ զգօնամիտ մարդուն
չեն տար այն փայելուչ յարգանքն՝ որու արժա-
նաւոր է: Առաջնոյն ունեցած խելքը, որ այն-
քան մեծ սեպուած է, շատ մեծ մարդոց կո-
րստեան պատճառ եղած է, եւ նոյն խելքն է
զանոնք կորսնցնողը. իսկ ճշմարիտ զգօնամիտ
մարդը շատ անձինք չխնէ եւ զժուարին գործ-
քերէ ազատէր է եւ կ'ազատէ միշտ ամեն օր,
նաեւ ատրին ատախձանէ եղող:

Արտաքին գեղեցկութեան վրայ:

Շատ մարդիկ կան որ ուրիշ գեղեցկութի
եւ հանճարեղութեամբ երեւելի ըլլալու ամեն-
ւին հոգ չտանելով, կը նային որ մարմնով գե-
ղեցիկ եւ շնորհալի ըլլան. եւ այս բանս առաւել
կանանց մէջ կ'երեւի, որոնք գեղեցկութիւնը
գերագոյն արժանաւորութիւն մի կը սեպեն:
Բայց միայն անոնք չեն այսպիսի յիմարական

միտք ունեցողները. կան շատ երկրաւոր տղայք եւս, որ Աստուծոյ տեղ դրած են զիրենք. որոնք իրենց աղուոր դէմքերնուն վերայ գոռոզանալով սիրամարգի նման կը փքանան կ՚ալէմըլկին, որպէս թէ չկան իրենց պէս աշխարհիս վերայ ուրիշ գեղեցկադէմ մարդիկ: Բայց այս բանս անախտութիւն ըլլալը ձեզ իմացընելու համար, կը հարցընեմ, սիրելի որդեակք իմ, կը պատուէիք դուք այն արձանն որու դէմքին գծագրութիւնները կանոնաւոր ըլլային, կամ բընական և կենդանի գոյն ունենար. և նոյն արձանը շնչաւոր կենդանիէ մի առաւել կը սեպէիք դուք, որու երբեմն այնքան աղուոր չըլլար նման արձանին, անտարակոյս ոչ: Արդ՝ գիտցէք ուրեմն որ երկրաւոր տղայ մի, որու միայն դէմքը գեղեցիկ ըլլայ, բայց գովելի յատկութիւն մի չունենայ, այն արձանէն աւելի յարգոյ չկրնար ըլլալ:

Կուռքի մի պատկերը:

Կռապաշտութեան ժամանակ տաճարի մի մէջ կուռքի պատկեր կայր աննման գեղեցկութեամբ: Ժողովուրդը խիստ սիրով վառուած էր այս պատկերիս և Աստուծոյ տեղ դրած կը պաշտէր, և պատիւ ու մեծարանք կու տայր անոր: Օր մի դիպուածով գետնին ինկաւ արձանն և կտոր կտոր եղաւ, և ամէնքն ալ զարմացան մնացին տեսնելով որ անոր գեղեցկութիւնն ընդունայն և արտաքին էր, մէջը դա-

տարի և միայն գարշելի մկներով լեցուն: Այս կուռքը շատ կանանց և անթիւ երիտասարդներու պատկերն է, որոնք արտաքին կերպարանքով կը փայլփլան կը նայէին, և ներսերնին հաստատուն բան մի չունին. ուղեղնին լեցուն է հողմով և անմիտ մտածմունքներով, որ կը նմանին արձանին փորին մէջէն դուրս ցատկող մկներուն: Երբոր մօտէն քննելու ըլլանք, աւելի արհամարհութիւն մի կ՚ունենանք անոնց դէմ. ինչպէս որ այն հոյակապ արձանը տեսնողները ունեցան, երբ ինկնելէն յետոյ տեսան որ այն առջի տեսածնէն շատ տարբեր էր:

Թէ որ դուք բնութենէն այն արտաքին գեղեցկութիւններն ունեցած էք, որոնք ուրիշներուն աչքերը կը խաբեն, մի պարծենաք և միտքերնիդ մի դնէք թէ ձեր գեղեցկութեան համար ուրիշները պարտաւոր են ձեզ պատուել: Այլ ձեր պատիւն և փառքն այն բաներուն մէջ փնտռեցէք, որոնք գեղեցկութենէն աւելի կը դիմանան և հաստատուն են: Կան ոմանք ևս որ գեղեցկութիւն մի չունին, և կարծեն թէ զարդարուելով և չինծու գեղեցկութեամբ երեսնին այլ և այլ ներկեր քսելով բնութենէ ունեցած պակասութիւննին կը ծածկեն: Միտքերնին այնպէս կը դնեն՝ թէ զիրենք տեսնողները զարմանքի մէջ կը մնան, և կարծեն թէ ամենէն աւելի պէտք է որ զիրենք պատուեն և յարգեն ամեն մարդ, անոր համար որ հագած հագուստնին վայելուչ է և զարդարանքնին պատուական

և Թանկ գնով։ Բայց յետագայ երկու պատմութիւններն՝ որ սխալի զուգեմ ձեզ, աղէկ կը հասկցընեն այս պատուոյ արժանի համարուած սուտ կարծիքները։

Պարծենկոտ ազն. մը կրած անարգանքը։

Մե՛ծն Պետրոս Ռուսաց կայսրը, Վերսայլ քաղաքը գտնուելով, և տեսնելով թէ պալատին մէջ երիտասարդ պարոնին մէկն ամէն օր զանազան տեսակ նոր զգեստ կը հագնէր, բայց իւր քովի եղողներուն. «Կ'երեւի թէ այս գաղղիացի տղեան իւր դերձակէն գոհ չէ»։ Համախառ տղուն մեծութիւն սիրելուն համար եղած գովեստը։ Ինք կարծէր թէ այն օտարական իշխանը սխալի զարմանայ իւր վերայ, բայց ընդհակառակն իշխանը ծաղր ըրաւ զինք։

Ասոր նման ուրիշ մի եղած արհամարհութիւնը։

Դրուսիոյ Փրետերիկոս Թագաւորին ծառաներէն մին որ մի անոր գլխոյն եկաւ ձեռք մի քանի զգեստ հագած մարմնոյ գունով, կարծելով թէ այն ազնուաց հագուստով հանդէս սխալի ըլլայ իւր Թագաւորին աչաց, անոր սիրած գոյնն ըլլալուն համար։ Բայց տեսաւ որ այնպէս չէր, այլ խարաուեր էր. ուստի դուրս ելաւ և ուրիշ պարզ հագուստով նորէն ներս մտաւ։ Նյն ժամանակ Փրետերիկոս անոր դէմքով մի անոր դառնալով՝ ըսաւ. «Օ՛, բացեր ինձ, բարեկամ,

մըլ էր այն անձին որ քիչ մի յառաջ դիմացս ե-
կաւ մարմնոյ գոյն զգեստ հագած »: Ծառայն
չկրցաւ բնաւ պատասխան տալ. բայց խիստ ա-
ղէկ հասկցաւ թէ ընտիր հագուստներով պա-
տիւ վաստըկելն՝ գէթ անմտութիւնը յայտնել է:

Պէտք է որ մեք ևս հագուստներն և զար-
դարանքներն այնպէս համարինք, ինչպէս որ հա-
մարէր Ալֆոնսոս Ե Արագոնայի (Սպանիա) թա-
գաւորը, որ մականուամբ Գիտուն կը կոչուէր:
Երբոր բանն իրեն՝ թէ ժողովրդեան առջեւ խիստ
նուաստ հագուստով կ'երեւի, որ չվայելէր իւր
թագաւորական իշխանութեան, պատասխան
տուաւ. «Ծիրանիներն և ադամանդներուն
փայլունութիւնը չէ թագաւորին երեւելի յառա-
կութիւնն, այլ իւր գիտութիւնն և առաքի-
նութիւնը:

---

## ՅՕԴՈՒԱԾ Ե

Ճշմարիտ արժանաւորութիւնն առաքինութեան մէջ կըկայանայ:

Այո, սիրելի որդեակք իմ, մարդոյս ճշմա-
րիտ արժանաւորութիւնն՝ միայն առաքինութիւ-
նը կրնայ տալ. թէ որ այս չըլլայ՝ ամեն ինչ ըն-
դունայն է, և որքան գեղեցիկ յատկութիւն-
ներ ունենայ մարդ, անպէտ կ'ըլլայ՝ երբ մոլու-
թիւնն անոնց պայծառութիւնը կը խաւարեցնէ:

Այս ճշմարտութիւնս ամեն մարդ ճանչցեր
է, և հեթանոսաց իմաստուններն իրենց բարո-
յականին հիմք այս դրած են, և միշտ իրենց

ընթացքն աստղ կանոնաւորած են ։ Անոնք թէպէտեւ իմացականութենէ ի զատ ուրիշ լուսաւորութիւն չունէին, այսու ամենայնիւ առաքինութիւնն՝ իրենց պատուոյն մի միայն արժանաւոր բարիք սեպած էին. վասն զի աղէկ իմացեր էին՝ թէ այս է մի միայն բարին որ բախտին կամքէն կախեալ չէ բնաւ ։

իմաստասիրի մի գեղեցիկ պատասխանը։

Դեմետրիոս աշխարհակալը՝ Մեկարա քաղաքը կողոպտելէն յետոյ հարցուց Ստիլպոնին, թէ բան մի ամենեւին կորուսա՞ծ է ինքը. որուն պատասխան տուաւ իմաստասէրը. «Բան մի չկորսնցուցի», վասն զի պատերազմը չկրնար զառաքինութիւնը կողոպտել ։

Ամօթ չէ՞ր ըլլար. սիրուն որդեակք, թէ որ մեք՝ որ բարեբախտութեամբ քրիստոնեայ ծընած եմք, հեթանոսներուն ցուցածէն քիչ յարգ ունենամք առաքինութեան վերայ ։ Անոնք միայն իրենց իմացական զօրութեան լուսովը կը ճանչնային զայն, իսկ մեք ընդհակառակն ճըշմարիտ կրօնին վարդապետութիւններովը սորված եմք դատել զայն և նորա յարգը ճանչել ։

Արդ՝ այս աստուածային վարդապետութեց համաձայն, միայն առաքինութիւնը կրնայ մարդոյս ճշմարիտ արժանաւորութիւնն տալ. և որքան որ իւր աստիճանով, իւր խելացութը, մեծութեամբ երեւելի ըլլայ, Աստուծոյ առջեւ բան մի չարժէր՝ թէ որ առաքինի չէ ։

Դելփինոս՝ Լուդովիկոս ԺԶ.ին հայրը, այն ճշմարտութիւնն իր զաւակաց ականջին ստէպ ստէպ կրկնելու համար, եկեղեցւոյն արձանագրութիւնը բերել տուաւ իրեն, որու մէջ անոնց անունները գրուած էին. և բանալով զայն՝ ցուցուց անոնց իրենցմէ առաջ գրուած մարդոյն անունը, որ մէկ աղքատ արհեստաւոր մի էր, յետոյ ըսաց. «Ահա կը տեսնէք դուք, որ ամենուն աստիճանն Աստուծոյ առջին հաւասար է. և միայն հաւատոյ և առաքինութեան տուած յառաջութեամբ կրնայ տարբերութիւն մի ունենալ ուրիշէն։ Ժամանակ պիտի գայ որ դուք այն աղքատ արհեստաւորէն աւելի մեծ պիտի ըլլաք ժողովրդեան առջեւ թէ պատուով և թէ համբաւով. բայց սա ձեզմէ մեծ կ'ըլլայ Աստուծոյ առջին, եթէ առաքինի ըլլայ»։

Այս գեղեցիկ դասն ամէն տղայոց կը պատշաճի, և ամէն մարդ կրնայ անկէ օգուտ մի առնել։ Մի՛ մոռնաք ուրեմն, բայց միանգամայն մտքերնիդ ևս բերէք, որ ճշմարիտ առաքինութիւն չհամարիք զայն՝ որ հաստատուն աստուածպաշտութեան վերայ հիմնած չէ. և թէ որ ճշմարտապէս առաքինի ըլլալ կ'ուզէք, ուրիշ բանի մի ցանկաք, այլ միայն վերը պատմած իշխանին նման սուրբ ըլլալու։

Քաջի օրինակ նաւուց-դիտապանի մը։

Վերոյիշեալ երիտասարդ իշխանին վարժապետը օր մը Գաղղիոյ Թագաւորաց անոր նախնիքներուն ժամանակագրական ցուցակին գիրքը ցուցընելով, հարցուց թէ՝ անոնց մէջ որո՞ւն աւել նմանիլ կ'ուզէ։ "Սուրբ Լուդովիկոսին (1), պատասխան տուաւ մէկէն, և երանի թէ ես ալ անոր նման սուրբ ըլլայի"։ Ես ալ ուրիշ բանի չէի ցանկար, սիրուն որդեակք, թէ՛ ձեր փառաց և թէ երջանկութեան համար, այլ այս միայն՝ որ դուք ևս այն ազնուական իշխանին պէս նոյն գեղեցիկ միտքն ունենայք։

# ԳԼՈՒԽ ԺԸ.

Գիտութեանց վերայ։

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գիտութեան յարգը։

Արեւուն լոյսը մեր աչաց ինչ զօրութիւն որ կուտայ, նոյնպէս գիտութիւնն ևս մեր մտաց կուտայ։ Ինչպէս որ մարդ մի խաւարին մէջ մնալով՝ բան մի չկրնար որոշել, ոչ իրեն ուսկէ գալը գիտէ, և ոչ ուր երթալը, և միշտ չարա-

(1) Լուդովիկոս Թ.ը տես երես 29, ծանօթութեան մէջ։

չոր գետին ինկնելով կը մեռնի. այսպէս իմացէք ագէտ մարդն ալ ։ Աշխարհքին բոլոր անշունչ կուպերուն նման, աչք ունի և չտեսներ, ականջ ունի և չլսեր, վասն զի առանց իրերէն ամենեւին բան մը չհասկընար ։ Իմաստ պարզ բաներն ալ անոր համար խրթին առակներ են, և իր անմտութեանն անբաններուն հաւասար կ'ըլլայ, որոնք կուրօրէն իրենց բնազդեցութեե կը հետեւին ։ Ահա իմաստուններէն շատն այսպէս արտմաբանած են ։

Իմաստասիրի մը գեղեցիկ պատասխանը։

Զաւակի տէր մարդ մը կ'ելնէ օր մը Արիստիպպոս իմաստասիրին քով կ'երթայ, և կ'աղաչէ որ իր տղայն քովը առնու, և անոր փիլիսոփայութիւն և ուրիշ ուսումներ սորվեցընէ ։ Իմաստասէրն անոր աղաչանքը կ'ընդունի այս դաշինքով՝ որ իր աշխատութեանց վարձք հարիւր դահեկան տայ ։ Տղուն հայրն այս խօսքիս վերայ սիրտը փլթելով, որովհետեւ խիստ ագահ էր, և այնքան ստակ զաւակին կրթութեան համար տալ աչքին խիստ մեծ երեւելով, մէկէն պատասխան տուաւ Արիստիպպոսին. «Այդ քու ուզած ստակով գերի մը կրնամ ծախու առնուլ։ — Նոյն ուրեմն առ, ըսաց փիլիսոփայն, որ երկու գերի ունենաս տանդ մէջ»։

Ուրիշ մարդ մը եւս հարցուց նոյն Արիստիպպոս փիլիսոփային թէ՝ «Գիտութիւնն ինչ օգուտ կրնայ ընել իմ զաւակիս ։ — Ընկէ քա-

ցած սրտուղը, պատասխան տուաւ փիլիսոփայն, այն կ'ըլլայ որ հրապարակական խաղերու մէջ գտնուած ժամանակ ուրիշ քարի մը վերայ նըստած քար չհամարուիր ինք»:

Այս պատասխաններով ինչ խմացընել կ'ուզէր իմաստասէրը. կ'ուզէր հասկցընել՝ թէ կոպիտ և ազէտ մարդը կրնայ բաղդատուիլ գերիի կամ քարի հետ: Իւր գիտութեան վերայ այնքան մեծ յարգ ունէր, որ երբ ուրիշ անգամ մի հարցուցին իրեն՝ թէ ինչ տարբերութիւն կայ գիտուն և անգէտ մարդուն մէջ. պատասխան տուաւ. «Նոյն տարբերութիւնն՝ զոր կը տեսնեմք մարդու իշխանութեան տակ եղող քուրակին և ազատ քուրակին մէջտեղ»:

Դիոգինեսին խելացի խօսքը:

Նշանաւոր Դիոգինէս փիլիսոփայն ևս այս միտքով էր: Օր մի երբ պատմեցին անոր՝ թէ Մեկարացի բնակիչներն խելքերնին միայն իրենց ոչխարներուն տալով, ամենեւին զաւակաց կրթութեան հոգ չեն տանիր. «Թէ որ այնպէս է, ըսաւ Դիոգինէս, լաւ կը համարէի Մեկարացիի գառն ըլլալ, քան թէ որդի»: Յայտնի խօսք մի է, որով պէտք է իմանալ՝ թէ նոյն իմաստակիրին կարծեաց համեմատ՝ աղէկ առաջնորդ ունեցող կենդանին լաւ է քան զանգէտ մարդ:

Չէ թէ միայն այս փիլիսոփային մտածմունքն է այս, այլ մինչեւ մեր օրերը՝ դուք ևս ան֊

շուշտ կը տեսնէք որ ագէտ մարդիկ ընդհանրապէս պարսաւելի և ատելի են, և անոնց խիստ անարգ անուններ կը տրուի իրենց ագիտութեան համար ։

Թագաւորի մի գեղեցիկ պատասխանը։

Ալփոնսոս Ե. Արագոնայի Թագաւորին գիտուն պալատականներէն մէկը, իւր առջեւ համարձակութեամբ կը հաստատէր, թէ պատմութեան մէջ կարդացած է՝ որ Սպանիոյ Թագաւորին մէկը կ՚ըսէր, թէ երեւելի իշխանաւոր և խիստ ունեւոր մարդոց չվայելեր գիտութիւն սորվիլ ։ Որուն պատասխան տուաւ Ալփոնսոս. «Արդարեւ Թագաւոր մի չէ եղեր այդ զրուցողը, այլ արջ կամ գոմէշ մի ։»

Թէ որ ագիտութիւնը պարսաւելի եղած է ամեն ժամանակ, անտարակոյս գիտութիւնն այլ բոլոր աշխարհիս առջեւ պատուական սեպուած է ։

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

Գիտութեան վերայ եղած յարգը։

Որ և իցէ մարդ՝ որ իւր միտքը գեղեցիկ ուսմունքներով զարդարած է, ամեն տեղ անուն կ՚ունենայ, և ուր որ երթայ յարգութք կ՚ընդունին զինքը ։ Ամեն մարդ կ՚աշխատի նորա քով մօտենալու և հետը խօսակցելու, և ամենքն ևս առ հասարակ կը գովեն և կը պատուեն զինք ։

Թէպէտեւ Պլատոն երեւելի յոյն փիլիսո-
փայն և աշխարհիս խիստ մեծ գիտուններէն մէ-
կը, հասարակ մարդ մի էր, այսու ամենայնիւ՝
սքանչելեաւ գիտութեամբ և առաքինութեամբ
հռչակաւոր եղած էր, Դիոնեսիոս բռնաւորն
անոր Սիրակուսա քաղաքը մտնելը լսելուն
պէս, անձամբ նորա դիմաց գնաց, որ զինք ծո-
վեզերքն ընդունի, և կառքին մէջ իւր քով առնե-
լով իբր յաղթանակաւ իւր պալատը տարաւ։

Աղեքսանդր երբ Թեբէ քաղաքն առաւ, հր-
րաման ըրաւ որ կրակի տան այրեն զայն. բայց
նախ պատուիրեց որ Փինտարոսի տունն և անոր
ընտանեաց վնաս մի չտան։ Ասով խնայելովն ու-
ցուց՝ թէ որչափ յարգ և պատիւ ունէր երեւե-
լի բանաստեղծին վրայ։

Երբ Արիոստոս քաղաքի մի կառավարիչ էր,
զոր ելուզակները (հայտուտ) կ'աւրէին ու կ'ա-
ըշարկէին, որ մի անզգուշութեամբ անոնց
ձեռքն ինկաւ։ Մէջերնէն մէկը ճանչցաւ զինք,
և իմացուց իւր ընկերներուն՝ թէ անիկայ Արի-
ոստոս կառավարիչն է։ Իւր անունը միայն լսե-
լով՝ չարագործներուն բարկութիւնը մեղմա-
ցաւ, սկսան անուշութեամբ վարուիլ հետը,
անոր սրտէն վախը հեռացնելով, և յետոյ տա-
րին իւր ամրոցն ըսելով՝ թէ իրենց տուած յար-
գութիւնն անոր բանաստեղծութեանն էր և ոչ
կառավարութեան։

Այս պատմական զրոյցներուս վրայ պէտք է համոզուիք, թէ ամէն մարդ իրեն պարծանք մի կը սեպէ յարգել գիտութիւնն, և գիտուն մարդոց արժանաւոր պատիւն տալ։

Գիտութեան մէջ երեւելի եղող դպրոցի աշակերտք։

Նախ ձեզ հասարակէն պզտի տղայ մի օրինակ բերելու համար կը պատմեմ ձեզ ութ ինն տարեկան տղու ուսման մէջ ըրած յառաջադիմութիւնները, որ շատ ժամանակ չէր՝ քննութեան հանեցին քերականութեան, աշխարհագրութեան պատմութեան և լեզուագիտութե դասերուն համար։ Կ'ուզէի որ դուք ձեր աչքով տեսնէիք նորա ըրած գովեստները։ Մէկ հարցման մի պատասխան տալուն պէս, ամէն դիէն կեցցեն կը պոռային, ծափ կը զարնէին պոռալով. «Ո՜հ զարմանք, ի՜նչ հրաշալի բան. երանի՜ հօրը, որ այսպիսի զաւակ ունի»։ Բայց քննութենէն ետեւ տեսնել պէտք էիք որ ամենքնին այլ մեկմէկէ աւելի իրենց սրտին ուրախութիւնը կը յայտնէին։ Ամենքնին դրկել կ'ուզէին տղայն, բարեկամները կը ժողվէին և կը ցանկային զինքը տեսնել. ամէնքն կը սիրէին, ամէնքնին հետը կը խօսէին. և իւր անունը մինչեւ օրագիրներուն մէջ կը կարդացուէր, և բոլոր ազգայնոց զարմանք մի տուաւ։

Բարեհամբաւ Փիկօ Միրանտոլան տասը տարէն՝ զինքն աշխարհիս օրինակ տուած էր։ Իւր առջի պատանեկութեան մէջ այնպիսի մեծ յառա-

ջաղխմութիւններ բրած էր գիտութեանց մէջ, որ մարդուն մէկը նորա հրաշալի վարդապետութեանէն յաղթուելով, կարծեց թէ գերբնական բան մի կայ անոր վերայ. բայց յետոյ խելքն իմացաւ՝ թէ անոր ընդարձակ հմտութիւնը միայն իւր բնական զարմանալի յիշողութեանէն և կարգէ դուրս ունեցած համբերէն յառաջ կուգայր: Քսան և հինգ տարեկան որ եղաւ, սկըսաւ գիտութեանց մէջ ունեցած կարծիքներն և դրութիւնները հրատարակել, և թէպէտ պզտի հասակի մէջ մեռաւ, բայց իւր ձգած գըրուածները բոլոր գիտուն մարդիկ զարմացուց:

Փերէզ երիտասարդն՝ որ Փրանքեցի Էքս քաղքէն էր, տասն ալ երեւելի եղաւ պզտի հասակին մէջ իւր գիտութեան համար: Եօթն տարեկան որ եղաւ, իւր պզտի եղբօրը կառավարութիւնն իւր վերան ուզեց առնուլ: Հայրը՝ իբրեւ աղայական խաղ. անոր դէմ չկեցաւ. մի քանի օր յանձնեց անոր, միայն կամքը հաճեցունելու համար. բայց մէկէն տեսաւ որ ծաղկահասակ վարժապետն այնպէս աղէկ կը կատարէր իւր պաշտօնը, որ հայրը բոլորովին վստահանալով, նորա եղբօր դաստիարակութիւնն իրեն յանձնեց, և ուրիշ վարժապետի կարօտ չեղաւ: Ընկէ յետոյ յիրաւի իւր հարազատ եղբօր Մենտորն եղաւ, և այնպէս լաւ կրթեց նորա վարքն, որ խիստ խելացի վարժապետք ևս չէին կրնար:

Չեմ ըսեր թէ ըստ ամենայ մասին նմանող

եղէք այս գեղեցիկ օրինակներուս. փառք զի կարելի է որ բնութիւնը ձեզ շնորհած չըլլայ այսպիսի հազուագիւտ տաղանդներ, որպէս զի այս երկու երիտասարդ աղջկաց նախանձաւոր ըլլալու ջանք ընէք. այսու ամենայնիւ՝ անոնց օրինակով պէտք է որ քաջալերուիք և զանցառութիւն չընէք հոգ տանելու այն բաներուն, որ կրնան օգուտ մի ընել ձեզ՝ ձեր կարողութեան համեմատ հարկաւոր եղած ուսմունքներն և տեղեկութիւնները ձեռք բերելու :

Իւր գիտութեամբն երևելի եղող երիտասարդը :

Ճէրդիլ կարդինալն, որ ներկայ դարուս խիստ գիտուն մարդկանց մէկն էր, տղայութե ժամանակին անուանի եղաւ իւր սրամտութեան և լայնախորհուրդ գիտութեան համար : Տղայ էր երբ իւր հօր հետ Ճինէվրա գնաց, և հոն բնելով թէ հասարակաց դպրատուններ կան, զինք հոն տանել տուաւ, և դրան քով ատից վերայ կեցաւ՝ սպասելով աստուածաբանութեան դասուն աշակերտաց դուրս ելնելուն. որոնք երբ տեսան օտարական պզտի տղայն որ դրսի կերպարանքէն խեղճ ու խոպան մի կ'երևէր, բայց իւր աշխուժութիւնը՝ փայլուն աչքերը, զոր իրենց վերայ տնկած ուշադրութեամբ կը դիտէր, յայտնի կը ցուցնէին որ կը փափագէր անոնցմէ մէկուն հետ տեսնուելու. ուստի ամէնքնին նորա գլուխը ժողվեցան որ խօսակցին և ճանչնան ո՛վ ըլլալը : Ճէրդիլ աչքը կը

տնկէ անոնց մէկուն վերայ, որուն կերպարան-
քէն դէմքէն և փարմունքներէն կ՚երեւայր ե-
րեն՝ թէ ամենէն մոացի և ամենէն աւելի բա-
ւականութիւն ունի վիճաբանութեան մտնե-
լու ։ Ուստի կը սկսի քրիստոնէական վարդապե-
տութեան վերայ հարցմունքներ ընել. զոր ե-
րեկք դաս կ՚առնուլն, որպէս զի իւր բերնէն
քանի մի սխալներ գտնէ նոյն Ճինեվրա քաղա-
քին մէջ գտանուած կրօնքին վերայօք ։ Երբ Ճէր-
դիլ վարպետութեամբ նոյն նիւթին վերայ այն-
պիսի տեղ մի բերաւ, որ տղայն իւր բերնովը
խոստովանեցաւ, այլ սկսաւ նեղը խօթել իւր
հակառակորդն աւելի նրբին և զօրաւոր փաս-
տերով, որ այնպիսի ծաղկահասակ և խակամիտ
պատանեակէ մի մարդ չէր յուսայր ։ Անոնց ը-
րած վիճաբանութիւնը լսելով բոլոր աշակերտ-
ները եկան ժողովեցան հոն, և սկսան իրենք
եւս մէջ մտնել և վիճել օգնութիւն ընելով ի-
րենց ընկերին՝ որ նորա ախոյեանին յաղթեն ։
Ճէրդիլ մինակ էր և իրեն կուսակից չունէր, ա-
մենուն պատասխանն ինքը կու տայր, և ինք մի-
նակ անոնց մէջ բերած առաջարկութիւնները
կը հերքէր անխռովելի քաջասրտութեամբ. և
վիճաբանութիւնը կ՚աւարտի ինքն տանելով
փառաւոր յաղթանակը, և իւր բոլոր հակառա-
կորդները պատասխան մի չկրնալով տալ կը լռեն
կը պապանձին ։ Պզտի վարդապետը տղայն անոնց
ամբիչապէն առիթ գտնելով, կը սկսի առաջեւը
նման խօսիլ հետեւինին, և բարի նախանձաւո-

ցրութեամբ մը և անոյշ խօսքերով անոնց աչքին առջեւ կը բերէ գժբախտ վիճակնին՝ որու մէջ կը գտնուէին ուղղափառ եկեղեցիէն բաժնուելով, և միանգամայն հանդերձեալ կենաց մէջ իրենց ինչ վիճակ ունենալը, որ հիմակ անգամ աւելի թշուառ պիտի ըլլայ կ՚ըսէր, թէ որ խեղճութեամբ իրենց կամակոր բնութեան մէջ մեռնելու ըլլան: Անոնք ծնողներուն մէջ ամենեւին մէկուն չդպաւ այս վիճաբանին խօսքերը, թէ իր պզտի տարիքին համար և թէ անուշ լեզուներուն և բնաւորութեան համար, այլ մանաւանդ կը զարմանային նորա վերայ: Միայն մէկը գտնուեցաւ մէջերնին, որ այսպէս դարձաւ ըսաւ անոր. «Թէ որ մեզմէ մէկը ձեր հայրենիքը գայ, և այսպիսի լեզու բանեցնէ ձեզ, ի՞նչպէս կը վարուիք հետը»: Այքան միայն կրցաւ ըսել, և ամենքնին այլ ետ քաշուեցան գնացին ամօթով և պատկառանքով, և յաղթական տղայն ուրախութեամբ լեցաւ, որ Ճշմարտութեան յաղթանակը պատճառեց իրեն: Այս երկխօսութիւն ըսած յաղթութիւնն ոչ թէ միայն գերագոյն հանճարեղութեան գործն էր. այլ նաեւ ուսման մէջ ունեցած չափէ դուրս եռանդուն. վասն զի ի տղայութեան կարդացեր և կշռեր էր երեւելի Պոսուէտի Պատմութիւն փոփոխութեանց ըսուած գիրքն, և իր միտքն անոր մէջի եղած նրբին և լուսաւոր փաստերն այնպէս լաւ ըմբռնած էր, որ սովոր էր ըսել շատ անգամ. «Այն այն,

ես բաւական կրնամ սեպել զիս, առաջարկել կան-չելու այն նորաղանդներն, որոնք այս գրքիս մէջ յաղթուելով կը հերքուին »։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### Գիտութեան օգուտները։

Հարկաւոր եղած գիտութիւնն զոր դուք պէտք է սորվիք, մեծ օգուտ կ՚ընէ ձեզ, որ մտա-քերնէդ չանցնիր։ Գիտնական մարդ մը, որ եւ լըցէ աստիճանի ալ, կը նմանի ճամբորդի, որ իր քայլելու ճամբաները կատարելապէս ճանչ-նալով, ապահով կը հասնի իր մտքին դրած տեղը. ընդհակառակն տգէտ մարդը կրնայ նը-մանիլ կոյրի՝ որ դողդողալով կ՚երթայ, երկու-քայլ կը նետէ՝ կը սահի կ՚իյնի, եւ ճամբէն միշտ դուրս կ՚ելնէ։ Հազարումէկ դիպուածներ կը պատահի. որոնց մէջ գիտութիւնը մեծ օգուտ կրնայ ընել մեր բարեկեցութեան, եւ աղքա-տութեան մէջ մեզ մխիթարիչ եւ օգնական կ՚ըլլայ։

Այո, սիրելի որդեակք իմ, գիտութիւնը միշտ օգտակար է։ Կան երբեմն այնպիսի պաշ-տօններ եւ վիճակներ, որոնց մէջ խիստ օգտա-կար է գիտութիւնն, եւ որու մէջ հնար չէ հա-մարումնը ունենալ առանց գիտութեան միջոցի, վասն զի ինչպէս կ՚ըսէ Լաֆոնդէն.

Ուսմնաւոր մարդ՝ ինչ որ տգէտ է,
Ուսման համեմին արժանաւոր է։

Մի զարմանաք ուրեմն՝ թէ որ այսքան դը-
ժուարութիւններ կան, և այսքան միջոցներ
պէտք են գծել կրթելու և ձեր միտքը լուսա-
ւորելու համար։ Այս հարուստ մարդիկն ի-
րենց ունեցածներուն կէսը յօժարակամ կու-
տային՝ թէ որ քիչ մի բան գիտցած ըլլային, զոր
իրենց տղայութեան ժամանակ դիւրութեամբ
կրնային սորվիլ. բայց հիմա որ տարիքնին ա-
ռեր են, անօգուտ է, անոր համար կը ստի-
պուին ըսել թէ՝ գիտութիւնը հնար չէ ըն-
տրկուլ շահիլ, և իրենց բոլոր կենաց մէջ սըր-
տերնին կը ցաւի տղայութեան ժամանակնին
պարապ անցընելնուն համար, ինչ ատեն ալ իթ-
ունէին ձեռուընին՝ կրթութիւն և ուսում
սորվելու։

Աղէկ կրթութիւն չունեցող իշխանի մի ցցջումը։

Օր մի տեսնելով մեծն Պետրոս որ իւր որ-
դիքն խելքերնին կարդալու տուած՝ այնպէս կը
պարապէին, ըսաւ անոնց. «Երախտաւոր էք
դուք որ տղայութենէ կը սկսիք գեղեցիկ գրքե-
րուն համն առնուլ։ Ես այլ կ'ուզէի որ մա-
տըներուս մէկը պակաս ըլլար և առաքինու-
թեամբ կրթուած ըլլայի։ Այնպիսի մեծ չար
մի է այս, ուսկէ զրկուած ըլլալուս համար,
սիրտս խիստ կը ցաւի»։

Նայեցէք որ դուք ևս այս Թագաւորին
նման չըլլաք յետոյ, այլ քանի որ ժամանակը
ձեռքերնիդ է, նայեցէք որ պարապ չանցընէք,

միշտ օգուտ մը քաղէք անկէ ։ Օրինակ առէք ձեզ մըջիւնին բանած խնամոտուն ճամբան, որ պարզ եղանակին իւր կերակուրը կը պատրաստէ, որ ձմեռուան մէջ հարկաւոր եղած ուտելիքն ունենայ ։

Հիմայ դուք գեղեցիկ ու պարզ եղանակի մէջ կը գտնուիք այն հասակին՝ ուր մեծ դիւրութեամբ կրնաք հոգալ հարկաւոր գիտութիւններն, որոնց ժամանակ պիտի գայ որ պէտք պիտի ունենաք ։ Հոգ տարէք ուրեմն ձեր մանկութեան ժամանակին անօգուտ չանցընէք, վասն զի երբ այս ձեր երջանիկ հասակն անցնի, ոչ ևս կրնաք յետ դարձնել, և գիտութեան դժբախտ վիճակին մէջ կը մնաք յաւիտեան ։

---

# ԱՌԱԿ

## Գետին մօտ ճամբորդը։

Ուղևորին մէկն անտառներու մէջէ երկար ժամանակ քալելուն, և արևուն տաքութենէն սաստիկ ծարաւէն պապակելով, գետ մը կը տեսնէ անտառին մէկ կողմը. որ կանանչ խոտերուն և պզտի ծառերուն մէջ տեղէն կը վազէր կ'երթայր. Թէպէտև ջուրը քիչ էր ։ Կը հասնի այն ջրին մօտ, որուն այնչափ կը փափագէր . . . բայց ափսոս իւր անմտութե. կանգ կ'առնու մէկէն, կը նայի ջրին մէջ և կ'ըսէ ինքն իրեն. Պէտք չէ որ ես մէկէն գձկուխմ խըմեմ

այս ջրէն, թէպէտեւ տաքութենէ կ՚այրիմ։ Այս գեղեցիկ արծաթի նման փայլուն ջրերը կ՚անցնին կ՚երթան անուշիկ մի խոխոջալով, և քանի որ կը վազեն յառաջ կ՚երթան՝ այնքան կը պայծառանան և ջրերը վեր վեր կը ցայտեն։ Ուրեմն պէտք է սպասեմ որ աւելի մաքուր ջրերեր գան, բայց՝ և երկնցաւ պառկեցաւ գետին քով ծարաւութիւնը չմարած։ Մ՚էկ մ՚ալ, ամ գժբախտութեան, երբ պառկած տեղէն ելաւ, տեսաւ որ գետին մէջ ջուր չկայ. զարմացաւ խեղճն երբ իմացաւ իր խաբուիլը. ցաւեցաւ՝ բայց ուշ, և պարապ տեղ բարկութը կը՛ նեղանայր, վասն զի գետին մէջ և ոչ մէկ կաթիլ ջուր կրցաւ գտնել։

Այս ուղեւորին օրինակ է անոր. որ ծուլութիւնէն իր մտաց հասակը փափկութեամբ և հեշտութեամբ կ՚անցընէ, և կը կարծէ ողորմելին, կամ ինքնիրեն այնպէս կ՚ըսէ՝ թէ ժամանակ պիտի կրնայ գտնել որ ըրած վնասներուն տեղը լեցընէ։ Կայծակի նման կ՚անցնի երիտասարդութեան հասակն. և արդը պտուղ չտայր. թէ որ ծոյլ երկրագործին ագահ ձեռքը ժամանակին խոփովը (սապան տէմիրի) չփակէ չպատրաստէ. կ՚անցնի մտաց հասակը. ինչպէս որ գետին ջրերը արընթաց կը վազեն կ՚երթան։ Ահ, թէ որ յանկարծ ջրերը քաշուելու ըլլան... ըրած յանցերուն երթաս բարեւն թող ըսէ։

# ԳԼՈՒԽ ԺԹ.

## Տղայոց սորվելու ուսմունքները։

Անտարակոյս կը կարծեմ ես, սիրելի որդեակք իմ, որ նախընթաց գլխոյն մէջ զրուցածներս ձեզ մեծ յորդոր են որ ջանայք կրթել և վարժել զձեզ ուսմանց մէջ. հիմայ այլ մանրամասնաբար պիտի ցուցընեմ՝ ձեզ հարկաւոր եղած այլ և այլ ուսմունքները։ Ձեր ուսման առաջին նպատակը պիտի ըլլայ բարի վարք ունենալ, որ Աստուծոյ ընդունելի՝ մարդկանց հաճելի լինի։ Բայց ինչպէս կինաք դուք ուսանիլ այսչափ գիտութիւնը, առանց որոյ ուրիշ ամեն ինչ անօգուտ են ձեզ, մանաւանդ և վնասակար իսկ։ Այս բանն ուսմունքս է կրօնագիտութիւնը. ասիկայ միայն՝ իւր աստուածային բարոյականութեան սրբութեան և մաքրութեան միջոցով կինայ սովրեցընել մեզ աղէկ ապրելուն և իմաստութեամբ վարուելուն եղանակը. ասոր համար է որ գիտութեանց դաշտին մէջ՝ ուր տեղ կ'ուզեմ՝ ձեզ առաջնորդել, կրօնագիտութիւնը բոլոր ուսմունքներէն վեր կը դասեմ, զորոնք դուք պէտք է ձեռք բերելու աշխատիք։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Կրօնագիտութեան վրայ։

Ամեն բանէն աւելի ուսանելու հարկաւոր եղած գիտութիւնը, զոր դուք պարտաւոր էք

մեծ փութով ձեռք բերել, կրօնքն է՝ զոր Աստուած տուաւ մեզ իբրեւ առաջնորդ դէպ ի յաւիտենական երանութիւն զմեզ տանելու, զոր մեզ համար պահած է և պիտի շնորհէ այս թշուառ և փաղանցիկ աշխարհէն ելնելնուս յետոյ :

Երբոր կրօնին ցոյց տուած ճամբան ճանչնանք և անկէ երթանք, ամենեւին վախ չունինք մոլորելու. վասն զի նոյն ինքն Աստուած բացած է մեզ զայն և ինք սորվեցուցած. բայց երբ չգիտնանք զայն ճամբան, կամ մոլորելով դուրս ելնենք անկէ, դէպ ի խաւար կ'երթանք, կը սխալինք, կ'իյնինք անկարգութեց մէջ, ուր անդ մարդոյս մտաց սխալմունքն և սրտին մոլութիւնները կը քաշեն կը տանին զմեզ չարաբախտութեամբ :

Անկրօնութեան ցաւալի հետեւանքները:

Այս է զոր մեք դժբախտաբար միշտ կը տեսնեմք այս վերջին ժամանակներուս մէջ, ուր ամբարիշտ մարդիկ ինքզինքնին փիլիսոփայի անուն դնելով, պատերազմ բացին կրօնին դէմ. և քիչ մնաց որ պիտի ոչնչացընէին զայն : Աստուածեղէն կրօնին գեղեցիկ ջահը, որ մեր աչուըներուն կը շողշողէր, մարելով՝ խաւարը փոխանակեց լոյսին, և կուրութիւնն այնքան աւելցաւ որ Բանէն(1) ի զատ ուրիշ Աստուած չպիտի ճանչնային, մինչեւ այս մտացածին աստուա-

(1) La raison.

ծութիւնը պիտի կանգնեցընէին Գաղղիոյ մայր եկեղեցւոյն առաջին տաճարի սեղանոյն վրայ՝ կիսամերկ կնկան կերպարանքով. մինչեւ աստուածային պատիւը գազանի մը՝ հրէշի մը պիտի տային, որ միայն՝ ընդհանուր նզովքի արժանաւոր էր, մէկ Մարաթի մը, այն գազանացեալ մարդոյն, որու նմանը չկայր Գաղղիոյ և ոչ աշխարհիս մէջ ։

Սրտին մոլորութիւններն եւս հաւասար էին մտաց մոլորութիւններուն ։ Երբոր այն սուրբ ամբարտակը փլաւ, զոր կրօնք մարդկեղէն չարութեանց դէմ կանգնած էր, չար կիրքերը մէկէն դուրս թափեցան, և Գաղղիա բոլորովին լեցուեցաւ անառակութե՜ց ջրհեղեղով ։ Շատ դարերու միջոցին մէջ չգործուած յանցանքները՝ քիչ տարուան մէջ կատարուեցան, և ապականութիւնն ընդհանուր ըլլալով՝ թէ՛ մեծ և թէ պզտիկ, թէ՛ հարուստ և թէ աղքատ, և ամեն աստիճանի մարդիկ բոլորն այլ աւրեց և ապականեց ։ Երիտասարդք Աստուծոյ սուրբ երկիւղը մէկդի թողլով՝ անսանձական անառակութեանց տուին զիրենք. մինչեւ աղջիկքն անգամ՝ որ մինչեւ այն ժամանակ անբասական սեպուած էին, այնպիսի յանցանաց տէր եղան, որոնք ցաւով սրտի կ՚ըսեմ՝ թէ դժբախտաբար մինչեւ այսօր կը տեւեն. և անոնց չար ազդեցութիւնը մինչեւ մեր արեւելեան երիտասարդաց սրտերուն վրայ ներգործած է ։

Մի օրագրութեան մէջ կը կարդացուի թէ՝ 1800 սեպտեմբեր 23 էն մինչեւ 1801 փետրուար 20, այսինքն հինգ ամսուան մէջ, Փարիզու կառավարութեան ատեանին մէջ 75 երիտասարդ տղայք ի դատ բերուեցան իբր գող կամ բարի վարուց դէմ մեղանչող, և թէ՝ անոնցմէ 45 ը բանտարգելութեան դատապարտուեցան այս կերպ չարութեանց տէր ըլլալնուն համար։ Նոյն օրագրին նոյն թուոյն տակը գրուած ծանօթութեան մի մէջ կը կարդացուի նաեւ, թէ դատաւորներուն դիմաց հանուած երիտասարդաց համրանքէն դուրս են պզտի տղայոց գործած յանցանքները, և կը հաստատեն թէ՝ Փարիզու մէջ գործուած չարութեանց և անիրաւութեանց կիսէն շատին տէրերը անառակ երիտասարդներն են։ Բայց այս անօրէն գործքերը, որ առաջ ամենեւին չէին պատահեր, ուսկէ կը ծագին արդեօք։ Այս բաներս արդարութեան ատենին խնայրնող խոհեմ գործակալը, մի քանի պատճառներ կուտայ, և յառաջագէս աղքատութեան կամ կրօնի վերայօք եղած անհոգութեան կ՚ընծայէ զանոնք, այն կրօնը՝ որ աստուածային երկիւղ մի բերելով մարդոյս սրտին մէջ, միանգամայն և քաղցր յոյս և մխիթարութիւններ կուտայ ամեն հասակի մարդոց։

Այս վկայութեանս քով ուրիշ մի եւս կը դնեմ, որ թէպէտ այնքան մեծ չէ, այսու ամե-

նոյնիւ կրնայ նոյնպէս օգտակար ազդեցութիւն տալ մեզ, զոր կրօնք՝ մարդկանց մանաւանդ երիտասարդաց սրտին վերայ կը ներգործէ :

Կրօնին զօրութեամբ առաքինութեան ճամբան մտնող երիտասարդներ:

Շատ տարի չկայ, գեղացւոյն մէկը Փարիզ գալով, կը հարցընեն անոր՝ թէ ի՞նչ լուր ունիս գիւղէն, ուր տեղ ապստամբութեան ժամանակ այնքան անկարգութիւններ կը տիրէին : — Ո՜հ, պատասխան տուաւ գեղացին, հիմայ ամեն ինչ լաւ կարգին է. փառք Աստուծոյ: Մեր աւագերէց մի գտանք, որ Աստուծոյ հաճոյ անձ մի է: Նա զմեզ կը կրթէ, լաւ քարոզներ կուտայ, մեր մոռցած բաները միտքերնիս կը ձգէ, և իւր խնամքովը՝ (քանի մի չար մարդիկներէն ի զատ, որոնք կ'ուրանան զԱստուած անոր համար որ գողցուած բաները ամբողջը դարձընել կը պատուիրէ,) միւս ամենքը շիտակ ճամբու մէջ մտան: Ամենէն աւելի մեր տղայքն իրենց առջի վարքերնին փոխելով, այնքան հեռու են հիմայ այն բնութենէն, որքան որ լոյսը հեռու է խաւարէն: Մինչեւ այս օրս ամեն մէկերնին մէկ մէկ չար սատանայ դարձեր էին, զորոնք ոչ հայր և ոչ մայր մտիկ կ'ընէին, կ'երդուընային, մէկմէկու հետ կը կռուէին, և քիչ քիչ գողութիւնք ձեռք առնելով՝ սկսեր էին անառակութեան անցընել իրենց կեանքը: Բայց քանի որ մեր բարի առաջնորդը քրիստոնէական

վարդապետութիւն սորվեցուց անոնց, և խոստովանանքի կանչեց և շատերուն ալ հաղորդութիւն տուաւ, որոնք տակաւին առած չունէին, դառնալի նման անուշ և հեզ եղան, և հրեշտակի պէս ջերմեռանդ և Աստուծոյ սիրովը վառուած: Ո՛հ, կեցցէ՛ ուրեմն կրօնքը, որու ցըցուցած հրաշքը և զօրութեան հաւատարը չկայ. կրօնքը կորսնցնելով ամեն ինչ կորուսած էինք, բայց Աստուծոյ ողորմութեամբ կրօնքով նորէն ամեն ինչ ձեռք բերինք»:

Իրաւունք ունէր այս բարեմիտ դեղացին այսպէս զրուցելու. վասն զի կրօնքը կորսնցընելով ամեն բան կը կորսնցընէ մարդ: Այսուրիշ բան չմնար անոր, ոչ լոյս զինք լուսաւորելու, ոչ ոյժ զօրելու, ոչ նեցուկ մը զինք բռնելու, և ոչ յոյս քաջալերող. և ողորմելին միայն իր կիրքերն իրեն առաջնորդ ունելով, ամեն փոսի մէջ կը գահավիժի կ'իյնի, ուր տեղ մարդոյս կիրքերը կը քաշեն կը տանին բոլոր զանոնք որ անկարգութեան կու տան զիրենք:

Բայց երբ իրենց մտաց աչքեր և սրտերնուն մէջ գրուած կ'ունենան սուրբ կրօնին մեծ ու սրտաշարժ ճշմարտութիւնները, կը հեռանան այս կորստական ժայռերուն քովէն, և հաստատ կը քալեն ճշմարտութեան ճամբաներուն մէջ. ու նաև ամեն օրուան եղած փորձերով կը տեսնեմք. որ եթէ մարդկանց մէջ բարեկրթութիւն, ուղղութիւն և առաքինութիւն կայ, միայն անոնց քովն է, որոնք ճշմարտապէս կրօ-

նաւէր կրնան կանչուիլ։

Ապա ուրեմն, սիրուն որդեակք, հիմակուց այս փրկաւոր կրօնիս մէջ հաստատ սիրով կապուեցէք, որ այն միայն ձեզ իրրեւ նեցուկ եւ առաջնորդ ըլլալով, կրնայ չթողուլ որ ճամբէն դուրս ելնէք եւ կորսուիք։ Որքան ատեն ճանչնաք զայն, այնքան ատեն սրտանց սիրելու կը ջանայք. եւ որպէս զի աղէկ ճանչնայք զայն, պէտք է որ աշխատիք մտադրութիւ սորվելու։

Կարող էք դուք հիմա ուշադրութեամբ կարդալ քրիստոնէական վարդապետութեան դասատետրերն, որ ձեզ համար մանաւորապէս շինուած են համառօտ եւ աշխարհաբառ։ Բայց երբ զանոնք լաւ ուսնելու ըլլաք, պէտք է որ ուսմունքը կատարեալ ըլլալու համար, անկէ յետոյ ուրիշ գրքեր ալ կարդաք որ լաւ ճանչնաք սուրբ կրօնքին ճշմարտութիւնները։ Ա- ձեր կարդալու գրքերն են՝ սուրբ գրոց հին եւ նոր կտակարանի եւ կաթողիկեայ թղթոց մեկնութիւնները, Ներսէսի Շնորհալւոյն ուղղափառ դաւանութեան վերայ գրած թղթերը, Աղեքսանդրեանի կրօնադիտութեան գիրքը եւ այլ ուրիշ հաւատոյ եւ կրօնից վերաբերեալ գրքեր, զորոնք Հայաստանեայց սուրբ եկեղեցին ընդունէր է։ Մանաւանդ՝ ինչպէս որ պէտք է, կատարեալ կ՚ուսնիք ձեր կրօնքը, եւ կրնաք յետ այնորիկ պատասխան տալ ձեր կրօնքին վերայօք եղած հարցմանց, ինչպէս եղաւ հնդկաստանցի տղուն, զոր կ՚ուզեմ կարճօրէն այս տեղ պատմել։

կրօնի մէջ լաւ կրթուած երիտասարդի մը կռապաշտ մարդն ամչցընելը։

Հնդկաստանցի տղայ մը ութ տարեկան, որ աղէկ կրթուած էր քրիստոնէական կրօնին ճշմարտութեան մէջ, օր մը ընկերութեան մէջ գտնուելով, կռապաշտ մարդուն մէկը սկսաւ ծաղր ընել նորա կրօնքը, և վերջապէս հարցուց անոր թէ ո՞ւր է քու Աստուածդ։ Տղայն ամենեւին չշփոթեցաւ, այլ մէկէն պատասխան ըրաւ ծաղր ընողին և ըսաւ. «Իմ Աստուածս բոլոր աշխարհիս ստեղծիչն է, անիկայ պարզ հոգի է, և չեմ կրնար ցուցընել. այլ անոր տեղը քու Աստուածդ կը ցուցընեմ»։ Այսպէս ըսելով քար մը առաւ ձեռքը, և կրցածին չափ նորա վերայ մարդու կերպարանք մը նկարեց. յետոյ գետին դնելով քաղաքավարական կերպով մը, հրեց այն դին ոտքովն և ըսաւ. «Ահա ձեր պաշտած չաստուածը»։ Այս տղուն խելացի զուարճութեան վերայ սկսան ամենքն ալ ձեռք զարնել, և ծաղր ընողը մեծ ամօթով մնաց քովը։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

Գրաւոր լեզուին վերայ

Կրօնագիտութեան հետ կը պատուիրուի նաև գրաւոր լեզուն սորվիլը, որ խիստ օգտակար և անհրաժեշտ պարտք է մեզ։ Ձեր մէջ տղայք

կա՛ն որ գրաբառ լեզուն բանի տեղ չեն դներ իբր անօգուտ սեպելով զայն, բայց չեն գիտեր թէ ի՛նչ պտուղներ կը բերէ իրենց, զոր եթէ ճանչելու ըլլային, այնպէս բան և ոչ մտքերնէն կ'անցընէին ։ Գրաբառ լեզուն գիտութեանց բանալին է, զոր եթէ մէկը չգիտնայ՝ չկրնար հասկընալ այն գրքերը, զորոնք կարդալով մարդս գիտուն և բազմագէտ կը լինի ։

Շատ անգամ լսած էք դուք Խորենացւոյն, Եղիշէին, Շնորհալւոյն գրքերը, Ոսկեբերանին ճառերը, Շարականք և ուրիշ անթիւ հեղինակներու գրուածներ, որոնց անունն ամենուդ ծանօթ է. բայց ամէնուդ չեմ կարծեր որ գիտնաք թէ անոնք ի՛նչ բանի վրայօք կը խօսին, կամ թէ ինչպիսի մարդիկ են գրողները ։ Մարդ մի որ գրաբառ ուսնիլ չուզեր, այնպիսին պէտք է որ եկեղեցական պաշտօնի մէջ եւս չմտնէ, վարժապետութեան, քարոզչութեան, գրագրութեան և այլ ուրիշ պաշտօններու ձեռք չըզարնէ, զոր լաւ արժանւոյն գործի դնելու և կատարելու համար՝ պարտաւոր է նախ գրաբառ լեզուն ուսնիլ. վասն զի այն պաշտօններուն մէջ մտնողը շատ բաներ և գիտութիւններ պէտք է գիտնայ, որոնք միայն գրաբառ լեզուով գրուած են ։

Ի՞նչ կ'ըսեմ ես՝ թէ նոյն պաշտօնները ձեռք բերելու համար պէտք է գրաբառ լեզուն նախ ուսնիլ. մինթէ ամէն հայազգի պարտաւոր չէ՞ գիտնալ իւր մայրենի լեզուն, մայրենի կ'ըսեմ՝

չէ թէ մեր խօսեցած աշխարհիկ լեզուն, այլ գրաբառը, այն լեզուն՝ որ մեր նախնի նահապետները կը խօսէին, Տիգրան, Արամ և Հայկ, ոչ միայն սոնք՝ այլեւ Նոյ և հետեւապէս Ադամ: Իսկ մեր պատուական լեզուն՝ որ հիմայ մեռեալ լեզուներու կարգը սեպուած է, ժամանակ մի բոլոր աշխարհիս կը տիրէր. ինչո՞ւ համար այն ազնիւ լեզուն մեր առջեւ անարգ պիտի սեպուի, և թէ որ մեռեալ է, ինչո՞ւ համար չաշխատինք կենդանացընել: Շատերը կան մեր ազգին մէջ որ կ՚ըսեն թէ՝ գրաբառը ամենեւին իրենց օգուտ մի չըներ և շուկային մէջ չանցնիր. իրաւունք ունին, վասն զի չեն բանեցըներ և անոր համար չանցնիր. Նամակներն և հաշուետումարն ուրիշ լեզուով գրելը լաւ կը սեպեն և գրաբառին հոգ չեն տանիր: Եկեղեցական ժամերգութիւնները միթէ բոլորն այլ գրաբառ չե՞ն կարդացուիր. մանկ կ՚ըսեն անոնք և ամենեւին բան մի չեն հասկընար. քարոզիչ ալ անոնց օգտութեան պատճառաւ իր ատենաբանութիւնը ռամկերէն լեզուով կը ստիպուի ընել, որպէս զի միտք առնուն. աշխարհաբառ եւս տալու ըլլի, անկէ այլ չեն շահիր, վասն զի գրաբառ բառեր կը գործածէ: Գինէ սա մեր աշխարհաբառ խառնակ լեզուն չխակելու համար ջանանք սորվիլ գրաբառը համառօտ կերպով մի: Ահա անոնց օգտութեան համար չէ՞ որ հիմայ նոր սովորութիւն եղած է շատ գրքեր աշխարհաբառ կը գրուին, (ինչպէս որ

մենք եւս ստիպուեցանք այն լեզուով խօսիլ
ձեզ համար); նաեւ օտարներին աշխարհաբառ
կը խմբագրուին. բայց տեսա՛ն որ զանոնք այլ
կարող չեն ինչպէս որ պէտք է՝ հասկընալ. ուս-
տի նորէն կը պարտաւորին գրաբառը ունելու.
ապա թէ ոչ այն ժամանակ կը ստիպուէր աշ-
խարհաբառն այլ ուրիշ պարզ և ամենուն հաս-
կանալի ընելու համար օտարներէն և փոխառա-
կան բառեր գործածել մէջը, որ է մուրացկա-
նութիւն, և մեր լեզուն իբր աղքատ լեզու-
մի համարել տալ, որ է անարգութիւն և ա-
մօթ մեր ազգին:

Ադէ, սիրուն որդեակք իմ, պարտաւորու-
թիւն սեպեցէք ձեզ չելնել գրաբառնէն մինչեւ
որ լաւ չուսնիք քերականութիւնը: Այս ուս-
մունքովս կ՚ըլլաք դուք աստուածապաշտ և ջերմ-
եռանդ անձինք, աստուածաբան, իմաստուն,
ճարտարախօս, պատմաբան, բազմագէտ, ու
նաեւ՝ զոր չէք կարծեր ընաւ, եռանդուն ազ-
գասէր. վասն զի ձեր ազգասիրութիւնն աւելի
բորբոքողը գրաբառ լեզուն է. անով կ՚իմանամք
մեք մեր լեզուին պատուականութիւնն և անդ-
րանկութիւնը. անոր մէջ կը կարդամք և կը սոր-
վինք մեր նախնի նահապետներուն և թագա-
ւորներուն անպարտելի քաջութիւնն, ազգա-
սէր գործքերը, զարմանալի մեծագործութիւն-
ները. նոյն աստուածախօս լեզուով կը կարդամք Ե-
ղիշէի գրած ոսկեղէն պատմութիւնը, Խորենա-
ցւոյն սքանչելի հայկաբանութիւնը, որոնց մէջ

պայծառ կը փայլի ազգային ոգին, Նարեկա-ցւոյն աղերսագրութիւնները և աստուածային հո-գեբուխ ձայները, որոնց վերայ եւրոպացիք ան-գամ կը զմայլին, Շնորհալւոյն գեղեցիկ տա-ղաչափները և Լամբրոնացւոյն սքանչելի ատե-նաբանութիւնները. ո՞ր մէկն յիշեմ։ Նաև ամենայնն է ի դաս օտարազգի հռչակաւոր հեղի-նակաց գործքերը, Հոմերոսի, Վիրգիլեայ, Վի-դայի քրիստոսականին, Միլտոնի, Ֆենելոնի և Կլօպշտօքի բանաստեղծական գրուածները։ Մէկ խօսքով բուն հայազգի և ազգասէր չեմ կոչեր ես այն մարդն՝ որ գրաբար լեզուն չգիտէր։

Լեզուագիտութեան օգտակարութիւնը։

Մէկ աշակերտ մի իւր մայրենի լեզուն ու-նելէն յետոյ՝ լեզուագիտութեան եւս սէր մի ունենալու է, և աշխատելու է ուրիշ լեզու-ներ եւս սովրիլ, որոնք աւելի ընդհանուր եղած են և առևտուրի մէջ աւելի կ'անցնին. չէ թէ ամենայն իւր պարտքն է, այլ իւր մասնաւոր օգ-տին համար աղէկ է որ ունի. վասն զի միայն իւր լեզուն առնուլ անցնիլը բան չէ։ Ասոր հա-մար է որ հիմայ ազգային բարեկարգ և օրինա-ւոր դպրոցներուն մէջ սկսան ուրիշ օտար լե-զուաց եւս վարժապետ կարգել, որպէս զի տղ-այք իրենց մայրենի լեզուէն յետոյ զանոնք եւս ձեռք բերելով՝ թէ մասնաւոր շահուց և թէ ազգային յառաջդիմութեան և բարեկրթու-թեան նպաստ մի ըլլայ։ Այս եւս յայտնի է որ,

մի մարդ որքան լեզու գիտնայ՝ այնքան մարդ կը համարի, օտարազգւոյ հետ խօսակցելու և առևտուր ընելու ժամանակ թարգմանի կարօտ չմնար. և լեզուագէտ մարդն անաշխատ կրնայ ճանապարհորդել բոլոր աշխարհի երեսը: Որքան մարդիկ լեզու չգիտնալով իրենց գործածութենէն և շահերնէն յետ մնացեր են, և իրենց միտքը չեն կարողացեր բացատրել ուրիշներուն՝ այնպիսի երկրի մի մէջ գտնուելով, ուրտեղ իւր լեզուն հասկցող չկայ. որչափ դժուարութիւններ կը կրէ և շփոթութեան մէջ կ'ինկնի: Ասոնցմէ ի զատ լեզուագէտ մարդը շատ վտանգներէ կ'ազատէ զինքը, ինչպէս հետևեալ օրինակը կ'երևի:

Լատիներէն լեզու գիտնալով մահէն ազատող հիւանդը:

Մուրետոս, որ հին ժամանակները իբրև երկրորդ Կիկերոն համարուած էր իւր ոճոյն վսեմութեանն և յստակութեան համար, հիւանդանոցի մի մէջ հիւանդ պառկած ըլլալով, երկու բժիշկ զինք կը նայէին, որոնք ոչ ով ըլլալն և ոչ անոր հիւանդութիւնը կը ճանչէին: Մուրետոս ականջ դնելով լսեց՝ որ այսպէս կը խօսէին իրարու. ֆաչիամուս էքսփէրիմէնթում ին անիմա վիլի. որ կը նշանակէ. փորձ մը ընենք այս անարգ հոգւոյն վրայ: Սոսկացաւ խեղճն անոնց բանին իմանալով, և մէկէն կը ջանայր որ զինքն անոնց ճանկէն ազատէ, որոնք փորձի համար իրեն դեղ մի պիտի տային. և դէպ ի անոնց ուղղելով

խօսքը ըսաց. Վերջին անգամ [illegible] [illegible] Բրիտանիա ծովերուն էր. այսինքն՝ [illegible] [illegible] [illegible] այն հողին, որու համար Յիսուս Բրիտանիա էր անյը տրուի։ Այս խօսքերը զրուցելով փախաւ Մուբեստ, ուրախանալով իւր սրտին մէջ՝ ազատութեան ժամանակ բանտերէն ելլելուն ու մնելուն համար, զոր եթէ չգիտնայր. անտարակոյս իւր ազատութեան զոհ պիտի լինէր։

Օգուտն աշխարհագրութեան։

Աշխարհագրութեան ուսումը լեզուագիտութեան և մայրենի լեզուին չափ հարկաւոր է մարդուս։ Որովհետեւ աշխարհագրութիւնը կը սովրեցընէ մեզ երկրիս այլ և այլ գաւառներուն տեղուանքը, որոնց վրայ շատ անգամ խօսակցութեան մէջ կը հանդիպի խօսիլ. ուստի մեծամեծ սխալներ կը գործենք, թէ որ քիչ մի տեղեկութիւն չունենանք այս գիտութեան վըրայ։ Ամէն մէկ քաղաքին աշխարհիս որ մասին մէջ ըլլալը չգիտնալով, Ափրիկէինը Եւրոպայու մէջ կը կարծենք, Ասիայինը Ամերիկային մէջ, և խաղք կը լինինք ամենուն առջեւ։

Աշխարհագրութիւն չգիտնալուն համար ծաղր եղող երիտասարդը։

Մի ժողովքի մէջ ճամբորդի մի վերայ խօսք եղաւ, որ Քալէէն Տուվրը[1] եկեր էր երկու

(1) Քալէն և Տուվրը՝ Գաղղիոյ և Անգղիոյ ծովեզերեայ նաւահանգստաքաղաքներն են, որոնց միջոցը եղած ծովը կ'ըսուի Նեղուց Քալէյայ։

ժամուն մէջ, Թէպէտեւ մէկ քաղքէն մինչեւ մէկալը եօթը մղոն հեռու է ։ Տղուն մէկը ըսելով զայս, եւ չգիտնալով թէ ծաղով կ'ըլլայ այն ճամբորդութիւնը՝ ըսաւ . “ Կ'երեւի թէ այս ճամբորդը պատուական եւ սրընթաց ձի մը ունէր ։ — Չէ՛ , պատասխան տուին իրեն , անիկայ միայն փայտէ ձի մը ունէր ։ — Ի՛հ , ի՛նչ կ'ըսես , կրկնեց աղայն , եօթը մղոն հեռու տեղը ի՞նչպէս կրնայ մարդ հասնիլ երկու ժամուն մէջ փայտէ ձիով մը ։ — Բայց հաւատամ որ այնպէս եղաւ , պատասխանեց նորէն միւսը . բաւական է միայն գիտնաս՝ որ նորա հեծած ձին թեւաւոր էր եւ ջրին վերայ կը քալէր » ։ Այն ժամանակ խելքը տեղ ըլաւ տղուն , եւ իմացաւ թէ ըսած ձին նաւ մը էր . ամէնայուն երեսը կարմրեցաւ , եւ հոն եղողներուն առջեւ խաղք ըլլալուն վերայ ինքնիրեն բարկանալով , կամացուկ մը քաշուեցաւ գնաց անկէ ։

Այս մէկ օրինակս կրնայ ձեզ բաւական յայտնի ըլլալ , որ զանց չառնուք աշխարհագրութիւնը ուսանելու , որ այնքան հարկաւոր է , եւ խօսակցութեան մէջ միշտ կը գործածուի ։ Եւ կրնաք ըստ բաւականին տեղեկութիւն մը ունենալ ատոր վերայ , համառօտ աշխարհագրութեան գրքերը կարդալով , եւ աշխարհագրական թղթերուն աչքէ անցընելով , որոնց մէջ գրուած կան աշխարհիս հինգ մասերը ։

### Ուսումն ժամանակագրական։

Աշխարհագրութեան հետ ժամանակագրութիւն այլ պէտք է ուսնիլ։ Աշխարհիս ստեղծուելէն մինչեւ ցայսօր անցած ժամանակներուն և դարերուն կարգը ճանչնալը մեծ օգուտ կ'ընէ ձեզ։ Ասոնց մէջ հանդիպուած անցքերն իրարու հետ չէք շփոթեր, և մէկ դարի մէջ պատահածն ուրիշ դարի չէք տար, որ է սխալ ժամանակագրական. և այս այնպէս սխալ մի է, որ խիստ շատ անգամ կը գործեն ժամանակագրութեան հմուտ չեղողները։

### Ժամանակագրութիւն չգիտցող ազու մի ծաղրելի սխալմունքը։

Բազմաթիւ ժողովք մի մէջ խօսք բացուեցաւ զանազան աշխարհակալներու վրայ, որ աշխարհիս մէջ երեւցան. տղուն մէկն այլ դարձաւ իւր հօր միամտութեամբ հարցուց թէ՝ «Լուի ԺԴ ը ամենեւին յաղթութիւն մի գործա՞ծ էր Աղեքսանդր մեծին դէմ»։ Որուն պատասխան տուաւ հայրը. «Լուի խիստ կտրիճ մարդ էր, և կրնար Աղեքսանդրին դէմ դնելու. բայց պզտի արգելք մի կար. պէտք էր որ Աղեքսանդր յարութիւն առած ըլլար սոր օրոք, վասն զի անիկայ շատ դար առաջ մեռած էր Լուի դեռ յաշխարհ չեկած»։ Տղայն այն ժամանակ կրկնեց. «Ինչպէս գիտցար դու ասիկայ հայր։ — Ժամանակագրութիւն սորվելով գիտցայ ես, ըսաց հայրը, և դու եւս քիչ ժամանա-

կէն սկսի դիմանաս, երբ՝ ինչպէս քանի մի անգամ զրուցեր եմ, ջանաս միտքդ պահել Պօուէտայ ընդհանուր պատմութեան մէջ նշանակուած այլ եւ այլ թուականները: Այս գիրքը թէ որ առաջնորդ ունենաս քեզ, ժամանակաց կարգը չես շփոթեր, և իբրեւ տգէտ՝ ամօթով չես մնար մարդկանց քով»:

Ուսումն դիցաբանութեան կամ առասպելաց:

Այս ուսումը թէպէտ և ընդհանրապէս հարկաւոր չէ, այսու ամենայնիւ ձեր միտքը զարգացնելու և լուսաւորելու համար՝ կարեւոր բաներէն զանց չեմ առներ, կ'ուզեմ որ մի հարեւանցի տեղեկութիւն տամ ձեզ դիցաբանութեան կամ հեթանոսութեան սուտ աստուածոց պատմութեան վերայ: Բանաստեղծներն և պատկերահանները շատ կը գործածեն այս աստուածները. վասն որոյ անկարելի է անոնց թէ քերթուածներուն և թէ պատկերներուն նշանակութիւնն իմանալ, թէ որ քիչ մի տեղեկութիւն չունենայ մարդս այն գիտութենէն: Նաեւ շատ անգամ ագիտութեամբ մարդ հակառակ նշանակութիւններ կուտայ անոնց գրածներուն և ներկայացուցած պատկերներուն, որով ծաղր եւս կ'ըլլայ ամենուն:

Տես. մի ըրած մեծ սխալները:

Սորվին դպրոցաց աշակերտներէն մէկը պատկերներու թանգարանի մի մէջ տեսնե-

ներով պատկեր մի, որու մէջ նկարուած էր Ափրոդիտէն Սէրոյ քովը նստած, և որովհետև այս չաստուածուհւոյն մանուկը եղած նախ-րականները չէր ճանչնար ալայն, դարձաւ ըսաւ իր մօրը. «Մայրիկ, տես սուրբ Աստուածածինը գեղեցիկ հրեշտակին հետ»: Մայրը չկրցաւ բռնել զինքը խնդալէն, նոյնպէս հոն գտնուողներն ամէնքն ալ ծիծաղելէն կը մարէին. ալայն ամէնուն կարմրեցաւ, որ եթէ քիչ մի ամփոփած ըլլար դիցաբանութիւնն, այս սխալմունքը չէր ըներ, երբ գիտնար թէ կապարճը (թէրքէշ) նետերը և քովը Սիրոյ առասպելական յատկութիւններն էին, այն ժամանակ դիւրաւ կրնար ճանչել Ափրոդիտէին որդին լինելն և ոչ հրեշտակ:

---

Ուսումն դաստիարակութեան:

Ձեր ունենալու առաջին գիտութիւնը պատմութիւնն է, վասն զի պատմութեանն ուրիշ բան չկայ որ կարող ըլլի ձեր միտքն լաւ մի զարդարել, և ձեր սիրտը ի լաւութիւն կրթել:

Պատմութիւնը կը նմանի պատկերի, որ մեր աչքին առջև կը բերէ աշխարհիս տեսարանին մէջ հանդիպած երևելի դիպուածները: Անոր մէջ պայծառ կը փայլին դիւցազնական առաքինութեանց օրինակները. անկէ կ'ուսանի մարդ տէրութեանց մէջ պատահած խռովութիւնները, փոփոխութիւններն ու այլ և այլ ազգաց սովորութիւնները:

Պատմութիւն գիտցող մարդը, ամէն դարու և ամէն երկրի մէջ ապրող մարդ է. իսկ չգիտցողն ապուշ փայտէնւոյ կը նմանի, որ ոչ իւր բոլորտիքն և ոչ առջևին տակ եղածը կը ճանչէ:

Բայց որովհետև պատմութիւնն ընդարձակ դաշտ մի է, որ քիչ ժամանակի մէջ մարդ չկարողանայր բոլորը մէկէն պտըտիլ. ուստի հիմակու հիմայ բաւական համարեցէք ձեզ միայն համառօտ պատմութիւնը կարդալ մեր ազգին, և աղէկ սորվիլ հին նահապետաց և թագաւորաց ժամանակի դիպուածները, որոնց շատ անգամ կը հանդիպիք գրքերու մէջ, և զոր բարեկիրթ և ուսումնական տղայոց հարկ է որ գիտնան:

Մի կարծէք թէ դժուար և ձանձրալի ուսում մի է այս. ընդհակառակն ամէն աւելի մարդոյս մտաց հաճոյական և զուարճալի գիտութիւն չկայ: Այն սքանչելի գործքերն մինչ ընելու յօժարական ականջներդ կուտայք, և մեծ հաճութիւն կը զգայք օգտակար դիպուածները և զարմանալի անցքերը լսած ժամանակնիդ: Անոր մէջ կը գտնէք ձեր ախորժակին հաճոյ գործքեր, և ձեր հետաքրքրութիւնը կը լեցնէք անոր թղթերը ուշադրութեամբ դարձնելով. մանն ալ աշխարհիս զանազան ազգաց մէջ կարգէ դուրս ինչ որ պատահած կայ, հոն բովանդակած կը տեսնէք:

Բայց չըլլայ որ պատմութեան հետ շփոթէք առասպելները (մասալները), որոնց մէջ պատ-

մուածը մտացածին չինծու բաներ են. իսկ պատմութիւնն այնպիսի բաներու վրայ կը խօսի, որ իրօք եղած են, և զգոյշ կեցիք՝ չըլլայ թէ պատմիչք թողլով վիպասաններուն ետևէ իյնկնիք կարդալու :

Ձեր վարժապետէն տուած դասերն և կրթութիւններն ամենն ալ արժանապէս սորվելէն յետոյ, միւս մնացած ժամանակնիդ եւս պատմութիւն կարդալու տուէք: Վասն զի, թող որ ամեն մարդու անհրաժեշտ պարտք է իւր ազգին պատմութիւնը գիտնալ, այլեւ անոր մէջ օգտակարին հետ զուարճալին եւս կը գտնէք, և ձեր միտքը գեղեցիկ ծանօթութք զարդարելով, առաքինութեան սէրը կը տնկուի ձեր սրտին մէջ, քաջաց և բարի օրինակաց միջոցով:

Գուցէ կ'ըսէք ինձ, թէ ձեզ առաջարկած նիւթերս խիստ բազմապատիկ են, և թէ անկարելի է այսքան բան մէկէն սորվիլ մի եւ նոյն ժամանակին մէջ: Այո, գիտեմ այնպէս ըլլալը. ուստի և չեմ բռնադատեր որ մի և նոյն ժամանակին մէջ սորվիք բոլոր այն գիտելիքներն զոր այս գրքոյս մէջ ձեզ յիշատակեցի. այլ կը ցանկամ միայն որ դուք հետզհետէ մէկիկ մէկիկ կարդայք մտօք առնուք իմ դրած կանոնիս համեմատ: Այս կերպով բոլոր այն գիտելիքները դիւրաւ կը տպաւորին ձեր յիշողութեան մէջ. և ձեր ուսմունքը կատարելէն յետոյ՝ ինչ որ հարկաւոր է ձեզ, բոլորն ալ աղէկ սորված կը

ընէք ։ Բայց թէ որ՝ ինչպէս որ շատ տղայք կ՚ը-նեն, առանց կարգի և կանոնի սորվելու ըլլաք, ձեր մտաց մէջ ամէնքն կը շփոթին, և բոլորը մէ-կէն սորվիլ ուզելով, և ոչ բան մի կը սորվիք ։

## ԳԼՈՒԽ Ի.

### Աշխատասիրութեան վրայ ։

Քիչ մարդիկ կան որ չցանկան գիտնալ վերը գրուած բոլոր ուսմունքներն և ծանօթութիւն-ները. բայց քիչ մարդիկ կան նաև որ ուզեն պէտք եղած միջոցը ի գործ դնել զանոնք սոր-վելու համար ։

Այս բուն միջոցս, սիրելի որդեակք իմ, աշխատութիւնն է, վասն զի հասարակաց զրոյց մի կայ կ՚ըսէ թէ՝ առանց աշխատանաց և ջա-նից բան մի չկրնար շահուիլ ։ Որքան տղայք գիտութիւն ունենալու համար ի բնէ յարմարու-թիւն ունենալով, մեծ յառաջդիմութիւններ կրնային ընել անոնց մէջ. և ուրիշ շատերուն նման իրենց հայրենեաց պարծանք կ՚ըլլային. բայց որովհետև այս բանիս համար մանկու-թեան ժամանակին կը հարկաւորէր աշխատիլ և իրենց ունեցած յարմարութիւնը բանի բերել և մտքերնին մշակել անխոնջ ջանքով, ուստի զանց առնելով, մնացին տգիտութեան մէջ. Ծուլութիւնը յաղթեց իրենց, աշխատութիւն

իրենց ծանր եկաւ, և անարգաբար յանձն առնե ամօթ կրելու, որ աղքատութեան սիրելի ընկերն է, քան թէ նեղը խօթել զիրենք գիտութիւն սորվելով, որով կրնային իրենց միտքը զարգարել և երեւելի անձ մի լինել, և իրենց օրինակովը հաստատեցին այն առածն որ կ'ըսէ թէ՝ սրամիտ և զօրաւոր հանճարն ամենեւին օգուտ մի չըներ, թէ որ ուսումն և աշխատութիւնը չօգնէ անոր։ Բայց թէ որ առանց ուսման և աշխատութեան բան մի չստացուիր, սակայն երկուքը մէկտեղ գալով՝ ամեն ինչ կրնայ ըլլալ։

Գիտութեանց ուսումը կրնայ բաղդատուիլ գետնի մշակութեան հետ. ինչպէս որ աշխատութեան զօրութեամբը՝ բնութեամբ անպտուղ եղող երկիր մի մշակելով կը յաջողի ժամանակին պտուղ բերել, այնպէս անխոնջ պարապելով ուսման մէջ՝ կրնայ մարդս գիտուն ըլլալ, թէպէտեւ եղական բնաւորութիւն կամ կարդալ սորվելու դիւրութիւն ընդունած չըլլայ բնութենէն։

Աշխատութեամբ բնութեան յաղթէ։

Դիմոսթենէս, Յունաստանի երեւելի ատենաբաններէն մէկը, իր բնական յարմարութեանց դէմ այնպէս արգելքներ ունէր, որ կարծես թէ ամենեւին չպիտի կրնայ և ոչ հասարակութեան մէջ երկու խօսք զրուցել։ Լեզուին վերայ պակսութիւն ունենալով՝ չէր կարողանար երկու խօսք մէկմէկու ետեւ արտասանել. նաեւ ձայնն

այլ սիրուն չէր . և կուրծքը տկարութիւն մը ու-
նէր . բայց նա աղէկ գիտնալով թէ աշխատու-
թեամբ ամեն ինչ կը յաջողի , և բնութեան մէջ
եղած դժուարութիւններէն բնաւ չվախնալով՝
ձգտեց իւր ջանքն աւելցընել և յաղթել ա-
նոնց : Ուրեմն իւր թոթովախօսութիւնը չկո-
կելու համար , բերանը մանր քարեր կը դնէր ,
և այնպէս բարձր ձայնով կը կարդայր . երբեմն
ևս իւր կուրծքը զօրացընելու համար , դար
ու փոս ժայռերու վերայ ճանկելով կ՚ելնէր և
բարձր ձայնով ատենաբանութիւններ կ՚ընէր :
Մինչև կ՚ըսեն թէ՝ երեք ամիս լման գետնի
տակ փորուած տեղ մը անցուց , միայն իւր ձայնն
և շարժմունքները կանոնաւորելով հայլի մը
դիմաց , որ լաւ տեսնէ պակասութիւնները : Նա
իւր ջանքերը պարապ չեղան . վասն զի բնութեան
տուած արգելքներուն հետ կռուելով , բարե-
յաջողութեամբ յաղթեց անոնց , և եղաւ Յու-
նաստանի խիստ երևելի ատենաբանը : Մի յու-
սահատիք ուրեմն , սիրելի որդեակք իմ , թէ որ
չտրուեցաւ ձեզ այն հազուագիւտ տաղանդնե-
րը , զոր Աստուած քիչ մարդու շնորհած է . բայց
Դիմոսթենէսի օրինակին վերայ՝ ջանացէք դուք
ևս անդադար ուսման պարապելով լեցընէք ձեր
պակասութիւնը : Մի թուլնաք՝ թէ որ առջի բերան
երջանիկ վախճան մը չունենան ձեր ջանքերը ,
ինչպէս որ կը յուսայիք . վասն զի գիտութիւն-
ները կամաց կամաց կ՚ուսանի մարդ , և կրթու-
թիւնը՝ ժամանակին և աշխատութեան պտուղն է :

Աշխատասէր երիտասարդը։

Երեւելի Յոյն փիլիսոփային մէկը Կղէանթէս անուն, չափաւոր միտք մի ունէր. բայց այնչափ գիտնալով թէ անխոնջ պարապումը խելքէն աւելի կրնայ զմեզ գիտուն ընել, բոլոր գիշեր հորէն ջուր քաշելով պարտիզպանի մի քով՝ օրական ապրուստն անկէ կը հանէր, որպէս զի ցորեկը բոլոր կարող ըլլայ ուսման ետեւէ ըլլալ անձանձրոյթ փութով. եւ այս կերպովս այնպէս յառաջացաւ գիտութեանց մէջ, որ բոլոր իւր դասընկերներէն անցաւ եւ իւր դարուն լոյս մի եղաւ։

Լուսաւոր միտք ունեցողները չեն միշտ որ գիտութեան մէջ յառաջ կ՚երթան, այլ գրեթէ սովորաբար անոնք՝ որ աւելի աշխատութեամբ կը ջանան։ Եւ պատուաւոր մարդիկ այս աշխատութեան միջոցաւն է որ փոյթ ունեցեր են միշտ երեւելի ըլլալ գիտնականաց մէջ։

Աշխատասիրութեան գեղեցիկ օրինակներ։

Պլինիոս ծերն այնպէս նախանձաւոր էր իւր ժամանակին օգտակար բաներով միշտ անցընելու, որ երբ տունէն դուրս ելնել ուզեր, գահաւորակի (թէճկէրէի) մի մէջ նստելով զինքը պտըտցընել կու տայր, որպէս զի կարող ըլլայ ճամբան եւս կարդալու, առանց արգելք լինելու իրեն ճամբուն մէջ եղող մարդիկը։ Սեղանը երթալուն՝ հետը միշտ գիրք մի կը տանէր,

որ մինչեւ խորհրդի սկսելէն՝ ժամանակը պարապ չանցընէ ։

Պլինիոս կրտսերը, իւր եղբօր որդին, կրնամ ըսել՝ թէ իւր հօրեղբօր ուսման մէջ ունեցած եռանդը ժառանգեր էր ։ Նոյն ինքն իւր մէկ նամակին մէջ կը պատմէ թէ, որսի գնացած ժամանակ հետը կը տանէր իւր պզտի գրանոցը, որպէս զի որս չեղած ատենը նոր մէկ մտածութեամբ մի իւր միտքը ճոխացընէ ։

Դիոգինէս անդադար աշխատութեան օրինակ եղած էր, և հիմայ ըսելիքս յայտնի ապացոյց մի է որ կրթութեան համար ունեցած փափաքն իւր վերայ իշխող կիրքն էր ։ Օր մի Դիոգինէս իւր վարժապետին քով կ'երթայ նորա տուած դասերը մտիկ ընելու համար. առջի բերան տմարդութեամբ մի վարուեցաւ հետն Անտիսդենէս, և իբր թէ վռնտել ձեւացընելով ըսաւ թէ՝ «Բան մի չեմ ուզեր սորվեցընել քեզ»։ Անոր այնպէս վարմունքէն ամենեւին սիրտը չվիրաւորեցաւ Դիոգինէսին, և ընդհակառակն աւելի սաստիկ աղաչանքներ սկսաւ ընել. բայց Անտիսդենէս՝ որ հաւանականաբար կամ նեղութենէ փախչիլ կ'ուզէր, և կամ նորա մտաց հաստատութիւնը փորձել, աւելի մեծ խստութիւն ցուցուց, մինչեւ ծեծելու այլ եղաւ ։ «Խփէ աղէկ, պոռաց այն ժամանակ Դիոգինէս, ծեծէ որքան որ կ'ուզես, մինչեւ որ ինձ մտիկ ընես»։

Ահա ձեզ ուրիշ երկու օրինակներ ևս ա-

ուտել զարմանալի, ինչու որ կոնց տէրերն այլ աւելի ծաղկահասակ տղայք են։

Յոյն երիտասարդ մի Եւկղիտէս անուն, այնքան մեծ սէր ունէր ուսման, որ երբ Մեգարա քաղքին բնակիչներուն, ուր տեղ կը բընակէր ինքն եւս, արգիլուեցաւ Աթենացւոց քով յաճախելը, ինք մինկ չընելով՝ երեկոյեան գիշերը մութ ժամանակ Աթէնք կ'երթայր Սոկրատէն դաս առնելու համար, և առաւօտուց յետ կը դառնայր նորէն ի Մեգարա՝ կնկան լաթ հագած և գլուխը վերարկու մի առած զանազան գոյներով, երեմն այլ քօղով մի ծածկած որ մարդ չճանչնայ զինք։

Պորկինեայի դուքսը ծանր հիւանդութեամբ պառկած ըլլալով, խելքն ու միտքը իւր գրքերուն հետ էր միշտ։ Օր մի փոքր ինչ աղէկի պէս ըլլալով, խնդրեց իւր դաստիարակին՝ որ իրեն տայ իւր գրքերը։ Հարցուց դաստիարակը թէ՝ «Ինչո՞ւ համար այդքան մեծ սէր ունիս ուսման»։ Պատասխան տուաւ թէ՝ «Կը վախնամ որ գիտցածս չմոռնամ, ու նաեւ միլիոնաւոր գիտելիքներ կան որ ունիլ կ'ուզեմ»։ Զարմանալու բան չէ այս իշխանին՝ որ դեռ հազիւ ինն տարեկան կայր, այսպիսի բնաւորութեամբ և ուսումնասիրութեամբ իւր միտքը գեղեցիկ և անհամար գիտելիքներով զարդարելը։

Արդէն մի քանի անգամ խօսեցայ, և չեմ զանգիտիր նորէն ըսել ձեզ, սիրելի որդեակք իմ, թէ աշխատութիւնը գերազանց բնաւորու-

թիւն մի է, զոր ուսմանց մէջ պէտք է մարդս ունենայ. և որ եւ լսէ աշակերտ մի, թէ որ սրտանց պարապելու լինի, կրնայ քիչ ժամանակին մէջ շատ յառաջ երթալ. ուր ընդհակառակն՝ ով որ աշխատիլ չուզեր՝ զոր հարկաւորապէս ուսմունքը կը պահանջէ, անփութութեան թանձր խաւարին մէջ կը մնայ, իւր բոլոր կենաց մէջ ռամիկ մարդոց հաւասար կըհամարի, և չկըրնար բնաւ մեծ մեծ բաներու ցանկալ և հասնիլ:

Կ՚ուզէ՞ք դուք որ օր մի աշխարհիս մէջ երեւելի և պատուաւոր մարդ ըլլաք, մի թողուք որ դատարկութիւնն և ալարութիւնը դերի ընեն զձեզ իրենց, ինչպէս որ բնականապէս եւս կը քաշէ զմարդիկ դէպ իրենց: Այլ դուք պզտիկուց սովրեցէք ձանձրութեան համբերել և աշխատութիւնն սիրել: Թէ որ անոր համը երիտասարդութեան ժամանակնիդ չառնուք, և ոչ կատարեալ հասակնուդ մէջ կարէք առնուլ, և ամենեւին մէկ բանի մի կարող չէք լինիլ:

Չեմ ըսեր ձեզ թէ կարդալու ետեւէն ինկնելու համար, որուն կը պատուիրեմ որ դուք եւս հետեւիք. ի սկզբան շատ փոյթ և աշխատութիւն պէտք չըլլայ և արդիւնքներ չպատահի. բայց մի անգամ որ սովորութիւն ընէք ձեզ, քաշած աշխատանքներդ ուրախութեամբ կը փոխուի: Մէկ կողմէն եւս անկէ քաղած շահերնիդ առատօրէն կը վարձատրեն ձեր կրած նեղութիւնը:

Ի՞նչ ուրախութիւն է աշակերտի, երբոր

դպրատան մէջ առաջինը կ՚ըլլայ և իւր դասըն-կերները ետ ձգելով՝ մինչ օրէ օր յառաջ կ՚եր-թայ, որով իւր ծնողաց ուրախութիւն կը պատ-ճառէ, և վարժապետք եւս կը պատուեն ու կը սիրեն զինք։ Ահա այսպէս կը լինի և ձեզ, սի-րելի որդեակք իմ, եթէ անդադար պարապիք ուսման. բայց եթէ զանց առնելու լինիք, ան-կէ քաղած պտուղնիդ կ՚ըլլայ պակ ցաւ, աղէ-տութիւն և նախատինք։

Վերջապէս զձեզ կարդալու և աշխատու-թեան յորդորելով, միտքս այն չէ թէ առաւօ-տէ մինչեւ յերեկոյ անոր ետեւէ ըլլաք, և զձեզ զբօսանքէ և զուարճութենէ զրկէք։ Ինչ և իցէ բանի մէջ պէտք չէ շատ ետեւէն իյնալ, և եր-կու հակառակ ծայրերէն փախչելու է միշտ. մէկ մի չափազանց աշխատութենէ, մէկ մ՚այլ հեշտասէր դատարկակեցութէ։ Առանց շունչ առնելու անդադար աշխատելէն ջիղերնիդ կը թուլնայ և ուժերնիդ կը պակսի, և երկար ժա-մանակ հանգիստ կեանք վարելէն ալ միտքեր-նիդ կը բթանայ և կը խամրայ։

## ԳԼՈՒԽ Ժ.Թ.

### Ծուլութեան և դատարկակեցութեան վերայ։

Ծուլութիւնը միշտ փոքր տղայոց և անչա-փահաս երիտասարդաց պակասութիւնն է։ Ա-ռաջին մարդ կը ջանայ որ անոնց այս պակասու-

թեան առաջն առնու. բայց որովհետեւ տղայք չեն գիտեր թէ ինչ գէշ հետեւանքներ կ'ունենայ այն, զոր իրենց միշտ կ'իմացընեն, ամենեւին հոգերնին չեն ըներ և բանի տեղ չեն դըներ իրենց մեծերուն խրատները, այլ կուտան զիրենք ծուլութեան, և կը կարծեն թէ անով լաւ վիճակ մի պիտի ստանան ։

Գուցէ ձեր մէջն այլ ծոյլ տղայք կան, այնպէս կարծած են թէ ծուլութեան մէջ պիտի գտնեն իրենց զուարճութիւնն և գեղեցիկ վիճակ մի. բայց կը խաբուիք, սիրելի որդեակք իմ, գիտցէք ձեր սխալմունքը և ճանչցէք որ մեծ մոլութիւն մի է այս ։ Ահա ձեզ անոր նկարագիրը, զոր լաւին բանաստեղծ մի շինած է ։

Ծուլութեան բանաստեղծական նկարագրութիւնը։

Պառնաս լերան ոտքը մէկ խոր քարանձաւ մի կայ, զոր բնութիւնը շինած է, առանց մարդձեռք դպցընելու ։ Այս տձեւ այրիս դիմացն ընդարձակ և անպտուղ արտ մի կայ, ուր ամենեւին արօր (սաբան) մտած չէ, և ոչ երկրագործն ակօս մի բացած է նորա մէջ ։ Դեղին հասկերուն տեղը՝ փուշ ու տատասկ կը բերէ հողը ։ Այն տեղ կը թագաւորէ խորին լռութիւն՝ ուր բնաւ թռչնոց երգ չլսուիր. միայն կենդանեաց մէջ ամենէն անարգն իւր ձայնը կը հանէ նորա բնակչաց իմաց տալու համար, արանք խորունկ քունի մէջ թաղուած են, թէ արեգակն իւր ընթացքին կէսն հասած է ։ Նա

րին խորը կը տեսնուի գէշ խառներու կարգ մը, որու չորս դին խաչխաչներով պատած է ։ Այն տեղ կը հանգչի անհոգ աստուածուհի մը Ծու-լութիւն անունով, որ սիրելի է տղայոց, երիտասարդաց ու նաեւ ամանց ծեր մարդկանց ։ Այս աստուածուհիս երբեմն երբեմն իւր ամայի բնակարանէն դուրս կ՚ելնէ որ արեւուն լուսին զինք ցուցընէ ․ բայց հազիւ կարող կը լինի քանի մի քայլ նետել իւր գաւազանին օգնութեամբ, որու վերայ կռթընած է, թէպէտ եւ զօրութիւն չունի ։ Կրայի (Թօսպաղը) նման իւր մարմինը քաշկռտելով կ՚երթայ՝ քան թէ կը քալէ, կ՚որորուի և կը տատանի ։ Աչուըները կ՚ուզէ բանալ՝ լոյսը տեսնել, բայց չկրնար, վասն զի քունն իսկոյն կը գոցէ . . . Թարթիչներին և գլուխը չկրնալով շիտակ բռնել, կ՚ինկնի կուրծքին վերայ ։ Տեղէն կ՚ելնէ որ քալէ, մէկէն կանգ կ՚առնու՝ փափուկ աթոռի մը վերայ կը կռթընի, զոր իրեն համար պատրաստած է Մեղկութիւնը (Թուլութիւնը) ։ Անոր քով կը սպասէ Տգիտութիւնն իւր աղջիկը, որ իւր ձոռնի ականջներէն կը ձանչցուի, որոնք մինչեւ գլխուն ծայրը կ՚երկննան, և իւր մթագոյն քօղէն՝ որով ականջները գոցած է ։

Ահա ձեզ, սիրուն որդեակք իմ, ծուլութեան ճշմարիտ պատկերը, կամ աւելի աղէկ է ըսեմ՝ դատարկակեաց տղուն բուն նկարագիրը, որ իւր կիրքերը կատարելով միայն, իւր օրերն իբր թէ փափկութեան և տեսակ մը քնա-

ժութեան մէջ կ'անցընէ ։ Մէկ գիրքն անոր համար անտանելի բեռ մի է . թէ որ երբեմն սխալմամբ ձեռք առնու, մէկէն գետին կը ձգէ ։ Առաւել կ'ուզէ ձանձրանալ, միտքը նեղել՝ քան թէ գործի մի ետեւէ ըլլալ . և աշխատութիւնը օգտակար գիտելիքներէն լաւ կը համարի . զորանք կրնար դիւրութեամբ ձեռք բերել, ուստի ուր որ երթայ՝ նախատինք կը գտնէ ։ Թէ որ դպրատան մէջ ըլլայ, միշտ ամենէն ետեւը նստի . և վարժապետներէն ուրիշ բան չընդունիր . այլ միայն յանդիմանութի ու պատիժ ։

### Ծուլութեան ցաւալի հետեւանքները։

Ամենէն ողբալի բան, ծուլութեան ցաւալի հետեւանքներն են . և անգործ ու անզգոյշ երիտասարդաց անմեղութեան տուած մահացու հարուածները . վասն զի թող ժամանակին անդարմանելի կորուստը որ կ'ընէ, և միայն այս մեծ վնաս մի է իրեն, այլեւ դատարկակեցութիւնն որ ամեն մոլութեանց մայրն է, անպատճառ կ'առնու կը տանի զինքն անառակութեանց անդունդին մէջ կը ձգէ ։ Մէկ տղայ մի որ չուզեր աղէկ բաներու ետեւէ ըլլալ, անշուշտ չարութեան կուտայ զինք . իրեն պէս չար տղայոց հետ կ'ընկերանայ, ու ամեն ժամանակ գէշ զբօսանքներով և զուարճութիւններով կ'անցընէ, անպարկեշտ զրոյցներ լսելով . վերջապէս Աստուած գիտէ նորա չարութեան վախճանն ուր հասնիլը ։

Այս միայն իմ մօրէս անցած կարծէքը չէ․ փորձն ինքնին կը սովրեցընէ մեզ՝ թէ խիստ քիչ անգամ կը պատահի որ առաքինութիւնն այնպիսի տղու մը սրտին մէջ բոյն չընէ, որու մերայ կը տիրէ ծուլութիւնը․ և ընդհանրապէս խօսելով կրնամք զրուցել թէ՝ դատարկակեցութեան ետևէն կ՚երթայ միշտ մոլութիւնը։ Ասոր համար աշխատութիւնը յառաջապահեստ ազդու դեղ համարուած է անառակութեան դէմ։

Ագարակապանի մը իմաստուն խօսքը։

Հարանց վարքին մէջ կը կարդացուի, թէ մի վանքի գլխաւորն առաւօտէն իւր կրօնաւորներուն կողովներ հիւսել տալէն յետոյ՝ երեկոյին նորէն քակել կու տայ զանոնք․ այնպէս որ ուրիշ բան չէին ըներ, այլ քակածնին նորէն կը սկսէին հիւսել ամէն օր։ Կրօնաւորներէն մին ձանձրանալով այս աշխատութենէն, որուն օգուտն ամենևին չէր տեսներ, գնաց աբբային քով և բաց անոր անկեղծութեամբ, թէ կը զարմանամ շատ թէ ինչու համար իրենց ժամանակը պարապ բանով կորսնցընել կու տայ, քակել տալով միշտ մեծ ջանքով հիւսած կողովնին։ “Կը խորհիս դուն, եղբայր, պատասխան տուաւ անոր աբբայն, և հաւատա՝ որ դուն քու ժամանակդ չես կորսնցըներ, վասն զի անով դատարկութենէն կը փախչիս”։

Իմաստութեամբ էր ճգնաւորին բանն, և այսպէս կը մտածեն բոլոր գիտուն անձինք, ո-

ւանք ծուլութիւնն եւ դատարկակեցութիւնը խիստ գէշ մոլութեան տեղ դրած են ։ Դրակոնին՝ Աթենացւոց տուած օրէնքներուն մէկն այս էր, որ ինքզինքն այս մոլութեան տուող մարդն ի մահ կը դատապարտէր ։

Այս օրէնքս անտարակոյս խիստ կ՚երեւի ձեզ, եւ եթէ ոչ ուրիշ բան մը, գէթ կրնայ համոզել զձեզ՝ թէ այս օրէնսդրին աչքէն անհոգ եւ ծոյլ մարդը մեծ գէշութիւններ ընող չարագործի պէս՝ դատապարտութեան արժանի համարուած է »։

Փախէք ուրեմն դատարկակեցութենէն, սիրելի որդեակք իմ, ինչպէս որ կը փախչիք գազանի մը երեսէ, վասն զի գիտնաք որ սկիզբն որքան որ ձեզ զուարճալի կ՚երեւի. յետոյ անպատճառ մոլութեան մը մէջ կը ձգէ զձեզ ։

Դիցաբանութեան մէջէն հանուած գեղեցիկ խրատաբանութիւն։

Դիցաբանութեան մէջ կը կարդանք, թէ Համբարուները ( տէնիզ մէլէի ) իրենց անուշ եւ ներդաշնակաւոր ձայնովը ճամբորդներն իրենց կը քաշէին. յետոյ փափկութեանց մէջ պահելով զանոնք, վերջապէս անոնց կը փոխէին ։ Իմաստուն Ոդիսեւս լսելով զայս, եւ իւր ճամբորդութեան մէջ այն ներդաշնակաւոր յաւերժահարանց բնակած երկրէն անցնելու հարկաւորելով, ականջները խծկեց որ անոնց ձայնը չլսէ, եւ այս հնարքովս անոնց ձեռքն ինկնելու վտանգէն ազատեց զինք ։

Ծուլութիւնն եւս, սիրուն որդեակք իմ, ձեզ համար այս գլխէն հանող համբաւներէն մին կը համարուի։ Կը ջանայ նա իրեն դարձընել զձեզ՝ որ յետոյ անասնոց պէս ընէ ազխտութեան մոլութիւններով, որոնց մէջ անվրէպ կը ձգէ զձեզ։ Սրամիտ Սդխուսին օրինակին հետեւեցէք․ փախիք նորա հրապոյրներէն, և ձեզ պարտաւորութիւն մի համարեցէք ձեր երիտասարդութեան ժամանակն աշխատութեամբ անցընելու։

Պատարկակեցութիւնն՝ իրաւ առջի բերան քաղցր կ'երեւի ձեզ, բայց վերջը ձեր կորըստեան պատճառ կը լինի։ Աշխատութիւնն և կարդալու ետեւէ լինելը ձեզ քիչ մի ծանր կը թուի, բայց յետոյ անդին շահու մի աղբիւր կը լինի ձեզ։

Երկրագործն իւր արտը կը մշակէ և առանոյն ընտիր հունտը կը ցանէ, կ'աշխատի կը քրտնի․ անոր հակառակ անհոգ մարդը ձեռուըները մէջքին խօթած՝ կը թողու իւր երկիրն անգործ առանց մշակելու․ առաջինն առատ հունձ կը քաղէ, երկրորդը վերջին կարօտութեան մէջ կ'ինկնի։ Նոյն ծոյլ և աշխատասէր մարդուն մէջ եւս այս խտիրը կայ։

Վայ այն տղայոց որ ծուլութեան տուած են զիրենք։ Անօգուտ է անոնց տրուած խրատն ու նաեւ պատիժը, վասն զի շուտով կը մոռնան յանդիմանութիւններն և պատիժները, նորէն կ'ինկնին ծուլութեան քնոյն մէջ։

# ԳԼՈՒԽ ԻԲ.

## Զբօսանաց և խաղու վրայ:

Դաստիարակեցութենէն և ծուլութենէն ըզ-ձեզ հրաժարեցընելով՝ չէ թէ զբօսանքներէ և խաղերէ զրկել կ'ուզեմ զձեզ . սիրելի որդեակք իմ, վասն զի մարդույս միտքը չկրնար շարունակ զբաղիլ, այլ ատեն ատեն հանգստանալու և զը-ւարճանալու կարօտութիւն ունի :

Սուրբ մարդումի ողեշան դաստանկոնց.

Սուրբ Յովհաննէս աւետարանիչ իւր առա-քելական պաշտօնին երկար ժամանակ պարապե-լէն յետոյ . կաքաւ մի կ'առնէր և նորա հետ կը զուարճանայր . մարդու մէկն այդ զարմանալով նորա ըրածին, ըսաւ անոր սուրբ աւետարանիչը, թէ ինչպէս որ աղեղը չկրնար միշտ լարած կե-նալ, այնպէս մարդույս միտքն ալ չկրնար միշտ աշխատութեան պարապիլ :

Դէշ չըլլար ուրեմն որ դուք ալ երբեմն զբօսնուք, և կարդալը լմնցընելնէդ յետոյ ան-մեղ զբօսանաց հետեւիք . միայն կ'ուզեմ մի քա-նի կանոններ տալ ձեզ որ խաղալու ժամանակ զգուշանաք այն բաներէն, որոնք կրնան չարիք մի պատճառել, կամ թոյնի փոխուելով քթեր-նէդ բերել :

Տղայք չեն ճանչնար զբօսանաց վտանգները, միայն անոնց մէջ եղած զուարճութիւնները կը

տեսնեն, և կը նային որ անոնց քաղցրութիւննե-
րը փայլեն. և այնքան կը տաքնան և եռանդով
մի անոնց ետև կ՚իյնեն, որքան որ փախնալ պէտք
էր վտանգներէն: Ուստի այս վտանգներէն զձեզ
զգուշացնելու համար, որոնք շատ տղայոց վը-
նաս կը պատճառեն, կ՚ուզեմ ձեր աչքին առջև
բերել, որպէս զի դուք ևս տեսնէք ինչ կերպով
վարուիլ պէտք է գրօսանաց խաղու ժամանակ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Արգելուած գրօսանքներ:

Գիտնալ պէտք էք որ ամեն գրօսանք օրինա-
ւոր և ներելի չեն: Վասն զի կան անոնց մէջ
և վտանգաւորներ, ինչպէս են համեստութեան
դէմ եղած տեսարանները (աչքիները), անպար-
կեշտ խաղերը, գէշ գրքերը, և ընդհանրա-
պէս բոլոր այն զուարճութիւնները որ կրնան
անմեղութեան և բարի վարուց վնասել: Ուս-
տի պէտք է ձեզ որ բոլորովին ատոնցմէ հրաժա-
րիք: Իրաւ ասոնք առջի բերան՝ երբ կը սկսիք
նոր համն առնել, հաճութիւն մի կու տան
ձեզ, բայց մտածել պէտք էք անգամ մի թէ՝
այս անցաւոր հաճութեան ետևէն կու գան
միշտ սրտի խայթեր (կէօնիւլ էզասը), խղճ-
մտանաց կշտամբանքներ, որ հազար անգամ
աւելի մարդոյս ցաւ կու տան և կը տանջեն, որ-
քան որ տուած զուարճութիւնն մեծ է:

### Զուարճութիւն եւ իւր ետեւէն եկող վիշտերը։

Եսաւ անպատմելի ուրախութեամբ մի կերաւ իւր եղբօր Յակոբէն ծախու առած ապուրը․ բայց զանոնք լափելէն յետոյ, երբ սկսաւ մտածել՝ թէ որքան սուղ նստեր էր իրեն այն ապուրն, որով իւր անդրանկութեան իրաւունքը կորսնցուց, սկսաւ առիւծի նման մռնչել, եւ չէր կրնար խաղաղել իւր սիրտն, անցաւոր հաճութեան մի համար իւր բոլոր ստացուածքը զոհ ընելուն։

Ահա այսպէս կ'ըլլայ բոլոր այն մարդոց վիճակն, որոնք անցաւոր հաճութիւն մի վայելելու համար իրենց անմեղութիւնը կը կորսնցունեն, որ մեր խիստ պատուական անգին գանձն է։ Մի մարդ թէ որ ձեզ գաւաթով թոյն տալու ըլլար, գաւաթին բերանը մեղրով օծած, կը խմէիք դուք զայն, անշուշտ ոչ։ Ուրեմն այսպէս պէտք էք կարգի դնել զձեզ արգելուած զբօսանաց մասին եւս․ բարակ թոյն մի համարելու էք զանոնք, որ մարդուս զգայարանքները գրգռելով՝ մահ կը պատճառէն հոգւոյն։ Սուրբ գրոց մէջ այս բանիս վրայ խրատական օրինակ մի կը կարդամք։

### Գեղեցիկ պատկեր զուարճութեանց, եւ անոնց ցաւալի հետեւանքները։

Յովնաթան Սաւուղի որդին, որ մի իւր զինակրին հետ Փղշտացւոց վրայ յարձակելով այն-

պէս սոսկում մի ձգեց թշնամեաց բանակին մէջ, որոնք սկսան իրենք իրենց դէմ զէնք վերցնել և մէկզմէկ ջարդել։ Այս խռովութեանս լուրը մեկէն տարածուեցաւ Իսրայէլացւոց բանակին մէջ, և Սաւուղ տեսնելով թէ իւր կարծիքը կատարուեցաւ, և Յովնաթան եւս հեռու ըլլալով՝ միտքը դրաւ ինքն երթալ նոյն պահուն Փղշտացւոց վերայ յարձակիլ, որպէս զի կատարեալ յաղթութիւնն գլուխ տանի, որու փառաւոր սկիզբ տուած էր իւր որդին։ Բայց ճամբայ ինկնելէն յառաջ մեծ երդում ըրաւ մեռցընել զայն որ արեւը մարը չմտած բերանը կերակուր դնէ։ Որոյ զինուորները հաւատարմութեամբ կատարեցին նորա պատուէրները․ թէպէտ և ճամբան շատ մեղըերու հանդիպեցան, այլ ամենեւին ձեռք չդպցուցին։ Իսկ Յովնաթան՝ որ իւր հօրն ըրած երդումը չէր գիտեր, և շատ աշխատութիւններէն յոգնած ըլլալով, դաւազանին ծայրը մեղրի փեթակի մէջ թաթխեց և դէպ ի պռկունքներին տարաւ։ Այսու ամենայնիւ զօրքերը կանգ առին երեկոյեան դէմ, և քիչ մի ժամանակ զինադադարում ընելէն յետոյ՝ Սաւուղ Փղշտացւոց դէմ դիմելու վերայ էր, պատգամ հարցուց Աստուծոյ՝ որ գիտնայ թէ այս նոր սկսած գործն ի՞նչ վախճան պիտի ունենայ․ բայց Աստուած անոր ամենեւին պատասխան չտալուն՝ գիտցաւ թէ զօրաց մէջէն մէկը բարկացուցած է զինք, իւր ըրած պատուէրը չպահելով, և երդում ըրաւ որ իւր որդին Յովնա-

ժամն եւս ըլլայ, նորա անհնազանդութեան պատիժը տայ։ Սուտ բարակ քննութիւններ ըրին որ յանցաւորը գտնեն. վերջապէս վիճակն ինկաւ Յովնաթանու վերայ։ «Ահ, ինչ ըրիր այդ, ըսաւ անոր Սաւուղ զարհուրելով։ — Վա՜յ ինձ, հայր իմ, պատասխանեց անոր որդին, երկար ժամանակ անօթի կենալով ուժս հատեր էր. ուրիշ բան չըրի. այլ միայն անցնելու ժամանակս մի քանի կաթիլ մեղր առի գաւազանիս ծայրովը, և այս փոքրիկ բանիս համար պիտի մեռնիմ ես հիմայ։ — Այո՛, կրկնեց Սաւուղ, պիտի մեռնիս»։ Եւ իրաւցինէ կը պատրաստուէր իր երդումը կատարելու, բայց ժողովուրդն ի գութ շարժելով նորա քաջութիւնը դադրեցուցին, և իրենց աղաչանքներով Յովնաթանու թողութիւն շնորհել տուին։

Ահա, սիրելի որդեակք իմ, մասնաւոր օրինակ մի որ ձեզ եւս կը հանդիպի, թէ որ Աստուծոյ հրամանաց դէմ, որ ձեր ծնողքին հայրն և Թագաւորն է, ցանկալով ըլլաք անոր արգիլած հաճութիւններուն մէկը փորձել։ Ահատիպ օրինակ ըսի, վասն զի Յովնաթան չմեռաւ իր պատուիրանազանցութեան համար, բայց դուք, սիրելիք, աւելի ցաւալի մահուամբ կը մեռնիք քան զայն որ Յովնաթանու համար պահուած էր. և կրնաք ըսել աւելի իրաւամբ. «Մի քանի կաթիլ մեղր կերայ», ըսել է անցաւոր պզտի հաճութիւն մի վայելեցի, և այս աղէտալի հաճոյքին իմ հոգւոյս մահ տուաւ »

Երիտասարդ տղայք դժուար կը հասկընան այս ճշմարտութիւնս . մանաւանդ իրենց համար գովելի բան է ամէն կերպ զբօսանաց և հեշտութեանց անձնատուր լինել . բայց ականջ դրէք անգամ մի փորձառու մարդուն մէկը ինչ գրած է իւր որդւոյն , զանիկայ ժայռերէն պահպանելու համար , որոնց դէմ ինքն եւս դըժբաղդութեամբ զարնուեր էր ։

Հօր մի իւր որդւոյն գրած թղթերը։

«Չեմ ամչնար խոստովանելու՝ թէ իմ երիտասարդութեանս մէջ ունեցած անկարգութիւններս բոլորն ալ սկիզբն ունեցան իմ բաղձանքէս զոր ունէի նոր ժամանակիս երիտասարդաց պէս վարուելու ։ Այս բանիս համար՝ իմ բնական միտումիս դէմ կը գործէի ։

«Գինիէն խիստ կը զզուէի, այսու ամենայնիւ շատ անգամ ակամայ գինովցած եմ ։ Ստամոքսիս վրայ շատ դժուարութիւններ և հիւանդութիւններ քաշած եմ, վասն զի ես այնպէս կը կարծէի թէ շատ գինի խմող մարդը՝ նոր սովորութեան համեմատ ամբողջ մարդ կը համարուի ։

«Այնպէս խաղացի խաղու համար ։ Պէտք եղածէն աւելի ստակի տէր էի , ուստի աւելի ստակ շահելու աչք չունէի . բայց կարծէի թէ խաղն՝ որպէս թէ հարկաւոր զարդերէն մին է հեշտասէր մարդոյն յաջողութեան համար , և ամէն տեսակ վտանգաւոր խաղերու անձնատուր կը լինէի ։

«Ինչպէս շուարեր ամչկեր էի, որ պարապ բանի համար եւս երդումներ կ'ընէի՝ կատակ համարելով զանոնք, որպէս թէ իմ խօսիցս զարդարանքն էին: Այս կերպով կարծէի թէ զուարճ ընութիւն մի ունէի, որ էր միմիայն իմ բաղձանքս: Այլ երկար չքշեց, այս խորհուրդս մէկդի ձգեցի, գիտնալով թէ անվայելուչ էր ինձ այն:

«Նոր սովորութեան գերի ըլլալով, և կուրօրէն հետեւելով զուարճութիւն անուն ունեցող բաներուն, ճշմարիտ զուարճութիւններէն զրկուեցայ. եկամուտներս կորսնցուցի, մարմինս ուժէ ինկաւ, վատեցաւ. հիմայ կը խոստովանիմ քեզ, որ երիտասարդութեան մէջ ըրած զուարճութեանցս պտուղը կը կրեմ»:

Կը տեսնէ՞ք, սիրուն որդեակք իմ, հեշտասիրութեան չար պտուղները: Այլ մի կարծէք թէ ամէն զուարճութիւն այսպիսի գէշ հետեւանքներ կ'ունենայ: Կան վայելուչ և անմեղ զբօսանքներ, ինչպէս են պարկեշտ կենակցութիւնները, ժուռգալներն և չափաւոր խաղերը. բայց թէպէտեւ ասոնք վնաս մի չունին ըսինք, այսուամենայնիւ ասոնց մէջ հարկաւոր եղած կանոնները և պայմանները պէտք է պահէք, առանց որոյ կրնան ձեզ վնասակար ըլլալ:

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

խաղու եւ խաղալու ժամանակ դիտելի եղած կանոններուն վերայ։

## Կանոն Ա.

Ձեր խաղալու ատենը պէտք լինի այն ժամանակ որ ձեր վարժապետը կամ ծնողք սահմանած են, ապա թէ ոչ թոյն կը լինի ձեզ բըժըշկին տուած դեղը։ Խաղը չափէ դուրս երկնցընելով՝ ժամանակնիդ կորսնցուցած կը լինիք, որու րոպէները խիստ թանկագին են. կարդալէ կը պաղիք, ծուլութեան սէրը ոսկերնուդ մէջ կը բուսնի, այնպէս որ ձեր միտքին օրէ օր ուժ տալու տեղ՝ աւելի կը տկարացնէք։

Սուրբ Օգոստինոս խիստ կը ցաւէր, և կը յանդիմանէր զինք սաստիկ սիրով խաղերու անձնատուր լինելուն համար երիտասարդական հասակին մէջ, և ժամանակին անոնցմով անցընելուն, զոր կրնար հարկաւոր գիտելիքներ ձեռք բերելու գործածել։ Ուրեմն դուք ևս այս կանոնս պահեցէք, որպէս զի յետոյ անոր պէս չը յանդիմանէք զձեզ և ձեռքերնիդ գլխուդ չզարնէք։

## Կանոն Բ.

Պէտք է զգուշանաք որ ձեր խաղը շահու համար չլինի. վասն զի երբոր շահասիրութիւնը խաղուն մէջ մտնէ, մեծ զբաղմունք մի կը լինի։

այն, որ ձեր միտքը կը ծանրացընէ, սրտերնիդ կը խռովէ և կիրքերնիդ կ'արթընցընէ :

Կը պատմուի թէ Պարսիկներն իրենց տղայոց ուզելով ցուցընել թէ որքան զզուելի ախտ մը է գինովութիւնը, աչքերնուն առջեւ կը բերէին գինով մարդ մը : Ձեր սրտին մէջ ես խաղերուն վրայ ատկում մը պատճառելու համար, ուրիշ բան չէի ուզեր, այլ միայն խաղամոլ (խումարպազ) մէկը ցուցընել ձեզ, որուն սրտին մէջ վախն և յոյսը մէկմէկու ետեւ մտնելով ու փոփոխուելով իր միտքը կ'ամբոխեն. և անտարակոյս գիտեմ որ նորա բարկացոտ դէմքը, կրակոտ աչուըներն և բարկութեան կիրքը տեսնելնուդ, որոնք երբեմն իրենց վրէժխնդրութիւնը մինչեւ խաղցած խաղերնուն գործիքներուն վրայ թափել կուտան, խենթ մը չկարծէք զայն և անոր չար կատաղութենէն չզզուիք :

Բայց իմ միտքս չէ թէ խաղերը մի դէշ բանի տեղ դնել է, մանաւանդ երբ մարդ խնամութեամբ անոնց չափը գիտնայ, հապա այն ժամանակ դէշ կը լինի, երբոր իրեն ունակութիւն (խույ) մի կ'ընէ, յետոյ երթալով կ'աւելնայ. ծայրը սարկի ես կը հեծնայ, և այն ատեն ինչ դէշ մոլութիւններու մէջ չձգեր նա անզգոյշ և անփորձ տղայքը : Թէ որ գիտնաք այս խաղուն պատճառած թշուառութիւնները թէ մասնաւոր մարդոց և թէ ամբողջ գերդաստաններու, յիրաւի անոր անունը լսելով

կը դողայէք. մէկ հատ միայն կ՚ուզեմ պատմել ձեզ հոս՝ օրինակի համար։

Չափազանց խաղասիրութեան զոհ եղող դժբախտը։

Մի քանի տարի կայ Գաղղիոյ գիւղաքաղաքներուն մէկուն մէջ կախուելու դատապարտուեցաւ պատուաւոր գերդաստանէ երիտասարդ մը։ Երբ սորա դատակնիքը կարդացուեցաւ, բարեպաշտ և բարեխնամ քահանային մէկը մտաւ նորա եղած բանտին մէջ որ զինք յորդորէ մահուան պատրաստութիւն տեսնելու. բայց սաստիկ խռովութեանց մէջ գտաւ զայն, աչուըները դարձած և կատղելով այսպէս կը պոռայր. «Ահ, անիծեալ խաղ, անիծեալ խաղ։ Ինչու համար կայծակ չիջաւ իմ գլխուս վերայ՝ երբ ես առաջին անգամ ձեռքս երկնցուցի քուէներուն (զառերուն) և թղթերուն»։ Այս խօսքերս անդադար երկու մէկ կրկնելով, բարեսէր քահանայն՝ որ քովը կայներ էր, հարցուց անոր թէ «Ինչու համար այդքան կ՚անիծէր խաղը։ — Ահ, պատասխան տուաւ տղայն այլայլած դէմքով մը. Ինչպէս չանիծեմ ես զայն որ իմ այս յետին վիճակի մէջ ինկնելուս միակ պատճառն եղաւ։ Առջի բերան որ այս խաղուն տուի զիս, ամենեւին երկիւղ և կասկած չունէի նորա ցաւալի հետեւանքներէն. այլ ընդհակառակն մեծ օգուտներ կը յուսայի, վասն զի նոր սկսած ժամանակս յաջող եկաւ ինձ. բայց շուտով բախտս ի չարն դարձաւ, և ու-

քիչ բան չթողուց իմ վերաս , այլ միայն խաղա-
լու չափազանց կիրք մի ։ Եւ այս կիրքս կշտա-
ցնելու համար գողութիւն ըրի հօրս ապրանք-
ներէն ոչքան որ կրցայ · յետոյ երբ բան մի չմը-
նաց , մէկ խօսքիս վերայ խաղացի , այսինքն իմ
հօրմէս ինծ ինկնելու ժառանգութեան վերայ ·
և իմ ընտանիքս բոլորովին մոխիր պիտի դար-
ձրնէի · թէ որ հայրս առաջս չառնոյր զիս բան-
տը դնելու ։ Երբոր իմացայ նորա միտքը , ուզե-
ցի ազատիլ ձեռքէն , ուստի փախայ և թափա-
ռական քաղքէ քաղաք պտըտեցայ · բայց որով-
հետեւ խաղալու համար ունեցած կիրքս ամեն
տեղ եռեւէս կուգայր , և առաջուան պէս ըս-
տակ եւս չունէի որ խաղամ , վերջապէս ձեռք
զարկի . . . ո՜հ Աստուած , բերանս վերայ չեր-
թար որ խօսիմ . . . ։ Ե՞ս աւազակ , ես , որ իմ
ծնողքներէս բարեկրթութեան և առաքինու-
թեան դասեր առեր էի . . . ։ Այո , անիծեա՜լ
խաղ · անիծեա՜լ խաղ » ։ Այս խօսքերը զրուցե-
լէն յետոյ լեւց դժբախտ երիտասարդն , և գե-
տի պէս սկսաւ արտասունք թափել , կրակ դար-
ձաւ , կարեվէր խոցուած ցիի նման ։ Բայց ըստ
բաւականին հասկցուցած էր թէ իւր գողու-
թեանն և աւազակութեանը վերջին թշուառ-
ութեան հասնելուն և տանջանաց մէջ ինկնե-
լուն միակ պատճառ խաղն էր ։

խաղուն վերայ զրուցուած գեղեցիկ խօսքեր։

Ո՜վ զուշ կեցէք ուրեմն , սիրելի որդեակք իմ,
որ եւ իցէ դրամով խաղալու խաղերէն , և ա-

մեռնելին մօտերնիդ մի՛ հանէք Մատամ Տէ-հուլիէօի խմատուն խօսքերը ։ «Զբօսանքնե-րը վատն կը լինին , երբոր չափէն դուրս ըլլան ։ Քիչ խաղալն լաւ է . բայց նայել պէտք է որ միայն զուարճութեան համար խաղացուի ։ Խա-ղամոլ մարդն , ինչպէս հաստատորէն կը դրու-ցուի , կերպարանքէն ի զատ ուրիշ մարդկային բան մի չունի իւր վերայ ։ Շատ դժուար բան է նաեւ , որ չկործուիր , առաքինի եւ միանգա-մայն խաղամոլ ըլլալ ։ Շահասիրութիւնն՝ որ մարդս գիշեր ցորեկ զբաղեցընել կուտայ , չա-րութիւն ընելու համար զօրաւոր խթան մի է ։ Առջի բերան ինք կը խաբուի , այլ յետոյ ինք կը սկսի ուրիշը խաբել » ։

## Կանոն Գ.

Պէտք է պարկեշտութեամբ խաղալ . եւ ան-քաղաքավար վարմունքներէն , խորթ ու անպա-տեհ կիրքերէն , անհամբերութենէն եւ հակա-ռակասիրութենէն զգուշանալ ։ Երբոր այս կա-նոնէս դուրս ելնէք , զոր վայելչութիւնն եւ քա-ղաքավարութիւնը կը պահանջէ , ուրիշէն նա-խատինք կը կրէք . եւ ատելի կը լինիք անոնց՝ ո-րոնց հետ որ կը խաղաք ։

### Գէշ խաղամոլը։

Խաղամոլ մարդ մի կը ճանչեմ ես , որ երբ բաղդը չբանէր , քիչն երազներուն ամենուն հետ կռիւ կ՚ընէր ։ Մէկ խօսքն եւ մէկ անգամ երե-

ալ նայելը բաւական էր զինք բարկացընելու ։ Իւր այլանդակ վարմունքն եւ խօսքերն ամենուն մէկուն չէր դպչէր , վասն զի ամեն մարդ կը ճանաչէր նորա բնութիւնը . բայց օր մի եւս երբ մէկուն հետ կը խաղայր , խաղը կորսունցընելով սկսաւ քովի եղողներուն մէկուն երեսը նայիլ կատղած դէմքով մի ։ « Պարոն , բայց այս ալ , թէ որ ես բաղդն ըլլայի՝ իրաւունք կ'ունենայի հետս խնդնելու եւ ծուռ աչքով նայելու . բայց գիտցիր որ ես այս ինչ մարդն եմ » ։ Խաղամոլը մի քիչ իրեն եկաւ , բայց շուտով մոռցաւ այս գեղեցիկ խրատս . եւ մինչեւ այս օրս նոյն բնութիւնն ունի , որուն մարդ չկրնար համբերել , մանաւանդ երբ խաղը կորսունցընէ , ատոր համար հիմայ մէկը չուզեր հետը խաղալու ։

Զգոյշ կեցէք , կ'աղաչեմ ձեզ , ատոնց օրինակին հետեւելու , եւ նայեցէք որ խաղուն մէջ թէ շահելու եւ թէ կորսունցընելու որ լինիք՝ ամենեւին մէկուն սիրտը չցաւցընէք , մանաւանդ ձեր խղճմտանքը չծանրացընէք այն մեղքերով , որոնց աղբիւր եղած է խաղը ։

Բարկութեան եչնոց խաղամոլը:

Բաղէմիր Պոլոնիայի թագաւորը , օր մի իւր պալատականաց մէկուն հետ կը խաղայր . անկայ դրամին հետ միատեղ իւր կերպարանքն ալ կորսունցընելով , այնքան բարկութեան ելեր էր , որ գրեթէ ինքզինք մոռնալով՝ թագաւորին երեսին ապտակ մի իջեցուց . եւ այս բանիս հա-

մար դատապարտուեցաւ գլուխը կտրուելու ։ Բաղխմէր քննեց նորա դատավճիռն և բաց. «Ամենեւին չեմ զարմանար այս ասպետին ըրածին վերայ. վասն զի նա չկրնալով բաղդէն վրէժն առնելու, զարմանք չէ նորա այսպէս վարուիլը ինձ հետ՝ ուսկէ շնորհք գտած է ի միւս անձին ։ Այս բանիս մէջ յանցաւոր միայն ես եմ, ու-պէտք չէր ինձ որ նորա սրտին մէջ արմատացընէի խաղաղութեան կերքը, բայց այս իմ ըրած սխալմունքէս յառաջ եկած անպատեհութիւնն ինձ դաս մի կրնայ ըլլալ. որ յետ այսորիկ անկէ զգուշանամ»։

## ԳԼՈՒԽ ԻԳ.

### Ստախօսութեան վերայ ։

Տղայք շատ սխալութիւններ գործելով, և փախնալով որ յանդիմանութիւն չլսեն և չըպատժուին. կը ջանան շատ անգամ ծածկել զանոնք ստախօսութեան վարագուրին տակ, որպէս զի յանդիմանութենէ ազատին ։

Չեմ կարծեր ես, սիրելի որդեակք իմ, որ դուք ևս այս անարժան հնարքը բանեցընէք, բայց որովհետեւ կրնայ ըլլալ որ դուք ևս երբեմն ստիպուիք զայն բանեցընելու, անոր համար պարտք կը համարիմ զգուշացընել զձեզ այս մոլութենէս, և որքան ատելի բան ըլլալը ձեզ իմացընել ։

Թէ ի՛նչ է ստախօսութիւնը։

Ստախօսութենէ՛ն աւելի ատելի բան չկայ ։ Ստախօս մարդը զԱստուած կ՚անարգէ, զմարդիկ կը խաբէ. և չկայ մոլութիւն մի որ ստախօսը չգործէ ։

Անգղիացին առակ մի կայ որ կ՚ըսէ թէ. ցո՛յց ինձ ստախօս մի, և ես ցուցընեմ քեզ գող մի ։ Այսինքն ըսել կ՚ուզէ թէ՝ մէկ մարդ մի որ սուտ խօսելու վախ չունի, ամէ՛ն տեսակ չարութիւններն անխիղճ կը գործէ ։

Ստախօսութիւնը ի՛նչ համարուած էր հեթանոսաց քով։

Հեթանոսներն անգամ ամէ՛ն ժամանակ ճանչցեր են ստախօսութեան գէշ բան ըլլալը և դատապարտեցին զայն ։ Ոմա՛նք մանանութեան չափ գէշ համարեցին. ոմանք իբրև տեսակ մի ամբարշտութիւն, շատերն ևս նշան չարագործ մարդկանց ։

Անոնց մէջ մէկն այլ եղաւ, որու՛ն այնքան զզուելի էր այս մոլութիւնը, որ մինչև մեռնիլը զրուց ամենևին սուտ չխօսի՝ և ոչ ընդ կատակ ։ Կորնելիոս Նեպոս՝ Ատտիկոսի կուտայ այս մասնաւոր գովեստը ։

Հոմերոս կ՚ըսէ թէ՝ Աքիլլէս այս խօսքը կը կրկնէր միշտ, թէ Մահէն աւելի ստախօս մարդէն կը ատեմ ։

Պարսից մօտ ստախօսութիւնը խիստ ամօթալի մոլութիւն մի համարուած էր. և Իրենց

տղայք հինգ տարին չհասած՝ կը պատուիրեն միշտ անոնց որ անկեղծութեամբ ճշմարիտն խօսին ։

Իշխանաւոր մարդու մի գեղեցիկ խօսքը։

Ձեր սրտին մէջ կ'ուզեմ տպաւորել գիտնական իշխանաւորի մի գեղեցիկ խօսքն, զոր իւր մատով գրեց իւր որդւոյն պատուէրներուն վերայ . Նախ մեռնիլ՝ քան թէ սուտ խօսիլ ։ Այս խօսքս թէ որ ի գործ դնէք, ամեն մարդոյմէ յարգ և պատիւ կը գտանէք, և ամեն մարդ միաբանութեամբ կը սիրէ զձեզ ։

Այնպիսի մարդու մի՝ որոյ անունը ստախօս ելած է, մէկը չուզեր հաւատալ ։ Յայտնի է որ նորա բերանը սրտին հետ համաձայն չէ, ուստի իւր խօսքերը միշտ երկբայելի են, և ոչ ոք կը հաւատայ նորա զրուցածին, թէև ճշմարիտը խօսելու լինի . վասն զի չկարծեր թէ ճշմարիտը զրուցէ նա այն պարագային մէջ՝ այն բանին վերայ, որ ուրիշ հազարումէկ պարագաներու մէջ իւր ստախօսութիւնը յայտնի եղած է ։

Արդ՝ սիրելի որդեակք իմ, զգուշ կեցէք դուք ստախօսութենէն, որ սաստիկ մոլութիւն մի է և անվայել պարկեշտ մարդոց, մանաւանդ քրիստոնէից ։ Աստուած մեզ այս լեզուախօսութիւնը տուած է միայն ճշմարտութիւնը յայտնելու համար . ուստի նորա պարգևները գէշ գործածած կը լինինք և իւր խորհրդոյը մատնիչ կը համարիմք , թէ որ զանիկայ ստախօսութեան և մեր ընկերները խաբելու գործիք ընենք ։

Գուցէ կ՚ըսէք ինծի թէ՝ երբոր ստախօսու-
թիւնն ամենեւին մէկուն վնաս չտայ եւ մեզ օ-
գուտ ընելու ըլլայ, պէ՞տք չէ այն ժամանակ սուտ
զրուցել։ Ահա այս ձեր հարցման պատասխան
ըլլայ հետեւեալ պատմութիւնն, որ շատ ժա-
մանակ չկայ Արաս քաղաքին մէջ պատահեցաւ
եւ պատմողն եւս ականատես մարդ է։

Ճշմարտութեան սիրոյն համար նահատակ եղողը։

Արաս քաղաքին մէջ զինուոր մի կայր քան
տարեկան, որ բռնի զինուորութեան գրուած
էր։ Այս երիտասարդը չափազանց սիրով կը սի-
րէր իւր մայրն, եւ անդադար կը հառաչէր թէ
երբ պիտի տեսնէ արդեօք իւր ծնողը. եւ թէ-
պէտ շատ ժամանակ չկայր տակաւին այն ծա-
ռայութեան մէջ մտնելը, այսու ամենայնիւ մի
քանի անգամ հրաման խնդրեր էր զօրապետէն,
բայց չէր կրցեր ընդունիլ։ Քանի որ ե-
րեն բաղձանաց կը հակառակէին, այնչափ ա-
ւելի կարօտութիւնը կ՚աւելնայր. եւ տեսնելով
թէ ուրիշ ճար չկայ, միտքը դրաւ գաղտուկ
փախչելու։ Ուստի գիշեր մի երբոր քաղաքի
պարիսպներուն վերայ պահպանութիւն կ՚ընէր,
մէջքին երկայն ամուր չուանով մի պինդ կապեց,
հրացանին սլաքը (սիւնկիւն) պարսպին ճեղ-
քուածներուն մէջ խորունկ գամեց. եւ չուա-
նին մէկ ծայրն անոր կապելով եւ միւս ծայրն ալ
ձեռքը բռնած՝ սկսաւ վար իջնել. բայց կամ
մարմնոյն ծանրութենէն սլաքը տեղէն խախտե-

լով, կամ չուանը փրթելով՝ դժբախտութեանց ինկաւ պարապին տակ փորուած փոսին մէջ և ոտունքին մէկը ջախջախեց: Առաւօտեան դէմ կինկան մէկն անկէ անցնելու ժամանակ նորա աղգաղգալուն ձայնը լսեց, որ թշուառ վիճակի մէջ մնացեր էր, և իսկոյն գնաց իմաց տալու պահապան զօրաց: Զինուորական պաշտօնեաներէն մէկն եկաւ հոն, հարցուց զինուորին իր դժբախտութեան պատճառը. և նա այլ միամտութեամբ պատասխան տուաւ թէ՝ իր մայրը խիստ կարօտութեամբ տեսնել ուզելով, փախչելու համար փորձ մի ըրեր էր, դժբախտաբար չյաջողելով իր բռնած ճամբան, այն խղճութեան հանդիպեր էր: «Ի՞նչ կ'ըսես դու, ըսաւ այդ պահապան զինուորը, որ զինքը կը սիրէր և կ'ուզէր ազատել: Զգուշ եղիր, կ'աղաչեմ, չըլլայ որ այդպէս զրուցես մեր զինուորականներուն: Թէ որ դու փախստական ըլլալդ յայտնես, ինքզինքդ կախաղանը կը գտնես»: Բայց խեղճ զինուորը կրկնեց նորէն. «Թող Աստուծոյ կամքն ըլլայ. իմ քահանայս և մայրս շատ անգամ զրուցած են ինծի թէ, որ և իցէ պարագայի մէջ պէտք չէ բնաւ սուտ խօսիլ»: Պատերազմական խորհրդին պաշտօնատարները զարմանքի մէջ մնալով իր ճշմարտասիրութեան վերայ, և միանգամայն գութերնին շարժելով՝ կը փափաքէին մէկ կերպով մի ազատել զինք, բայց ստիպուելով օրինաց համեմատ դատելու, ակամայ ստորագրուեցան իր

դատապարտութեան թղթին մէջ ։ Բոջավորս տղայն նոյն խաղաղ ոգւով ընդունեց մահը՝ որով իւր յանցանքը խոստովանել էր. և իւր սրտին համեստութեան և՝ բարեպաշտութեան ականատես եղող մարդիկ չկրցին իրենց արտասուքը բռնել և չաղօթել նորա վերայ ։

Դուք այսպիսի գեշ վիճակի մէջ չէք գըտնուիր. բայց կրնայ ըլլալ որ հարկին ստիպէ երբեմն զձեզ կամ սուտ մի զրուցելու, կամ զրուցած սուտերնիդ խոստովանելու, որ արժանի ըլլաք յանդիմանութիւն լսելու կամ պատիժ կըրելու. բայց դուք, սիրուն որդեակք, ճշմարտութիւնը լաւ համարեցէք՝ քան թէ անպատիժ մնալը ։ Ստախօսութիւնը կրնայ վնասել ձեզ որ և իցէ պատժէ մի աւելի ։ Յանցանքը կէս մի ներուած կը համարուի, երբ որ խոստովանուի, բայց երբ ուրանալու ըլլուի, նոյն յանցանքին չափը լեցընել ըսել է ։

Սուտ խօսելով ամենեւին բան մի չշահուիր, այլ ընդ հակառակն կը վնասուի եւս ։ Անկէ ի զատ՝ ստութիւնը զրուցողին խղճմտանքն եւս կը վիրաւորէ, և ստորին պատիժներ կը ժողվէ իւր վերայ. վասն զի իւր յանցանքներուն թողութիւն տալու մի չկրնար գտնել. իսկ ճշմարիտը խօսիլը միշտ գովելի է և շահաւոր ։ Այլ որ այս բարի սովորութիւնն ըրած է, յայտնի կընէ իւր ճշմարտասիրութիւնն ուրանել որ իւր յանցանքներուն վերայ խօսք կ՚ըլնի. զոր եթէ գործած ալ ըլլայ տկարանութեամբ, զանոնք

անկեղծութեամբ խոստովանելովը շատ անգամ թողութիւն կը գտնէ ։

Իշխանն եւ Թիին դատապարտուածները։

Իշխանին մէկն օր մի ցուկանաւի (չէքտիրի) մէջ մտաւ, ուրտեղ շատ մարդիկ Թիին (քիւրէկը) դատապարտուեր էին ոտքերնին կոճեղներու մէջ, եւ 'ի պատիժ իրենց չարագործութեանց անդադար ծեծ կուտէին խարազանով։ Ասոնք զիշխանը տեսներնուն պէս, որ մարդասիրութեամբ իրենց հետ կը տեսնուէր, մեծ յոյս մի ունեցան իրենց տառապանքէն ազատելու ։ Ամենքն եւս իրենց ազատութիւնը կը խնդրէին, եւ զայն ընդունելու համար՝ յանցանքնին պարտըկելով եւ ուրիշ պատճառանքներ մէջ բերելով՝ զիրենք իւղի պէս ջրին երեսն հանելու կը ջանային։ Մէկն իւր դատապարտուելուն պատճառ կը բռնէր Թշնամեաց զրպարտութիւնը, միւսը դատաւորներուն անարդարութիւնը։ Մէկը կ'ըսէր՝ թէ նախանձոտութեամբ մատնեցին զիս. ուրիշ մի եւս հազիւ թէ իւր երիտասարդութեան խակամտութեան (ճահիլլըգին) կուտայր իւր դատապարտուիլը ։

Մէկ խօսքով՝ թէ որ անոնց ըսածին հաւատալու լինէր. պէտք էր որ ամենուն եւս ազատութիւն տայր ։ Անոնց մէջ մի հոգի միայն կայր ամենէն ծերը, որ դառնալով դէպ ի իշխանին՝ ըսաց. "Ես անկեղծութեամբ կը խոստովանիմ, եւ փառք կուտամ Աստուծոյ, որ 'ի պատիժ իմ

ահագին ոճրագործութեանցս՝ միայն ցուցմուն-դրուելու դատապարտուեցայ ։ Նախ ընտանի գող էի ես, յետոյ եղայ ճամբու աւազակ. իմ չարագործութիւններս խայտառակ մահուան արժանի էին, կամ կախաղանն ելնելու և կամ անուոյ[1] մատնուելու »։ Զարմանալով իշխանն անոր սքանչելի անկեղծութեան վերայ, և իբր թէ բարկացած ձեւացընելով զինք. «Ի՞նչ է այս, ըսաւ, դիմանալու բան է որ այսքան անմեղներուն մէջ սանկ մէկ աւազակ գող և չարագործ մարդ գտնուի ։ Չէ՛ չէ՛, դուրս հանեցէք սա մարդն ասկէ, որ միւս աղէկներն այլ գլխէ չհանէ, որոնց ընկեր եղած է »։ Հրամանը մէկէն կատարուեցաւ ։ Անամօթ ստախօսները թէև իմացին, իսկ միւսն ազատուելով՝ փորձով իմացաւ թէ՝ իւր յանցանքներն անկեղծութեամբ խոստովանելով շատ անգամ թողութիւն կ'ընդունի մարդ նորա փոխարէն ։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

### Երկրամոլութեան վերայ ։

Ստախօսութենէ յետոյ, որու վերայ հիմայ խօսեցայ, կրնամ ըսել թէ՝ երկրամոլութիւնն է, որուն առաւելապէս միտած են տղայք ։

(1) Անիւը տեսակ մը տանջանարան է ։

Քիչ տղայք կա՛ն որ այս ախտս չունենան, և իրենց վարմունքն եւս յայտնի կը ցուցընէ այս պակասութեանս ներքին ըղձանքին շատ անգամ: Կան զի ձեռուընին տակ մի անցնելուն պէս՝ չարքարեղէններու կը սպառկեցընեն. և դէշն այն է որ, որկրամոլ տղայք իրենց բաղձանքը կատարելու համար՝ թէ որ քսակերնին ստակ չունին, ուրիշ աւելի մեծ յանցանք մի եւս գործելու կը յօժարին, վարպետութեամբ ստակ գողնալով. և այս պզտիկ գողութիւնները բանի տեղ չեն դներ:

Ասոր կը կարծեմ, սիրելի որդեակք իմ, որ այս ախտս ունեցող չկայ ձեր մէջ. և թէ որ լինէր՝ աչքէ շատ կ՚ինկնէք:

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

Որկրամոլութիւնն անարգ մոլութիւն մի է:

Որկրամոլութենէն աւելի անարգ ի՛նչ մոլութիւն կայ: Զմեզ անասնոց կը նմանեցընէ, որոնք մեզ պէս բանական հոգի չունենալով՝ ուրիշ բանի չեն նայիր, այլ միայն իրենց բնական անասնային բաղձանքը կատարելու. ասոր համար Արիստիպոս ուզելով Սոկրատայի աշակերտներուն բարքը նկարել, այն հեշտասէր փիլիսոփային, որ մարդոյս բոլոր երջանկութիւնը զգայական հեշտութեանց մէջ կը կայանայ կ՚ըսէր, զանոնք Սոկրատայի խոզերը կ՚անուանէր:

Գիտէք դուք եւս որ ատոնց նմանող մարդոց այս անունը կու տան, և ընդհանրապէս ամենուն աչքին ատելի են. և այս ատելութիւնը մանաւանդ տղայք կ՚ընդունին, որոնց վերայ տիրած է այս մոլութիւնս։ Ուրիշ բան չեն լսեր, այլ միայն այս անարժան մոլութեանս համար յանդիմանութիւն. և քանի որ իրենց այս ախտս անվայելուչ գործերու զիրենք կը յորդորէ, ամէն մարդ անոնց երեսը վար կ՚առնու. և երանի կը լինէր՝ թէ որ այսքան բաւական համարուէր զիրենք ուղղելու, ինչպէս որ տղուն մէկին ուղղութեան եկաւ և զգաստացաւ, զոր կ՚ուզեմ հոս պատմել ձեզ իբրեւ խրատական օրինակ։

Արգասիքը բանաւոր որկրամոլին։

Տղուն մէկն այնքան որկրամոլ էր, որ իւր պզտիկութենէն չափազանց յօժարութիւն ունէր ամէն տեսակ շաքարեղէն և անուշեղէն բաներու։ Իւր ծնողքն եւս երբեմն երբեմն ձեռքըն սատ կու տային. բայց որովհետեւ անոնց տուածն ամենեւին բաւական չէր լիներ իւր ցանկացած բաներուն, ուստի կ՚երթայր միշտ պահարանները և գզրոցներուն մէջ կը պրտըտէր որ որկորը լեցընելու բան գտնէ. և երեսի ջրով ամենեւին բան մի չէր թողուր, ինչ որ գտնէր ընակով՝ կ՚առնէր, կ՚ուտէր, մանաւանդ երբ կարկանդակի (պէօրէկի) ընակ տեսնէր, ատորներով մէջ կը մտնէր։ Իւր ծնողքն սար բրածները մի քանի անգամ տեսնելով, շատ յանդիմա-

նեցին զինքն և երեսը վար առին, բայց որովհե-
տեւ նա ամենեւին իւր չար ունակութենէն յետ
չէր կենար, ուրիշ հնարք մի բանեցուցին զին-
քին ուղղելու. և ահա ինչպէս։ Մէկ իրիկուն մի
պաղ կարկանդակ մի բերին սեղան, և ընաւ
ձեռք չդպցուցած հացէն յետոյ նորէն ետ տա-
րին, ու դրին պահարանին մէջ, և բանալիքներն
եւս իբրեւ թէ մոռցածի պէս՝ այնպէս տեղ մի
դրին, ուսկէ դիւրաւ կրնար գտնել զայն տղայն.
Հետեւեալ առտուն նախաճաշին ժամանակ մօ-
տեցած ըլլալով, ծնողք մտան մօտ եղած խու-
ցը, որ անկէ տեսնեն տղուն գլխուն գալիքը։
Նայիս այնդիկէն փրթաւ որկրամոլը, և սկսաւ
պռճըռտուքի ինկնիլ և կարկանդակին գլուխն
անցնիլ։ Պահարանին բանալիքը գտնելով, անհամ-
բերութեամբ մի կը բանայ զայն, կը տեսնէ կար-
կանդակը, վերայի խուփը կը վերցնէ և ձեռն
երկնցընելուն չմնար, կ՚ապշի կը մնայ կարկան-
դակին տեղ հացի կտորուանքներ տեսնելով, և
նորա վերան հաստ թուղթ մի, ուր տեղ գը-
րուած էր խոշոր գրերով այս խօսքերս. “Այս-
պէս որոգայթ կ՚ինկնին որկրամոլները”։ Այս
բանիս վերայ մեծ ամօթով մնաց տղայն և կա-
կարմիր կտրեցաւ երեսը. բայց աւելի խաղք ե-
ղաւ, երբ տանը մէջ եղողներուն խնդալն և
ձայնը լսեց, երբ տեսաւ որ հայրը, մայրը, եղ-
բարքը և քոյրերը, ամենքն եւս մինչեւ ծառա-
ները դուրս ելան խուցէն և սկսան բարձր ձայ-
նով ծաղր ընել զինք։ Չկրցաւ լացը բռնել, և

մօտ մնաց որ սխալ մտքեր ինկնէր․ բայց ծնողք սիրտ տալով իրեն, թողութիւն խնդրեց անոնց֊մէ, և ոչ միայն հրապարակաւ խօսք տուաւ մէկ մի ևս նոյն մոլութեան մէջ չիյնալու, այլև իւր ժուժկալութեամբ մոռցնել տալու անոնց իւր որկրամոլութիւնը ։ Հաստատ կեցաւ խօս֊քին վերայ, և խոստովանեցաւ յետոյ՝ թէ ա֊նոնց այնպէս անչըրներով պատժելնին, իրեն մեծ բարութիւն մի կը համարէր ։

Ճշմարիտ կ'ըսեմ, սիրուն որդեակք իմ, շատ լաւ և օգտակար բան է որ տղայ մի զինք սովրեցընէ քիչ բանով գոհ ըլլալու ։ Անոր սա֊ցած ունակութիւնը գրեթէ բնականապէս բա֊լոր կենաց մէջ չափաւորութեամբ ապրիլ կու֊տայ․ իսկ ընդհակառակն՝ թէ որ իւր որկրամո֊լութեան ունեցած միտումին ձգելու ըլլայ, այս մոլութիւնը խորունկ կ'արմատանայ իւր սրտին մէջ, և մինչև ի գերեզման իրենը քա֊մէն չզատուիր ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ․

Որկրամոլութեան չար հետևանքները։

Ամէն օր աչուընուս դիմացէն պակաս չէ այս մոլութեան գէշ հետևանքներուն օրինակները ։ Մի քանի տղայք կը ճանչեմ ես, որոնք պզտի֊կութենէ որկրամոլութեան տուած ըլլալով զի֊րենք, և ասոնց քիչ մի հոգ տանելու զանել

իրե՛նց անասնական յօժարութիւնը , այնպիսի մեծ անառակութեանց մէջ ինկան , որոց համար կրնայ ըսել մարդ ինչ որ Առաքեալը կըսէր անոնց համար , որոնց աստուածն իրենց որովայնն էր ։ Յիրաւի՝ անոնք ուրիշ աստուած չէին ճանչէր ։ Անոնց խօսքերուն և գործերուն մեծ մասը յայտնի կը ցուցընեն թէ ոչ չափաւորութիւն ունին , և ոչ աստուածպաշտութեան ոգի , և այն գեղխութիւնն որոյ մէջ ընկղմեր մնացեր են , գիտե՛նք բոլորովին անասուն դարձուցած է այն աստիճան՝ որ երբ մարդուն մէկն անոնց մէկուն ըսաւ թէ , ըրած գեղխութիւնները իր կեանքը պիտի կարճեցընեն , անամօթաբար պատասխան տուաւ անարգ անասնոյ նման , թէ երկար ապրելու համար այնքան հոգ չեմ տանիր , միայն թէ իմ կեանքս կարճ՝ բայց փափուկ և զուարճալի ըլլայ ։

Աւելորդ է ըսել թէ բոլոր որկրամոլ մարդոց կեանքը կարճատեւ կը լինի ․ վասն զի՝ ընդհանուր առած է , որ ինչպէս չափաւորութիւնն մայր է առողջութեան , նոյնպէս անժուժկալութիւնն երկարակեցութեան թշնամին է ․ և իրրեւ առակ եղած է այն խօսքը , թէ՝ որկրամոլութիւնը դանակէն աւելի կը սպաննէ մարդոց սերոր ։

Քանի՜ քանի՜ հոգի իրենց անկարգ ախորժակաց անսանձ անձնատուր լինելով , իրենց մարմնոյն խառնուածքը կը տկարացընեն և կամաց կամաց այնպիսի վիճակի մէջ կ՚ինկնին , որ գերեզման կ՚առնու կը տանի զիրենք ։ Քանի հոգի

եւս մէկ անգամ՝ չափէ դուրս ուտելով կամ խըմելով կաթուածի (տամլայի) հանդիպեցան, և մէկէն իրենց կենաց թելը խորտակեցաւ ։ Մօտ ժամանակներս ցաւալի օրինակ մի եւս պատահեցաւ մի քաղաքի մէջ, ուր տեղ կը գտնուէի ես այլ ։

Իւր որկրամոլութեան ցոյց եցոյց երիտասարդքը։

Չափէ դուրս որկրամոլ տղու՛ն մէկը, որու՛ն ոչ յանդիմանութիւնները և ոչ պատիժները կըրցին օգուտ մի ընել և այս վնասակար մոլութենէս զինքն ուղղել, որ մի շաքարով եփած թուրինջ ուտելով, զոր նախաճաշի համար պատրաստեր էին, այնքան շատ կերաւ, որ նոյն օրը չկրնալով մարսել՝ մեռաւ խեղճը, և իւր որկրամոլութեան պտուղը գտաւ ։

Ահա տեսէք, սիրուն որդեակք իմ, որկրամոլութեան վերջն ուր կ՚երթայ, այն մոլութեան՝ որ մանաւորապէս ձեր հասակի տղայոց յատուկ է ։ Անիկայ մարդս կը նուաստացընէ, առողջութիւնը կ՚աւրէ, և շատ անգամ եւս իւր տունը տեղը մոխիր կը դարձընէ, վերջին աղքատութեան մէջ ձգելով ։

Որկրամոլ մարդուն հոգին, կ՚ըսէ երեւելի հեղինակին մէկը, բոլորովին իւր քիմաց (տամախին) մէջն է ։ Ուրիշ բանի չէ՝ այլ միայն անուշ կերակուրներու վրայ կը խենթենայ, և իւր խելքն ու միտքը և հոգին միայն անոնց վրայ է ։ Աղուոր պատառ մի անոր համար՝ ձկան

խայծին ( եէմին ) չափ զուարճութիւն կուտայ, զոր ձուկը կլլելու համար կ'երթայ կարթին մէջ կը նետուի ։

Ըմպող մարդիկն եւ չափը ճանչցող ըմպողն։

Կիւրոս՝ իւր Աժդահակ պապուն ( մէտէ ) պալատին մէջ եղած ժամանակ, օր մի մատռուակութիւնն ինքն ըրաւ. եւ գինին գաւաթին մէջ լեցնելէն առաջ, որ թագաւորին պիտի տայր, ինք նախ համը չնայեցաւ, ինչպէս որ սովորութիւն էր ։ Աժդահակ դիտելով զայն եւ պատճառը հարցնելով, պատասխան տուաւ Կիւրոս ու ըսաւ. "Վախցայ որ թոյն ըլլայ այս խմելիքը, անոր համար չուզեցի համն յառաջ ես առնուլ ։ Անցած օր տեսայ որ պալատի մեծամեծներուն հացկերոյթ տուած ժամանակդ, քիչիկ մի խմելնուդ պէս դուք եւ բոլոր ձեր մեծամեծները, ամենքնիդ եւս փոխուեցաք եւ ուրիշ բնութիւն մի ունեցաք ։ Թող տուիք զձեզ այնպիսի բաներ ընելու, զոր մեզ կ'արգիլէիք երիտասարդ ըլլալնուս համար ։ Ամենքնիդ եւս սկսաք անձոռնի ձայն մի հանել, պոռալ, եւ ամենեւին ինչ ըսելնիդ չէիք գիտեր ։ Ծաղրական եղանակով մի կ'երգէիք, կարծելով թէ խիստ անուշ երգ մի էր ։ Կերակուրը լմննալուն՝ ելաք ոտից վերայ որ պար բռնելով խաղաք. բայց չէ թէ ձեր կաքաւը օրինաւոր էր, այլեւ ոտից վերայ եւս չէիք կրնար կայնիլ ։ Մէկ խօսքով՝ կ'երեւէր թէ ձեր թագաւոր ըլլալը

մուցեր էիք, և ոչ հրաւիրեալները ձեր հայատակներուն տեղը կը դնէիք: — Զրուցէ ինձ ուրեմն որդեակ, ըսաց Աժդահակ, քու հայրդ եւս գինի խմելու որ լինի, այս բաները չընէր: — Չէ, պատասխան տուաւ Կիւրոս համարձակութեամբ, վասն զի երբ անգամ մի խմելու եւս լինի, այլ ետեւը չանեցինէր»:

Հին ժողովրդեան մի զարմանալի չափաւորութիւնը:

Պարսիկները, որոնց մէջ կրթուած էր Կիւրոս, մինչեւ որ հարկը չստիպէր, իրենց կենաց պահպանութեան համար ո՛չ կ'ուտէին և ոչ կը խմէին, և մի փոքր պարզ կերակրով բաւական կը լինէին: Ուստի երբոր Կիւրոսին պապը (անէտէն) նորա մանկութեան ժամանակ փառաւոր հացկերոյթ մի տուաւ իրեն, «Ահ, հայր ըսաց անոր, այս մեծ ծախքով հանած սեղանդ շատ նեղութիւն պիտի տայ ձեզ, թէ որ եկած կերակուրներուն ամենէն ուտելու լինիք: — Ի՞նչ, ըսաց Աժդահակ, միթէ իմ հանած սեղանս Պարսկաստանու մէջ հանուածներէն փառաւոր և ընտիր կ'երեւի քեզ: — Չէ, ամենեւին չնմանիր անոնց, պատասխանեց Կիւրոս, վասն զի մեք մեր փախծանեին հանելու համար, զոր սեղան նստած ժամանակ պիտի ունենայ մարդս, որ է իր անօթութիւնը մարել, շիտակ և միանգամայն կարճ ճամբէ մի կ'երթանք. և ուրիշ բանի հարկաւորութիւն չունինք այս բանիս համար, այլ միայն պատառ մի հացի,

և մի քիչ կամեւորի կամ ընդունեցինի. և դուք ընդ-
հակառակին նոյն վախճանին համար այլ և այլ
ճամբաներէ երթալով հազիւ թէ կէսը կը մտնե-
նաք, ուր տեղ մեք աւելի դիւրութեամբ և
շուտով կը հասնիմք »:

Այսպէս խօսեցաւ Կիւրոս. բայց իւր խօս-
քերին իրեն տուած օրինակներովը հաստատելու
համար, Աժդահակ իշխանութիւն տուաւ անոր՝
որ սեղանին վերայ եղած կերակուրներէն որուն
ուզածն առնու ուտէ, Կիւրոս մէկէն սաւ-
բաշխեց թագաւորին ընտանիներուն; որոնք հոն
կեցած էին և իրեն ծառայութիւն մը ըրած էին:

Ցանկալի էր որ բոլոր երիտասարդ տղայք
այս միտքս բանեցնէին և Կիւրոսի պէս վարուէ-
ին: Երբոր տղայ մի խիստ պզտիկ հասակէն ու-
վարժութիւն ընէ չափաւորութեամբ ապրելու,
բաղդը չկրնար իւր կամքն անոր վերայ բանեցը-
նել, և թէ որ բարեյաջող վիճակէ աղքատանա-
լու և խեղճնալու ըլլայ, արդէն քիչ բանի գոհ ըլ-
լալու սովրած ըլլալով. անհնարին նեղութիւն
մի չկրեր, և ձեռքի եղած քիչին բաւական կը
ըլլի: Բայց թէ որ ընդհակառակն աղայութե-
նէն փափուկ և հեշտասէր կեանք անցընելու սո-
վրած ըլլայ, չկրնար իւր սրտին ուզած հեշտա-
լի բաներէն ետ կենալ, և եթէ դիպուածով ա-
նոնցմէ զրկուի, այս զրկուիլը միայն տառապիլ տան-
ջանք մը կ'ըլլի իրեն:

Վա՜յ այն տղայոց որ խիստ փափկութեամբ
կը մեծնան, և աչքերնին ուրիշ բանի չէ, այլ

միայն իրենց կամքը կատարելու ։ Թէ որ այնպիսի տղայոց դաստիարակութիւնն ինձ յանձնելու ըլլային, զիրենք չափաւորութեան մէջ վարժելու համար, առեն առեն փորձի մէջ կը դնէի զիրենք, ինչպէս որ Պիթագորաս իւր աշակերտներուն կ'ընէր ։ Երբեմն երբեմն անոնց առջեւն սեղան կը հանէր խիստ աղեկ կերակուրներով, և երբ անօթի աչուըներով աղէկ մի կը նայէին անոնց, կը հրամայէր որ սեղանը վերցընեն, աւանց մէկը ձեռք երկընցընելու և այն կերակուրներուն համը նայելու ։

Դուցէ կ'ըսէք՝ թէ այս ի՛նչ անգթութիւն է. բայց հաւատացէք ինձ որ ձեզ աղէկ կ'ըլլանի. և թէ որ այս կերպով չափաւոր կենաց սովորիք, որկրամոլութեան ցաւալի հետեւանքներէն ազատ կը մնաք ։ Այն ժամանակ ոչ եւս վախ կ'ունենաք ուրիշէն նախատինք կրելու, կարօտութեան և այլ տեսակ անկարգութեանց մէջ իյնելու, ուրտեղ անպարկեշտութիւնը կ'առնու կը տանի բոլոր իրեն գերի եղողները, այլ հասարակաց յարգը, որուն հանդարտութիւն և առողջութիւն կը վայելէք, որոնք չափաւոր կենաց համար պտուղներն են. և ձեզ անցաւոր հաճութենէ մի զրկելով, ձեր կենաց երջանկութիւնը կ'ապահովէք ։

Այս տուած դասերս ձեր մտաց մէջ աւելի խորունկ տպաւորելու համար, գիտցածիս և կրցածիս չափ կը պատուիրեմ ձեզ իբրեւ գլխաւոր առակ ընդունելու այս խօսքս թէ՝ Որկրա-

մոլութիւնը, չէ՛ թէ իւր խոստացած հաճութիւնը կուտայ ձեզ, այլ ընդ հակառակն օրէ օր աւելի կը թշուառացընէ զձեզ։

## ԳԼՈՒԽ ԻԸ.

### Քաղաքավարութեան վերայ։

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ ի՛նչ է քաղաքավարութիւնը։

Քաղաքավարութիւնն ամէն ժամանակ բարեկիրթ մարդոց հարկաւոր յատկութիւններէն մին համարուած է։ Այս է որ մարդուս արժանաւորութեան վերայ այն շքեղութիւնն և գեղեցկութիւնը կ՚աւելցընէ, որով սիրելի կը լինի ուրիշներուն։

Առաքինի մարդ մի թէ որ սիրուն վարմունքներ չունի, կը նմանի վարպետութեամբ շինուած պատկերի, որու վերայ փայլուն գոյները չեն տեսնուիր. և կամ ճշմարտապէս խօսելով՝ կը նմանի պատուական ադամանդի, այլ չէնքը անձեւ և անհաւասար։ Իւր գեղեցիկ յատկութիւնները՝ այսպէս ըսենք, կոպիտ վարմունքներովը մրճոտած է։ Իւր անմարդավարութեամբ կը կորսնցընէ այն յարգը, զոր կրնար իւր հանճարով ձեռք բերել. և մարդիկ զինքն այն թըռչուններուն մէկուն տեղը կը դնեն, որոնք միայն

մութին մէջ կենալու համար ստեղծուած են, և չեն կրնար ցորեկ առեն երևելի՝ առանց վնաս տալու իրենց նայուածներուն աչքին։

Ձախահաս մարդոց վերայ ինչ որ կը զրուցուի, նոյնը պէտք է իմանալ համեմատաբար անքաղաքավար և անկիրթ տղու մը կամ երիտասարդի համար։ Թէ որ անոնցմէ մին կամ խիստ կոպիտ և կամ խիստ յանդուգն ըլլալով, արժանի չհամարի իրեն մէկուն բարեւ տալու կամ առնելու, և կամ իրեն բարիք մը ընողին չուզեր շնորհակալ լինիլ, ահա կ՚ըսուի՝ անքաղաքավար տղայ մը։ Աս կարծես թէ անասուններուն մէջ անբան անասնոց հետ մեծցած է։

Բայց ընդ հակառակն, երբ մէկ տղայ մը շնորհալի կերպով մարդու դիմաց ելնէ, պարկեշտութեամբ և շնորհքով պատասխան տայ իրեն բան հարցընողին, թէ որ իւր մեծերուն հետ ակնածութեամբ վարուի, թէ որ ընկերութեան մէջ խօսելուն կամ ընելուն ժամանակը գիտնայ, այն առեն թէպէտ և ամեն կերպով հարկաւոր եղած արժանապատուութիւնները չունենայ, այսու ամենայնիւ կը սիրեն և կը յարգեն զինքն, և անուշ գովեստներ ընելու ևս արժանի կը լինի։

Ահա, սիրուն որդեակք իմ, դուք ևս այսպէս որքան շնորհալի և սիրուն եղանակով այլոց հետ վարուիք, այնքան կը սիրուիք և աչք կը մըտնէք, վասն զի մարդս ձեր ունեցած արժանաւորութիւնն արտաքին վարմունքնէդ կը դատէ։

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

Մարդավարութեան եւ սիրուն շարժմունքի վերայ։

Նայեցէք որ սովորեցնէք զձեզ ամեն պարագայի մէջ և ամենուն հետ մարդավար և սիրուն եղանակաւ վարուելու․ վասն զի մարդավարութիւնն և չնորհալի վարմունքն ամեն մարդու դէմ պէտք է ունենալ, և ամէն տեղ պէտք է ցուցընէք ծանր և նազելի շարժուածք մի, զգուշանալով անվայելուչ նստուածքներէն, ճամբան շուտ շուտ քայլելէն․ այլ և մարմնոյն թնդրուածքը պէտք է չափաւոր ըլլի, դէմքին վերայ ամենեւին չպիտի ցուցնէ գոռոզութեան կամ տհաճութեան նշան մի, կամ որպէս թէ՝ աշխարհս բնաւ իբր հոգը չըներ մի, մարդ չսեպել։ Ընկերութեան մէջ զգուշանալ պէտք էք հակառակ զրոյցներէն, կամակորութեամբ վիճաբանութիւն ընելէն, մարդուս խօսքը կտրելէն, անվայելուչ բառեր գործածելէն, որ ուրիշ մարդոց բերնէն կը լսուին։ Նստմութեան մէջ աւագին տեղը չնստիլ, նոր եկողներուն ոտք ելնել ու բարեւել․ նստելու ելնելու ժամանակ վայելուչ և չնորհալի եղանակ մի ունենալ․ մինչեւ որ չհարցունին՝ պատասխան չտալ․ խօսքը մէջ միշտ հաստատ և միակերպ ըլլալ․ թէ կորուստներու ըլլի և թէ շահերու․ ճամբան քալած ժամանակ, թէ որ իր հետն եղողն իրմէ մեծ է, ինքն անոր ետեւ և միշտ ձախի կող-

մէջն երթալու է, և նայելու է որ նախ ինքն բարեւ տայ ուրիշին. կերակրոյ ժամանակ պէտք է չափաւոր ըլլալ, պահեցող և մաքուր։

Մէկ ամբողջ հատոր մի բաւական չէր ըլլար, թէ որ ուզէինք մարդավարութեան պահանջած բոլոր պարտաւորութիւնները մէկիկ մէկիկ գրելու։ Սակայն կարող են ձեր փափագը լեցընել քաղաքավարութեան համար շինուած մանաւոր գրքերը. միայն թէ հոգ տանելու է անոնց մէջ եղած դասերուն աղէկ միտք պահելու, և ոչ ինչ բանի տեղ չհամարել այն կանոններին, որոնք կրնան օգուտ ընել ձեզ յայսմ մասին։ Թէպէտ եւ առջի անգամ կարդալնուդ այնքան օգտակար չերեւին ձեզ, այսու ամենայնիւ զանոնք պահելը հարկաւոր է, մանաւանդ երբոր կ՚ուզէ մէկը քաղաքավար երեւիլ մարդու քով և պատիւ ունենալ աշխարհիս առջեւ. ուր ընդհակառակն, ինչպէս վերն ըսի, անկիրթ և անքաղաքավարին աւելի ատելի մարդ չկայ հիմակուան ժամանակս։ Ուրիշ կողմէ արժանաւորութիւն եւս ունենայ. իր անշնորհ վարմունքով զայն եւս կը կորսնցընէ, և տեսնողին այնպէս կարծել կու տայ, որպէս թէ ընաւ մէկ կերպով արժանաւորութիւն չունի։ Ծննդեամբ կամ հարստութեամբ երեւելի եղող մարդու կը նմանի, որ ռամիկ մարդոց հետ խառնուած կ՚ըլլայ, թէ որ իր աստիճանին վայելած հագուստը չհագնի, և մարդու մէջ անարգ և գծուծ կերպարանքով երեւի։

# ՅՕԴՈՒԱԾ Ե·

Քաղաքավարութիւնն եւ մարդավարութիւնը ազնուական վարմունքին մէջ կը կայանան:

Պէտք չէ կարծել թէ քաղաքավար մարդ ըլլալու համար, բաւական է միայն մարդավարական արտաքին արարողութիւն մի ցուցընել. Ճշմարիտ քաղաքավարութիւնն այնքանով չբաւականանար: Նախ գլխաւորապէս պէտք է ամենուն հետ գեղեցիկ շնորհալի և մարդավար վարմունքներ բանեցընել: Ուստի բաւական չէ միայն բարեւ տալ, և հետերնին տեսութիւն ըրած մարդոց պատիւ ընելնիս յայտնի ընել, այլ արժան է պարտաւորել զիրենք, և ջանալ ծառայութիւն մի ընել և գործերնուն գտնուիլ առիթ մի պատահելուն: Այս միջոցաւ, որ կրօնն և մարդկութիւնն եւս կը պատուիրէ մեզ, ուրիշէն յարգ և բարեկամական սէր կը ստանանք:

Քաղաքավարութիւն վարձատրեալ:

Ոպինեէի կոմսը Ճանապարհորդութիւն ընելով հասաւ երեկոյեան դէմ պզտի քաղաք մի: Հոն պանդոկ մի իջնելով՝ հրամայեց պանդոկապետին որ կերակուրը պատրաստէ. և չուզելով մինակ նստիլ սեղան, մարդ մի խրկեց նոյն քաղքի աւագերէցին, աղաչելով որ գայ ընկերութիւն ընէ օտարական Ճամբորդի մի, որ մինակ կերակուր ուտելու սովորած չէր. միան-

դամնչն աղաչեց որ Ներողամիտ ըլլայ ինքն անձամբ չկրնալուն համար զինքը հրաւիրելու դալ-ձամբան յոգնած լինելուն ։ Նաւաստեէքը դէպ (Թիրիեարի) ու անկիրթ մէկին ըլլալով, չընդունեց Նորա հրաւէրքը. այլեւ քանի մի կոպիտ խօսքեր եւս զրուցեց, որ անծանօթ ճամբորդին դժարը պխտի բերէին ։ Նսիկայ իրեն փոխանորդ մի ունէր, ընկերասէր և անուշ երիտասարդ մի, որ այն ժամանակս գլխաւոր Նորա քով գտնուելով, ուզեց որ Նորա կողմէն ինքն երթայ օտարականին ներողակից լինի. ծխառէր քաղաքացին հաճութիւն տուաւ, պատուիրելով իրեն՝ որ շատ չխօսի այն զինուորին մէրայ ։ Օգնականի կամք փոխանորդին հետ նեղան Նաւաս, և տեսաւ որ խեղճի ու խիստ ունուշ երիտասարդ էր ։ Մէկմէկէ զատուելնէն առաջ շնորհակալ եղաւ Նորա մարդասիրութենէն. և ուժ օր յետոյ առանց իրեն բան ըսելու, երկինքորատական պաշտօն շնորհել տուաւ. առանձին թեւ եւս պարգեւեց իրեն՝ անպատմելի զարմանք պատճառելով աստղերեցին, որ տակէ սովրեցաւ թէ բնաւ պէտք չէ անքաղաքավարութիւն ցուցընել և ոչ չձանչցած մարդուն, և թէ՝ մարդավարութիւնը միշտ գովելի և շահաւոր է ։

Նայց դայս եւս գիտցած եղէք որ, քաղաքավարութիւնն որքան որ շահաւոր է մարդոյս, անմարդութիւն եւս այնքան վնասակար է, ինչպէս հետեւեալ պատմութենէս աղէկ կիմացուի ։

Գաղղիացւոց պատմութեան մէջ կը կարդացուի, թէ Հենրիկոս Դ. որսի ելած ըլլալով, կերակուրի ժամանակ որ եկաւ՝ գնաց մինակուկ պանդոկ մը, ու հարցուց պանդոկապետին՝ թէ փորը կշտացնելու բան մը ունի։ Պատասխան տուաւ պանդոկապետը թէ՝ կերակուր չկայ, վասն զի ուշ ես մնացեր, ըսաց. իսկ Թագաւորը տեսաւ որ կրակին վրայ շամփուր մը կայ լեցուն միսով, հարցուց նորէն. «Որու համար է սա այդ խորովիլը»։ Պանդոկապետը պատասխան տուաւ թէ՝ անիկայ քանի մը պարոններու համար կը պատրաստէր, որոնք պանդոկին վերի յարկը սենեկի մը մէջ հաւաքուած են, և կը կարծէր ինք թէ Թագաւորական մարդիկ էին։ Թագաւորը, որ պանդոկապետին աչքին հասարակ զինուոր մը կ'երեւէր, աղաչեց որ երթայ այն պարոններուն զրուցէ թէ՝ իւր պանդուխտ ճամբորդ մը եկեր է յոգնած ու անօթի, և կ'աղաչէ զիրենք որ իրենց խորովածէն մաս մը հանեն, կամ իրենց սեղանն առնուն զինքն ալ, ըսելով թէ՝ իւր մասին ինչ որ ծախքի կը վճարէ. բայց պարոնները երկու խնդիրքը մէկէն մերժեցին՝ ըսելով «Մեր կերակուրը մեզ հազիւ կը բաւէ, և թէ ուրիշ անծանօթ մարդ չեմք ուզեր մեր սեղանը»։ Հենրիկոս բարկանալով այսպիսի յանդուգն պատասխանին վերայ, զոր բարձր ձայնով կուտային որ աղէկ մի

լուխ, իւր հետն եղող բոլոր մարդիկը ներս մտցուց, որոնք տաս տասուերկու հոգի կային, որոնց մէջն էր նաեւ պահապան զօրաց գլխաւոր Վիդրիի պարոնը, որուն հրամայեց խաբաղանով աղէկ մի վարձատրել նոցա կապուածութիւնը։ Հրամանն ինչպէս որ պէտք է ի գործ դրուեցաւ. եւ պարոններն իրենց վնասով սովրեցան՝ թէ քաղաքավարութեան պարտքերը չըկատարողն, ուրիշէն աւելի իրեն կը վնասէ։

Քաղաքավարութիւնը կամ ազնուականութիւնը պէտք է բնական ըլլի։

Ձեզ քաղաքավարութեան եւ ազնուական վարմունքներու յորդորելուս, միտքս այն չէ թէ դուք ինքզինքնիդ արուեստականութեան տաք, այսինքն ձեր վարմունքը բնականէ դուրս ըլլի շարժուածքով, հագուստով եւ զարդարանքով, որ առաւելապէս երիտասարդաց վերայ կը տեսնուի. եւ ասոր համար իրրու ծաղր ընելով զիրենք՝ իգացեալ ազնուական կը կանչեն։

Տղայք. զգոյշ կեցէք, չըլլայ որ այս ծաղրական օրինակներուս հետեւիք, որ է արուեստական սուտ քաղաքավարութիւն։ Եւ այս կերպ մարդավարութիւն բանեցընող երիտասարդը թէպէտեւ խելացի եւ իմաստուն ըլլայ, աւելի ատելի կ՚ընծայէ զինք։ Նորա խելքը միտքը միայն իւր գեղեցիկ կերպարանքին, պչրանքներուն, կարդուելուն. զարդարանքներուն եւ իւր անձին գեղեցկութեան հետ ըլլալով, իւր բոլոր յար-

գը պատիւը այս անցաւոր աշխարքին բաներուն վերայ կը հաստատէ, և այլոցմէ յարգ և մեծարանք առնելու արժանաւոր կը կարծէ զինք, անոր համար որ մի քանի քաղաքավարական արարողութիւններ (գօմփլիմէնթներ) գիտէ, և կը պարծի՝ որպէս թէ լաւ կը ճանչէ խոնարհութեն ինչ ըլլալը. բայց սակայն խելացի մարդիկ չեն խաբուիր բնաւ այս աշխարքին խաբերայ վարմունքներէն։

Ազնուաբարոյ և շնորհալի եղէք. բայց ձեր քաղաքավարութիւնը շինծու չլինի, և ջանացէք այնպէս շարժուածքներ ունենաք, որ պարզ և բնական լինին։

Իսկ այն շինծու քաղաքավարութիւնն որ միայն արտաքին կերպարանաց վերայ կը կայանայ, ծաղրական է, և ուրիշ բանի չծառայեր, այլ միայն տխմար մարդոց տեղ դնելու զմեզ։

Երիտասարդ տղուն մէկը, որուն Վեսպասիանոս կայսրը պաշտօն մի շնորհած էր, զոր և ինքը խիստ կը բաղձար ստանալու, փութաց անոր շնորհակալութեան երթալու. և կարծելով հաճելի բան մի ընել անոր աչքին, գլխէն մինչև ոտքերն անուշահոտ իւղերով օծուեցաւ, և խիստ ազնիւ հագուստ մի հագաւ։ Բայց Վեսպասիանոս այնպէս զզուեցաւ նորա արուեստակեալ արտաքին կերպարանքէն, որ իւր շնորհած պաշտօնը ձեռքէն առնելէն յետոյ, որով իրեն պատիւ ըրած էր, անոր գրգանաց և զարդարանաց վերայ չափազանց սէր ունենալն ևս յան-

գիմանելու համար՝ բարկանալով ըսաց իրեն. «Շատ աղէկ էր որ սխալը հանէր վերայէդ»:

Ուրիշ պակասութիւն եւս. որ նոյնպէս մարդավարութեան և ազնուական վարմունքին հակառակ է, և դուք եւս պէտք էք զգուշ կենալ անկէ միշտ, այն խենթութիւնն է, որով մարդս բան գիտցողի մի տեղ անցնիլ կ՚ուզէ, և ասով կը ցանկայ ուրիշէն յարգ ստանալու. այս մոլութիւնս եւս առաւելապէս տղայոց մէջ հասարակ եղած է: Իրաւցմէն քանի քանիները կը տեսնուին ամէն օր, որոնք մտքէ զուրկ և ամենեւին բան մի չգիտնալով՝ ամէն խօսքի մէջ կը մտնեն. և իմաստուն մարդու մի պէս կը սկսին խօսիլ գոռոզ և ամբարտաւան դէմքով. ինքզինքերնէն ի զատ զամէնքն ալ կը նախատեն. և այս կերպով կը խաբեն տգէտ մարդիկը: Իսկ խելացի և ուղղամիտ մարդը գիտէ նոյնս ինչ տաղանդի և ինչ արժողութեան տէր ըլլալնին. կը տեսնեն որ այս գոռոզամիտ մարդոց բոլոր կատարելութիւնն անմիտ ունայնամտութեան մէջ կը կայանայ, որու վերայ կը պարծենան, և ամէն մարդ եւս զիրենք խենթի տեղ դնելով վրանին կը ծիծաղին:

## ԳԼՈՒԽ ԻԹ.

### Կենաց վիճակ ընտրելու վերայ։

Թէպէտեւ դուք հիմայ այն հասակին մէջ չէք որ կարող լինիք որոշել ձեր կենաց վիճակ մի, այսու ամենայնիւ, սիրուն որդեակք իմ, որովհետեւ քիչ ժամանակէն պիտի ստիպուիք մէկ բանի մի ձեռք զարնելու, ուստի պարտք կը համարիմ ինձ այս բանիս վերայօք խօսել ձեզ, որպէս զի հիմակուընէ կարող լինիք հարկաւոր պատրաստութիւններն ընել, որ չսխալիք այս ամենահարկաւոր գործին մէջ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Այս ընտրութեան հարկաւորութիւնը։

Անկէց աւելի հարկաւոր գործ կրնամ ըսել թէ չկայ. ասկէ կախեալ է բաւ մեծի մասին հոգւոյն յաւիտենական փրկութիւնը. վասն զի երբոր բարեպաշտութեամբ աղէկ ընտրութիւն մի ընելու լինի. և աստուածային կոչման հետեւի, կրնայ այն ժամանակ յոյս ունենալ բարեյաջող վախճանի մի հասնելու. վասն զի Աստուած՝ որ հաւատարիմ է, անխնամ չթողուր բնաւ զանոնք որ իւր կոչման ձայնին կը հետեւին։ Բայց ընդ հակառակն՝ մէկը թէ որ նորա կոչման ձայնին մտիկ չընէր, թող վախնայ նա իւր հոգւոյն փրկու-

կութեան վերայ, վասն զի կրնամք այնպէս կարծել թէ անիկայ նախախնամութեան կարգադրութեանց հակառակ ընտրած վիճակին մէջ չկրնար այնքան օգնութիւն գտնել։

Անոնք որ աղէկ կ՚ընտրեն իրենց վիճակը, որու մէջ պիտի ապրին, կը նմանին այն ծառերուն՝ որոնք իրենց յարմար եկող երկրի և կլիմայի մէջ կը տնկուին։ Ասոնց մեծ հոգ ունենալու անոնց վերայ և մշակելու, զարմանալի առատութեամբ կը մեծնան, տերեւոտ ճիւղերնին կը տարածեն, և խիտ գեղեցիկ և առատ պտուղ կը բերեն։ Իսկ ընդ հակառակն անոնք որ երկնային կոչման անհաւատարիմ լինելով. Աստուծոյ կոչում ըրածէն տարբեր վիճակ մը կ՚ընտրեն իրենց, կը նմանին այն ծառերուն, զորոնք ուրիշ գաւառ ու երկիր կը փոխեն կը տանին, որ իրենց յարմար չեն գար։ Անօգուտ տեղը կը ջրեն զանոնք և մեծ հոգ կ՚ունենան վրանին մշակելով, որ մեծնան և ծաղկին. վասն զի միշտ տկար և միշտ անպտուղ կը մնան. կամ թէ որ պտուղ ալ տան, ամենեւին համ հոտ չեն ունենար, և կատարեալ չեն հասուննար։

Մէկ խօսքով՝ այն վիճակին ուրտեղ Աստուած կը կոչէ զմեզ, այն ճանապարհն է, ուսկէ ինք կ՚ուզէ առաջնորդել մեզ դէպ ի փրկութեան նաւահանգիստը։ Ասկէ հրաժարուելով եթէ ուրիշ ճամբէ քալեմք. յայտնի է որ վտանգի մէջ կը ձգեմք զմեզ. և կ՚երթամք կը զարնեմք գլուխնիս այնպիսի տեղ մը, որ մտքերնիս դրած նպա-

տալէն դուրս հակառակ ծայր մը կը լինի ։

Մի կարծէք թէ տամ պայման երկու տալ կ'ուզեմ ձեզ. այս անհակառակելի ճշմարտութիւն մ'է, և բոլոր աշխարհս կը ճանչէ ։ Ուրեմն սիրելի որդեակք իմ, հոգ տարէք որ իմանաք թէ ի՛նչ վիճակ ընդունելու կը հրաւիրէ զձեզ Աստուած ։ Մի յօժարիք հետևելու երիտասարդաց մեծագոյն մասին օրինակին, մանաւանդ մեր ժամանակի, որոնք առանց հոգերնին ընելու Աստուծոյ իրենցմէ խնդրածը, խելքերնուն փչածին պէս կենաց վիճակ մը կ'ընտրեն. և այն վիճակին մէջ ուրիշ բան չեն խնդրեր, այլ զայն միայն որ իրենց ախորժակին յարմար և իրենց մոլի հակամիտութեանց հաճելի լինի ։ Գոնէ դուք եւս այն սուրբ տղուն պէս զուցեցէք, որ երբ ուրիշները կը ստիպէին զինքն աշխարհ մտնելու, ուր տեղ աստուածային կոչումն զինք կանչած չէր, և իւր առջեւ կը բերէին թէ ի՛նչ մեծ պատիւներու և ստացուածքներու տէր պիտի լինի թէ որ կարգուի, կ'ըսէր ներքին զգացողութեամբ մը. “Օ՜ ի՛նչ օգուտ է զաշխարհ ամենայն շահիլ՝ և զանձն իւր տուժել” ։

Թէպէտեւ աշխարհիս ամենէն մեծ թագաւորութեան աթոռը նստած լինիք, թէ որ Աստուծոյ կամաց հակառակ է այն, լալ պէտք էք ձեր վիճակին վերայ, և դժբաղդ մարդու մը տեղ դնել զձեզ ։

Ուրեմն արժան է ամեն բանէն առաջ Աստուծոյ կամքն իմանալ, և ձեր ընդունելու վի-

ճակին մէջ ուրիշ բան չխնդրել. այլ միայն Աստուծոյ ձեր վերայ ունեցած դիտաւորութիւնները կատարել. վասն զի կենաց որ եւ իցէ վիճակի մէջ մանելն առանց Աստուծոյ կամքին իմանալու, կը նմանի նաւու մի մէջ նստելու առանց նաւապետի, որ յետոյ մեծ վտանգի մէջ կ'իյնէ, մինչեւ նաւաբեկ լինելու:

Բայց վերջապէս Աստուծոյ կամքին աղէկ ճանչելու համար, եւ այս ամենահարկաւոր գործին մէջ չսխալելու համար, պէտք է կարեւոր միջոցներն ու նախազգուշութիւններն ի գործ դընել, զոր խոհեմութիւնն եւ կրօնքը կը սորվեցընեն մեզ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Աղէկ ընտրութիւն ընելու համար պէտք եղած նախազգուշութիւններ:

Ա. Պէտք է անարատ եւ կանոնաւոր կեանք մի վարել, վասն զի հաստատակօրէն Աստուած անարատ եւ անմեղ հոգիներուն հետ կը հաղորդակցի:

Բ. Պէտք է դէպ ի Աստուած դիմել աղօթիւք, եւ ստէպ ստէպ ըսել Սամուէլին պէս. “Խօսէ Տէր, եւ յայտնէ ինձ քու կամքդ”. կամ ինչպէս կ'ըսէր Դաւիթ. “Ցոյց ինձ. Տէր, այն ճամբան, ուսկից պէտք է որ ես երթամ, ինչու որ ես իմ հոգիս դէպ ի քեզ վերցուցի”: Այսպէս աղօթք որ ընես, Աստուած եւս քեզ

մօտիկ կ'ըլլայ , մանաւանդ եթէ ջերմեռանդութիւն ունենաս և հաղորդութենէ ետ չկենաս ։

Գ. Հարկ է խորհուրդ հարցընել Աստուծոյ պաշտօնեաներուն , կ'ուզեմ ըսել ձեր խղճմտանաց կառավարին , նաև ձեր ծնողաց , զորոնք Աստուած իբրև առաջնորդ տուած է ձեզ ։ Երբեմն ամենևին բան մի որոշէք առանց խրատ հարցընելու անոնց , և առանց անկեղծութեամբ ձեր խորհուրդներն անոնց յայտնելու ։ Պարտաւոր էք դուք անոնց կամքէն դուրս չելնել և հնազանդութիւն ցուցընել ։

Սակայն կան այնպիսի առիթներ , որու մէջ պէտք չէ ծնողաց բաղձանքներուն և կամաց յարմարիլ . փասն զի երբոր Աստուած , օրինակի համար , ձեզ յայտնապէս խմացընէր թէ կ'ուզէ որ դուք եկեղեցական պաշտօնի մէջ մտնէք , և թէ որ ձեր ծնողքը չափազանց սիրով ուզեն զձեզ յաշխարհ մնցընել , ուր տեղ ձեր հոգւոյն փրկութիւնը մեծ վտանգի մէջ ինկնելու լլնի , այն ժամանակ օրէն է դէմ կենալ անոնց կամաց , բայց առանց որդիական հնազանդութենէ և ակնածութենէ դուրս ելնելու , զոր պարտաւոր էք իրենց , պէտք է պատասխան տալ անոնց առաքեալներուն այս խօսքը , զոր անգամ մի զըրուցեցին . « Իրաւո՞ւնք է որ մեք ձեր հրամանն Աստուծոյ հրամանէն մեծ համարիմք » ։ Կամ թէ որ ընդհակառակն՝ ձեր ծնողքն անխորհրդաբար , կամ ծաղրական ջերմեռանդութեամբ ուզեն զձեզ քահանայ կամ վարդապետ ընել ,

որ հակառակ լինի Աստուծոյ կամաց , նոյնպէս պէտք չէ անոնց հնազանդիլ ։ Վասն զի շատ օրինակներ ունինք մեր առջեւ , որոնք մանկութեն ժամանակնին առանց կարող լինելու իրենք ընտրել իրենց վիճակը , ծնողաց անխոհեմ ընտրութեամբ եկեղեցական պաշտօնի ձեռք զարնելով , և կամ կարօտութենէ տառապելով՝ առանց Աստուծոյ կամքին իմանալու , շահու և հանգըստութեան համար սրբազան կարգն ընդունելով , որքան գէշ հետեւանքներ ունեցեր են յետոյ , չարաչար գործածելով իրենց պաշտօնն , որուն խիստ մեծ զգուշութեամբ պէտք էր մօտենային ։ Վասն զի ի՛նչպէս կրնամք ըսել՝ թէ Աստուծոյ պաշտօնն անվրէպ կը կատարէ նա , որ անշուշտ առանց երկնային կոչման նոյն սըրբազան կարգին ձեռք զարնելով , զանիկայ իրեն գործիք մի կ'ընէ խեղճ ժողովուրդը կողոպտելու , անարժան գործքերու յանձնառու ըլլալով , և իբրեւ գայլ ոչխարազգեստ անմեղ գառանց մէջ մտնելով , անուշ լեզուով զանոնք կ'որսայ և յաւիտենական կորուստը կը խրկէ , փոխանակ դէպ ի երկինք ճամբան առաջնորդելու ։ Ահա այսպիսիներն առանց աղէկ ընտրութիւն ընելու և Աստուծոյ կամքը ճանչելու եկեղեցական վիճակին ընդունողներն են ։

Աստուածային կոչման հաւատարիմ եղող երիտասարդը։

Երբոր Փրանկիսկոս Սալէզցին իմացաւ այն վիճակն ուր կը հրաւիրէր զինքն Աստուած , իւր

ծնողքը պարապ տեղը կ'ըսէին իրեն՝ թէ ծնողացն անդրանիկն է, և թէ՝ անոր համար պէտք է որ իրենց նեցուկ և օգնական ըլլի. անօգուտ տեղն անոր կը ցուցէին՝ թէ եկեղեցական վիճակն ընդունելու համար ունեցած բաղձանքը, իւր անխոհեմ ջերմեռանդութենէ յառաջ եկած է, և թէ՝ իւր հոգւոյն փրկութիւնը թէ աշխարհիս և թէ եկեղեցական կարգին մէջ կըրնայ առնալ: Պարապ տեղը նորա դիմաց կը բերէին պատուաւոր և բազմաշահ աստիճաններն, որոնց կրնար հասնիլ յաշխարհ մնալով. ամենեւին ինչ որ ըրին՝ չկարողացան նորա միտքը դարձընել իւր սուրբ դիտաւորութենէն: Աստուծոյ կամքն իւր ծնողաց կամքէն մեծ համարեց, և այն իրեն խոստացած անցաւոր փառքերէն հրաժարիլը լաւ սեպեց, քան թէ աստուածային կոչման շնորհքները կորսնցընել, որ զինք արքութեան գերագոյն աստիճան բարձրացուց:

Ահա, սիրուն որդեակք իմ, դուք եւս պէտք էք այս օրինակիս հետեւելով հնազանդիլ երկնային կոչման, առանց մտիկ ընելու ձեր ծնողաց, որոնք կ'ուզեն իրենց կամացը դարձընել զձեզ. ապա թէ ոչ մարդոց հրամանն Աստուծոյ հրամանէն մեծ համարած կ'ըլլաք, և զձեզ արժանի կ'ընէք պատժոց, որով շատ անգամ կը պատուհասէ Աստուած զանոնք, որ իւր կամաց դէմ կենալով՝ այնպիսի վիճակ մը կ'ընտրեն ուր ի վերուստ կոչուած չեն: Մէկ օրինակ մը միայն

կ՚ուզեմ բերել հոս լաւին գրքէ մը, ուսկէ կրնաք մակաբերել թէ ինչպէս Աստուած անաչառապէս կը պատժէ զանոնք որ կը համարձակին նախախնամութեան դիտաւորութեան հակառակ՝ իրենք իրենցմէ կոչումն ընել։

Իւր կոչումէն պակասելուն համար պատիժ կրող Եպիսկոպոսը։

Ինչ ատեն Բենեդիկտոս հայրն իւր սրբութեան համբաւով կը հռչակուէր, եկեղեցական երիտասարդին մէկը, որ մի նորա քով գնաց որ աղաչէ ազատել զինք դևէն, ուսկից թըշուառաբար կը տանջուէր։ Սուրբն աղօթք ընելով Աստուծոյ, ազատեց այսահարեալ այրն չար դևին ձեռքէն. բայց բժշկելէն յետոյ պատուիրեց անոր Աստուծոյ կողմէն՝ որ սրբազան կարգ չընդունի, ըսելով՝ որ եթէ համարձակի քահանայ օծուելու, Աստուած նորէն իշխանութիւն կուտայ դևին անոր մարմնոյն վերայ տիրելու ի պատիժ իւր յանդգնութեան։ Կղերիկոսը խիստ փախնալով այս սպառնալիքէս՝ միտքը դրաւ սուրբ Ճգնաւորին խօսքէն դուրս չելնել. բայց կամ ժամանակ անցնելէն մոռնալով, կամ իւր ծնողք խիստ ստիպելնուն, համարձակեցաւ իւր եպիսկոպոսին երթալ՝ և սրբազան կարգը խնդրել։ Նաև սուրբ Ճգնաւորին ըրած կանխատեսութիւնն իմացած չըլլալով՝ չէ չըսաց, մեկէն տուաւ անոր քահանայութեան աստիճանը. բայց դեռ հազիւ ընդուներ էր զայն, կատղեա եպիսկոպոսին առջն ինկնելով և իւր անդամնե-

րը տախտի կերպով մի ծածկուելով, ողբալի
ձայնով պոռայ՝ թէ նոյն րոպէին մէջ նորէն դի-
ւանհարեցաւ, արժանի պատիժ իւր յանդգնու-
թեան, վասն զի առանց մտիկ ընելու Աստու-
ծոյ հրամանին, որ կ՚արգիլէր զինք սուրբ ճրդ-
նաւորին բերելով սրբազան աստիճանին չելնելու,
յանդգնաբար խնդրեր և ընդուներ էր նոյն
սուրբ կարգը:

Թէ որ Աստուած միշտ այսպէս սաստիկ կեր-
պով չպատժեր զանոնք՝ որ իրենց կոչման հաւա-
տարմութեամբ չեն հետեւիր, սակայն անպա-
տիժ եւս չթողուր:

Որքան մարդիկ կան որոնց ի դառնութիւն
փոխուած է այն քաղցրութիւնները, զոր կը յու-
սային գտնել նոյն վիճակին մէջ. զոր Աստուծոյ
կամաց հակառակ ընտրեցին և յետոյ զայն ըն-
դունելնուն զղջացան: Բայց թէ և այն անցա-
ւոր երջանկութիւնք մարդերուն գրածին պէս
վայելած եւս ըլլային, այսու ամենայնիւ ցաւակ-
ցութեան արժանի են. վասն զի դժուար է յա-
ւիտենական երջանկութեան արքայութիւնն հաս-
նիլ մի այնպիսի ճանապարհէ՝ որ Աստուծոյ ցը-
ցուցածէն տարբեր և ներհակ է.

Դժոխային անդունդին մէջ շատ ամբարիշտներ
կան, որոնց հոն ինկնելուն պատճառն իրենց
կոչումէն հրաժարիլն է, և կրօնային փրկութեան
նուաճանդիսար հանիլ՝ թէ որ հաւատարմու-
թեամբ հետեւէին անոր:

Անոնց օրինակով սորվեցէք դուք ամեն ջանք

ի գործ դնել, որ ճանչէք այն ճանապարհն ուսկէ Աստուած կ՚ուզէ դէպ ի իրեն առաջնորդել բը-ձեզ. և զայն ճանչելնէդ յետոյ՝ իմ վերը ցուցուցած զանազան միջոցներն ի գործ դնելով, գացէք նոյն ճանապարհէն աներկիւղ սրտիւ, և մէկ մի այլ դուրս մի՛ ելնէք անկէ ։

Մանաւորապէս ասկէ կախեալ է ձեր երջանկութիւնը թէ՛ այս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ ։ Նոյն կենաց վիճակին ուր Աստուած կը հրաւիրէ զձեզ, ընդունելու որ լինիք, իբրև մէկ գրաւ մի կ՚ունենաք թէ՛ այս աշխարհիս վերայ հանգիստ կեանք վարելու, և թէ երկնից մէջ անմահ փառքը ժառանգելու ։

Որ ո՛ր և իցէ վիճակ մի որ ընդունիք, ջանացէք, սիրելի որդեակք իմ, հաւատարմութը կատարելու անոր պարտաւորութիւնները ։ Ամէն վիճակի մէջ բարի վարքը ճշմարիտ երջանկութեան աղբիւրն է. ուստի չկրնար մարդ ճշմարտապէս երջանիկ լինիլ, թէ որ միշտ առաքինի և պարկեշտ չէ ։ Թէ որ դժուար բան է առաքինութեան և բարեպաշտութեան ճամբաներուն մէջ միշտ հաստատ քալել, ապա մեծ մեծ օգուտներ կայ անկէ քալելու՝ եթէ ընաւ չըմոլորիք ։

Եւ որովհետև մեր երջանկութիւնը բոլորովին մեզմէ կախեալ չէ, և անոնք՝ որոնց հետ պիտի կենակցիմք, կրնան զմեզ կամ երջանիկ կամ դժբաղդ ընել, ուստի պարտք կը համարիմ ինձ խրատներ ձեզ՝ որ եթէ մի ամուսնութեան

վիճակին ընդունելու լինիք, հարկ է ձեզ այն կապը հաստատելնէդ յառաջ ճանչել ոչ միայն այն անձին իմաստուն վարքը, այլ և անոր բարքին ու վարքը, զոր պիտի ընտրէք ձեզ հարսնութեան, որպէս զի յետոյ անօգուտ տեղ չզղջաք:

## ԳԼՈՒԽ ԻԸ.

Տղայք ծնողներուն դէմ ընելիքն հնազանդութիւնն, և աշխարհիս մէջ շատ անգամ հանդիպած վտանգները:

Ժամանակս և աշխատութիւնս կորսնցուցած կ'ըլլայի, սիրելի որդեակք իմ, առաքինութեան սէրը բարոյական դասերով՝ ինչպէս որ մինչև այս տեղ ըրի, ջանալով ձեր սրտին մէջ շինելու, թէ որ դուք ևս ձեր կողմէն հոգ չըտանիք զգուշանալ անառակ տղայոց խօսքերէն և օրինակներէն, որոնք՝ ինչպէս ես կը կարծեմ, խիստ գէշ ժայռեր են, և խիստ վախնալ պէտք են անոնցմէ անփորձ երիտասարդները:

Շատ չար և անառակ տղայք կան, որոնք գէշ խրատներ կուտան՝ իմ առածներուս գըլխովին հակառակ, զորոնք ձեր մտաց մէջ տպաւորելու համար ձեռքէս եկած ջանքն ըրի: Այն ուրիշներ ևս որոնք կ'ըսեն՝ թէ երիտասարդական հասակը զուարճութեանց եղանակին (էյեամն) է, և թէ խենթութիւն է ուսմամբ և

աշխատութեամբ զայն անցընելը ։ Ուրիշներն ալ կը խրատեն՝ թէ պէտք է ամէն մարդոց յարմարիլ, և որու հետ որ կը տեսնուի մէկը, նորա օրինակին հետեւելու է ։ Կը գտնուին այնպիսիներ ալ, որ ձեր պարկեշտ և բարի վարքը ծաղր կ՚ընեն ։

Ահա ասոնք և ասոնց պէս ուրիշ շատ հակառակ խօսքեր կը լսէք հարիւրաւոր տղայոցմէ, զորոնք կ՚երեւի թէ դժոխքը դուրս փսխած է երկրիս երեսը, փորձելու և մոլորեցընելու համար զանոնք որ կ՚ուզեն բարեկարգ և բարի օրինակ լինել ուրիշներուն ․ բայց դուք մի խաբուիք անոնց խաբեբայ չար զրոյցներէն ։ Ձեզ երեսն ի վայր կ՚անարգեն, վասն զի ձեր բարեկարգ ընթացքն իրենց անառակութեանց լռիկ յանդիմանութիւն մի է ․ բայց ստոյգ գիտցէք որ իրենց սրտին մէջ կը յարգեն զձեզ և ձեր երջանիկ վիճակին վերայ ալ կը նախանձին ։ Գուցէ նաեւ երբեմն ձեր հաստատուն առաքինութիւնը տեսնելով՝ կը պատուեն զձեզ, մինչեւ ձեր առջեւն իրենց անմիտ կատակներն ալ կ՚ամչնան ընելու ։

Անառակ տղայոց առաքինութիւնը պատուեցին

Բերնարդինոս Սիենացին իւր ուսման ժամանակ շատ անգամ հանդիպեցաւ անկիրթ և չար տղայոց մէջ գտնուիլ ․ բայց որովհետեւ ամէնքն ալ կը ճանչէին նորա առաքինութիւնը, ուստի չէին կրնար անոր արժանաւոր եղած պա-

տուր չտալ ։ Իր ներկայութիւնը սանձ մը էր, որ մինչեւ խիստ անառակ տղայն կը զսպէր ։ Մի քանի տղայք մէկտեղ ժողվուած առեններնին որ երեւալու ըլլար նա, ամէնքն մէկէն կը լռէին․ «Լո՛ւռ կեցէք, կ՚ըսէին իրարու, Ներսապուխ-նոն հոս է» ։

Բայց թէպէտեւ լիրբ տղայք ձեզ դէմ արհամարհութիւն միայն ցուցնելու ըլլին, միթէ դուք առաւօտէն չէ՞ք վարձատրուիր ձեր խղճմտանաց բարի վկայութեամբն եւ բարեկիրթ մարդոց ձեզ տուած յարգութեամբ ։ Մի միայն առաքինի մարդ կրնայ մեզ պատիւ ընել, որուն անթիւ անառակ տղայք չեն կրնար վնասել․ եւ ուրիշներուն մեր վրայ ունեցած կարծիքը չէ, այլ մեր անձին վրայ մեր ունեցած կարծիքն է որ կրնայ երջանիկ ընել զմեզ ։

Բայց դուք որովհետեւ խեռ տղայոց անամօթ եւ անպարկեշտ լեզուին դայթակղութեան դէմ չէք կրնար երկար դիմանալ եւ քաջութեամբ յաղթել, ուստի մեծ իմաստութիւնն այն է՝ որ անոնց հաղորդակցութենէն հեռու փախչիք ։

Լիրբ եւ անառակ տղայոց օրինակն եւս վտանգաւոր ժայռ մը է, ուսկէ զգուշանալ պէտք էք․ վասն զի պէտք չէ կարծել՝ թէ ամէն երիտասարդ տղայք իմ տուեցուցած իմաստուն կանոններուս համեմատ կը վարուին ։ Շատերը կը տեսնէք դուք որ գլխովին ներհակ ճամբաներու մէջ կը քալեն․ եւ զայս իրաւունք չունի համարիք ձեզ շիտակ ճամբէն մոլորելու ։

Եթէ տեսնէք դուք որ անթիւ յիմար մարդիկ ինքզինքնին իբրեւ խաղ գահավէժ տեղէ մի վար կը ձգեն, դուք չէ թէ անոնց չէք հետեւիր, այլ իրենց կուրութեան վերայ եւս կը խղճաք և կը սոսկաք։ Արդ՝ նոյնպէս սոսկալ պէտք էք, երբոր անառակ երիտասարդները չար օրինակ տալու լինին ձեզ։ Անոնք եւս այլոց պէս յիմար մարդիկ են. բայց ասոնց կորուստ ամենեւին զձեզ իրենց հետ չմոլորեցնելէն ի զատ, աւելի իմաստուն եւս կ՚ընեն իրենց յիմարութեամբը։ Մտերմիդ բերէք թէ ուրիշին օրինակը միշտ կանոն չպիտի լինի մեզ. այլ անոնց միայն պիտի հետեւինք, որոնց վարքը գլխաւորն լեցուն է գիտութեամբ. բայց երբոր ճշմարտութեան ճամբէն անոնք եւս մոլորելու լինին, այն ժամանակ անոնց հետեւելու տեղերնիս, պարտաւոր ենք հեռու փախչիլ անոնցմէ։

Երկու ուսումնական երիտասարդաց իմաստուն վարքը։

Ինչ ատեն սուրբ Գրիգոր և սուրբ Բարսեղ իրենց ուսման մտադրութեամբ կը պարապէին, իրենց բոլորտիքը պատեր էին մոլի և անառակ տղայք։ "Բայց մենք, կ՚ըսէ սուրբ Գրիգոր, այն ընդհանուր մոլութեան մէջ նմանութիւն կը բերէինք բանաստեղծներուն ըսածին պէս՝ գետի մի, որ ծովու լեղի ջրերուն մէջ իւր անուշութիւնը կը պահէ, կամ՝ անասնոյ մի՝ որ կրակին մէջ անփուտ կը մնայ առանց տաքութիւնը զգալու։ Մենք անոնց հետ ամենեւին

տեսութիւն չէինք ըներ, որոնց օրինակը կարող էր զմեզ գլխէ հանել: Մենք Աթէնքի մէջ երկու ճամբայ միայն կը ճանչէինք, մէկը եկեղեցւոյն, միւսը դպրատան: Իսկ այն ճամբաներն՝ ուսկէ կ'երթըցուէր աշխարհային հանդէսները, թատրոնները, հասարակաց խաղալու տեղուանքը, պարահանդէսները, երբէք չէինք ճանչեր»:

Ձեզ օրինակ առէք, սիրասուն որդեակք իմ, այս երկու սուրբ երիտասարդաց վարքը. անոնց հետ միայն յաճախ տեսնուեցէք, որոնք կրնան ձեզ օրինակ տալ քրիստոնէական առաքինութեանց: Բարի խրատներն իբրեւ կանոն սիրով ընդունեցէք. և ընդհանրապէս խօսելով՝ նայելու էք որ խրատն անփորձ երիտասարդներէն չընդունիք, այլ խելացի մարդոցմէ՝ մանաւանդ ծերունիներէն ընդունիք. որոնք տարիքով և փորձառութեամբ իմաստուն եղած են. բայց հասարակօրէն տղայք չեն ուզեր անոնց մօտ երթալ խորհուրդ հարցնել, բան սորվիլ, մանաւանդ անոնցմէ հեռու կենալը պարծանք կը համարին իրենց, մենք իրենցմէ շատ բան գիտեմք ըսելով՝ մարդու տեղ չեն դներ զիրենք, և կ'անարգեն ևս:

Դառնամք նորէն չար օրինակաց վերայ խօսելու, որոնք խեղճ երիտասարդ տղայոց մեծագոյն մասին գլխէ ելնելուն ցաւալի պատճառն է. ուստի պարտաւոր եմ ըսել ձեզ՝ թէ առանց շարունակ հոգ տանելու չար տղայոց օրինակէն հեռու փախչելու և դէմ կենալու, անկարելի

է անմեղութեան վիճակին և առաքինութեան սիրոյն մէջ մնալ : Դժբախտաբար եթէ յանցանքի մէջ ինկնելու լինիք , զգոյշ կեցէք չըսել այս խօսքը , թէ՝ Ահա ուրիշ տղայք եւս կ'ընեն . և մի կարծէք թէ ասով կրնաք արդարացընել զձեզ :

Ուրիշներուն պակասութիւնները չեն կրնար մերինն արդարացընել : Գործուած չարութիւնը բնաւ ներելի չկրնար լինիլ՝ թէպէտ և գործողները անթիւ և անհամար հոգի ըլլան : Անիկայ միշտ չարութիւն կը համարուի , և հետեւապէս արժանի է միշտ արհամարհելու և անկէ միշտ հեռի փախչելու :

Պէտք չէ վախնալ թէ մատով կը ցուցընեն զմեզ՝ ըսելով . « Ահա եզական մարդ մի » , երբոր չուզեմք միանալ մոլութեան կուսակից կամ գերի եղողներուն հետ : Այս եզականութիւնն (1) որքան որ հարկաւոր է մարդուս , այնքան եւս աւելի գովելի է , և առաքինի մարդը զայն իրեն փառք և պարտաւորութիւն համարելու է :

Տովբիթի եզականութիւն։

Տովբիթ երիտասարդը կը տեսնէր որ ժողովուրդն ամեն օր կռոց առջեւ խունկ կը նուիրէին . և ինքն այն բազմութեան օրինակին չհե-

(1) Եզականութիւնը տեսակ մի հպարտութիւն է , որով մարդս չուզեր ուրիշին փառաց կամ գործոց յարմարիլ , թէեւ բարի լինին , այլ ինքն իր յատկութեամբ կուզէ միշտ առանձին կամ մեկ հատիկ լինել աշխարհիս վերայ :

տեւեկէն ի վեր, իւր վարքովն անոնց կը հակառակէր. և երբոր ուրիշները բարձր տեղուանք կ՚ելնէին կուռց պաշտօն մատուցանելու, այս ջերմեռանդ Իսրայէլացին մինակ կ՚երթայր իւր պաշտօնը ճշմարտին Աստուծոյ նուիրելու Երուսաղէմայ տաճարին մէջ։

Այս առաքինի օրինակիս վերայ ձեր վարքը շինեցէք. սիրուն որդեակք իմ, չար օրինակներուն յանդուգն յարձակման քաջասրտութեամբ դէմ դրէք. և եթէ տեսնէք որ բոլոր մարդիկ ինքզինքնին անառակութեան տուած են, դուք միշտ հաստատուն կեցէք իմ հոգեշահ խրատներուս մէջ. զորոնք աշխատեցայ ձեր սրտին մէջ տպաւորել։

Ուրիշներուն չար օրինակներին անարգած ժամանակնիդ. պիտի նայիք որ դուք ևս ուրիշներուն համար գայթակղութեան քար չըլլիք։ Տեղայոց մեծ մասին դէշ ըլլալուն պատճառ իրենք իրենց մէջ մեկզմէկ գլխէ հանելն է. ուրեմն մի զրուցէք այնպիսի բան մի՝ որ ձեր ընկերին գայթակղութիւն մի տայ, այլ ինչպէս ճշմարիտ բարեկամ այնպիսի բարի խրատներ տուէք, որոնց պէտք ունին։ Բայց ձեր վարքն ևս այնպէս ըլլալու է որ խօսքերնուդ հետ գործերնիդ ևս յարմար գան. վասն զի իմաստուն խրատներով զանոնք աղէկութեան յորդորելնիդ անօգուտ կը լինի, թէ որ վնասակար օրինակներով չարութեան միտեցընէք նոցա սիրտը։ Չկայ արդար և ընկերութեան մէջ չար օրինակներէն աւելի գա-

ւաղի բան մի, և ոչ դուք՝ որքան մեծ զգուշութիւն եւս ընելու լինիք, կրնաք չտալ ուրիշին գէշ օրինակ մի ։ Ուրիշները գայթակղեցնելով դուք ձեր անձին կը վնասէք, և միանգամայն գէշ անուն կը ստանաք՝ թէ դուք անձամբ յանցանք մի գործէք և թէ ուրիշին գործել տաք ։

Ես որոշեալ միտքս դրած եմ ցուցնել ձեզ այս գլխուս մէջ այն ժայռերն՝ ուսկէ զգուշանալ պէտք էք չզարնելու, որպէս զի առաքինութեան մէջ յարատեւէք, կ՚ուզեմ այս տեղս մի քանի խօսք եւս կատակերգութեանց կամ թատերական տեսարաններուն և պարահանդէսներու վերայօք զրուցել ։

Երիտասարդաց մեծագոյն մասն այնպէս կը կարծեն, թէ առէպ թատրոն երթալով ամենեւին և ոչ պզտի վնաս մի կը ստացուի անկէ. բայց իմաստուն և առաքինի մարդիկ միաբան կը հաստատեն՝ թէ թատրոններուն պէս վտանգաւոր և վնասակար բան չկայ, մանաւանդ անփորձ և անզգոյշ տղայոց համար ։ Ես այս տեղս չեմ ուզեր մէկիկ մէկիկ գրել այն մարդոց խրատունքները զորանք իմ զրուցածիս իբրեւ ապացոյց մէջ կը բերեն, այլ միայն ձեզ գաղափար մի տալու համար այն վտանգին վերայօք, ուրտեղ թատրոն գնացող տղայք անզգուշաբար կ՚իյնին, բաւական կը համարիմ բերել ձեզ մէկ հեղինակի մի կարծիքն, և իւր որդւոյն զրուցածը ։

Ռասինի կործիքն եւ օրինակը։

Այս բանս հեղինակս է երեւելի գաղղիացին Ռասին, որ իւր սաստիկ կիրքերէն եւ փառասիրութիւնէն մղուելով, առաջին անգամ ինքզինք բոլորովին թատերական գործեր յօրինելու տուած էր. եւ միշտ անոնց կը գրաւէր երջանիկ յաջողութեամբ. եւ կ'երեւէր թէ անոր չափ խելք տուող չկայր այս ուսմունքս յառաջացընելու, յօժարութիւն մի ձգելու հասարակութեան սրտին մէջ, եւ անոր պաշտպան կենալու։ Բայց երբոր իւր կրից եռանդը դադրեցաւ եւ ինքն իրեն եկաւ, մտադրութեամբ հոգւոյ աչօք կշռեց իւր վարքը, եւ փոխանակ ինքզինքն արդարացընել ուզելու, դատապարտութեան արժանաւոր համարեց՝ դատապարտելով տեսաբաններն, ինչպէս որ բնաւ։ Յետոյ թատերական գործեր յօրինող հեղինակները կը նմանեցնէր հասարակութեան թոյն խմցընողներուն։ Ռասին այս իւր կարծեաց հաւանելով, ոչ թէ միայն հըրաժարեցաւ ամեն յետոյ թատերական բան գըրելէ, այլ եւ իրեն օրէնք մի դրաւ թատրոնի մէջ եւ ոչ ոտք կոխելու, եւ իւր որդւոյն ուրիշ բան չէր պատուիրեր, այլ միայն կը զգուշացընէր որ ամենեւին թատրոն չերթայ։ Ահա այս բանիս վկայութիւն՝ իրեն որդւոյն տար վերայօք գրածը։

"Դուն գիտես, սիրելի զաւակս, ինչ որ
"քեզ արդէն զրուցած եմ թատերական գործո-
"ղութեանց եւ կատակերգութեանց վերայօք։
"Մ՚աւելի քաղքին մէջ թատերգութիւն մի ախ-

«տի կատարուի այս մօտերս ։ Խիստ մեծ բան է
«քեզ և ինծ համար՝ որ դու չերթաս հոն ։ Թա-
«գաւորն և բոլոր պալատի մարդիկ գիտեն՝ որ
«ես իմ վերաս պարտաւորութիւն դրած եմ այլ
«թատրոնի մէջ ոտք չկոխելու. ուստի դէշ կար-
«ծիք մի կ՚ունենային քու վերադ, թէ որ այդ-
«ծաղէկ հասակիդ մէջ իմ խրատներս զանց ընե-
«լու լինիս ։ Աղէկ գիտեմ որ մարդոց քով պա-
«տիւդ չես կորսնցըներ թատրոն երթալով,
«բայց դուն ոչի՛նչ բան կը համարիս Աստուծոյ
«առջեւ անպատիւ և անարգ ըլլալը ։ Կարծես
«դու թէ մարդիկ եւս չե՞ն զարմանար, տեսնե-
«լով որ իմ տուած խրատներուս հակառակ կը
«վարուիս ։ Մտածէ մէկ մի որ Պորկոնեայի երի-
«տասարդ դուքսը, որ այս տեսակ զբօսանքները
«խիստ աւելօք կը սիրէ, դեռ մինչեւ ցայսօր ա-
«մենեւին մէկ տեսարան գացած չէ »։

Ականջ մի տաք ուրեմն այն ազգաց, որոնք դէմ կենալով կ՚ըսեն՝ թէ կատակերգական և թատերական տեսարաններն ամենեւին վնաս մի չունին ։ Մայրին այս մասին մէջ ամենէն աւելի միտուած և խելք տուած էր, և դուք հիմա կարդացիք նորա հարազատ կարծիքը ։ Ասիկայ ձեզ կանոն մի կրնայ լինել, ձեր վրայ առնելով իւր ուղղութիւնը ։

Մեր ազգին մէջ և այն մի քանի երեւելի քաղաքաց մէջ միայն, քանի մի տարիէն ի վեր է սկսուած է այս տեսակ հրապարակական ներկայացումներ ։ Անոնք Եւրոպայի տեսարաննե-

բուն. ազատ ու համարձակ և մարդկային հա-
մեստութեան ներհակ ներգործութիւններն չու-
նենալով, անոնց փոխանորդներն եւս չունին։ Թա-
տերական ներկայացմանց աւելի գրգռիչ և
անփորձ երիտասարդաց դիւրազգաց կիրքերը
փոթորկող մասերն են սիրահարական գործերը.
և որովհետեւ անոնք նորահաս օրիորդաց միջա-
մտութեամբ կը խաղացուին, նոցա հրապուրիչ
տեսքն ու կերպարանքը միայն բաւական լուց-
կիք մի է պատանեկութեան դիւրավառ կրից
բորբոքման։ Վասն որոյ բարեբախտ կը համա-
րիմ ես զիս որ ազգային ներկայացումներն այս
տեսակ արարուածներէն չեն, այլ միայն ազգա-
յին նշանաւոր դիպաց և դիւցազնագործու-
թեանց անձնուրեալ պատմութիւնքն են. իսկ
ուրիշ արտաքին արարուածներն եւս բարոյա-
կանութեան վերայ հիմնուած գործեր են։ Ա-
նոնց օգուտները, զոր չեմք կարեր երբեք ու-
րանալ, հասարակութեան յայտնի եղած են. և
անոնց պատուական խօսելու՝ այս տեսակ ներ-
կայացումները, որոնց դերասանները միայն ա-
րական ցեղէ են, չունին իրենց մէջ իգացու-
ցիչ և թուլամորթ տեսիլներ, վասն որոյ փո-
խանակ երիտասարդութեան աշխոյժն իզօրէն
թուլցընելու և հանճարն ու միտքը ծնգելու
և բթելու և սիրտը դիւրաբեկելու, ընդհակա-
ռակը կը վառէ ու կը բորբոքէ այրական վեհ-
անձնութեամբ և ազգասիրական եռանդով, և
նոցա սիրտն ու միտքը կը կրթէ և կը հրահան-

դէ առաքինական բարեմասնութեանց ։

Իմ խօսքս մի միայն եւրոպական թատերաց վերայ են, որոց ներկայացումները թէպէտեւ բարոյականութենէ զուրկ չեն, այլ բատ որում նորա արտասանած լեզուն մեր ազգի պատանեաց շատերուն անծանօթ է, վասն որոյ առանց կարենալու նորա ասացուածքներէն իմաստ մի քաղել, բարոյապէս օգուտ ու շահ կրթել, այլ մի միայն դերասանուհեաց արտաքին հրապուրիչ պատկերներէն դիւթուելով, և իրենց անմեղ սիրտերնին և զգայմունքնին թունաւորուելով. վրդովեալ կրիւք յետ կը դառնան, և կը վնասուին թէ՛ նիւթապէս և թէ բարոյապէս ։

Վասն որոյ ահա ես եւս Ոսաւինի իւր որդւոյն տուած պատուէրը ձեզ կուտամ, սիրելի որդեակք իմ, ամենեւին ոտք չկոխէք այնպիսի տեղուանք, ուրտեղ դիւրաւ կը կորուսնցնէք ձեր անմեղութիւնը. իսկ երբ կատարեալ հասակի մէջ կը լինիք, կրնաք այն ժամանակ երթալ առանց վտանգի. վասն զի ձեր մտաց դատողութիւնն և իմացականութիւնը կատարեալ լինելով կրնաք աղէկը գէշէն որոշել ։

Պարահանդէսներն եւս քիչ վտանգաւոր չեն անփորձ երիտասարդաց համար, որ գոնէ թատրոններու բարոյական մասերն այլ չունին ։ Երեւելի պալատականին մէկը, որ աղէկ կը ճանչէր նոցա վտանգները, եպիսկոպոսի մի հետ անոնց վերայօք խօսելով՝ այսպէս ըսաց. "Ես ամենե-

«ւին չէի կարծեր թէ պարահանդէսներն այսքան
«վտանգաւոր լինին։ Այս ժողովներուս մէջ հա-
«ւաքուող անձինք սովորաբար էրիկ ու կնիկ մար-
«դիկ միատեղ կը լինին, որոնք եթէ առանձնու-
«թեան մէջ շատ նեղութի կը կրեն իրենց կրից
«յաղթելու, այսպիսի տեղուանք որ գտնուին,
«դիւրաւ կը յաղթին փորձութենէ, ուր ճգնա-
«ւորք անգամ այս հանդէսին զարդարանքները,
«ջահերը և քաղցրաձայն նուագարանները տես-
«նելով ու լսելով՝ կը վառին կը բորբոքին։ Ասոր
«համար ես այնպէս կը կարծեմ՝ որ քրիստոնեայ
«եղողը հեռու փախչիլ պէտք է պարահանդէս-
«ներէն. և կ'երեւի ինձ՝ թէ կառավարիչներն,
«որ մարդոց բարի վարուց հոգ տանելու հա-
«մար կարգած են, արգիլել պէտք են զիրենք
«հոն երթալու»։

Կարծեմ որ, սիրելի որդեակք իմ, ձեր երթա-լու ճանապարհը ուղղեցընելու համար յարմար ինչ որ կայ՝ խօսեցայ ձեզ, հեռացընելով միան-գամայն ձեզմէ այն ժայռերն՝ որոնց խիստ շատ անգամ կը զարնուիք։ Նաև մի կարծէք բնաւ թէ ձեզմէ պահանջածս դժուար բան մի է ի գործ դնելու։ Մինչ անցեալ դարերուն մէջ ձեզ նը-կարագրած եղանակներս՝ որով պէտք էք վարուիլ աշխարհիս մէջ, ամենեւին դժուարութիւն մի չունին, նաև ձեզ հասակակից և վիճակակից անհամար տղայք ի գործ դրած են, և այնպէս կը վարուին։

Այս լսածներուս զօրաւոր փորձերը տեսաք

ձեզի դրած օրինակներուս շատերուն մէջ. բայց առաւել պիտի համոզուիք ինծի՝ եթէ Հարանց վարքը կարդալու լինիք, որու մէջ ներկայացուած սուրբ մարդիկն ամէն ժամանակ և աշխարհիս ամէն կողմն երեւելի հանդիսացած գերազանց առաքինութիւններով, նաեւ խիստ դժուար պարագաներու, հակառակ գործերու և սոսկալի հալածանքներու մէջ։ Այս գիրքս, զոր օրը գոնէ մէկ քառորդ ժամ պէտք էք կարդալ, խիստ շահաւոր կը լինի ձեզ, ձեր սրտին մէջ եռանդ մի կը ձգէ նոյն ճշմարիտ դիւցազանց նմանելու, այս աշխարհիս մէջ ձեր երջանկութիւնը կը շինէ, և հանդերձեալ կենաց մէջ յաւիտենական և կատարեալ ուրախութիւնն ստանալու ապահով յոյս կուտայ։

ՎԱԽՃԱՆ

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ 9։

## ԳԼՈՒԽ Ա.

Թէ ո՛րչափ հարկաւոր է որ տղայք պզտիկութենէ սկսեն աստուածութեան հետեւիլ. 13։
Օրէնսդրի մը հանճարեղ սրամտութիւնը. 15։
ԱՌԱԿ. Երկու նաւավարները. 16։

## ԳԼՈՒԽ Բ.

Հետեւեալ ըմպելիքներս ըստ կենդանեն տղայոց՝ թէ դժուար բան է մանկութեան ժամանակ սորված չար սովորութիւններն ուղղել. 18։
Երիտասարդ իշխանի մը վերայ կանխատեսութիւն՝ երօք ապագեալ. 18։
Գէշ կրթութեամբ մեծցող իշխանի մը շրջումը. 20։
ԱՌԱԿ. Կաղնին և նորատունկ ծոյս. 22։
Ազնաւորի մը իմաստուն վարմունքն իւր աշակերտներուն հետ. 24։

## ԳԼՈՒԽ Գ.

Աստուածպաշտութեան վերայ. 25։
ՅՕԴՈՒԱԾ Ա. Աստուածպաշտութենէ աւելի հարկաւոր բան չկայ. 26։
Թագաւոր եղող հովիւը. 27։
ՅՕԴՈՒԱԾ Բ. Ամեն բանէն աւելի աստուածպաշտութիւնն ընտրելի է. 28։

Լուսաւորիչներու Բազմաւորին եւ որդւոյն տուած խըրատները. 29:
ՅՕԴՈՒԱԾ Գ. Շերամաբուծութիւնը մեզի ինչպէս պէտք է ընել. 31:
Շերամապահութեան շատ հետեւանքները. 32:
Սովորական իմաստութեան նշանաւոր խօսքերը. 33:
ՅՕԴՈՒԱԾ Դ. Շերամաբուծութեան պարագաները ներքին կերպով ի գործ դրուիլ. 34:
Շերամաբուծութեան ու ջերմութեան պէտք. „

## ԳԼՈՒԽ Դ.

Շերամաբուծութեան այժմեայ վիճակները. 38:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Շերամ. „
Շերամի հաճոյ եղած ապաշանքը. 40:
ՅՕԴՈՒԱԾ Բ. Մորի պատուաստ. 42:
Մորի պատուաստին մէջէն առնուած յաջողութիւնը. „
Շերամին արտօնի սենեկապետի մի տորի պատուարագ փեսաներուն համար հրաշալի կերպով փորձած ապացուցը. 44:
Կաղապաշտ երկրագործի մի ձրիապահելէն տուած դասը. 46:
ՅՕԴՈՒԱԾ Գ. Սնկոց հողերութեան առնել. 47:
Պատէժ կրող սրբապիղծները. 48:
ՅՕԴՈՒԱԾ Դ. Շերամաբուծութեան գործերուն ընթերցումը. 51:
Մեղաւորի մի հոգեւոր գործեր կատարած տարին գալը 52:
ՅՕԴՈՒԱԾ Ե. Պերճանքութեան առ Շենաորի կայան. 54:
ՅՕԴՈՒԱԾ Զ. Պերճանքութեան առ պահապան հրեշտակն. 55:

Պահապան հրեշտակին առաջնորդութեամբ ճանապար-
հորդութիւն ընող Երիտասարդը· 56:

## ԳԼՈՒԽ Ե.

Անձրեւութեան վերայ· 59:
Անձրեւութիւնը նորատունկներուն աղէտալի հետեւանքը 60:
Լուտովիկոս Բոնափարթին եւ իշխաններուն մէկուն
հետ ըրած խօսակցութիւնը· 61:
Լօլին հրեայ տղայոց երեսն կրճին մէջ ունեցած ըր-
ճանալէ հաստատութիւնը· 63:
Բրիտանեայ տղու մը սուրբ հաւատոյ մէջ ունեցած
տեւողական հաստատութիւնը· 68:

## ԳԼՈՒԽ Զ.

Անձրեւութեան պահանջած խնամքներն եւ նախազգու-
շութիւնները, եւ ջանիկեայ պահպաններու միջոցները· 70:
Գեղեցիկ նմանութիւն սուրբ Գրքէն· 71:
Երիտասարդի մը ըրած գեղեցիկ աղօթքը· 73:
Ամենասուրբ հաղորդութեամբ փրկուած տղայն· "
Աչուըներուն համարձակ նայուածքէն յառաջ եկած
վնասները· 76:
Անառակ տղու մը ցաւալի մահը· 78:

## ԳԼՈՒԽ Է.

Սուտ բարեկամներուն վերայօք· 79:
ԱՌԱԿ. Խնձորի ծառն եւ պտուղներէն մերկացած· 80:
Սուտ բարեկամներուն պատճառաւ գէշ եղող երի-
տասարդ իշխանը· 84:
Երկրորդ օրինակ· 85:

Երրորդ օրինակ՝ որ առաջիններէն աւելի նշանաւոր է. 86:

## ԳԼՈՒԽ Ը.

Նոյն նիւթին վերայօք, այսինքն նոյն վտանգին, որոնց մէջ կ'ինկնին տղայք մեր ընկերներու հետ խառնուելով. 90:
Ընկերք և մեր բարեկամներու վերայօք երկու առակ տղայոց ունեցած միտքը. 91:
ԱՌԱԿ. Պզտի մուկն և ծեր կատուն. 93:
Ծաղկահասակ տղուն յառաջ մահը. 95:

## ԳԼՈՒԽ Թ.

Անօգտակար և գէշ գրքերը. 97:
Տղու մը գէշ գրքեր կարդալէն գէշ ելլելը. 98:
Ուրիշ օրինակ. 101:
Գէշ գրքերու դէմ երիտասարդի մը ցուցուցած սոսկումը. 105:
Գէշ գրքերուն պատճառած գործերուն գեղեցիկ օրինակ մը. 106:
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԿ. Երկրագործն ու տղայն. 108:

## ԳԼՈՒԽ Ժ.

Տղայոց պարտաւորութիւններն իրենց ծնողաց դէմ. 110:
Առաջին պարտաւորութիւն: 111:
Երկրորդ պարտաւորութեանց մէջ հաստատիմ և իւր հօրը հրամաններուն անհնազանդ եղող տղայն. „
Որդիական հնազանդութեան կարևոր օրինակներ. 114:
Անզգամ տղու մը սոսկալի պատիժը. 115:

Երկրորդ պարտաւորութիւն. 116:
Իր հօրմէն անիծուած տղայն. ,,
Տասը մանկանց սոսկալի պատիժը, որոնք իրենց մօրն հարկաւոր եղած պատիւը չըրոյին. 117:
Տղու մը իր հայրը նախատելուն համար գտած պատիժը. 119:
Իր յանցանքն քաշող տղայն. 120:
Երրորդ պարտաւորութիւն. 121:
Գեղեցիկ օրինակ որդիական սիրոյ. ,,
Ուրիշ օրինակ որդիական սիրոյ. 124:
Երրորդ օրինակ որդիական սիրոյ. 125:
Չորրորդ օրինակ որդիական սիրոյ. 127:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Տղայոց իրենց դաստիարակաց և վարժապետաց դէմ ունեցած պարտաւորութիւնները. 130:
Ինքնակալէ մը իմաստուն վարմունքը. 131:
Վարժապետին անաչառութեամբ կարգի մտնող աշակերտը. 132:
Աշակերտի մը իր վարժապետաց դէմ ունեցած չափազանց երախտագիտութիւնը. 134:
Երախտագէտ առիւծը. ,,
Ապերախտ երիտասարդի մը եղած յանդիմանութիւնը. 138:
ԱՌԱԿ. Իր տէրը խածնող շունը. 139:
Գեղեցիկ օրինակ երախտագիտութեան. 142:
Ուրիշ օրինակ երախտագիտութեան. 143:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Վարժապետաց անաչառութիւնը պէտք չէ որ աշա-
կերտաց սէրը պակսեցընէ անոնցմէ. 144։
ԱՌԱԿ. Որին է այգեգործը. 145։
Իր մօրը ներողամտութեան ըրն գնացող տղայն. 148։
Ինքն իր անձին թողուած երեխաները. 149։
Թագաւորի մը գեղեցիկ խօսքերը. 150։
Երեխաները իշխանի մը իմաստուն պատասխանը. 151։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Հնազանդութեան վերայ. 152։
Թէ որո՞նք են պատճառներն որ կը պարտաւորեն ըն-
տղայք իրենց վարժապետաց հնազանդ ըլլալ. 153։
Երեխաները իշխանի մը խելացի կրթութիւնը. »
Հնազանդութեան օրինակ. 154։
Կամակորութեան զարմանալի օրինակ մը. 160։
Աշակերտի մը զարմանալի հնազանդութիւնը. 162։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Տղայք իրենց ընկերաց հետ ի՛նչպէս պէտք է վարուին. 165։
Առաջին պակսութիւն. »
Գոռոզութեան պատիժ կրող երեխաները. 166։
Գոռոզ տղու մը խոնարհիլը. 168։
Համեստ թագաւորը. 169։
Օրինակ ազնիւ համեստութեան. 170։
Երկրորդ պակասութիւն. 171։
Հռովմայեցի երեխաներու մը սքանչելի խելացիու-
թիւնը. 173։

Երրորդ պաշտօնութիւն · 175։
Դիւրին անուն երեւելի մարգարէին խօսքերը · 176։
Պատիժ կրող ծառաները · 178։
Սպասաւորութիւն ընելէն յառաջ եկած գէշ հետեւանքները · 179։
Օտարութեան մարդու մը դէմ ըրուցուած ըռարձակ կապակը · 180։
Չորրորդ պաշտօնութիւն · 181։
Իւր չարութեան պատիժը գտնող տղայն · ”

## ԳԼՈՒԽ ԺԵ·

Թէ ի՛նչպէս պէտք էն վարուիլ տղայք աղքատաց հետ, և ի՛նչպէս ողորմութիւն ընելու էն անոնց · 187։
Ողորմածութեան օրինակներ աստուածաշնչին գրքոյ մէջ · 188։
Հեթանոսներուն աղքատաց համար ըրուած գեղեցիկ խօսքերը · 193։

## ԳԼՈՒԽ ԺԶ·

Բարեգործութեան օրինակներ · 194։
Առաջին օրինակ · ”
Երկրորդ օրինակ · 195։
Երրորդ օրինակ · 197։
Չորրորդ օրինակ · 198։
Հինգերորդ օրինակ · 200։
Վեցերորդ օրինակ · 202։
Եօթներորդ օրինակ · 204։
Ութերորդ օրինակ · 205։
Գեղեցիկ օրինակ բարերարութեան · 208։
Գիւղի տղու մը գեղեցիկ պատասխանը · 210։

# ԳԼՈՒԽ ԺԱ.


Ճշմարիտ արժանաւորութեան վերայ. 211.

ՅՕԴՈՒԱԾ Ա. Ճշմարիտ արժանաւորութիւնը ցե-ղին ազնուութեան վերայ չէ. 212.

Հռովմայեցւոյ մը գեղջուկին խօսքը. "

Ազատ ազնուութեան ծննդոց արժանաւորութիւնն աւելի մեծ պատիւներու նշանաւորացընէ. 213.

Օրինակ մը. "

ՅՕԴՈՒԱԾ Բ. Ստոյգ արժանաւորութիւնը հար-ստութեան վերայ չէ. 215.

Անշահասիրութեան օրինակ. 216.

Անշահասէր դիտողութիւնները. 217.

ՅՕԴՈՒԱԾ Գ. Պատուոյ և իշխանութեանց վերայ. 221.

Թագաւորի մը իմաստուն վարմունքն իւր որդւոյն հետ. 222.

ՅՕԴՈՒԱԾ Դ. Քաջութեան և պատերազմական գոր-ծոց վերայ. 223.

Ասպետի մը խելացի պատասխանը. 224.

Պէյար ասպետին գեղեցիկ խօսքերը. 225.

ՅՕԴՈՒԱԾ Ե. Տաղանդաց և հանճարոյ վերայ. 226.

Ծաղկահասակ հեղինակին ըրած գեղեցիկ շնորհը. 227.

Ողջումն եկող հեղինակը. "

ԱՌԱԿ. Արամազդ, պարկեշտութիւն և միւս առա-քինութիւնք. 228.

Պատիժ գտնող անպարտը. 230.

Արտաքին գեղեցկութեան վերայ. 231.

Կոյսի մը պատկերը. 232.

Պարծենկոտ ագռաւ մը իրաց անարգանքը. 234.

Ասոր նման ուրիշի մը եղած արհամարհութիւնը. 234:
ՅՕԴՈՒԱԾ Զ. Ճշմարիտ արժանաւորութիւնն առաքինութեան մէջ կը կայանայ. 235:
Իմաստասիրի մը գեղեցիկ պատասխանը. 236:
Իշխանի մը իւր ծառաներուն ըրած իմաստուն խօսքերը. 237:
Նարի օրինակ առող պատասխան մը. 238:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Գիտութեանց վերայ. 238:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Գիտութեան յարգը. „
Իմաստասիրի մը գեղեցիկ պատասխանը. 239:
Դիոգինէսին խելացի խօսքը. 240:
Թագաւորի մը գեղեցիկ պատասխանը. 241:
ՅՕԴՈՒԱԾ Բ. Գիտութեան վերայ եղած յարգը. „
Կատարեալ գիտունները. 242:
Գիտութեան մէջ երեւելի եղող պզտի տղայքը. 243:
Իր գիտութեամբն երեւելի եղող երիտասարդը. 245:
ՅՕԴՈՒԱԾ Գ. Գիտութեան օգուտները. 248:
Աղէկ կրթութիւն չունեցող իշխանի մը զղջումը. 249:
ԱՌԱԿ. Գետին մօտ ճամբորդը. 250:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Տղայոց սորվելու ուսմունքները. 252:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Կրօնագիտութեան վերայ. „
Անկրօնութեան ցաւալի հետեւանքները. 253:
Անկրօն տղայոց սոսկալի անկարգութիւնները. 255:
Կրօնին զօրութեամբ առաքինութեան ճամբան մտնող երիտասարդները. 256:

Կրօնի մէջ լաւ կրթուած երիտասարդէ մը կուսակալ
մարդն ամչցընելը. 259:
ՅՕԴՈՒԱԾ Բ. Գրաբար լեզուին վրայ. „
Լեզուագիտութեան օգտակարութիւնը. 263:
Լատիներէն լեզու գիտնալուն մահէն ազատող հի-
ւանդը. 264:
Ուսումն աշխարհագրութեան. 265:
Աշխարհագրութիւն չգիտնալուն համար ծաղր եղող
երիտասարդը. „
Ուսումն ժամանակագրական. 267:
Ժամանակագրութիւն չգիտցող տղու մը ծաղրելի
սխալմունքը. „
Ուսումն դիցաբանութեան կամ առասպելաց. 268:
Տղու մը ըրած մեծ սխալանքը. „
Ուսումն պատմութեան. 269:

## ԳԼՈՒԽ Ի.

Աշխատասիրութեան վրայ. 272:
Աշխատութեամբ բնութեան յաղթելը. 273:
Աշխատասէր երիտասարդը. 275:
Աշխատասիրութեան գեղեցիկ օրինակներ. „

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Ծուլութեան և դատարկակեցութեան վրայ. 279:
Ծուլութեան բանաստեղծական նկարագրութիւնը. 280:
Ծուլութեան չարալի հետեւանքները. 282:
Անպարապականի մը իմաստուն խօսքը. 283:
Դիցաբանութեան մէջէն հանուած գեղեցիկ երա-
բանութեան. 284:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Զբօսանաց ու խաղու վերայ. 286=
Սուրբ մարդու մը ոգեշահ պատասխանը. ”
ՅՕԴՈՒԱԾ Ա. Արգելուած զբօսանքներ. 287=
Զուարճութեան ու իւր ետեւէն եկող վշտերը. 288=
Գեղեցիկ պարկեշտ ուրախութեանց, և անոնց յա-
ւալէ հետեւանքները. ”
Հօր մը իւր որդւոյն գրած խօսքերը. 291=
ՅՕԴՈՒԱԾ Բ. Խաղու և խաղալու ժամանակ պէտք
եղած կանոններուն վերայ. 493=
Կանոն առաջին. ”
Կանոն երկրորդ. ”
Չափազանց խաղամոլութեան զոհ եղող դժբաղդը. 295=
Խաղու վերայ զրուցուած գեղեցիկ խօսքեր. 296=
Կանոն երրորդ. 297=
Գէշ խաղամոլը. ”
Բարկութեան եղնող խաղամոլը. 298=

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Ազատութեան վերայ. 299=
Թէ ի՞նչ է ազատութիւնը. 300=
Ազատութիւնն ի՞նչ համարուած էր Հեթանոսաց քով ”
Իշխանաւոր մարդու մը գեղեցիկ խօսքը. 301=
Ճշմարտութեան սիրոյն համար նահատակ եղողը. 302=
Իշխանն ու իրեն դատապարտուածները. 305=

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Որկրամոլութեան վրայ. 306:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Որկրամոլութիւնն անարգ մոլութիւն մ'է. 307:
Որոգայթը բռնուող որկրամոլը. 208:
ՅՕԴՈՒԱԾ Բ. Որկրամոլութեան չար հետեւանքները 310:
Իւր որկրամոլութեան զոհ եղող երիտասարդը. 312:
Անարգ մարդիկն ու չափը ճանչող տղայն. 313:
Հին ժողովրդեան մը զարմանալի չափաւորութիւնը. 314:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Քաղաքավարութեան վրայ. 317:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Թէ ի՞նչ է քաղաքավարութիւնը. ”
ՅՕԴՈՒԱԾ Բ. Մարդավարութեան ու պիրուն վարմունքի վրայ. 319:
ՅՕԴՈՒԱԾ Գ. Քաղաքավարութիւնն ու մարդավարութիւնը ազնուական վարմունքին մէջ կը կայանայ. 321:
Քաղաքավարութեան վարժապետել. ”
Պատիժ կրող կողպէքները. 323:
Քաղաքավարութիւնը կամ ազնուականութիւնը պէտք է բնական լինի. 324:

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Կենաց վիճակ ընտրելու վրայ. 327:
ՅՕԴՈՒԱԾ Ա. Այս ընտրութեան հարկաւորութիւնը ”
ՅՕԴՈՒԱԾ Բ. Աղէկ ընտրութիւն ընելու համար պէտք եղած նախազգուշութիւնները. 330:

Նապուածային կուշման հասարակին եղող երկրապարդը 332։
Իւր կոչումն պահելուն համար պարէծ կող երկ-
պատարդը. 334։

## ԳԼՈՒԽ ԻԷ.

Տղայք ծնողներուն դէմ շարժելէն կը զգուշանային,
և աշխարհիս մէջ շատ անգամ հանդիպած վը-
տանգները. 337։
Անասուն դպրոց ատտախնութեան պարունէին. 338։
Երկու ուսումնական երկրաչափաց իմաստուն վարքը 340։
Գովելի եղանակութիւն. 342։
Ռուսինի կարծիքն և օրինակը. 345։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ
ИМ. А. МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1693

0025889

ՀՀ Ազգային գրադարան
NL0025889